ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

GAVAR STATE UNIVERSITY

2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2018-2019 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

GAVAR STATE UNIVERSITY

2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2018-2019 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳԱՎԱՌ – 2019

GAVAR – 2019

Գավառի պետական համալսարան
2018-2019 ուսումնական տարվա գործունեության
հաշվետվություն
և
ռազմավարական ծրագրի իրականացման
ինքնավերլուծության զեկույց

Հաշվետվությունը բովանդակում է տեղեկություններ Գավառի պետական համալսարանի 2018-2019 **ուսումնական տարվա կրթական**, **գիտահետազոտական**, **դաստիարակչական գործունեության վերաբերյալ**, **միաժամանակ այն բուհի ռազմավարական ծրագրի կատարման ինքնավերլուծության զեկույց է**, **որտեղ ներկայացված է համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացը**, **և նախանշված են բուհի** 2019-2020 **ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները**:

The report comprises information on the activities of Gavar State University during 2018-2019 academic year including the educational, scientific – research and educative directions, at the same time representing the self-assessment report on the implementation of **University's Strategic Program touching upon the implementation process of University's Anti**-Corruption Strategic Program and outlining the major development dimensions of 2019-2020 academic year.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ: 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Գավառի պետական համալսարանը 2018-2019 ուսումնական տարում առաջնորդվել է ‹‹Նոր մտածողություն, նոր տեսլական›› կարգախոսով՝ իր գործունեությունը ծավալելով ՀՀ օրենսդրության պահանջների և բուհի կանոնադրության նորմերի հիման վրա, ԳՊՀ 2017-2022 թվականների ռազմավարական և տարեկան գործողությունների ծրագրերին, համալսարանի հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի որոշումներին ու ներբուհական ակտերին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակական միջոցներ են ձեռնարկվել բուհի ֆակուլտետների, ամբիոնների, կառուցվածքային մյուս ստորաբաժանումների փոխհամաձայնեցված և արդյունավետ գործունեության ապահովման, կրթության որակի բարձրացման նպատակով:

Համալսարանը, իր առաքելությանը հավատարիմ, իրականացրել է ԳՊՀ ռազմավարական ծրագրով նախատեսված հետևյալ հիմնական աշխատանքները.

1) ուսումնական գործընթացի հստակ ու անխափան կազմակերպում, կրթության որակի բարձրացում,
2) գիտահետազոտական գործունեության խրախուսում, կրթության գործընթացում գիտության նորագույն արդյունքների հաշվառում,
3) կրթական միջավայրի արդիականացում, ուսումնական ռեսուրսների բարելավում,
4) ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացում,
5)վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխում,
6) ֆինանսական գործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպման ճկուն կառուցակարգերի կիրառում,
7) արտաքին կապերի և համագործակցության շրջանակի ընդլայնում,
8) համալսարանի հանրային պատասխանատվության բարձրացում, ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացմանը նպաստում,
9) ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացում, համալսարանում ձևավորված ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանում, ԳՊՀ էթիկայի կանոնների կենսագործում:

Նշված առաջնահերթություններից ելնելով՝ սահմանվել են համապատասխան ռազմավարական նպատակներ և նախանշվել դրանց իրականացման համար լուծման ենթակա խնդիրները, նախատեսվել են գործունեության արդյունավետության գնահատման ցուցիչներ, որոնց համապատասխան իրականացվել են մշտադիտարկման, արդյունքների վերլուծության և բարելավման գործընթացները:

Ըստ ԳՊՀ գործունեության ինը գերակա ուղղությունների՝ ստորև ներկայացնում ենք բուհի 2018-2019 ուսումնական տարվա հաշվետվությունը և ինքնավերլուծության զեկույցը:

1. **Համալսարանի համար առաջին գերակա ուղղությունը բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է**:

Նշված ուղղությամբ որպես ռազմավարական նպատակ է սահմանված վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, որին համապատասխան հաշվետու ուստարում լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ԳՊՀ-ում իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի /այսուհետ՝ նաև ՄԿԾ/ համար մշակվել են համապատասխան մասնագրեր՝ նոր ձևաչափով և մեթոդաբանությամբ,
- սահմանվել են բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվող ՄԿԾ-ների վերջնարդյունքները,
- վերանայվել և համապատասխանեցվել են կրթական ծրագրերում և դրանցում ներառված դասընթացների առարկայական ծրագրերում ամրագրված իրազեկությունները՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները՝ որպես ակնկալվող վերջնարդյունքներ,
- արդիականացվել են ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդները, կատարվել է դրանց համապատասխանեցում /քարտեզագրում/,
- ներդրվել են նոր կրթական տեխնոլոգիաներ, ուսուցման արդյունավետ կառուցակարգեր:

Շարունակական աշխատանքներ են իրականացվել բուհում ուսանողակենտրոն միջավայր ապահովելու, սովորողների կրթական կարիքներն ու ակնկալիքները բացահայտելու և դրանք բավարարելու, ուսանողներին ինքնուրույն աշխատանքի մղելու և բազմակողմանի կրթություն ապահովելու ուղղությամբ: Զուգակցվել են ուսուցման ավանդական և նորարարական մեթոդներն ու միջոցները, իրականացվել են սովորողների գիտելիքների բանավոր և գրավոր ստուգումներ, ինչպես նաև շարունակել է գործել քննությունների կազմակերպման համակարգչային «Examination.GSU» ծրագիրը:

Ընթացիկ տարում ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը աշխատանքներ է կատարում ուսանողների գիտելիքների ստուգման համակարգչային ծրագրի արդիականացման ուղղությամբ, իսկ ամբիոնները խնդիր ունեն ապահովելու նոր առարկաների համար թեստերի մշակումը և ծրագրում դրանց ներառումը:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ուսումնական տարում իրականացվել են մասնագիտական կրթական ծրագրեր արդեն իսկ բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար՝ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու կարգին համաձայն: Դիմումներին համապատասխան՝ իրականացվել են հիմնականում իրավագիտության, տնտեսագիտության և մանկավարժության կրթական ծրագրեր հեռակա ուսուցման ֆակուլտետում: Միաժամանակ ողջ ուսումնական տարվա ընթացքում կյանքի են կոչվել լրացուցիչ ծրագրեր՝ նվիրված ներառական կրթության հիմնախնդիրներին, ուսուցման արդի մեթոդներին, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներին, կրթության իրավական հիմքերին, օտար լեզուների դասավանդման տեսությանն ու պրակտիկային և այլ թեմաների: Բոլոր դասընթացներից հետո մասնակիցները տարբեր չափանիշներով գնահատել են դասավանդման որակն ու դասընթացավարների հմտությունները, արդյունքները վերլուծվել են, կատարվել են հետևություններ՝ լրացուցիչ կրթական ծրագրերի որակը բարձրացնելու նպատակով:

Դասընթացների մասնակիցներին շնորհվել են համապատասխան կրեդիտներ, որոնք ամրագրվել են հավաստագրերում: Ընդ որում, բոլոր այդ ծրագրերն իրականացվել են անվճար՝ որպես ՀՀ Գեղարքունիքի մարզում կրթության ոլորտում համալսարանի հանրային պատասխանատվության դրսևորում:

ԳՊՀ որակի ապահովման բաժինն աշխատանքներ է իրականացրել բուհում իրականացվող գործընթացների որակը գնահատելու և բարելավելու ուղղությամբ: Բաժինը պարբերաբար իրականացրել է անանուն թղթային և էլեկտրոնային հարցումներ ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների՝ ուսանողների, դասախոսների, դիմորդների, շրջանավարտների, պրակտիկաների ղեկավարների շրջանում, մշակել և շրջանառության մեջ դրել կրթական կարիքների և խնդիրների բացահայտմանը միտված նոր հարցաշարեր, ապա վերլուծել հարցումների արդյունքները և դրանք ներկայացրել ԳՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի, ֆակուլտետների դեկանների ուշադրությանը՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու և կրթության որակը բարձրացնելու նպատակով:

2. **ԳՊՀ ռազմավարական ծրագրում նախատեսված երկրորդ գերակայությունը գիտահետազոտական գործունեությունն է:** Այս ուղղությամբ կազմակերպվել և անցկացվել են գիտաժողովներ, խրախուսվել են դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական աշխատանքը և համահեղինակությամբ զեկուցումների պատրաստումն ու ներկայացումը, դասախոսների գիտական աշխատանքների արդյունքների հրապարակումը, մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

ԳՊՀ գիտական խորհուրդը սահմանված կարգով շնորհել է գիտական կոչումներ, տպագրության երաշխավորել ԳՊՀ դասախոսների գիտական աշխատանքները և ուսումնամեթոդական ձեռնարկները:

Համալսարանն անխախտ պարբերականությամբ կազմակերպել է ամենամյա գիտաժողովներ: 2018 թվականին կայացած 21-րդ գիտաժողովը նվիրված էր Հայաստանի առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-րդ տարեդարձին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակին: 2019 թվականին կազմակերպված 22-րդ /նոր համարակալմամբ՝ 7-րդ/ հոբելյանական գիտաժողովը նվիրված էր Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-րդ տարեդարձին:

Համալսարանը տպագրել է գիտաժողովներին ներկայացված և հրապարակման երաշխավորված բոլոր զեկուցումները: Միաժամանակ, գիտական զեկուցումները տեղադրվել են համալսարանի համացանցային կայքում (www.gsu.am) և ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի առանձին կայքում (www. Publications.gsu.am): Աշխատանքներ են կատարվում, դասախոսների ներուժն ու գիտական հետաքրքրությունները հաշվի առնելով, հետազոտական ծրագրերն ուղղորդել ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ ոլորտների ուսումնասիրմանը և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների ներկայացմանը: Արդեն չորրորդ տարին է, համալսարանում կատարվում է ընդունելություն ասպիրանտուրա, և իրականացվում է ասպիրանտական ծրագիր՝ ‹‹Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում›› մասնագիտության գծով: Գիտահետազոտական գործունեության ոլորտում կարևորվում են բուհի համագործակցային կապերը հանրապետական և արտերկրի առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, տարբեր

ընկերությունների հետ, ինչպես նաև մասնակցությունը միջազգային հետազոտական նոր նախագծերին:

3. **ԳՊՀ ռազմավարական ծրագրում նախատեսված հաջորդ գերակա ուղղությունը կրթական միջավայրի արդիականացումն է**, քանի որ որակյալ ուսուցման գործընթաց հնարավոր է իրականացնել միայն գրավիչ կրթական միջավայրում: Համալսարանում առաջնահերթություն է կրթող ու դաստիարակող, արժեքային կողմնորոշումներ ձևավորող ու զարգացնող միջավայրի ապահովումը: Ուստի շարունակաբար արդիականացվում են կրթական ռեսուրսները, հարստացվում կրթության տեխնոլոգիական հիմքերը, և այդ գործում բուհին զգալի աջակցություն են ցուցաբերում երկու տասնյակից ավելի ԳՊՀ միջազգային ծրագրերը: Եվրոպական միության տարբեր ծրագրեր բովանդակում են տեխնիկական վերազինման և կարողությունների զարգացման բաղադրիչ, որի շնորհիվ սահմանված կարգով ձեռք են բերվում նորագույն համակարգչային տեխնիկա, անհրաժեշտ միջոցներ ու սարքավորումներ, և համալրվում ու թարմացվում է համալսարանի ուսումնական, հետազոտական գործունեության տեխնիկական բազան:

Համալսարանը շարունակական աշխատանքներ է իրականացնում ‹‹Էլեկտրոնային ԳՊՀ›› ծրագիրը կյանքի կոչելու ուղղությամբ, որը ներառում է էլեկտրոնային գործավարության և փաստաթղթաշրջանառության համակարգերը, նպաստում ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների արդյունավետ օգտագործմանը, ուսանող-դասախոս, ուսանող-գիտական ղեկավար, ուսանող-ամբիոն, ուսանող-դեկանատ, ուսանող-ռեկտորատ առցանց կապերի ապահովմանը:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից պարբերաբար հարցումներ են անցկացվում ուսանողների և դասախոսների շրջանում՝ կրթական միջավայրից նրանց բավարարվածության աստիճանը պարզելու, կարիքները բացահայտելու և թերությունները շտկելու, գրավիչ ակադեմիական միջավայր ստեղծելու նպատակով:

Հարցման արդյունքների հիման վրա հաշվետու ժամանակահատվածում բարելավվել են ԳՊՀ կենտրոնական, բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների մասնաշենքերում գործող համակարգչային լսարանները, բուհի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից մշակվել և գործարկվել է ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման նոր համակարգը (‹‹Learn.gsu.am››), ավելացել են վերջինիս գործառութային հնարավորությունները, համալրվել է բուհի էլեկտրոնային գրադարանը (‹‹E.Library.gsu.am››), միացել այլ գիտակրթական հաստատությունների էլեկտրոնային գրադարաններին, արտասահմանյան գրքապաշարներին՝ ուսանողների և դասախոսների համար համացանցային գիտական, տեղեկատվական աղբյուրների հետ աշխատելու պայմաններ ապահովելով:

Դեռևս չի լուծվել ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման արդյունքների հաշվառման, ակադեմիական տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգի մշակման ու ներդրման խնդիրը:

4. **Համալսարանի գործունեության առաջնային ուղղություններից է ուսանողների հետ նպատակային աշխատանքների կազմակերպումը:**

Բուհի առաքելությունը չի սահմանափակվում միայն սովորողների համար կրթական գործընթացի կազմակերպմամբ: Համալսարանի խնդիրն է եղել և շարունակում է մնալ

դասախոսների բազմամասնագիտական կազմի ջանքերով ուսանողների շրջանում գիտելիքների արժևորմանը նպաստելը, ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, սովորելու և ինքնուրույն աշխատանք կատարելու մշակույթ ձևավորելը, այն գիտակցությունը արմատավորելը, որ որակյալ կրթությունը բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն է: ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմերի մշտական հոգածության առարկան են քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող անձանց դաստիարակությունը, ուսանողների բարոյականային հատկանիշների զարգացումը, նրանց շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորումը: Շարունակական միջոցներ են ձեռնարկվել ուսանողների լեզվական գրագիտության ապահովման, օտար լեզուներով հաղորդակցման, գիտական, տեղեկատվական ռեսուրսների օգտագործման կարողությունների զարգացման ուղղությամբ: Ուշադրություն է դարձվել սովորողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության ապահովմանը, էլեկտրոնային ուսուցման համակարգից և էլեկտրոնային գրադարանից, այլ ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացմանը, շարունակական կրթության միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորմանը: Մշտապես խրախուսվել է ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, տնտեսագետների, ստեղծագործողների ակումբների, ‹‹Ջինիշյան հիշատակի հիմնադրամի›› ուսանողական ծրագրային թիմի, ուսանողական այլ կառույցների գործունեությունը, համալսարանի կառավարման գործընթացում ուսանողների ակտիվ դերակատարությունը: Բացատրական աշխատանքներ են տարվել առաջին կուրսեցիների հետ՝ նրանց պարզաբանելով կրեդիտային համակարգում ուսումնառության առանձնահատկությունները, գնահատման գործոններն ու չափանիշները, առկա և հեռակա ուսուցման համակարգերից սովորողների փոխատեղման սկզբունքները, ներկայացնելով ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:

ԳՊՀ-ում 2018 թվականը հագեցած էր հոբելյանական միջոցառումներով՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյա տարեդարձին, քաղաքամայր Երևանի հիմնադրման 2800-ամյակին, Գավառ քաղաքի ծննդյան 2750-ամյակին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-րդ տարեդարձին:

2019 թվականի ընթացքում ԳՊՀ-ում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին, Կոմիտասի ծննդյան 150-ամյակին, Լևոն Շանթի ծննդյան 150-ամյակին, Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակին և այլ տարեդարձերի: Ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել են ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, բանավեճեր, ‹‹կլոր սեղան››-քննարկումներ, ինտելեկտուալ մրցույթներ, գրական–գեղարվեստական ցերեկույթներ, էքսկուրսիաներ, այլ միջոցառումներ՝ միտված ուսանողների բազմակողմանի կրթությանն ու հայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև նրանց հետազոտական հմտությունների, հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացմանը:

Հաշվետու ուսումնական տարում կազմակերպվել են մրցույթներ ‹‹Լավագույն ուսանող››, ‹‹Լավագույն կուրս›› անվանակարգերում: ‹‹Լավագույն ուսանող›› մրցույթում հաղթող ուսանողները մասնակցել են մրցույթի հանրապետական փուլին, որտեղ ԳՊՀ վեց ուսանողներ արժանացել են ‹‹Հայաստանի Հանրապետության լավագույն ուսանող›› կոչմանը և ստացել ֆինանսական պարգևատրում: Շարունակական աշխատանքներ են կատարվել առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների սոցիալապես անապահով ուսանողների հետ: Նրանք ֆինանսական աջակցություն են ստացել բուհից, միաժամանակ խրախուսվել են՝ դիմելու և օգտվելու տարբեր հիմնադրամների և հովանավորների նյութական աջակցության ծրագրերից: Համալսարանը ուսման վարձի զգալի զեղչեր է կիրառել ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից, մարտական հերթապահություն իրականացրած, ծնողազուրկ, հաշմանդամություն ունեցող, բազմազավակ ընտանիքների երեխա, ինչպես նաև անչափահաս երեխաներ ունեցող, սահմանամերձ համայնքների բնակիչ, համալսարանի աշխատակիցների ընտանիքների անդամ և այլ կարգավիճակ ունեցող ուսանողների նկատմամբ:

Աշխատանքներ են կատարվել ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերում հնարավորինս մեծ թվով ուսանողներ ներգրավելու համար: Բուհի արտաքին կապերի և լրատվության բաժինն իրազեկել է ուսանողներին միջազգային ծրագրերի և դրանց մասնակցելու պայմանների մասին, աջակցել փաստաթղթերի փաթեթների պատրաստման և այլ հարցերում: Ուսանողների հետ ամենօրյա հասցեական աշխատանքներ են կատարել ուսումնական խորհրդատուները, որոնք ցուցաբերել են բազմակողմանի աջակցություն ուսման, պրակտիկայի հետ կապված և այլ հարցերում:

5. **ԳՊՀ գործունեության գերակա ուղղություն է նաև վարչարարության պատշաճ իրականացումը և մարդկային ռեսուրսների կառավարումը:**

Նշված գերակա ուղղությանը համապատասխանող ռազմավարական նպատակը համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավումը, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառումը, մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորումը և կառավարումը: Ինչպես նախորդ տարում, հաշվետու ժամանակահատվածում ևս վերանայվել ու արդիականացվել են համալսարանի գործունեության փաստաթղթային հիմքերը, ընդունվել են նոր կանոնակարգեր, ներբուհական այլ ակտեր: Միջոցներ են ձեռնարկվել երիտասարդ և բանիմաց մասնագետներով ԳՊՀ աշխատակազմը համալրելու, աշխատակիցների մասնագիտական կարողությունները զարգացնելու ուղղություններով: Համալսարանի կառավարման գործում ապահովվել է հստակություն, արդյունավետություն և կանխատեսելիություն, պահպանվել են օրինականության, ակադեմիական ազնվության և սոցիալական արդարության սկզբունքները: Շաբաթը մեկ անգամ գումարվել է ռեկտորատի նիստ, ամենամսյա պարբերականությամբ կայացել են գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների նիստերը: Ըստ անհրաժեշտության՝ տեղի են ունեցել նաև արտահերթ նիստեր ու խորհրդակցություններ: Համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետ և կառուցվածքային ստորաբաժանում իրականացրել է նախորդ տարվա գործունեության ինքնավերլուծություն, արդյունքները քննարկվել են և արվել համապատասխան եզրահանգումներ: Ինքնավերլուծության գործընթացներին մասնակցել են նաև ուսանողները: Համալսարանում գործել է և գործում է որոշումների մասնակցային կայացման

և կոլեկտիվ իրականացման կառուցակարգը: Ապահովվում է կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառույթների, լիազորություններին և պատասխանատվության հստակ բաշխում՝ ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով: Վերանայվել են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության կառուցակարգերը, ներդրվել են աշխատակիցների և ստորաբաժանումների գործունեության արդյունքների գնահատման նոր մեթոդներ ու գործիքներ: Դասախոսների համար պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական և մեթոդական աջակցություն է ցուցաբերվել երիտասարդ աշխատակիցներին, կազմակերպվել են գործուղումներ, առաջավոր փորձի փոխանակումներ: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներկայացվել են հաշվետվություններ, ստուգվել և գնահատվել են կատարողական արդյունքները, լավագույն ցուցանիշներ ունեցող աշխատակիցներն արժանացել են բարոյական և նյութական խրախուսանքի:

6. **Հաջորդ գերակա ուղղությունը բուհի ֆինանսական գործունեության ապահովումն է և ներբուհական տնտեսության կազմակերպումը:**

Նշված ոլորտում որպես ռազմավարական նպատակ շարունակում է մնալ ԳՊՀ ֆինանսական հոսքերի ապահովումը, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումը և խնայողաբար օգտագործումը, համալսարանի ֆինանսական կայունության ապահովումը: Համալսարանին հաջողվել է Գեղարքունիքի մարզում արձանագրված ժողովրդագրական բացասական շարժի, արտագաղթի պայմաններում սակավադիմորդ տարում ապահովել ֆինանսական կարգապահություն և ներբուհական տնտեսության անխափան գործունեություն: Բուհում կառուցվածքային փոփոխություններ և կրճատումներ չեն եղել: Ժամանակին վճարվել են աշխատավարձերն ու հարկերը, կատարվել բոլոր պայմանագրային պարտավորությունները: Բուհում հստակ գործում է էլեկտրոնային հաշվապահության ծրագիրը: ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան պահանջագրերի հիման վրա կազմվել են համալսարանի բյուջեն և գնումների պլանը, սահմանված կարգով կազմակերպվել է գնումների գործընթացը: Ուշադրության կենտրոնում են եղել ԳՊՀ զարգացման ծրագրերի ֆինանսական պլանավորումը և համալսարանի տարեկան բյուջեում դրանց ներառումը: Բազմախողովակ ֆինանսավորման հարցում բուհին աջակցել են Եվրոպական միության ծրագրերը, դրամաշնորհային միջոցները, բարերարների ներդրումները: Այդուհանդերձ, ԳՊՀ-ն հանրային ֆինանսավորմամբ բուհ է, և բյուջեի եկամուտների հիմնական մասը ձևավորվում է ուսման վարձավճարներից: Սակայն հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ են եղել ուսման վարձերի հավաքագրման հարցում՝ կապված դիմորդների, ուստի և առաջին կուրս ընդունված ուսանողների թվի նվազման, ուսանողների զգալի մասի ընտանիքների սոցիալապես անապահով վիճակի հետ: Կիրառվել է ամենամսյա պարբերականությամբ վարձերի վճարման պրակտիկան: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փոխհատուցվել են սոցիալական անապահովության համակարգում 30 միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների երեխա, ծնողազուրկ և սահմանամերձ համայնքների բնակիչ ուսանողների ուսման վարձավճարները: Բուհի ուսանողներին նյութապես աջակցել են ‹‹Ժիրայր Նիշանյան››, ‹‹Հրայր և Աննա Հովնանյաններ›› հիմնադրամները, Հայ կրթական հիմնարկությունը, ‹‹Գագիկ Ծառուկյան›› հիմնադրամը, ‹‹Վիվա-Սելլ.ՄՏՍ›› ընկերությունը,

‹‹ԱՄՔՈՐ›› բարեգործական միությունը, այլ հաստատություններ: Համալսարանի ուսանողները, ինչպես նաև աշխատակիցները բարոյական և նյութական խրախուսում են ստացել ԳՊՀ բյուջեի, համալսարանի արհեստակցական միության միջոցների հաշվին: Հետևողական աշխատանք է կատարվել համալսարանում առկա նյութատեխնիկական բազայի պահպանման, գույքի նպատակային և խելամիտ տնօրինման, խնայողաբար օգտագործման ուղղությամբ: Ընդլայնվել է համալսարանի ուսումնաարտադրական պրակտիկայի բազան, համալրվել են գրադարանային-տեղեկատվական ռեսուրսները, շարունակական ծրագրեր են իրականացվել արդի տեխնոլոգիական միջավայրի ձևավորման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի միջոցներով ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի, հումանիտար մասնագիտությունների և բնագիտական ֆակուլտետների մուտքերին ներկառուցվել են չորս թեքահարթակներ, բարեկարգվել են միջֆակուլտետային ճանապարհները, համալսարանի շրջակայքը: ‹‹Մաքուր համալսարան›› ծրագրի շրջանակում պարբերաբար կազմակերպվել են շաբաթօրյակներ, բուհում և շրջակայքում ապահովվել է պատշաճ սանիտարական վիճակ: Գավառի քաղաքապետարանի կողմից համալսարանին հարող Հրանտ Հակոբյանի անվան փողոցում տեղադրվել են երկկողմանի տեսանկարահանող սարքեր: Բուհում կիրառվում են էներգախնայող լամպեր: Ինչպես նախորդ ժամանակահատվածում, 2018-2019 ուստարում ևս հստակորեն իրականացվել են համալսարանի կենսապահովման բոլոր գործառույթները:

Սակայն շարունակում են որպես չլուծված հիմնախնդիրներ մնալ համալսարանի հանրակացարանի ֆիզիկապես ու բարոյապես մաշված, անօգտագործելի շենքի հիմնանորոգումը, ԳՊՀ գրադարանների և ընթերցասրահի արդիականացումը, մարզադահլիճների նորոգումն ու կահավորումը, բացօդյա մարզահրապարակի կառուցումը, փոքր տպարանի հիմնումը, ‹‹խելացի›› սրճարանի և ուսանողական ժամանցի այլ վայրերի, համալսարանական ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծումը, որոնց համար բուհի ֆինանսական միջոցները չեն բավարարում, և արտաքին ներդրումների կարիք կա: Այդ նպատակով ԳՊՀ ռեկտորատը մշակել և ՀՀ Գեղարքունիքի մարզի գործարար համաժողովին, ապա Գյումրիում կայացած դեսպանահավաքին է ներկայացրել ԳՊՀ հյուրատուն-բիզնես կենտրոնի հիմնանորոգման ներդրումային ծրագրի առաջարկ՝ նպատակ ունենալով ներգրավել մասնավոր ներդրողների և պետության, համայնքի, համալսարանի ու ներդրողների համատեղ ջանքերով ու ֆինանսավորմամբ կյանքի կոչել Գավառի՝ որպես համալսարանական քաղաքի և գործարարության, զբոսաշրջության կենտրոնի կարողությունների զարգացման ու ենթակառուցվածքների ապահովման ծրագիրը:

7. **ԳՊՀ գործունեության գերակա ուղղություն է նաև արտաքին կապերի և համագործակցության ապահովումը**:

Ռազմավարական նպատակը՝ համալսարանի արտաքին կապերի և համագործակցության ընդլայնումն է, արդյունավետ և նպատակաուղղված աշխատանքների կազմակերպումը գործատուների և գործընկեր կազմակերպությունների՝ ՀՀ պետական ու ոչ պետական կառույցների, տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող սուբյեկտների, միջազգային կառույցների հետ: Ինչպես նախկինում, հաշվետու ուսումնական տարում ևս համալսարանը համագործակցել է ՀՀ կրթական և գիտահետազոտական մարմինների ու

կազմակերպությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, Որակավորումների փոխճանաչման և այլ կառույցների հետ: Բուհն անդամակցում է երկու տասնյակից ավելի միջազգային ծրագրերի, որոնց շրջանակներում համագործակցում է եվրոպական պետությունների յոթանասունից ավելի բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների հետ: ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բազմաթիվ ուսանողներ սովորել են եվրոպական բուհերում, իսկ դասախոսներ՝ կատարել մանկավարժական և հետազոտական աշխատանքներ, անցել վերապատրաստման դասընթացներ, ապա ներկայացրել հաշվետվություններ միջազգային ծրագրերի արդյունքների մասին, հանդես եկել առաջարկություններով: Եվրոպական բուհերի դասախոսները եղել են ԳՊՀ-ում և հանդես եկել դասախոսություններով: Համալսարանում կազմակերպվել են միջազգային աշխատաժողովներ՝ բուհի անդամակցած եվրոպական ծրագրերի շրջանակներում: Կատարվել են համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն (բենչմարքինգ), արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում, միջոցներ են ձեռնարկվել բուհի միջազգայնացման ուղղությամբ: Համալսարանը ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի հետ կնքել է համագործակցության հուշագիր և համատեղ նախաձեռնությամբ հիմնադրել Գեղարքունիքի մարզի զբոսաշրջության զարգացման և հետազոտությունների կենտրոնը: Բուհը համագործակցում է ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Երևանում գործող Ռուսաստանի գիտության և մշակութի կենտրոնի, միջազգային այլ կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների, ՀՀ կրթական, երիտասարդական, մարզական, մշակութային տարբեր կազմակերպությունների հետ:

Դիմորդների թվի էական կրճատման պայմաններում ավելի է կարևորվել Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համալսարանի կապերի ակտիվացումը: Կազմակերպվել են փոխայցելություններ, որոնց նպատակը ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելն է, համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը ներկայացնելը: Անցկացվել են աշակերտական օլիմպիադաներ բոլոր հիմնական առարկաների գծով: Մարզի դպրոցների հետ կնքված և վերակնքված համագործակցության հուշագրերի հիման վրա բուհի բնագիտության լաբորատորիայում պարբերաբար կազմակերպվել են աշակերտների գործնական դասեր քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա և այլ առարկաներից: Պատմության դասաժամեր են անցկացվել ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական, հնագիտական թանգարանում: Համալսարանը համագործակցել է դպրոցների մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդմիավորումների հետ: Բուհում կազմակերպվել են ‹‹Բարձրագույն կրթության և գիտության մասին›› ՀՀ օրենքի նախագծի քննարկումներ՝ մարզի դպրոցների տնօրենների և մանկավարժների մասնակցությամբ: Համալսարանի իրականացրած վերապատրաստման դասընթացներին անվճար հիմունքներով մասնակցել են մարզի տարբեր դպրոցների ուսուցիչներ: Ըստ անհրաժեշտության՝ համալսարանի աշխատակիցները մարզի միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններին ցուցաբերել են մասնագիտական ու մեթոդական աջակցություն: Համալսարանն ակտիվորեն համագործակցել է ‹‹Գեղամա››

հեռուստաընկերության, ‹‹Գեղամա աշխարհ›› թերթի, զանգվածային լրատվության այլ միջոցների հետ: Համալսարանի մասին օպերատիվ տեղեկատվություն է ապահովում ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժինը, որը լուրերը սփռում է բուհի համացանցային կայքի միջոցով: ԳՊՀ պաշտոնական կայքն ունի ենթակայքեր և ներառում է միջազգային ծրագրերի մասին առանձին կայք: Կայքում ներկայացվում են բուհի իրականացրած ծրագրերը, ուսանողների և դասախոսների արձանագրած հաջողությունները: Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից պատշաճ սպասարկվում է ԳՊՀ պաշտոնական կայքի նոր տարբերակը:

8. **Գերակա ուղղություն է նաև համալսարանի կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացումը**:

Նշված ոլորտում բուհի որդեգրած ռազմավարական նպատակն է համալսարանի հանրային պատասխանատվության բարձրացումը, մարզի ազգաբնակչության տարբեր շերտերի կրթական կարիքների բավարարմանն ուղղված միջոցների ձեռնարկումը, հանրությանը որակյալ կրթական ծառայությունների մատուցումը, բուհի նկատմամբ հանրային վստահության ապահովումը, համալսարանի բարի համբավի ամրապնդումը:

Հանրային պատասխանատվության ծրագրերի շրջանակում համալսարանը համագործակցում է Գեղարքունիքի մարզպետարանի, մարզի քաղաքային և գյուղական համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, Գավառի երկրագիտական թանգարանի, մարզային և քաղաքային գրադարանների, Հրաչյա Բունիաթյանի անվան պատկերասրահի, Գավառի մանկան տան, բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, իրավապահ մարմինների, տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող կազմակերպությունների հետ: Տարեցտարի ավելանում է համալսարանի գործընկեր կազմակերպությունների թիվը: Գավառի պետական համալսարանի և ‹‹Լուսին›› տեխնոլոգիական ընկերության միջև կնքված համագործակցության հուշագրի հիման վրա համատեղ նախաձեռնությամբ ԳՊՀ-ում իրականացվել են ծրագրավորման դասընթացներ: Մարզում ուսուցողական, տեղեկատվական, ճանաչողական, ուղղորդող գործառույթներ են իրականացնում համալսարանում պատրաստվող լուրերը, որոնք հեռարձակվում են մարզային հեռուստաընկերությամբ: Միաժամանակ ակտիվ գործում է ԳՊՀ համացանցային կայքի ‹‹Youtube›› տեսահարթակը և ‹‹Facebook›› (Դիմագիրք) սոցիալական կայքը, որտեղ ուսուցողական նյութերն անվճար ներբեռնվում են և ներկայացվում հանրությանը: Համալսարանն էջեր ունի նաև ‹‹Լինկդին››, ‹‹Ինստագրամ›› համացանցային սոցիալական կայքերում: ԳՊՀ հանրային պատասխանատվության դրսևորումներ են մարզի ազգաբնակչության իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված ծրագրերի իրականացումը, ուսուցիչներին, տարբեր մասնագիտությունների տեր անձանց լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի առաջարկումը, համալսարանի ներքին և արտաքին շահառուների կարիքների հետազոտությունը և հնարավորության սահմաններում օժանդակության ցուցաբերումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ներառական կրթական միջավայրի ստեղծումը, բուհի գործընկերների հետ արդյունավետ համագործակցության ապահովումը:

9. **ԳՊՀ գործունեության գերակա ուղղություններից է համալսարանի** 2017-2022 **թվականների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացումը**: Նշված ծրագրից բացի՝ համալսարանում գործում են ԳՊՀ ակադեմիական ազնվության

հայեցակարգը և ԳՊՀ էթիկայի կանոնները: Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ժամանակահատվածում ևս համալսարանում կարևորվել են.

- ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանումը՝ որպես որակյալ կրթության և արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ և պարտադիր պայման,
- ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիման վրա բուհի գործունեության բոլոր ոլորտներում կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառումը,
- ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների պահպանումը, ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի օբյեկտիվ գործունեության ապահովումը,
- ԳՊՀ էթիկայի կանոնների պահպանումը,
- բուհի ներքին և արտաքին շահառուների հետ հարաբերություններում բարեվարքության սկզբունքների պահպանումը:

Համալսարանի որակի ապահովման բաժինը պարբերաբար հարցումներ է իրականացնում ուսանողների շրջանում՝ ուղղված բուհում կոռուպցիոն վտանգների բացահայտմանը և կանխմանը: ԳՊՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը ներառում է ուսանողների պատշաճ իրավական և բարոյական դաստիարակությունը, աշխատակիցների շրջանում բարձր արժեհամակարգի արմատավորումը: Բուհի տարեկան ֆինանսատնտեսական գործունեությունը օրենքով սահմանված կարգով ենթարկվում է ամենամյա աուդիտի: Խիստ հսկողություն են իրականացվում ուսանողների տեղափոխման և վերականգնման գործընթացների, ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ քննությունների, անվճար և վճարովի ուսուցման համակարգերում սովորողների փոխատեղումների, ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերի և այլ գործընթացների նկատմամբ: Բուհի գործունեության բոլոր ոլորտներում ապահովվում է օրինականության, սոցիալական արդարության, ժողովրդավարության, իրավահավասարության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների պահպանումը:

2018-2019 ուսումնական տարում համալսարանն ավարտեց շրջանավարտների քսաներկուերորդ սերունդը: Ավանդույթի համաձայն դիպլոմները շնորհվեցին 2019 թվականի հուլիսի 5-ին՝ ՀՀ Սահմանադրության օրը՝ շրջանավարտներին պատգամելով համալսարանում ստացած գիտելիքներն ու կարողությունները ծառայեցնել հայրենիքի բարօրությանը:

Գավառի պետական համալսարանը 2019-2020 ուսումնական տարում որդեգրել է ‹‹Կրթություն՝ հանուն զարգացման›› կարգախոսը՝ բարեխղճորեն շարունակելով Գեղարքունյաց աշխարհի բարձրագույն դպրոցի իր կարևոր առաքելությունը:

Ռուզաննա Հակոբյան
Գավառի պետական համալսարանի ռեկտոր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.00.6 ***Ընդհանուր մանկավարժություն***		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության բակալավր
011301.00.7 ***Ընդհանուր մանկավարժություն***		
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության մագիստրոս
011401.00.6 ***Մասնագիտական մանկավարժություն***		
011401.01.6	Կենսաբանություն	Մանկավարժության բակալավր
011401.03.6	Աշխարհագրություն	Մանկավարժության բակալավր
011401.18.6	Պատմություն	Մանկավարժության բակալավր
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.00.7 ***Մասնագիտական մանկավարժություն***		
011401.01.7	Կենսաբանություն	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	Աշխարհագրություն	Մանկավարժության մագիստրոս
011401.18.7	Պատմություն	Մանկավարժության մագիստրոս
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
041101.00.6 ***Հաշվապահական հաշվառում և հարկում***		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր

041101.00.7 ***Հաշվապահական հաշվառում և հարկում***		
041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
041201.00.6 ***Ֆինանսներ***		
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
041201.00.7 ***Ֆինանսներ***		
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
031101.00.6 ***Տնտեսագիտություն***		
031101.01.6	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
031101.00.7 ***Տնտեսագիտություն***		
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս
042101.00.6 ***Իրավագիտություն***		
042101.01.6	Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր
042101.00.7 ***Իրավագիտություն***		
042101.01.7	Իրավագիտություն	Իրավագիտության մագիստրոս
053101.00.6 ***Քիմիա***		
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
054201.00.6 ***Աշխարհագրություն***		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրության բակալավր
061103.00.6 ***Համակարգչային ճարտարագիտություն***		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի բակալավր
061103.00.7 ***Համակարգչային ճարտարագիտություն***		
061103.01.7	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի մագիստրոս
101801.00.6 ***Սերվիս***		
101801.01.6	Սերվիս	Սերվիսի բակալավր

1.2. 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ընդունելության քննություններ				ընդունվածների միջին քանակը
	մրցութային քննություններ			ոչ մրցու-թային քնն.	
1	2	3	4	5	6
1.Բանասիրական ֆակուլտետ					
Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀԺՊ (գ)* կամ Օտլ (գ)*	-
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլգ (բ)	Ռլ (գ)		Հլգ (գ)*	-
Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ (բ)	Անգլ (գ)	Հլգ (գ)		10
2. Բնագիտական ֆակուլտետ					
Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ (գ)*	-
Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ) **		Հլգ (գ)*	-
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	-
Սերվիս	Ա (գ) կամ ՀԺՊ (գ)		Օտլ (գ) **	Հլգ (գ)*	-
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ (գ)*	4
Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ (գ)*	-
3.Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ					
Պատմություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ (գ)		Հլգ (գ)*	-
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ) **			-
Իրավագիտություն	Հլգ (գ)	ՀԺՊ (գ)	Օտլ (գ)**		2
4. Տնտեսագիտական ֆակուլտետ					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		1
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		-

Տնտեսագիտություն	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		2
5. Հեռակա ուսուցման ֆակուլտետ					
Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀԺՊ (գ) * կամ Օտլ (գ) *	-
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ (բ)	Ռլգ (գ)		Հլգ (գ)*	-
Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ) **		Հլգ (գ)*	-
Պատմություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ (գ)		Հլգ (գ)*	5
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ) **			21
Իրավագիտություն	Հլգ (գ)	ՀԺՊ (գ)	Օտլ (գ) **		26
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ) **		20
Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ (գ)*	-
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ (գ)*	14
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	-
Սերվիս	Ա (գ) կամ ՀԺՊ (գ)		Օտլ (գ) **	Հլգ (գ)*	5
Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ (գ)*	-

1.3. 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Անվճար տեղեր			Վճարովի տեղեր ԱՏ	Այլ բուհից ընդունված	Ընդունված-ների թվակազմը
	տարկետման իրավունքով	բանակից զորացրված	ԱՏ			
1. Բանասիրական ֆակուլտետ						
Հայոց լեզու և գրականություն	-	-	1	13	-	5
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	15	-	4
Անգլերեն լեզու և գրականություն	-	-	2	20	2	5
2. Բնագիտական ֆակուլտետ						
Կենսաբանություն	-	-	-	12	-	-
Աշխարհագրություն	-	-	-	5	-	-
Համակարգչային ճարտարագիտություն	-	-	1	13	-	2
3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ						
Իրավագիտություն	-	1	-	20	9	20
Պատմություն	-	-	2	13	2	7
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	-	-	2	13	5	16
4. Տնտեսագիտական ֆակուլտետ						
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	-	1	1	13	-	16
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	-	-	2	13	1	3
Տնտեսագիտություն	-	-	1	13	1	6
Ընդամենը	-	2	12	163	17	85

2. «ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1	**Կարապետյան Վարազդատ**	**ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ**
2	**Հայրապետյան Քանաքարա**	**Խորհրդի քարտուղար, ԳՊՀ դասախոս**
3	**Սարգսյան Հայկ**	**ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ**
4	**Սանոյան Գնել**	**ՀՀ Գեղարքունիքի մարզպետ**
5	**Սահակյան Վարդան**	**ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ**
6	**Շուքուրյան Յուրի**	**ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս**
7	**Մելիքյան Սասուն**	**ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության կազմակերպման և համակարգման բաժնի պետ**
8	**Հակոբյան Արսեն**	**ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության կազմակերպման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ**
9	**Խաչատրյան Վաղարշակ**	**Կրթության ազգային ինստիտուտի բարձրագույն և հետբուհական կրթության բաժնի վարիչ**
10	**Շանոյան Դավիթ**	**«Հայբիզնես» բանկի Գավառի մասնաճյուղի տնօրեն**
11	**Կուռոյան Կարեն**	**«Գավառհաց» գործարանի տնօրեն**
12	**Սարգսյան Բագրատ**	**Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) Հայաստանի մասնաճյուղի տնօրեն**
13	**Հայդոսյան Գարիկ**	**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ» բանկի Գեղարքունիքի մասնաճյուղի տնօրեն**
14	**Գրիգորյան Վաչագան**	**Բանասիրական գիտությունների դոկտոր,**

		պրոֆեսոր, ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ
15	Կատվալյան Վիկտոր	բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, ԳՊՀ պրոֆեսոր
16	Հակոբյան Հրանուշ	Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳՊՀ դասախոս
17	Հայթյան Սաթենիկ	ԳՊՀ դասախոս
18	Հարությունյան Հարություն	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
19	Աբրահամյան Անահիտ	ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության բակալավրիատի ուսանող
20	Բաբեյան Ռիմա	ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավրիատի ուսանող
21	Գյարգրցյան Անահիտ	ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրիատի ուսանող
22	Յավրյան Անի	ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության մագիստրատուրայի ուսանող
23	Ղարիբյան Գայանե	ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրիատի ուսանող
24	Օհանյան Նարեկ	ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի «Կենսաբանություն» մասնագիտության բակալավրիատի ուսանող

3. ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

	ԳՊՀ գիտական խորհրդի նախագահ՝	
1	**Հակոբյան Ռուզաննա Խաչիկի**	*ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*
	ԳՊՀ գիտական խորհրդի քարտուղար՝	
2	**Ասոյան Թաթուլ Արտիկի**	*Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
	ԳՊՀ գիտական խորհրդի անդամներ՝	
3	**Կուտուզյան Նելլի Ալբերտի**	*ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
4	**Ապրոյան Արսեն Հրաչիկի**	*ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու*
5	**Ավագյան Մարտին Պատվականի**	*Բնագիտական ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր*
6	**Ղաջոյան Համլետ Գրիշայի**	*Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլ. գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
7	**Ամիրխանյան Սամվել Գրիգորի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
8	**Սիմոնյան Արմեն Արշալույսի**	*Ռուսաստանի Բնական և Էկոլոգիական գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
9	**Ղարիբյան Ալինա Ամբիկի**	*ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության պետ*
10	**Առաքելյան Արա Հրաչիկի**	*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
11	**Խաչիկյան Թերմինե Գագիկի**	*Բնագիտական ֆակուլտետի փոխդեկան, կենսաբանական գիտությունների թեկնածու*
12	**Հարությունյան Համլետ Մալխասի**	*Պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

13	**Թունյան Վալերի Գեորգիի**	*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
14	**Մուրադյան Գուրգեն Գևորգի**	*ԳՊՀ գլխավոր հաշվապահ*
15	**Սաֆարյան Խաչատուր Ժորայի**	*ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ*
16	**Հերգնյան Մարիամ Նորիկի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
17	**Ղուլոյան Հակոբ Մելսիկի**	*Հաշվապահական հաշվառում ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
18	**Զաքոյան Հրաչյա Սամվելի**	*Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*
19	**Միրիբյան Գայանե Աշոտի**	*Օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտ. թեկնածու*
20	**Քուրքչյան Լուսիկ Ներսեսի**	*Մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
21	**Սիրունյան Լյովա Գուրգենի**	*ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ*
22	**Պողոսյան Աշխունջ Ամիրխանի**	*Պատմական գիտությունների թեկնածու*
23	**Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի**	*Մանկավարժական գիտությունների թեկնածու*
24	**Խաչատրյան Գայանե Արտիկի**	*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
25	**Ավետիսյան Կարինե Սամվելի**	*Քիմիական գիտությունների թեկնածու*
26	**Ավետիսյան Վարազդատ Կորյունի**	*Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտ. թեկնածու*
27	**Ղռեջյան Լուսինե Խաչատուրի**	*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
28	**Սարգսյան Ալլա Էդիկի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի*
29	**Գյարգրցյան Սիրուշ Գագիկի**	*Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի*
30	**Բալագոզյան Արմինե Հովիկի**	*Բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի*

31	**Հերգնյան Գևորգ Հակոբի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման բաժնի 4-րդ կուրսի ուսանող*

4. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐ

	Անուն, ազգանուն	***Երկիր***	***Դիպլոմի բնութագիրը***	***Հանձման ժամկետը***	**Դիպլոմի համարը**
1.	**Իվան Իվանչև**	Բուլղարիա	Հասարակական ակտիվ գործունեության համար	19.05.2000	01
2.	**Ռիթա Պալյան**	ԱՄՆ	Հայրենասիրական-մարդասիրական արդյունավետ գործունեության համար	25.05.2004	02
3.	**Ջոն Էվանս**	ԱՄՆ	Հասարակական ակտիվ գործունեության համար	15.11.2004	03
4.	**Ռոբերտ Ենգիբարյան**	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների և բարեսիրական գործունեության համար	29.04.2006	04
5.	**Արշակ Պողոսյան**	Գերմանիա	Կիրառական ֆիզիկայի բնագավառում ունեցած ներդրումների, ինչպես նաև հայ-գերմանական գիտական համագործակցության ծրագրերի իրականացման համար	18.06.2008	05
6.	**Ռալֆ Յիրիկյան**	ՀՀ	Կրթության և գիտության գործում ներդրած մեծ վաստակի համար	30.05.2012	06
7.	**Ժիրայր Նիշանյան**	ԱՄՆ	Գիտական վաստակի, հայ երիտասարդների կրթության գործում մեծ ավանդի համար	03.10.2015	07

5. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

	Անուն, հայրանուն, ազգանուն	***Երկիր***	***Դիպլոմի բնութագիրը***	***Հանձման ժամկետը***	**Դիպլոմի համարը**
1.	**Ժիրայր Նիշանյան**	ԱՄՆ	Հայրենասիրական, բարեգործական արդյունավետ գործունեության համար	08.09.2007	01
2.	**Վահան Ափրոյան**	ՌԴ	Ուսանողներին նյութական և բարոյական աջակցության համար	30.06.2008	02

3.	**Բրունո Դյութուա**	Ֆրանսիա	Բարեգործական և մարդասիրական գործունեության համար	14.12.2011	03
4.	**Ռալֆ Յիրիկյան**	ՀՀ	Հայրենասիրական, մարդասիրական, գործունեության համար	21.06.2012	04
5.	**Ֆրանսիս Ժելիբտեր**	Ֆրանսիա	Բարեգործական և մարդասիրական գործունեության համար	03.05.2013	05

6. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ԺԻՐԱՅՐ ՆԻՇԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

h/h	***Ազգանուն, անուն, հայրանուն***	***Ֆակուլտետ, բաժին***	***Կուրս***
1.	Պողոսյան Լուսինե Արտակի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
2.	Ստեփանյան Մերի Թելմանի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
3.	Գափոյան Արևիկ Անդրանիկի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
4.	Հովհաննիսյան Անի Կամոյի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
5.	Գասպարյան Կարեն Արտակի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	1-ին
6.	Բաղդասարյան Անուշ Հակոբի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	1-ին
7.	Խեքոյան Մարիամ Սամվելի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	1-ին
8.	Խաչատրյան Մերի Արթուրիկի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
9.	Ավետիսյան Լիլիթ Սևակի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
10.	Դանիելյան Լիաննա Արսենի	Բանասիրական, անգլերեն լեզու և	2-րդ

		գրականություն	
11.	Գասպարյան Անի Անուշավանի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
12.	Այվազյան Հռիփսիմե Մնացականի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	2-րդ
13.	Այվազյան Լալա Սարգսի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	2-րդ
14.	Խաչիկյան Միլենա Հայկի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	2-րդ
15.	Հարությունյան Մերի Գևորգի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	2-րդ
16.	Թաթոսյան Անգին Թաթուլի	Բնագիտական, կենսաբանություն	2-րդ
17.	Ջժմաչյան Արևիկ Արայիկի	Բնագիտական, կենսաբանություն	2-րդ
18.	Մարտիրոսյան Ժենյա Կարենի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն	2-րդ
19.	Մարգարյան Ջուլիետա Գեղամի	Հումանիտար մասնագիտությունների, պատմություն	2-րդ
20.	Աբրահամյան Նարինե Գևորգի	Բնագիտական, դեղագործական քիմիա	2-րդ
21.	Հայրապետյան Լուսինե Մելսիկի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	2-րդ
22.	Կարապետյան Մերի Համլետի	Հումանիտար մասնագիտությունների, պատմություն	2-րդ
23.	Մարդոյան Շուշան Արայիկի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	3-րդ

24.	Սարոյան Սվետլանա Գեղամի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	3-րդ
25.	Համբարձումյան Արմինե Հարությունի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	3-րդ
26.	Հարությունյան Հռիփսիմե Գեղամի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	3-րդ
27.	Պետրոսյան Արման Սամվելի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	3-րդ
28.	Աղաբեկյան Արևիկ Կամոյի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	3-րդ
29.	Հարությունյան Դավիթ Գարիկի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	3-րդ
30.	Արզաքանցյան Էդիկ Հայկի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն	3-րդ
31.	Սաքեյան Անահիտ Սիրակի	Բնագիտական, դեղագործական քիմիա	3-րդ
32.	Մանուկյան Արուսյակ Երեմի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն,	3-րդ
33.	Սիմոնյան Արմինե Վանյայի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	3-րդ
34.	Դավթյան Մարիամ Կարենի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	3-րդ
35.	Շահրիկյան Երջանիկ Սամվելի	Բնագիտական, դեղագործական քիմիա	4-րդ
36.	Խեքոյան Ջուլիետա Սամվելի	Բնագիտական, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	4-րդ
37.	Մարդոյան Գոհար Միերի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և	4-րդ

		մեթոդիկա /տարրական կրթություն/	
38.	Մարուխյան Սյուզաննա Սամվելի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	4-րդ
39.	Սահակյան Լալա Լևոնի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	4-րդ
40.	Հակոբյան Մելանյա Զոհրակի	Բնագիտական, դեղագործական քիմիա	4-րդ
41.	Ավետիսյան Անի Արսենի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	4-րդ
42.	Խանամիրյան Էմմա Սարգսի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
43.	Սողոյան Թագուհի Արայի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	4-րդ
44.	Կատվալյան Նինա Վաչագանի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	4-րդ
45.	Ումրշատյան Վահե Արմենի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	4-րդ
46.	Ավետիսյան Արմենուհի Արթուրի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	4-րդ
47.	Մարեմկոյան Հասմիկ Կարենի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
48.	Ասատրյան Նարեկ Խաչիկի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	4-րդ
49.	Հայկազյան Գայանե Սլավիկի	Բնագիտական, դեղագործական քիմիա	4-րդ
50.	Ավետիսյան Մերի Կամոյի	Հումանիտար մասնագիտությունների, պատմություն	4-րդ
51.	Սարգսյան Կորյուն Կարենի	Տնտեսագիտական, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	4-րդ
52.	Խանձրաձյան Էմմա Վահանի	Տնտեսագիտական, ձեռնարկությունների տնտեսագիտություն և	4-րդ

		կառավարում	
53.	Միրիմանյան Քրիստինե Սամվելի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
54.	Հերգնյան Գևորգ Հակոբի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
55.	Մուսոյան Վարդան Հարությունի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	4-րդ
56.	Ղարիբյան Վարդուհի Սամվելի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	4-րդ
57.	Մկրտչյան Մարիամ Ֆրունզի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	4-րդ
58.	Գալստյան Արմենուհի Վարդանի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն,	4-րդ
59.	Ավետիսյան Անուշավան Գնելի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն	4-րդ

«ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ»

h/h	***Ազգանուն, անուն, հայրանուն***	***Ֆակուլտետ, բաժին***	***Կուրս***
1.	Ումրշատյան Վահե Արմենի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	4րդ
2.	Ավետիսյան Աստղիկ Գագիկի	Տնտեսագիտական, ֆինանսներ, մագիստրատուրա	2-րդ
3.	Իրիցյան Աննա Մակեդոնի	Բնագիտական, կենսաբանություն, մագիստրատուրա	2-րդ

4.	Ղարաբաղցյան Գագիկ Սիմոնի	Բնագիտական, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	4-րդ
5.	Բալագոզյան Տիգրան Դավիթի	Տնտեսագիտական, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	4-րդ
6.	Մխիթարյան Մարիամ Սարգսի	Բնագիտական, կենսաբանություն, մագիստրատուրա	2-րդ

«ՀՐԱՅՐ ԵՎ ԱՆՆԱ ՀՈՎՆԱՆՅԱՆՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Շահրիկյան Երջանիկ Սամվելի	Բնագիտական, դեղագործական քիմիա	4-րդ
2.	Ղարաբաղցյան Գագիկ Սիմոնի	Բնագիտական, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	4-րդ
3.	Գասպարյան Էդգար Արմենի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	4-րդ
4.	Ումրշատյան Վահե Արմենի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	4-րդ
5.	Խանամիրյան Էմմա Սարգսի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
6.	Խուրշուդյան Շուշան Յուրիկի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	2-րդ
7.	Դավթյան Մարիամ Կարենի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	3-րդ
8.	Բալագոզյան Տիգրան Դավիթի	Տնտեսագիտական, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	4-րդ
9.	Խաչիկյան Գեղամ Էդիկի	Հումանիտար մասնագիտությունների,	3-րդ

		իրավագիտություն	
10.	Գաբրիելյան Մերի Գարուշի	Հեռակա ուսուցման, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	4-րդ
11.	Մաթոսյան Մերի Գագիկի	Հեռակա ուսուցման, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2-րդ
12.	Թոփլաղալցյան Սեդա Սիմոնի	Հեռակա ուսուցման, հայոց լեզու և գրականություն,	1-ին
13.	Հարությունյան Սոնիկ Կարոյի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում	4-րդ
14.	Մարտիրոսյան Անահիտ Միշայի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում	2-րդ
15.	Զազյան Էդիկ Հովհաննեսի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	4-րդ
16.	Պետոյան Անի Արմենի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	1-ին
17.	Հակոբյան Արևիկ Արայիկի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն, մագիստրատուրա	1-ին
18.	Խաչատրյան Ռուզաննա Արարատի	Տնտեսագիտական, ֆինանսներ, մագիստրատուրա	1-ին
19.	Խաչատրյան Գոհար Արթուրի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	2-րդ
20.	Նալբանդյան Արամայիս Նորայրի	Բնագիտական, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	4-րդ
21.	Բաղդասարյան Խորեն Արսենի	Բնագիտական, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	4-րդ

22.	Սարգսյան Կորյուն Կարենի	Տնտեսագիտական, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	4-րդ
23.	Ալեքսանյան Արշակ Արծրունու	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
24.	Խաչատրյան Մարիամ Մարտիկի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն,	4-րդ
25.	Դալլաքյան Ավետիք Սարիբեկի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	3-րդ
26.	Միրիբյան Ռոբերտ Հայրապետի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	3-րդ
27.	Շահբազյան Շահեն Սիմոնի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	3-րդ
28.	Հարությունյան Ժորա Գևորգի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	1-ին
29.	Դավթյան Էդգար Արտակի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
30.	Շահինյան Անահիտ Կամոյի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
31.	Լազարյան Հասմիկ Աշոտի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
32.	Վարդանյան Անահիտ Պապինի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն, մագիստրատուրա	2-րդ
33.	Բրագինա Նելլի Ալեքսեյի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն, մագիստրատուրա	1-ին
34.	Մարգարյան Գարեգին Համլետի	Տնտեսագիտական, ֆինանսներ, մագիստրատուրա	1-ին
35.	Դավթյան Սահակ Զավենի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	2-րդ

36.	Հովեյան Նարեկ Արմենի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	2-րդ
37.	Սառյան Մարիամ Աշոտի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	2-րդ

«ԱՄՔՈՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Աֆրիկյան Լիդա Հարությունի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	4-րդ
2.	Մարգարյան Մերի Գեղամի	Հեռակա ուսուցման, դեղագործական քիմիա	1-ին
3.	Խուգոյան Սուսաննա Գեղամի	Բնագիտական, կենսաբանություն	2-րդ
4.	Գևորգյան Վահե Գագիկի	Հեռակա ուսուցման, քարտեզագրություն և կադաստրային գործ	2-րդ
5.	Գրիգորյան Տաթևիկ Ռուդիկի	Հեռակա ուսուցման, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	2-րդ
6.	Անտոնյան Անի Արայիկի	Հումանիտար մասնագիտությունների, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/մագիստրատուրա,	1-ին
7.	Նիկոլաևա Նինա Անդրանիկի	Հեռակա ուսուցման, մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/	5-րդ
8.	Ղուկասյան Փիրուզա Արարատի	Հեռակա ուսուցման, պատմություն	3-րդ
9.	Սաղաթելյան Վահե Վոլոդյայի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	2-րդ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Հարությունյան Դավիթ Գարիկի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	3-րդ
2.	Նալբանդյան Արամայիս Նորայրի	Բնագիտական, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	4-րդ
3.	Մխեյան Սարիբեկ Նորիկի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում	4-րդ
4.	Ավետիսյան Արշակ Գևորգի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
5.	Թունյան Էրիկ Հովհաննեսի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	4-րդ
6.	Ղազարյան Գագիկ Անդրանիկի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	5-րդ
7.	Գևորգյան Ալեքս Հուսիկի	Հեռակա ուսուցման, սերվիս	1-ին
8.	Սուչյան Վաղարշակ Սիմոնի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն	2-րդ
9.	Խաչիկյան Գեղամ Էդիկի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
10.	Գրիգորյան Արա Վարդանի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	4-րդ

ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

1.	Դալլաքյան Ավետիք Սարիբեկի	Տնտեսագիտական, Ֆինանսներ	3-րդ
2.	Մուրադյան Դավիթ Կարենի	Հումանիտար մասնագիտությունների, Իրավագիտություն	2-րդ
3.	Ղռեջյան Ռուբեն Ավետիքի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում	4-րդ

ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1.	Գրիգորյան Ալվինա Արայի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա	2-րդ
2.	Ոսկանյան Գոհար Վրեժի	Բանասիրական, ռուսաց լեզու և գրականություն, մագիստրատուրա	2-րդ
3.	Լազարյան Հասմիկ Աշոտի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
4.	Գյարգրցյան Սիրուշ Գագիկի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	4-րդ

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

1.	**Սարգսյան Ալլա Էդիկի**	**Տնտեսագիտական ֆակուլտետ, ֆինանսներ**	2-**րդ**
2.	Մարեմկոյան Հասմիկ Կարենի	Տնտեսագիտական ֆակուլտետ, հաշվապահական հաշվառում	4-րդ
3.	Շահինյան Անահիտ Կամոյի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
4.	Գարգրցյան Անահիտ Հայկարամի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	3-րդ
5.	Տեր-Գասպարյան Աստղիկ Օնիկի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	1-ին
6.	Հովեյան Նարեկ Արմենի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	1-ին
7.	Սաղեյան Արփինե Արմենի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	3-րդ
8.	Ումրշատյան Վահե Արմենի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
9.	Բաղդասարյան Խորեն	Բնագիտական,	4-րդ

	Արսենի	ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	
10.	Մուխսյան Հրաչուհի Հրաչյայի	Բանասիրական, ռուսաց լեզու և գրականություն, մագիստրատուրա	1-ին
11.	Գինոյան Աշխեն Սուրենի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	2-րդ
12.	Խաչատրյան Սրբուհի Անդրանիկի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	2-րդ
13.	Բրագինա Նելլի Ալեքսեյի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն, մագիստրատուրա	1-ին
14.	Ալեքսանյան Արշակ Արծրունու	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	4-րդ
15.	Աղեկյան Հռեփսիմե Արամի	Տնտեսագիտական ֆակուլտետ, ֆինանսներ	2-րդ
16.	Աբրահամյան Անահիտ Գվիտոնի	Տնտեսագիտական ֆակուլտետ, ֆինանսներ	2-րդ
17.	Մելքոնյան Անուշ Կառլենի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա	1-ին
18.	Ասատրյան Նարեկ Խաչիկի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	4-րդ
19.	Նաջարյան Մարինա Մարկոսի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	2-րդ
20.	Սառյան Մարիամ Աշոտի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	2-րդ
21.	Թաթարյան Մերի Մանուկի	Տնտեսագիտական, ֆինասներ	4-րդ

ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ՝ Նունե Միրիբյան

7. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ (ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐԸ)՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

Ֆակուլտետ, ամբիոններ	Պրոֆե-սորներ	Դոցենտ-ներ	Ասիս-տենտներ	Դասա-խոսներ	Ընդամենը
Բանասիրական Հայոց լեզվի և գրականության Օտար լեզվի և գրականության	2 -	5 3	4 8	3 9	14 20
Բնագիտական Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	3 1	7 5	- -	7 8	17 14
Հումանիտար մասնագիտությունների Իրավագիտության Հասարակական գիտությունների	2 3	2 6	4 1	6 9	14 19
Տնտեսագիտական Կառավարման և ֆինանսների Հաշվապահական հաշվառման	4 3	6 2	2 1	9 4	21 10
Ընդամենը	*18*	*36*	*20*	*55*	*129*

8. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ

8.1.Բակալավրիատ

Ֆակուլտետ, մասնագիտություն	Ուսանողների թիվը				Ընդա-մենը
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	
Բանասիրական					
Հայոց լեզու և գրականություն	-	8	6	9	*23*
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	-	-
Անգլերեն լեզու և գրականություն	10	8	4	8	*30*
Ընդամենը ֆակուլտետում	*10*	*16*	*10*	*17*	*53*
Բնագիտական					
Կենսաբանություն	-	4	-	-	*4*
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	-	-	-	16	*16*
Համակարգչային ճարտարագիտություն	5	4	8	-	*17*
Դեղագործական քիմիա	-	2	5	4	*11*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*5*	*10*	*13*	*20*	*48*
Հումանիտար մասնագիտությունների					
Իրավագիտություն	2	5	10	14	*31*
Պատմություն	-	7	-	5	*12*
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	-	6	7	8	*21*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*2*	*18*	*17*	*27*	*64*
Տնտեսագիտական					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	1	12	14	10	*37*
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	-	5	6	11	*22*
Տնտեսագիտություն	2	4	-	10	*16*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*3*	*21*	*20*	*31*	*75*
ԸՆԴԱՄԵՆԸ	*20*	*65*	*60*	*95*	*240*

8.2. Մագիստրատուրա

Ֆակուլտետ, մասնագիտություն	ՈՒսանողների թիվը		Ընդամենը
	I կուրս	II կուրս	
Բանասիրական			
Հայոց լեզու և գրականություն	5	4	9
Ռուսաց լեզու և գրականություն	4	3	7
Անգլերեն լեզու և գրականություն	5	5	10
Ընդամենը ֆակուլտետում	14	12	26
Բնագիտական			
Համակարգչային ճարտարագիտություն	2	3	*5*
Կենսաբանություն	-	4	*4*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*2*	*7*	*9*
Հումանիտար մասնագիտությունների			
Իրավագիտություն	17	20	*37*
Պատմություն	6	5	*11*
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	15	6	*21*
Ընդամենը ֆակուլտետում	*38*	*31*	*69*
Տնտեսագիտական			
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	16	10	*26*
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	3	3	*6*
Տնտեսագիտություն	6	7	*13*
Ընդամենը ֆակուլտետում	*25*	*20*	*45*
ԸՆԴԱՄԵՆԸ	*79*	*70*	*149*

8.3. Հեռակա ուսուցման ֆակուլտետ

Ֆակուլտետ, մասնագիտություն	ՈՒսանողների թիվը բակալավր					Ընդամենը
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս	
Հայոց լեզու և գրականություն	-	-	-	-	5	5
Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/	-	-	-	18	19	37
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	21	24	19	-	-	64
Պատմություն	6	5	7	-	4	22
Սերվիս	6	3	-	-	8	17
Իրավագիտություն	34	57	60	62	41	254
Հաշվապահական հաշվառում	-	-	-	28	19	47
Հաշվապահական հաշվառում /ըստ ոլորտի/	19	28	33	-	-	80
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	-	-	-	4	10	14
Համակարգչային ճարտարագիտություն	11	11	25	-	-	47
Քարտեզագրություն և կադաստրային գործ	-	6	-	-	-	6
Դեղագործական քիմիա	-	6	9	12	3	30
Ընդամենը	97	140	153	124	109	623

9. Շ Ր Ջ Ա Ն Ա Վ Ա Ր Տ Ն Ե Ր

9.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2018թ.			2019թ.		
	բակալավր (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի-ների	Ընդա-մենը	բակալավր (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի-ների	Ընդա-մենը
Բանասիրական						
Հայոց լեզու և գրականություն	7 (6)	-	7 (6)	8 (6)	-	8 (6)
Ռուսաց լեզու և գրականություն	4 (0)	-	4 (0)	-	-	-
Անգլերեն լեզու և գրականություն	11 (5)	-	11 (5)	8 (3)	-	8 (3)
Բնագիտական						
Բնապահպանություն և բնօգտագործում	2	2	2	-	-	-
Դեղագործական քիմիա	6	-	6	4 (2)	-	4 (2)
Սերվիս	8 (6)	1	8 (6)	-	-	-
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	10 (6)	-	10 (6)	15 (2)	1	15 (2)
Հումանիտար մասնագիտություններ						
Իրավագիտություն	27(8)	-	27(8)	14(4)	-	14(4)
Պատմություն	4(4)	-	4(4)	5(5)	-	5(5)
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	15(1)	-	15(1)	7(3)	-	7(3)
Տնտեսագիտական						
Ֆինանսներ	29(15)	-	29(15)	10(4)	-	10(4)
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	9(6)	1	9(6)	11(8)	-	11(8)
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	10(4)	-	10(4)	10(4)	-	10(4)
Ընդամենը	*142 (61)*	*4*	*142 (61)*	*92(41)*	*1*	*92(41)*

9.2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2018թ.			2019թ.		
	մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարիների	Ընդամենը	մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարիների	Ընդամենը
Բանասիրական						
Հայոց լեզու և գրականություն	10(9)	-	10 (9)	4(4)	-	4 (4)
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	3(2)	-	3(2)
Անգլերեն լեզու և գրականություն	14(12)	-	14(12)	5(4)	-	5(4)
Բնագիտական						
Բնապահպանություն և բնօգտագործում	1		1	-		-
Կենսաբանություն	-		-	4 (3)		4 (3)
Համակարգչային ճարտարագիտություն	5 (3)	-	5 (3)	3 (0)		3 (0)
Հումանիտար մասնագիտություններ						
Իրավագիտություն	12(1)	-	12(1)	17(5)	-	17(5)
Պատմություն	7(3)	-	7(3)	5(5)	-	5(5)
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	4(3)	-	4(3)	6(4)	-	6(4)
Տնտեսագիտական						
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	8 (4)	-	8 (4)	10(4)	-	10(4)
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	3 (2)	-	3 (2)	2 (1)	-	2 (1)
Տնտեսագիտություն	3 (2)	1	3 (2)	7 (4)	-	7 (4)
Ընդամենը	*67 (39)*	*1*	*67 (39)*	*66(36)*	-	*66(36)*

9.3. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2018թ.						2019թ.					
	դիպլոմ վորված մասնագետ (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում նախորդ տարի-ների	Ընդա-մենը	բակալավր (գերա-զան-ցության դիպլոմով)	այդ թվում նախորդ տարիների	Ընդա-մենը	դիպլոմ վորված մասնագետ (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում նախորդ տարի-ների	Ընդա-մենը	բակալավր (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում նախորդ տարիների	Ընդա-մենը
Հայոց լեզու և գրականություն	-	-	-	11(1)	-	11	-	-	-	5(2)	-	5
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	6 (1)	-	6	-	-	-	-	-	-
Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/	-	-	-	16	-	16	-	-	-	19	-	19
Պատմություն	-	-	-	11	4	11	3	3	3	4	-	4
Դեղագործական քիմիա	-	-	-	9 (1)	-	9	-	-	-	3	-	3
Աշխարհագրություն	-	-	-	1	-	1	-	-	-	-	-	-
Իրավագիտություն	-	-	-	41	3	41	-	-	-	35(2)	-	35
Հաշվապահական հաշվառում	-	-	-	21(2)	3	21	-	-	-	15(1)	-	15
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	-	-	-	9	-	9	-	-	-	9	-	9
Կենսաբանություն	-	-	-	5	-	5	-	-	-	-	-	-
Քարտեզագրություն և կադաստրային գործ	-	-	-	3(1)	-	3	-	-	-	-	-	-
Սերվիս	-	-	-	-	-	-	-	-	-	8	-	8
Ընդամենը	-	-	-	133(6)	10	133	3	3	3	98(5)		98

10. ՊՐԱԿՏԻԿԱ

N	*Ֆակուլտետ, Ամբիոններ*	*Կուրս*	*Պրակտիկայի բնույթը*	*Տևողությունը շաբաթներով*	*Անցկացման վայրը*
Բանասիրական					
1.	Հայոց լեզու և գրականություն	Բակ. III Մագ. II	մանկավարժական գիտամանկավարժական գիտահետազոտական	6 4 4	Գեղարքունիքի մարզի դպրոցներ ԳՊՀ ԳՊՀ
2.	Ռուսաց լեզու և գրականություն	Մագ. II	գիտամանկավարժական գիտահետազոտական	4 4	ԳՊՀ ԳՊՀ
3.	Անգլերեն լեզու և գրականություն	Բակ. III Բակ. IV Մագ. II	մանկավարժական գիտամանկավարժական գիտահետազոտական	6 4 4 4	Գեղարքունիքի մարզի դպրոցներ ԳՊՀ ԳՊՀ
Բնագիտական					
1.	Համակարգչային ճարտարագիտություն Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	III IV	արտադրական նախաավարտական	2 2	ԳՊՀ, «Luseen» mobile
2.	Համակարգչային ճարտարագիտություն	Մագ II	գիտամանկավարժական, գիտահետազոտական	4 4	ԳՊՀ, ԳՊՀ
3.	Դեղագործական քիմիա	II III IV	ուսումնական, արտադրական, նախաավարտական	2 2 4	Գավառի մերձակայք, ՀՀ Գեղարքունիքի մարզերի դեղատներ
4.	Կենսաբանություն	II	ուսումնական	3	Գավառի մերձակայք, Գավառագետի հովիտ
5.	Կենսաբանություն	Մագ. II	գիտամանկավարժական, գիտահետազոտական	4 4	ԳՊՀ, ԳՊՀ
Հումանիտար մասնագիտություններ					
1.	Իրավագիտություն	IV	նախաավարտական	8	ՀՀ Ընդհանուր իրավասության դատարաններ, ՀՀ դատական դեպարտամենտ, Գավառի ՔԿԱԳ բաժին
2.	Պատմություն	IV	մանկավարժական	6	ՀՀ հանրակրթական դպրոցներ

3.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	II	ուսումնական	2	ՀՀ հանրակրթական դպրոցներ
	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	III	ուսումնամանկավարժական	6	ՀՀ հանրակրթական դպրոցներ
	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	IV	մանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
Տնտեսագիտական					
1.	Ֆինանսներ /ըստ ոլորտի/ Ֆինանսներ	III IV	ուսումնական արտադրական	4 12	ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, բանկային համակարգ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, մարզպետարաններ, քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, Ազգային վիճակագրական ծառայություն, Առևտրաարդյունաբերական պալատ
2.	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	III IV	ուսումնական արտադրական	4 12	Ազգային վիճակագրական ծառայություն, մարզպետարաններ, քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, Առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, տարբեր ոլորտների առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, բանկային համակարգ, հաշվապահական հաշվառման գրասենյակներ, աուդիտորական կազմակերպություններ
3.	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	IV	արտադրական	12	Տարբեր ոլորտների առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, բանկային համակարգ
Հեռակա ուսուցման					
	Հայոց լեզու և գրականություն	V	ուսումնական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ

	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/	V	ուսումնամանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	V	նախաավարտական	8	Վարսերի համայնքապետարան, ՀՀ հանրակրթական դպրոցներ, «Սևանի բազմագործառութային քոլեջ»ՊՈԱԿ
	Դեղագործական քիմիա	V	նախաավարտական	8	<<Գեղամա Ֆարմ>> ՍՊԸ, <<Ալֆա Ֆարմ>> ՓԲԸ դեղատներ
1.	Պատմություն	V	ուսումնամանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
2.	Իրավագիտություն	V	նախաավարտական	8	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության <<Սևան>>, <<<Հրազդան>>ՔԿՀ-ներ, ՀՀ ՊՆ ՌՈ բաժանմունք,ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի ՔԿԱԳ-բաժիններ, ՀՀ Երևան քաղաքի <<Աջափնյակի նոտարական ծառայություն>>, ՀՀ Տավուշի մարզի Գլխավոր դատախազություն, Հրազդանի համայնքապետարան
3.	Հաշվապահական հաշվառում	V	արտադրական	8	<<SEF>> վարկային կազմակերպություն, <<Քարայր>>ՍՊԸ,<< Սևանի>> ԲԿ ՓԲԸ, <<VIVACELL>> Վարդենիսի մասնաճյուղ, բանկային համակարգ
4.	Սերվիս	V	նախաավարտական	8	ՀՀ Գեղարքունիքի մազպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին, Վարդենիսի <<Վարդասար>>ՍՊԸ հյուրատուն,<<Բոհեմիան Ռեսորթ Սուիթս>> ՍՊԸ

11. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆակուլտետ, ամբիոններ	*Դասագիրք*	*Մենագրություն*	*Ուսումնական ձեռնարկ*	*Ուսումնամեթոդական ձեռնարկ*	*Հոդված*	*Զեկուց. թեզիսներ*
Բանասիրական						
Հայոց լեզվի և գրականության	-	1	1	-	18	-
Օտար լեզվի և գրականության	-	-	-	-	15	-
Բնագիտական						
Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	-	-	1	-	22	3

Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	-	-	-	-	3	-
Հումանիտար մասնագիտությունների						
Իրավագիտության	-	3	-	-	12	1
Հասարակական գիտությունների	-	2	-	-	21	-
Տնտեսագիտության						
Կառավարման և ֆինանսների	-	-	-	-	6	-
Հաշվապահական հաշվառման	-	-	3	-	6	-
Ընդամենը	-	*6*	*5*	-	*103*	*4*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի ներպետական և միջազգային կապերը

Հաստատության անվանումը		Համագործակցու-թյան ոլորտը	2014-2015 ուստարի	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի	2018-2019 ուստարի
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ							
1	Գեղարքունիքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոց	Համագործակցություն կրթության ոլորտում	V	V	V	V	V
2	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր		V	V	V	V	V
3	Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց		V	V	V	V	V
4	Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոց		-	V	V	V	V
5	Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հանրակրթական դպրոց		-	-	V	V	V
6	Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ավ. Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց		V	V	V	V	V
7	Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի N 1 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
8	Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի N 2 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
9	Գեղարքունիքի մարզի Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
10	Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան N 1 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
11	Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N 3 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V

12	Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N 8 միջնակարգ դպրոց		-	-	V	V	V
13	Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
14	Գեղարքունիքի մարզի Երանոսի N 1 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
15	Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոց		-	-	V	V	V
16	Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի Ա. Սողոմոնյանի անվան N 2 միջնակարգ դպրոց		-	-	V	V	V
17	Գեղարքունիքի մարզի Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց		-	-	-	V	V
18	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան,ԳՊՀ, «Լուսին Թեքնոլոջիս»		-	-	-	-	V
19	«Այ Էյ Բի» Բիզնեսի միջազգային ակադեմիա		-	-	-	-	V
20	«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպություն		-	-	-	-	V
21	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան		-	-	-	-	V
22	Վանաձորի Հովի. Թումանյանի անվ. պետական համալսարան		-	-	-	V	V
23	Վրաստանի Թելավիի պետական համալսարան		V	V	V	V	V

24	Վիտեբսկի տեխնոլոգիական պետական համալսարան		V	V	V	V	V
25	Մոսկվայի պետական տարածաշրջանային հումանիտար ինստիտուտ		V	V	V	V	V
26	Մոսկվայի տարածաշրջանի բարձրագույն կրթության պետական ուսումնական հաստատություն՝ «Պետական սոցիալ-հումանիտար համալսարան»		-	-	-	-	V
27	Ն. Գ. Չերնիշևսկու անվան Սարատովի ազգային պետական հետազոտական համալսարան		-	-	-	-	V
28	Մինսկի նորարարական համալսարան		-	-	-	-	V
29	Բելառուսի առևտրատնտեսական համալսարան		-	-	-	-	V
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ							
1	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ	Շարունակական մասնագիտական կրթության ապահովում	V	V	V	V	V
2	Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջ		V	V	V	V	V
3	Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ		-	V	V	V	V
4	Դիլիջանի պետական քոլեջ		V	V	V	V	V
5	Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ		V	V	V	V	V
6	Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ		V	V	V	V	V

7	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի միջին մասնագիտական կրթական քոլեջ		V	V	V	V	V
8	Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ		V	V	V	V	V
9	Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ		V	V	V	V	V
10	Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ		V	V	V	V	V
11	Կապանի պետական բժշկական քոլեջ		V	V	V	V	V
12	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ		V	V	V	V	V
13	Մարտունու պետական քոլեջ		V	V	V	V	V
14	Չարենցավանի պետական քոլեջ		V	V	V	V	V
15	Սևանի բազմագործառութային պետական քոլեջ		V	V	V	V	V
16	Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ		V	V	V	V	V
17	Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ		V	V	V	V	V
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՉ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ							
1	Համագործակցության հուշագիր ԳՊՀ-ի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և ՀՀ ՊՆ II բանակային կորպուսի միջև	Ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովման, զինծառայողների համար կրթական, տեղեկատվական, ճանաչողական, մշակութային ծրագրերի իրականացման նպատակով	V	V	V	V	V
2	Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության	Ուսանողների ռազ-մահայրենասիրական դաստիարակության ապահովման, զինծառայողների	V	V	V	V	V

	երկրորդ բանակային զորամիավորման հետ	համար կրթական, տեղեկատվական, ճանաչողական, մշակութային ծրագրերի իրականացման նպատակով					
3	Հայաստանի Գործատուների հանրապետական միություն	ԳՊՀ շրջանավարտների մրցունակության բարձրացման, բուհ-գործատու կապերի ամրապնդման և համագործակցության զարգացման նպատակով	V	V	V	V	V
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԱՎԱՐՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ							
1	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	Ուսանողների ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների անցկացում, մասնագիտական առարկաների գծով ակնարկային դասախոսությունների և սեմինար - քննարկումների կազմակերպում, համատեղ այլ ծրագրերի իրականացում	V	V	V	V	V
2	ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների գյուղապետարաններ (թվով 41)		V	V	V	V	V
3	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի Գեղարքունիքի մարզային գործակալություն		V	V	V	V	V
4	Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե		V	V	V	V	V
5	Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գավառի տարածքային ստորաբաժանում		V	V	V	V	V
6	Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վարդենիսի տարածքային ստորաբաժանում		V	V	V	V	V
7	Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ճամբարակի տարածքային		V	V	V	V	V

	ստորաբաժանում						
8	ՀՀ Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն		V	V	V	V	V
9	ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ		V	V	V	V	V
10	ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն		V	V	V	V	V
11	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ		V	V	V	V	V
12	Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Ա. Լ. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ		V	V	V	V	V
13	ՀՀ ոստիկանություն		-	-	-	-	V
14	ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային փորձա-գիտական կենտրոն		V	V	V	V	V
15	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		-	V	V	V	V
16	«Յուքոմ» հեռահաղորդակցական ընկերություն		-	-	V	V	V
17	«Սեֆ ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ		-	-	V	V	V
18	«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ		V	V	V	V	V
19	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ		V	V	V	V	V
20	«Ռադիո» ՓԲԸ		V	V	V	V	V

21	ՔԿԱԳ Գավառի տարածքային բաժին		-	-	-	V	V
22	Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
23	Գեղարքունիքի մարզի Ճամբարակի ավագ դպրոց		V	V	V	V	V
24	Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ավագ դպրոց		V	V	V	V	V
25	Գեղարքունիքի մարզի Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
26	Գեղարքունիքի մարզի Նորատուսի թիվ 3 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
27	Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվ. միջն. դպրոց		-	-	-	V	V
28	Գեղարքունիքի մարզի Գավառի ավագ դպրոց		-	-	-	V	V
29	Գեղարքունիքի մարզի Սարուխանի Մ. Խոստեղյանի անվ. թիվ 2 միջն. դպրոց		-	-	-	V	V
30	Գեղարքունիքի մարզի Լճափի միջն. դպրոց		-	-	-	V	V
31	Գեղարքունիքի մարզի Հայրավանքի միջն. դպրոց		-	-	-	V	V
32	Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 5 հիմնական դպրոց		-	-	-	V	V
33	Գեղարքունիքի մարզի Սևանի Վ. Կարապետյանի անվ. թիվ 3 հիմնական դպրոց		-	-	-	V	V
34	Գեղարքունիքի մարզի Սևանի թիվ 4 հիմնական դպրոց		-	-	-	V	V

35	Գեղարքունիքի մարզի Դդմաշենի միջն. դպրոց		-	-	-	V	V
36	Գեղարքունիքի մարզի Զովաբերի Ե. Չարենցի անվ. միջն. դպրոց		-	-	-	V	V
37	«Գազպրոմ Արմենիա ՓԲԸ» «Ծաղկաձոր Մարիոթ» հյուրանոց		-	-	-	-	V
38	«Կոմպասս» ՍՊԸ		V	V	V	V	V
39	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ		-	V	V	V	V
40	«Զակինտուրտրանս» հայ-ռուսական ՍՊԸ		V	V	V	V	V
41	«Տոտո» տուրիստական ընկերություն		V	V	V	V	V
42	«ՇԱՀ» ՍՊԸ		V	V	V	V	V
43	«Գեղամա ֆարմ» ՍՊԸ		V	V	V	V	V
44	«Ծովաձոց» հանգստյան գոտի		V	V	V	V	V
45	«Խալդի» հյուրանոց		V	V	V	V	V
46	«Երեք առյուծներ» ՍՊԸ		V	V	V	V	V
47	«Գեղամա 96» ՍՊԸ		V	V	V	V	V
48	«Քյավառի Հույս» ՍՊԸ		V	V	V	V	V
49	«Քյավառ» հեռուստաընկերություն		V	V	V	V	V
50	«Ինստիգեյթ» ուսումնական կենտրոն		-	-	-	V	V

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

GAVAR STATE UNIVERITY

INTERNATIONAL COOPERATION PROGRAMMES

Էրասմուս+-ը Եվրոպական Միության ծրագիր է կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի հարցերով, որը նախատեսված է 2014-2020 թթ. ժամանակահատվածի համար: Այն փոխարինում և համախմբում է ընթացիկ յոթ ծրագրեր, այդ թվում՝ Տեմպուսն ու Էրասմուս Մունդուսը: Իր նպատակներին հասնելու համար Էրասմուս+ ծրագիրը իրականացնում է հետևյալ 3 հիմնական գործողությունները և այլ միջոցառումներ՝

- անհատների ուսումնական շարժունություն (ՀԳ1),
- նորարարությանը միտված համագործակցություն և լավագույն փորձի փոխանակում (ՀԳ2),
- աջակցություն քաղաքական բարեփոխումներին (ՀԳ3),
- Ժան Մոնեի գործողություններ,
- գործողություններ սպորտի ոլորտում:

Էրասմուս+ ծրագիրը բաց է հետևյալ երկրների համար.

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐ- Սրանք կարող են լիարժեք մասնակցել Էրասմուս+ ծրագրի բոլոր գործողություններին՝ **Եվրոպական Միության** (**ԵՄ**) 28 **անդամ պետությունները** և 5 **ոչ ԵՄ ծրագրային երկրները** (նախկին հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետություն, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա և Թուրքիա):

ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ- Սրանք կարող են մասնակցել ծրագրի առանձին գործողությունների՝ հիմնվելով հատուկ չափանիշների և պայմանների վրա:

- **Արևելյան գործընկերության երկրներ** - Հայաստան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, Ադրբեջան:
- **Հարավային Միջերկրածովյան երկրներ** - Ալժիր, Եգիպտոս, Իսրայել, Հորդանան, Լիբանան, Լիբիա, Մարոկկո, Պաղեստին, Սիրիա, Թունիս:
- **Արևմտյան Բալկաններ** - Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Մոնտենեգրո, Սերբիա և Կոսովո (համաձայն ՄԱԿ-ի ԱԽ-ի 1244 բանաձևի և Կոսովոյի անկախության հռչակագրի մասին ԱՄԴ կարծիքի):
- **Այլ երկրներ** - Ռուսաստանի Դաշնություն:

- Ծրագրի որոշ գործողություններ բաց են աշխարհի ցանկացած գործընկեր երկրի համար: Որոշ այլ գործողությունների համար աշխարհագրական շրջանակն ավելի նեղ է:

Էրասմուս+ ծրագրի ներքո գործընկեր երկրների Էրազմուս+ ազգային գրասենյակների մանդատը ներառում է **ծրագրի միջազգային բարձրագույն կրթության հատվածին** (Հիմնական Գործողություն 1-ի, 2-ի և 3-ի շրջանակներում) առնչվող բոլոր աջակցող, խթանող, մշտադիտարկմանը և տեղեկատվության տարածմանը միտված գործողությունները:

Էրասմուս+ ծրագրի միջազգային բարձրագույն կրթության հատվածը ներառում է՝

Հիմնական գործողություն 1

✓ միջազգային կրեդիտային շարժունություն,

✓ Էրասմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրեր:

Հիմնական գործողություն 2

✓ կարողությունների զարգացմանը միտված ծրագրեր,

✓ գիտելիքահենք գործընկերություն և ռազմավարական համագործակցություն:

Հիմնական Գործողություն 3

✓ բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների թիմեր,

✓ հանձնաժողովի քաղաքական երկխոսությունը գործընկեր երկրների և տարածաշրջանների հետ,

✓ համատեղ հետազոտություններ,

✓ գործընկեր երկրներում Էրասմուս+-ի շրջանավարտների ասոցիացիաների տարածաշրջանային մասնաճյուղերը:

Erasmus+ is the new EU programme which aims to support actions in the fields of Education, Training, Youth and Sport for the period 2014-2020. It replaces and brings together seven existing programmes, including Tempus and Erasmus Mundus. In order to achieve its objectives, Erasmus+ Programme implements the following 3 Key Actions (KA) and other activities:

- Learning mobility of individuals (KA1)
- Cooperation for innovation and exchange of good practices (KA2)
- Support for policy reform (KA3)
- Jean Monnet Activities
- Actions in the field of sport

Erasmus+ Programme is open to the following countries:

PROGRAMME COUNTRIES, which can fully take part in all the Actions of the Erasmus+ Programme: 28 Member States of the European Union (EU) and 5 Non EU Programme Countries (former Yugoslav Republic of Macedonia, Iceland, Liechtenstein, Norway and Turkey).

PARTNER COUNTRIES, which can take part in certain Actions of the Programme, subject to specific criteria or conditions:

Eastern Partnership countries: Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova, Ukraine,

Southern Mediterranean countries: Algeria, Egypt, Israel, Jordan, Lebanon, Libya, Morocco, Palestine, Syria, Tunisia,

Western Balkans: Albania, Bosnia and Herzegovina, Montenegro, Serbia and Kosovo (in line with UNSCR 1244 and the ICJ Opinion on the Kosovo declaration of independence),

Other: Russian Federation, some Actions of the Programme are open to any Partner Country of the world. For some other Actions the geographical scope is less broad.

The mandate of Partner **Countries'** National Erasmus+ Offices under the Erasmus+ programme covers all supporting, promotion, monitoring and dissemination activities related to the international higher education dimension of the programme (in Key Actions 1, 2 and3).

The international higher education dimension of the Erasmus+ programme includes:

▪ Key Action 1:

✓ International Credit Mobility,

✓ Erasmus Mundus Joint Master Degrees (EMJMDs).

▪ Key Action 2:

✓ Capacity Building in Higher Edication (CBHE) Projects,

✓ Knowledge Alliances and Strategic Partnerships that are open to partner country's participation.

▪ Key Action 3:

✓ Teams of Higher Education Reform Experts,

✓ Commission's policy dialogues with the partner countries/regions,

✓ Studies,

✓ Regional chapters of Erasmus+ Alumni associations in the partner countrie

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1
ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

ERASMUS+ KA 1

STAFF AND STUDENTS' ACADEMIC CREDIT MOBLITY

Համագործակից բուհը Partner University		**Համագործակցության ոլորտը** Scope of cooperation
SAPIENZA UNIVERSITÀ DI ROMA	*Սապիենզա համալսարան (Իտալիա)* *Sapienza University (Italy)*	Իրավագիտություն, Տնտեսագիտություն, Սերվիս, տուրիզմ Law, Finance, Management, Service, Tourism
UNIVERSITÀ DI PAVIA	*Պավիայի համալսարան (Իտալիա)* *University of Pavia (Italy)*	Բանասիրություն, Իրավագիտություն, Տնտեսագիտություն Languages, Law, Finance, Management
UNIVERSITÀ DEGLI STUDI DI SALERNO	*Սալերնոյի համալսարան (Իտալիա)* *University of Salerno (Italy)*	Բնագիտություն. Դեղագործություն Natural sciences: pharmacy
UNIVERSIDAD DE ALMERÍA	*Ալմերիա համալսարան (Իսպանիա)* *University of Almeria (Spain)*	Իրավագիտություն, Տնտեսագիտություն, Սերվիս, Տուրիզմ Law, Finance, Management, Service, Tourism

VNiVERSiDAD D SALAMANCA	*Սալամանկայի համալսարան (Իսպանիա)* *University of Salamanca, (Spain)*	➡ Հումանիտար գիտություններ, ➡ Տնտեսագիտություն, ➡ Բանասիրություն, ➡ Բնագիտություն ➡ The Humanities, Economics, Philology, Natural Sciences
Universidad de Valladolid	*Վալադոլիդի համալսարան (Իսպանիա)* *University of Valladolid, (Spain)*	➡ Իրավագիտություն, Տնտեսագիտություն, Բանասիրություն, Բնագիտություն ➡ Law, Economics, Philology, Natural Sciences
UNIVERSIDADE DA CORUÑA	*Կոռունայի համալսարան, (Իսպանիա)* *Coruna University (Spain)*	➡ Իրավագիտություն, Տնտեսագիտություն. ➡ Law, Finance, Management.
ANGEL KANCHEV UNIVERSITY OF RUSE	*Անգել Կանչևի անվան Ռուսեի համալսարան (Բուլղարիա)* *"Angel Kanchev" University of Ruse (Bulgaria)*	➡ Մանկավարժություն, Ինֆորմատիկա, Բանասիրություն ➡ Education, Informatics Languages
VARNA UNIVERSITY OF MANAGEMENT	*Վառնայի կառավարման համալսարան (Բուլղարիա)* *Varna University of Management (Bulgaria)*	➡ Տնտեսագիտություն Սերվիս, Տուրիզմ ➡ Finance, Management Service, Tourism

Universidade do Minho	Մինհո համալսարան, (Պորտուգալիա) University of Minho (Portugal)	➡ Հումանիտար գիտություններ, Տնտեսագիտություն, Բանասիրություն, Բնագիտություն ➡ The Humanities, Economics, Philology, Natural Sciences
ESZTERHÁZY KÁROLY FŐISKOLA EGER • 1774	*Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարան, (Հունգարիա)* *Eszterházy Károly University of Applied Sciences, (Hungary)*	➡ Ինֆորմատիկա, Տուրիզմ, Տնտեսագիտություն. Informatics, Tourism, ➡ Business Management
SPOŁECZNA AKADEMIA NAUK UNIVERSITY OF SOCIAL SCIENCES	*Գիտությունների սոցիալական ակադեմիա (Լեհաստան) Spoleczna Akademia Nauk, (Poland)*	➡ Ինֆորմատիկա, Տուրիզմ, Տնտեսագիտություն, Անգլերեն լեզու Informatics, Tourism, ➡ Business Management, English.
ipb INSTITUTO POLITÉCNICO DE BRAGANÇA	*Բրազանկայի պոլիտեխնիկական ինստիտուտ (Պորտուգալիա)*	➡ Քիմիա, Ինֆորմատիկա, Միջազգային բիզնես կառավարում ➡ Chemical Engineering, Informatics , International Business Management
Bialystok University of Technology	*Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարան (Լեհաստան) Bialystok University of Technology (Poland*	➡ Ինֆորմատիկա, Բնագիտություն, Տնտեսագիտություն. Informatics, Natural science, ➡ Management

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԷՐԱՍՄՈՒՍ +
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ 2018-2019 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՄԱՄՆԱԿԻՑ ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

GSU ACADEMIC STAFF AND STUDENTS WHO PARTICIPATED IN EU ERASMUS+ PROGRAMS IN 2018-2019 ACADEMIC YEAR

	Անուն, Ազգանուն Name, Surname	**Կրթական աստիճան/Պաշտոն** Level/Position	**Ժամանակահատված** Duration	**Համալսարանը** University
1	Գևորգ Թորչյան Gevorg Torchyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Մինհո համալսարան, Պորտուգալիա University of Minho, Portugal
2	Ռաֆիկ Մարտիրոսյան Rafik Martirosyan	Մագիստրատուրա Master	5 ամիս 5 months	Ալմերիա համալսարան, Իսպանիա Almeria University, Spain
3	Մելիտա Ավագյան Melita Avagyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Սալամանկայի համալսարան, Իսպանիա University of Salamanca, Spain
4	Էդիկ Զազյան Edik Zazyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Սալամանկայի համալսարան, Իսպանիա University of Salamanca, Spain
5	Նորայր Բունիաթյան Norayr Bunatyan	Բակալավր Bachelor	5ամիս 5months	Սալամանկայի համալսարան, Իսպանիա University of Salamanca, Spain
6	Արփի Միրիբյան Arpi Miribyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 month	Սապիենզա համալսարան, Իտալիա Sapienza University of Rome Italy
7	Նարեկ Հարությունյան	Բակալավր	5 ամիս	Ռուսեի Անգել-Կանչևի

	Narek Harutyunyan	Bachelor	5 month	անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
8	Լենա Հակոբյան Lena Hakobyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 month	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
9	Սյուզաննա Մալաքյան Syuzanna Malakyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 month	Վալադոլիդի համալսարան, Իսպանիա University of Valladolid, Spain
10	Բագրատ Ավետիսյան Bagrat Avetisyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 month	Վալադոլիդի համալսարան, Իսպանիա University of Valladolid, Spain
11	Գարիկ Հովեյան Garik Hoveyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 month	Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարան, Լեհաստան Bialystok University of Technology, Poland
12	Հակոբ Խաչատրյան Hakob Khachatryan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Վառնայի կառավարման համալսարան, Բուլղարիա Varna University of Management, Bulgaria
13	Գայանե Խաչատրյան Gayane Khachatryan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Սալամանկայի համալսարան, Իսպանիա University of Salamanca, Spain
14	Դավիթ Թորոսյան Davit Torosyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Սալամանկայի համալսարան, Իսպանիա University of Salamanca, Spain
15	Մարտին Ավագյան Martin Avagyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Սալերնոյի համալսարան, Իտալիա University of Salerno, Italy
16	Արսեն Ապրոյան Arsen Aproyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Լոձի հասարակական գիտությունների համալսարան, Լեհաստան

				Lodz University Of Social Sciences, Poland
17	Գուրգեն Մուրադյան Gurgen Muradyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Մուրսիայի կաթոլիկ համալսարան, Իսպանիա Catholic University of Murcia, Spain
18	Մարգար Հովհաննիսյան Margar Hovhannisyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
19	Նարինե Նալբանդյան Narine Nalbandyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
20	Հարություն Գզրարյան Harutyun Gzraryan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
21	Արսեն Հակոբյան Arsen Hakobyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
22	Նելլի Կուտուզյան Nelli Kutuzyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Մինհո համալսարան, Պորտուգալիա University of Minho, Portugal

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԷՐԱՍՄՈՒՍ +

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ 2018-2019 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԳՊՀ ԱՅՑԵԼԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԻՑ ԲՈՒՀԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ

ACADEMIC STAFF OF PARTNER

UNIVERSITIES WHO VISITED GSU WITHIN

EU ERASMUS+ PROGRAMS IN 2018-2019 ACADEMIC YEAR

	Անուն, Ազգանուն Name, Surname	**Կրթական աստիճան/Պաշտոն** Level/Position	**Ժամանակահատված** Duration	**Համալսարանը** University
1	Խոսե Անտոնիո Պլազա Ուբեդա Jose Antonio Plaza Úbeda	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ալմերիա համալսարան, Իսպանիա Almeria University, Spain
2	Միգել Պերեզ Վալս Miguel Perez Valls	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ալմերիա համալսարան, Իսպանիա Almeria University, Spain
3	Սանտիագո Մարտոս Մարտինես Santiago Martos Martínez	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ալմերիա համալսարան, Իսպանիա Almeria University, Spain
4	Միլենա Պոպովա Milena Popova	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
5	Ցվետանա Շենկովա Tsvetana Shenkova	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
6	Միխայիլ Իլիև Mikhayil Iliev	Դասախոս, դեկան Staff, Dean	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria
7	Պլամեն Կանգալով Plamen Kangalov	Դասախոս, պրոռեկտոր Staff, Vice-rector	1 շաբաթ 1 week	Ռուսեի Անգել-Կանչևի անվան համալսարան, Բուլղարիա Angel-Kanchev University of Ruse, Bulgaria

8	Կիրալի Ռոլանդ Kiraly Roland	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարան, Հունգարիա Eszterházy Károly University of Applied Sciences, Hungary
9	Էդ Թրոլլ Ede Troll	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարան, Հունգարիա Eszterházy Károly University of Applied Sciences, Hungary
10	Ռոզալիա Սզաբո Rozalia Szabo	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարան, Հունգարիա Eszterházy Károly University of Applied Sciences, Hungary

ԷՐԱՍՄՈՒՍ + ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ERASMUS + KA 2 CAPACITY BUILDING

	ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷՐԱՍՄՈՒՍ+ ԾՐԱԳԻՐ ԴՈԿՄԵՆ – ERASMUS+ DOCMEN
Ծրագրի անվանումը	**Միկրոէլեկտրոնային ճարտարագիտության ոլորտում երկաստիճան նորարարական ուսումնական ծրագրերի մշակում** (DOCMEN) - 561627-EPP-1-2015-1-PL-EPPKA2-CBHE-JP
Ծրագրի համակարգող	**ԿՐԱԿՈՎԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԼԵՀԱՍՏԱՆ**
Ծրագրի տևողությունը	36 ամիս (2015 – 2019թթ.)
Ծրագրի շրջանակներում համագործակից բուհեր և կազմակերպություններ	**Եվրոպա** ✓ Բեռլինի տեխնիկական համալսարան, Գերմանիա ✓ Տիեզերական տեխնոլոգիաներ GmbH - ECM- Berlin, Գերմանիա ✓ Սոֆիայի տեխնիկական համալսարան, Բուլղարիա ✓ Տորինոյի պոլիտեխնիկական համալսարան, Իտալիա **Հայաստան** ✓ Գավառի պետական համալսարան ✓ Երևանի պետական համալսարան ✓ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան ✓ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամ **Իսրայել** ✓ Թել Ավիվ համալսարան ✓ Բար-լան համալսարան ✓ Ինժեներիայի Սեմի Շամուն քոլեջ ✓ Հոլոնի տեխնոլոգիական ինստիտուտ ✓ Ռեյ տեխնոլոգիա ՍՊԸ **Ղազախստան** ✓ Լ. Ն. Գումիլյովի անվան ազգային եվրասիական համալսարան

	✓ Կասպից պետական համալսարան ✓ Սեմիի Շակարիմ պետական համալսարան ✓ Կոզիբաևի անվան Հյուսիսային Ղազախստանի պետական համալսարան ✓ «Ներդրումների և զարգացման նախարարության տիեզերքի հետազոտության և տեխնոլոգիայի ազգային կենտրոնի բաժնետիրական ընկերություն
Ծրագրի համառոտ նկարագիրը	Ծրագրում ներառված են 16 համալսարաններ: Չորսը ծրագրային երկրներից՝ Լեհաստանից, Բուլղարիայից, Իտալիայից և Գերմանիայից, 4 համալսարաններ Ղազախստանից, 4-ը Հայաստանից, 4-ը Իսրայելից, երկու շահառու կազմակերպություններ համապատասխան բնագավառից՝ Ղազախստանից և Իսրայելից, և ևս մեկ ընկերություն՝ Գերմանիայից: Ծրագրային առաջարկի գլխավոր նպատակն է աջակցել թիրախային բուհերում՝ Հայաստանում, Ղազախստանում և Իսրայելում, միկրոէլեկտրոնիկայի ոլորտում բարձրագույն կրթության արդիականացմանը երկաստիճան նորարարական ուսումնական ծրագրի միջոցով՝ բնագավառի զարգացմանը, աշխատաշուկայի պահանջներին և Բոլոնյան գործընթացին համահունչ: Նախատեսվող արդյունքներն ու վերջնարդյունքներն են. թիրախային բնագավառի ներկայիս ուսումնական ծրագրերի (ՄԱ, ԲԱ) վերանայում և բարելավում 11 նոր հիմնական ուսումնական ծրագրերի և 5 մոդուլների մշակում, նոր ձեռնարկների, ուղեցույցների մշակում և հրատարակում, ՎԵԲ հարթակի ստեղծում, սարքավորումների գնում, միկրոլաբորատորիաներում նոր ուսումնական ծրագրով մագիստրոսական դասընթացների կազմակերպում, MicSO-ի հիմնում: Արդյունքը. բարձրագույն կրթության ոլորտի և աշխատաշուկայի սերտ համագործակցություն՝ միկրո-նանո տեխնոլոգիաների զարգացման նպատակով: Ակադեմիական բովանդակությունը. ԿՊԿՀ-ին համահունչ 16 ուսումնական ծրագիր և մոդուլ միկրո և նանո էլեկտրոնիկայի ոլորտում:
Ծրագրի կայքէջը	http://www.docmen-project.pl
Project title	Development of two cycle innovative curricula in microelectronic engineering (DOCMEN) 561627-EPP-1-2015-1-PL-EPPKA2-CBHE-JP
Applicant	Cracow University of Technology, Poland

(Coordinator)	
Duration	36 months (2015 – 2019)
Partners	Technische Universitat Berlin – Germany Space Technology GmbH - ECM- Berlin – Germany Technical University of Sofia – Bulgaria Politecnico di Torino – Italy Armenia ✓ Gavar State University ✓ Yerevan State University ✓ National Polytechnic University of Armenia ✓ European Regional Educational Academy Foundation Israel ✓ Tel Aviv University ✓ Bar-Ilan University ✓ Sami Shamoon College of Engineering ✓ Holon Institute of Technology ✓ Ray Techniques Ltd. Kazakhstan ✓ L.N. Gumilyov Eurasian National University ✓ Caspian Public University ✓ Shakarim State University of Semey ✓ North Kazakhstan State University named after M. Kozybayev ✓ Joint Stock Company "National Center of Space Researches and Technologies" of the Ministry of Investments and Development
Project Description	The project consist of 16 universities: four from program countries PL, DE, BG and IT; four from KZ, four from AM, four from IL; two stakeholders of related field: 1-from KZ and 1-from IL and spin-off company- ECM from DE. The overall objectives of the proposal are: To support the modernisation of the higher education (HE) in microelectronics in the targeted Universities in AM, KG and IL through innovation of two cycles curricula in line with the new development in the area, the labour market demand and according to the Bologna Process and best practice. In relation to the output/outcomes: review/analysis of the current programmes /curricula (BA, MA) in micro- nano-electronics; to upgrade current programmes / curricula in microelectronics inclusive ECTS; to develop a set of 11 new core curricula and 5 transferable modules in micro-, nano-electronics incl. soft skills/adopt on institutional/ accredit on national level ; to develop, publish, purchase the new tutorials, handbooks, syllabi; to develop WEB based platform; to

	prepare a set of documentation for MicLabs, purchase/install the equipment; to retrain academic / non-academic teachers in new curricula and methodology; Master Classes in new curricula held in MicLabs; pilot teaching students in new curricula using Miclabs; establishment of MicSO: developing a set of documentation /purchasing/ installing equipment; staff training/pilot operation/ networking of MicSO. To address the envisaged impact: promotion of closer exchange between HEI community and labour market to meet the needs of labour market to improve training in micro – nano electronics to foster employability of educated youth and to enable networking between various stakeholders on this issue. Academic content: 16 curricula and module inclusive ECTS in micro – nano electronics using updated teaching techniques and modern learning environment.
Project Website	http://www.docmen-project.pl

	ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷՐԱՍՄՈՒՍ+ ԾՐԱԳԻՐ ՌԻՖԱՅՆ – ERASMUS+ REFINE
Ծրագրի անվանումը	**Հայաստանի և Մոլդովայի մագիստրոսական ծրագրերի բարեփոխում՝ «Ֆինանսներ» մասնագիտության ոլորտում** (REFINE) - 585784-EPP-1-2017-1-ATEPPKA2-CBHE-JP
Ծրագրի համակարգող	**Վիեննային կիրառական գիտությունների համալսարան**- M.B.H., **Ավստրիա**
Ծրագրի տևողությունը	36 **ամիս** (2017 - 2020**թթ**.)
Ծրագրի շրջանակներում համագործակից բուհեր և կազմակերպություններ	*Եվրոպա* • Ամստերդամի Սթիյթինգ համալսարան, Նիդերլանդներ • Կոշիցի տեխնիկական համալսարան, Սլովակիա • Սոֆիա Անտիպոլիսի համալսարան, Ֆրանսիա *Հայաստան* • Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևան • **Գավառի պետական համալսարան**,**Գավառ** • Ռուս-հայկական /սլավոնական/ համալսարան, Երևան

	Մոլդովա • Մոլդովայի տնտեսական գիտությունների համալսարան • Կոմրատի պետական համալսարան • Մոլդովայի պետական համալսարան
Ծրագրի համառոտ նկարագիրը	Ծրագրի նպատակն է բարեփոխումների միջոցով բարելավել Հայաստանի և Մոլդովայի ֆինանսներ մասնագիտության մագիստրատուրայի վեց ծրագրերի որակն ու արդիականությունը: «Ֆինանսներ» առարկան ընտրվել է, քանի որ այն տնտեսական զարգացման կարևոր գործոն է և այս ոլորտի հմուտ շրջանավարտները պահանջված են բիզնեսի և հանրային հատվածի ոլորտում: Ծրագրերի բարեփոխումը կառնչվի դրանց բովանդակությանը, ուսուցման մեթոդներին, դրանց համապատասխանությանն արդի աշխատանքի շուկայի պահանջներին: Ծրագրի առաջնային նպատակներն են. 1) գոյություն ունեցող վեց ծրագրերի բարեփոխումը՝ հաշվի առնելով վերջին շրջանի միջազգային զարգացումները, 2) նպաստել մագիստրոսական ծրագրերի որակի բարելավմանը և արդիականության աճին նոր և թարմացված դասընթացների նյութերի մշակման միջոցով, 3) զարգացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի կարողություններն ու հմտությունները ֆինանսների դասավանդման նոր մեթոդների և վերապատրաստման դասընթացների միջոցով, 4) Մագիստրոսական ծրագրերի համադրումը աշխատաշուկայի պահանջների հետ:
Ծրագրի կայքէջը	https://www.reforming-finance.eu/
Project title	REFORMING MASTER PROGRAMMES IN FINANCE IN ARMENIA AND MOLDOVA (REFINE) - 585784-EPP-1- 2017-1-ATEPPKA2-CBHE-JP
Applicant (Coordinator)	FACHHOCHSCHULE DES BFI WIEN GESELLSCHAFT M.B.H.– Austria
Duration	36 months (2017 – 2020)
Partners	✓ Armenian State University of Economics ✓ Gavar State University ✓ Russian-Armenian University ✓ Stichting Hogeschool Van Amsterdam – Netherlands ✓ Technical University of Košice – Slovakia ✓ Universite De Nice Sophia Antipolis – France ✓ Academy of Economic Studies of Moldova ✓ Institutia Invatamint Universitateade Stat Din Comrat

	✓ Universitatea De Stat Din Moldova
Project Description	The wider objective of the project is to enhance the quality and relevance of six existing Master (MA) programmes in Finance in Armenia and Moldova through targeted reforms. The subject of Finance was chosen, as it is a crucial factor for economic development and skilled graduates in this field are coveted by the business community and the public sector alike. At the same time studies evidence a need for reforms with regard to contents, teaching methodologies and the labour market relevance of study programmes. Against this background the specific project objectives are: 1) To reform six existing MA curricula in Finance taking into account the latest international developments in the subject area 2) To promote the quality and relevance of the MA programmes through the development of updated and new course materials 3) To further develop the competences and skills of teaching staff through training courses in innovative teaching methodologies and current topics in Finance 4) To increase the alignment of the MA programmes with labour market requirements
Project Website	https://www.reforming-finance.eu/
ABIONET	**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷՐԱՍՄՈՒՍ+ ԱԲԻՈՆԵՏ ԾՐԱԳԻՐ** – ERASMUS+ ABIONET
Ծրագրի անվանումը	**Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում** (ABioNet) 586136-EPP-1-2017-1-EL-EPPKA2-CBHE-JP
Ծրագրի համակարգող	**Սալոնիկի Ալեքսանդրի տեխնոլոգիական կրթական ինստիտուտ, Հունաստան**
Ծրագրի տևողությունը	36 **ամիս** (2017 - 2020**թթ**.)
Ծրագրի շրջանակներում համագործակից բուհեր և կազմակերպություններ	Եվրոպա • Դրեզդենի տեխնիկական համալսարան, Գերմանիա • Պորտուգալիայի կաթողիկե համալսարան • Տերամոյի համալսարան, Իտալիա

	Հայաստան • ՀՀ ԿԳՄՍ նախարարություն • Հայաստանի ազգային ագրարային համալսարան • Երևանի պետական համալսարան • **Գավառի պետական համալսարան**,**Գավառ** • Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարան
Ծրագրի համառոտ նկարագիրը	Հայաստանն այն երկիրն է, որտեղ կենսաբազմազան գյուղատնտեսական արտադրանքը կարևորագույն տնտեսական ոլորտներից է, իսկ գյուղատնտես գիտնականները, կենսաբանները և կենսատեխնոլոգներն ամենաբարձր պահանջարկ ունեցող մասնագետներից են: Իրականում, ավելի քան երբևէ, գյուղատնտեսական արտադրության ոլորտները, սննդի հաստատությունները, կորպորացիաները, պետական լաբորատորիաները և գործակալությունները, շահույթ չհետապնդող և այլ արդյունաբերական ոլորտները պահանջում են, որ իրենց գիտակրթական աշխատողները նաև գործարար հմտություններ ունենան: Միաժամանակ ձեռնարկությունների և կրթության համակարգի միջև մեծ բացթողում կա. ընդհանրապես MSc ծրագրերը չեն ներդաշնակեցվում բիոտոնային արտադրատեսակների ակտիվ աճող պահանջների հետ: Ազգային կրթության և գիտության զարգացման առաջնահերթությունների միջոցով ABioNet ծրագիրը փորձում է լրացնել կրթության, ձեռնարկատիրության և նորարարության միջև առկա բացերը: ABioNet-ը կստեղծի և կներկայացնի նոր ուսումնական ծրագրեր կենսաբանական արտադրանքի գիտության և տեխնոլոգիաների վերաբերյալ՝ հաշվի առնելով նորաստեղծ պլատֆորմի շրջանակներում ԵՄ բուհերի լավագույն փորձը՝ ուղղված համալսարանների, գիտահետազոտական կենտրոնների և ձեռնարկությունների միջև արդյունավետ համագործակցությանը և կենսաակտիվ արտադրության ոլորտում նորարարությունների խթանմանը: Այսպիսի ցանցի ստեղծման գաղափարը՝ ստեղծված ռեսուրսներով, որոնք միմյանց կապվում են նույն հարթակում և թույլ են տալիս ուսանողների և աշխատակիցների շարժունություն բուհերի և այլ գործընկերների միջև Հայաստանում և ԵՄ-ում, նոր բնույթ է կրում:
Ծրագրի կայքէջը	http://abionet.eu/
Project title	ARMENIAN NETWORK OF EXCELLENCE IN BIO-PRODUCTS SCIENCE AND TECHNOLOGY (ABIONET)

	586136-EPP-1-2017-1-EL-EPPKA2-CBHE-JP
Applicant (Coordinator)	Alexander Technological Educational Institute of Thessaloniki – Greece
Duration	36 months (2017 – 2020)
Partners	EU Partners ✓ Technische Universitaet Dresden, Germany ✓ Universidade Catolica Portuguesa, Portugal ✓ Universita Degli Studi Di Teramo, Italy Armenian partners ✓ Armenian National Agrarian University (ANAU) ✓ Yerevan State University (YSU) ✓ Gavar State University (GSU) ✓ Shirak State University after M. Nalbandyan ✓ Ministry of Education and Science of RA (MoES)
Project Description	Armenia is the country where the bio-based and agricultural production in general are among the most important economic sectors, where the agricultural scientists, bioscientists and biotechnologists are among the most demanded professions. The modern agricultural and food production sector need skills and credentials that place them above and beyond the crowd. In fact, more than ever, agricultural production sectors, food institutions, corporations, government laboratories and agencies, non-profits, and other industrial sectors are demanding that their science-educated employees also command various business-related skills and entrepreneurship. In parallel there is a big gap between the enterprises and the education, MSc programmes in general are not harmonized with the requirements of the actively growing bio-based products sector. Undressing the national education and science development priorities ABioNet Project is trying to fill the gaps between the education and entrepreneurship and innovation. The ABioNet will create and deliver new curricula on bio products science and technology taking into account the best practices of EU universities within newly established platform for effective collaboration between the universities, research centres and enterprises and to promote innovations in the field of Bio based production. The idea to set up such kind of network within set up resources which are virtually linked in one platform and allowed the mobility of the students and staff between Armenian HEIs and other partner in Armenia and in EU is new in Armenian community.
Project Website	http://abionet.eu/

	ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷՐԱՍՄՈՒՍ+ ՍՄԱՐԹ ԾՐԱԳԻՐ – ERASMUS+ SMART
Ծրագրի անվանումը	**Զարգացնել համալսարան-ձեռնարկություններ համագործակցությունը, ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով խթանել ուսանողների ձեռնարկատիրական գործունեությունը**
Ծրագրի համակարգող	**Սալոնիկի Ալեքսանդրի տեխնոլոգիական կրթական ինստիտուտ, Հունաստան**
Ծրագրի տևողությունը	36 **ամիս** (2017 - 2020**թթ**.)
Ծրագրի շրջանակներում համագործակից բուհեր և կազմակերպություններ	• Պադերբորնի համալսարան, Գերմանիա • Կաթողիկե քոլեջ Վիվես Զուիդ, Բելգիա • Սան Անտոնիոյի համալսարան, Իսպանիա • Վառնայի կառավարման համալսարան, Բուլղարիա • Մոլդովայի Ալեկո Ռուսոյի համալսարան, Մոլդովա • Մոլդովայի պետական ագրարային համալսարան • Մոլդովայի տնտեսագիտական ակադեմիա • Նորարարության և կայուն զարգացման խթանման ասոցիացիա, Մոլդովա • Բելառուսական առևտրաարդյունաբերական, սպառողական կոոպերատիվների համալսարան • Մինսկի կրթական ինստիտուտների ինովացիոն համալսարան • Բելառուսական նորարարական հիմնադրամ • **Գավառի պետական համալսարան** • Երեւանի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան, Հայաստան • Դիլիջանի երիտասարդության համագործակցության կենտրոն ՀԿ
Ծրագրի համառոտ նկարագիրը	Ծրագրիրն առնչվում է Հայաստանի, Մոլդովայի և Բելառուսի երիտասարդներին վերաբերող մարտահրավերներին: Այն նպատակ ունի խթանել ուսանողների ձեռնարկատիրական գաղափարների իրագործումը և աջակցել նրանց բաց, ստեղծագործ, նորարարական նախաձեռնությունների դրսևորմանը՝ ձեռնարկությունների և բուհերի միջև ստեղծելով բարենպաստ միջավայր SMART Caffees-ի միջոցով: Հիմնական գաղափարն է ուսանողներին և երիտասարդ հետազոտողներին խրախուսել կյանքի կոչելու իրենց նորարարական գաղափարները: Ուսանողական թիմերը հնարավորություն

	կունենան լայն, նորարարական համագործակցություն ստեղծելու համալսարանների և ձեռարկությունների միջև: Ծրագրի ավարտին ակնկալվող վերջնարդյունքներից են ներդրված նոր ուսուցման մեթոդները, ակադեմիական անձնակազմի հմտությունների և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների բարելավումը, կրթության և հանրային-մասնավոր-համայնքային ձեռնարկությունների համագործակցության նոր մոդելի ներդրումը:
Ծրագրի կայքէջը	https://www.smartcaffe.eu/
Project title	Fostering university-enterprise cooperation and entrepreneurship of students via SMART Caffes- 585620 - EPP-1-2017-1-EL-EPPKA2-CBHE-JP
Applicant (Coordinator)	Alexander Technological Educational Institute of Thessaloniki – Greece
Duration	36 months (2017 – 2020)
Partners	• Belarusian Trade And Economics University Of Consumer Cooperatives • Universitatea Agrara De Stat Din Moldova • Yerevan Brusov State University Oflanguages And Social Sciences • Education Institution Minsk Innovation University • Asociatia Obsteasca Asociatia Pentru Sustinerea Inovarii Si Dezvoltarii Durabile Impuls • Katholieke Hogeschool Vives Zuid • Gavar State University • Universitaet Paderborn • Academy Of Economic Studies Of Moldova • Belarusian Innovative Fund • Visshe Uchilishte Po Menidzhmant • Universitatea De Sta Alecu Russo Din Balti • Youth Cooperation Centre Of Dilijan Ngo • Fundacion Universitaria San Antonio
Project Description	Project proposal is concrete response to the challenges that address Armenia, Moldova, Belarus. It aim to encourage students' entrepreneurial intent and support open innovation approach in collaboration between companies and universities in creative, supportive and motivating environment - SMART Caffes. The core idea is to provoke (stimulate, motivate) students and young researchers to actively use their intellectual potential to generate innovative ideas. During this process student teams will have the

	opportunity to be mentored, guided and advised by company representatives and university staff. EXPECTED IMPACT is envisaged on: Institutional level: new teaching approaches implemented, teaching staff skills increased, entrepreneurial skills of students fostered, improved quality of education. Regional level: new model of a public-private-people partnership fits to EaCP created, strong Network of motivating environment for students (SMART Caffes) created, contact-building between entrepreneurs – students –HEIs improved. https://www.smartcaffe.eu/

	ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ **ԷՐԱՍՄՈՒՍ+** MENVIPRO
Ծրագրի անվանումը	**Հայաստանի և Վրաստանի շրջակա միջավայրի պահպանման ծրագրերի արդիականացում** (MENVIPRO) 598232-EPP-1-2018-1-IT-EPPKA2-CBHE-JP
Ծրագրի համակարգող	**Տուսկիայի համալսարան**, **Իտալիա**
Ծրագրի տևողությունը	36 months (2018-2021)
Ծրագրի շրջանակներում համագործակից բուհեր և կազմակերպություններ	• ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն • ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն • **Գավառի պետական համալսարան** • Ազգային հետազոտական խորհուրդ, Իտալիա • Giraf Pm Gmbh ծառայություններ, Գերմանիա • Հալլ-Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարան, Գերմանիա • Լիսաբոնի համլսարան, Պորտուգալիա • Վրաստանի հետազոտությունների և կրթական ցանցերի ասոցիացիա • Իլիայի պետական համալսարան • Վրաստանի համալսարան

Ծրագրի համառոտ նկարագիրը	Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել ՀՀ-ում և Վրաստանում շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում մագիստրոսական ծրագրերի որակը ուսումնական պլանների արդիականացման հիման վրա `Բոլոնիայի, ԵԱՏՄ Զալցբուրգի սկզբունքներին և եվրոպական լավագույն փորձին համապատասխան: Ուսումնական ծրագրերի մշակումն ամուր կերպով հիմնված կլինի Եվրոպայում, նպատակային երկրներում և դրանից դուրս ձեռք բերված լավագույն փորձի վերլուծության վրա և կներառի վերջին նորարարությունները կրթական տեխնոլոգիաներում: Ուշադրության կենտրոնում է լինելու ասպիրանտուրայի և հետազոտական գործունեության միջև սերտ փոխհարաբերությունները՝ շրջանավարտներին առավելագույն գիտելիքներով և գործնական հմտություններով վերազինելու համար: EP- տեխնոլոգիական գիտելիքների տիրույթում մագիստրոսական կրթությունը արմատապես արդիականացնելու համար նախագիծը կստեղծի եզակի միջհամալսարանական կրթական և հետազոտական հնարավորություն, որը կօգտագործվի ուսանողական նախագծերի, արտաքին շահագրգիռ կողմերի հետ համատեղ համագործակցության ծրագրերի և ցուցադրական գործողությունների ամրապնդման համար ամրապնդելու համալսարանական միջավայրի հետ կապերը և խթանելու էկոլոգիապես մաքուր շրջակա միջավայր ունենալու մտածողությունը: Ծրագիրը ներառում է բազմազան և միմյանց փոխլրացնող փորձով հավաստի գործընկերներ Հարավային Կովկասի տարածաշրջանից, ինչպես նաև Իտալիայից, Պորտուգալիայից և Գերմանիայից:
Ծրագրի կայքէջը	https://www.menvipro.eu/
Project title	Modernization of environment protection studies programmes for Armenia and Georgia (MENVIPRO) 598232-EPP-1-2018-1-IT-EPPKA2-CBHE-JP
Applicant (Coordinator)	Universita Degli Studi Della Tuscia – Italy
Duration	36 months (2018-2021)
Partners	• Center for Ecological-Noosphere Studies of NAS RA • International Scientific Educational Center of National Academy of Sciences of the Republic of Armenia (ISEC NAS RA)

	• Gavar State University (GSU) • Consiglio Nazionale Delle Ricerche – Italy • Giraf Pm Services Gmbh – Germany • Martin-Luther-Universitaet Halle-Wittenberg – Germany • Universidade De Lisboa – Portugal • Georgian Research and Educational Networking Association • Ilia State University • The University Of Georgia
Project Description	The overall objective of the project is to significantly improve the quality of MSc. studies in the field of Environment Protection in Armenia and Georgia on the basis of complex modernization of the curricula in line with the Bologna principles, Salzburg principles of EAU and best European practice. The curricula development will be firmly based on the analysis of the best practice obtained in Europe, target countries and beyond and incorporate the latest innovations in educational technologies. The focus will be on close relations between postgraduate studies and research activities in order to equip the graduates with cutting edge knowledge and practical skills. University-society-industry links will play also a key role to guarantee high employability of graduates. In order to radically modernize the MSc. education in EP – technology-intensive domain of knowledge, the project will establish a unique inter-University education and research facility, which will be used for student projects, collaborative projects with external stakeholders and demonstration activities to reinforce links to the University environment and promote environment-friendly mindsets. The project consortium combines credible partners with diverse and mutually complementary expertise from the region of South Caucasus, as well as Italy, Portugal and Germany.
Project Website	https://www.menvipro.eu/

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union	**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷՐԱՍՄՈՒՍ+** FLEXWBL PROJECT
Ծրագրի անվանումը	**Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատանքի վրա հիմնված ուսուցման ճկուն, նորարարական և գործնական հիմքի մշակում**
Ծրագրի համակարգող	**Լիփաջայի համալսարան, Լատվիա**

Ծրագրի տևողությունը	36 **ամիս** (2017 - 2020**թթ**.)
Ծրագրի շրջանակներում համագործակից բուհեր և կազմակերպություններ	• Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան • Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան • **Գավառի պետական համալսարան** • Կլայպեդա համալսարան, Լիտվա • Լինզի կրթության թեմի մասնավոր համալսարան, Ավստրիա • Դոնի պետական տեխնիկական համալսարան • Տվերի պետական համալսարան • Պերմի պետական համալսարան • Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման դաշնային ծառայության մասնագետների և աշխատակիցների համար լրացուցիչ մասնագիտական դաշնային պետական բյուջետային կրթական ինստիտուտ
Ծրագրի համառոտ նկարագիրը	Հայաստանն ու Ռուսաստանը հին ավանդույթներ ունեն աշխատելու հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների հետ, ովքեր համատեղում են աշխատանքը և ուսումը: Երկու երկրների կրթության և գիտության նախարարությունները մեծ ուշադրություն են դարձնում և հիմնականում կենտրոնանում են առկա ուսուցմամբ սովորող ուսանողների կրթության երկակի մոդելի վրա: Այս որոշումը շատ արգասաբեր էր համալսարան-ձեռնարկություն համագործակցության զարգացման համար: Այնուամենայնիվ, հակառակ դրան՝ մենք տեսնում ենք բազմաթիվ ուսանողների, ովքեր աշխատում են տարբեր ընկերություններում և կազմակերպություններում, որոնք տարբեր պատճառներով չեն ներգրավվում երկակի կրթությամբ համակարգված ինստիտուցիոնալ հարաբերությունների մեջ. ընկերություններն ու համալսարանները պատրաստ չեն համակարգված զարգացնել երկակի կրթությունը, բուհերի համար հեշտ չէ իրական գործընկերներ գտնել մի խումբ ուսանողների համար և այլն: Մենք առաջարկում ենք զարգացնել նոր հնարավորություն՝ WBL ճկուն շրջանակ, որը հարմար է ցանկացած ուսանողի համար, ով համատեղում է ուսումը և աշխատանքը ցանկացած ձեռնարկությունում, և որը կարող է մշակվել ցանկացած համալսարանի կողմից՝ առանց իշխանությունների հատուկ հաստատման: Դա է հիմնական

	պատճառը, որ մեր կոնսորցիումը փորձում է համալսարան գտնել առանց իշխանությունների հատուկ հաստատման: Դա է հիմնական պատճառը, որ մեր կոնսորցիումը փորձում է գտնել ֆինանսավորում և գործընկերներ՝ մասնագիտական փորձ, գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու և տարբեր առարկաներում ուսումնական ծրագրի համար WBL ստեղծելու:
Project title	Development of a flexible, innovative and practical framework for work-based learning in higher education of Armenia and Russia (FLEXWBL) 10072-EPP-1-2019-1-LV-EPPKA2-CBHE-JP
Applicant (Coordinator)	Liepajas Universitate – Latvia
Duration	36 months (2019-2022)
Partners	• Yerevan Brusov State University of Languages and Social Sciences (YSULSS) • National University of Architecture and Construction of Armenia (NUACA) • Gavar State University (GSU) • Klaipedos Universitetas – Lithuania • Private Padagogische Hochshule der Dioseze Linz – Austria • Don State Technical University • Tver State University • Perm State University • Federal State Budgetary Educational Organization of Additional Professional Education Advanced Training Institute of Managerial Workers and Specialists Federal Service For Hydro-meteorology and Environmental Monitoring
Project Description	Armenia and Russia have a long tradition of working with part-time students combining work and learning. Ministries of Education and Science of the two countries put a great attention and focus mainly on the dual model of education for full-time students. This decision was very fruitful for the development of university-enterprise cooperation. However, opposite to this we see many students working at various companies and work places who are not involved in the systematic institutional relations with dual education due to various reasons: companies and universities are

	not ready to develop dual education systematically, it is not so easy for HEIs to find real partners for a group of students and so on. We offer to develop a new opportunity – flexible WBL Framework, which is suitable for any student who combines learning and work at any enterprise and could be developed by any university without special approval from authorities. That is the main reason why our consortium tries to find university without special approval from authorities. That is the main reason why our consortium tries to find funding and partners to obtain professional expertise and gain knowledge and skills of creation of WBL for the study programme delivery in different subjects.

	ԳՊՀ ԼԻՆԵՈՒՍ ՊԱԼՄԱ ԾՐԱԳԻՐ
Ծրագրի համակարգող	Լինեուս համալսարան, Շվեդիա
Ծրագրի տևողությունը:	Մինչև 8 ամիս
Գործընկերներ	Լինեուս համալսարան, Շվեդիա **Գավառի պետական համալսարան**, **Հայաստան**
Ծրագրի համառոտ նկարագրությունը և նպատակը	Լինեուս Պալմա ծրագրի նպատակն է իրականացնել դասախոսների և ուսանողների փոխանակման գործընթաց Շվեդիայի և տնտեսապես ցածր ու միջին զարգացման մակարդակ ունեցող երկրների միջև՝ խնդիր ունենալով ներգրավել այն երիտասարդներին, որոնք կարող են զարգացմանը միտված գործունեություն ծավալել ինչպես իրենց երկրում, այնպես էլ արտասահմանում: Ծրագրի շրջանակում ուսանողները և դասախոսները կարող են մասնակցել ակադեմիական փոխանակման գործընթացին և ձեռք բերել նոր գիտելիքներ, կարողություններ ու փորձ: Ձեռք բերած նոր գիտելիքներն ու գլոբալ հեռանկարները ուսման հետ համադրելով՝ կարելի է հասնել բարձրագույն կրթության որակի բարձրացմանը և միջազգայնացման գործընթացների խթանմանը: Այս առումով Լիննեուս Պալմա ծրագիրը Շվեդիայի համալսարաններին ընձեռում է հնարավորություն առաջարկելու դասախոսների և ուսանողների համակարգված ակադեմիական փոխանակում՝ անհատներին և ֆակուլտետներին

	տրամադրելով ուսման ոլորտի հետ կապված, ինչպես նաև մեկ այլ երկրի հետ աշխատելու փորձառություն: Օտարերկրացի դասախոսներն ու ուսանողներն ավելի մոտիկից կարող են ծանոթանալ Շվեդիային, ինչն էլ սերտ և երկարամյա համագործակցության սկիզբ կդառնա: Ակնկալվում է, որ Շվեդիայի համալսարանները, նրանց գործընկերները և այն դասախոսներն ու ուսանողները, որոնք մասնակցելու են փոխանակմանը, ձեռք բերելով նոր փորձ, ավելի պատրաստված կլինեն՝ դիմակայելու գլոբալ մարտահրավերներին: Ծրագիրն իրականացնում են 2 կողմեր. առաջին կողմը ներկայացնում է Շվեդիայի համալսարանը, իսկ երկրորդ կողմը՝ գործընկեր երկիրը: Համագործակցությունը ենթադրում է հավասար պայմաններ երկու կողմերի համար էլ նույնիսկ տարբեր ռեսուրսների հասանելիության պայմաններում:
Ծրագրի շրջանակում ակնկալվող վերջնարդյունքները ներառում են հետևյալը.	Ուսանողները և դասախոսներն ունեն միջազգային փորձ: Ուսանողները և դասախոսները խորը գիտելիքներ ունեն գլոբալ հիմնախնդիրների վերաբերյալ: Բարձրացել է ուսանողների շահագրգռվածությունը՝ զարգացմանն ուղղված համագործակցային ծրագրերում ընդգրկվելու հետ կապված: Դասախոսները գլոբալ հիմնախնդիրների մասին իրենց գիտելիքները կիրառում են ուսուցման մեջ:
Ծրագրի հիմնական նպատակներն են՝	Ուսանողները պետք է տիրապետեն հմտությունների՝ գլոբալ հիմնախնդիրների հետ աշխատելու համար: Դասախոսների միջազգային փորձը պետք է ներդրվի կրթական, հետազոտական գործունեության մեջ:

	GSU LINNAEUS-PALME PROGRAMME
Program Coordinator	Linnaeus University, Sweden
Program duration	Up to 8 months
Partners:	Linnaeus University, Sweden Gavar State University, Armenia
Short description and purpose of the program:	The purpose of the Linnaeus-Palme Programme is to use teacher and student exchanges between universities in Sweden and low- and middle-income countries, in order to widen the recruitment of young people who can work in development activities both at home and abroad. On the programme, teachers and students can participate in exchanges and gain new knowledge and experience. Integrating global perspectives and new

	knowledge into learning raises the quality of higher education and internationalises Swedish education. On this basis, the Linnaeus-Palme Programme offers an opportunity for Swedish universities to offer teacher and student exchanges in a coordinated manner, providing both individuals and departments with the experience of studying and working in another country. In the equivalent manner, foreign teachers and students will get to know Sweden and Swedish conditions. This could be the start of close, long-term relationships between the countries. The hope is that Swedish universities, their partners, and the teachers and students who are participating in the exchange will get new experience and be prepared to face global challenges. As the name implies, the programme has two parts. The first part is for Swedish teachers and students, while the second part is for teachers and students in partner countries. The mutual benefit from conducting collaborative projects, both academic and in terms of experience, must be the focus of the projects that are granted funding and all the participating departments' specific expertise must be used. This means that the cooperation must be equal in its character, even if the available resources may differ.
The expected results for projects within the Linnaeus-Palme Programme are	Students and teachers have international experience. Students and teachers have increased knowledge of global issues. Students have a high level of interest for working in development partnerships. Teachers use their knowledge of global issues in their teaching.
The overarching aims of the Linnaeus-Palme Programme are	Students have increased capacity for working with global issues. Teachers' international experiences are used in operative activities at Swedish universities.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՀՈՒՇԱԳՐԵՐԸ

Գավառի պետական համալսարանը, բացի նշված Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում համագործակցության պայմանագրերից, երկկողմանի պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր է կնքնել հետևյալ արտասահմանյան բուհերի հետ.

- Մինսկի նորարարական համալսարան, Բելառուսի Հանրապետություն
- Սպառողական կոոպերատիվների Բելառուսի առևտրատնտեսական համալսարան, Բելառուսի Հանրապետություն
- Մոսկվայի պետական տարածաշրջանային հումանիտար ինստիտուտ, Ռուսաստանի Դաշնություն
- Գ. Չերնիշևսկու անվան Սարատովի ազգային պետական հետազոտական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն
- *Ալմերիա համալսարան, Իսպանիա*
- Մինհո համալսարան, Պորտուգալիա
- *Վալադոլիդի համալսարան, Իսպանիա*
- Հռոմի Սապիենզա համալսարան, Իտալիայի Հանրապետություն
- Վիտեբսկի պետական տեխնոլոգիական համալսարան, Բելառուսի Հանրապետություն
- Մոլդովայի տեխնիկական համալսարան, Մոլդովա

GAVAR STATE UNIVERSITY INTERNATIONAL COOPERATION MEMORANDA

In addition to the European Union-funded Erasmus + Cooperation programmes Gavar State University has signed bilateral agreements and Memoranda of understanding with the following foreign universities:

- Minsk Innovation University, *Belarus*
- Trade and Economic University of Consumer Cooperatives, *Belarus*
- Moscow State University of Social-Humanities, Russia
- National Research University of Saratov named after G. Chernishevski, Russia
- *University of Almeria, Spain*
- University of Minho,Portugal
- *University of Valladolid, Spain*
- Sapienza University of Rome, Italy
- *Vitebsk state technological College, Belarus*
- Technical University of Moldova, Moldova

2018-2019 ուսումնական տարում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները ՀՀ-ում ու արտերկրում մասնակցել են հետևյալ գիտաժողովների և աշխատաժողովների

Հակոբյան Հրանուշ

2018թ. հոկտեմբերի 2, Հայաստան, Երևան, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտաժողով՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 30-ամյակին:

Հակոբյան Ռուզաննա

- 2018թ. նոյեմբերի 7, Հայաստան, Երևան, Եվրոպական Միության ծրագրերին նվիրված աշխատաժողով՝ կազմակերպված «ERASMUS+» ազգային գրասենյակի կողմից:
- 2018թ. նոյեմբերի 16, Հայաստան, Երևան, գիտաժողով ԵՊՀ-ում՝ նվիրված Վ. Ներսեսյանցի ծննդյան 80-ամյակին:
- 2019թ. մայիսի 11, Հայաստան, Գավառ, «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» գործարար համաժողով:

Հակոբյան Ռուզաննա, **Ապրոյան Արսեն**

- 2019թ. ապրիլի 30, Հայաստան, Երևան, ԵՄ «ERASMUS+ BOOST. համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարկետինգի խթանում» ծրագրի աշխատաժողով:

Հակոբյան Ռուզաննա, Խաչիկյան Թերմինե, Հովհաննիսյան Մարինե

- 2018թ. հոկտեմբերի 9-13, Գերմանիա, Դրեզդեն, ԵՄ «ERASMUS+AbioNet – Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի աշխատաժողով:

Հակոբյան Ռուզաննա, **Խաչիկյան Թերմինե**, **Հովհաննիսյան Մարինե**

- 2018թ. հոկտեմբերի 9-13 – Գերմանիա, Դրեզդեն, ԵՄ «ERASMUS+ AbioNet-Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի աշխատաժողով:

Կուտուզյան Նելլի

- 2019 թ. մայիսի 11-19 – Պորտուգալիա, Մինհո, ԵՄ «Erasmus+» ծրագրի շրջանակներում միջազգային շաբաթ:

Կուտուզյան Նելլի, **Հովհաննիսյան Մարինե**

- 2019 թ. մարտի 30-ից ապրիլի 8 – Իտալիա, Վիտերբո և Պորտուգալիա, Լիսաբոն, ԵՄ «Erasmus+MENVIPRO” ծրագրի հերթական աշխատաժողով:

Կուտուզյան Նելլի, **Ավագյան Մարտին**, **Բաղդոյան Շուշան**, **Մկրտչյան Լալա**, **Խաչիկյան Թերմինե**, **Հովհաննիսյան Մարինե**

- 2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր - Գավառի պետական համալսարանում կազմակերպված՝ «Ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արդի ձեռքբերումների կիրառումը» վերապատրաստման դասընթաց:

Կուտուզյան Նելլի, **Ավագյան Մարտին**, **Բաղդոյան Շուշան**, **Մկրտչյան Լալա**, **Խաչիկյան Թերմինե**, **Հովհաննիսյան Մարինե**

- 2019թ. մարտի 20-ից ապրիլի 10 - Գավառի պետական համալսարանում կազմակերպված՝ Կրթության բովանդակությանը, չափորոշիչներին և ելքային արդյունքներին նվիրված վերապատրաստման դասընթաց:

Ապրոյան Արսեն

- 2018թ. հոկտեմբերի 9 – հոկտեմբերի 14, Մոլդովայի Հանրապետություն, ԵՄ «ERASMUS+REFINE (Reforming master programs in finance in Armenia and Moldova (REFINE)» եվրոպական ծրագրի աշխատաժողով, Քիշնևի տնտեսագիտական ակադեմիա:
- 2018թ. նոյեմբերի 12 - նոյեմբերի 16, Իսպանիայի Թագավորություն, ԵՄ «ERASMUS+ SMART Fostering university-enterprise cooperation and entrepreneurship of students via SMART Caffes)» եվրոպական ծրագրի աշխատաժողով, Մուրսիայի համալսարան:
- 2019թ. մարտի 11- մարտի 18, Լեհաստանի Հանրապետություն, Լոձ, ԵՄ «ERASMUS+» ծրագրերի վերաբերյալ սեմինար, վերապատրաստում, Սպոլեժնա գիտությունների ակադեմիա:
- 2019թ. ապրիլի 7 – ապրիլի 13, Հունգարիայի Հանրապետություն, ԵՄ «ERASMUS+» ծրագրի շրջանակներում «Միջազգային շաբաթ - 2019» խորագրով աշխատաժողով, Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարան:
- 2019թ. մայիսի 12 – մայիսի 19, Պորտուգալիայի Հանրապետություն, ԵՄ «ERASMUS+» ծրագրի շրջանակներում աշխատաժողով, Բրագանցայի պոլիտեխնիկական ինստիտուտ:
- 2019թ. հունիսի 24 - հունիսի 28, Հայաստան, Երևան, ԵՄ «ERASMUS+ SMART Fostering university-enterprise cooperation and entrepreneurship of students via SMART Caffes)» եվրոպական ծրագրի աշխատաժողով, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան:

Սարգսյան Ռուզաննա, **Միրիբյան Գայանե**, **Մուխսիխաչոյան Արուսյակ**, **Սարգսյան Գայանե**, **Հովհաննիսյան Ալլա**

- 2018թ. նոյեմբերի 21, Հայաստան, Գավառ, ԳՊՀ, «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով ռուսաց լեզվի և գրականության դասախոսների, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միազգային գիտագործնական գիտաժողով:

Սարգսյան Ռուզաննա, **Սարգսյան Գայանե**, **Մուխսիխաչոյան Արուսյակ**, **Մելքոնյան Աննա**

- 2018թ. նոյեմբերի 21-24, Հայաստան, Երևան, ԵՊԼՀ, ՀՀ, “Диалог языков и культур СНГ и ШОС в 21-ом веке” թեմայով 14-րդ միջազգային ֆորում:

Սարգսյան Ռուզաննա

- 2018թ. սեպտեմբերի 24, Հայաստան, Երևան, գիտության և մշակույթի ռուսական կենտրոն, ՀՀ, "Сетевые библиотечные сервисы и электронные ресурсы по русскому языку и культуре России" խորագրով վերապատրաստում:
- 2019թ. մարտի 11-14, ԵՊԼՀ, ՀՀ, «Erasmus+ SMART» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:
- 2019թ. ապրիլի 8-11, ԵՊԼՀ, ՀՀ, «Erasmus+ SMART» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:
- 2019թ. մայիսի 14, ԵՊԼՀ, ՀՀ, «Erasmus+ MINERVA» ծրագրի շրջանակներում «ORCID (Open Researcher and Contributor ID)» թեմայով աշխատաժողով:
- 2019թ. մայիսի 16-17 ԵՊԼՀ, ԵՊՀ, ՀՀ, «Erasmus+» ծրագրի շրջանակներում «Հայ-ավստրիական կոնտակտային սեմինար»:
- 2019թ. հունիսի 14, Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարան, ՀՀ, «Որակավորումների արժանահավատ շնորհում» աշխատաժողով:
- 2019թ. հունիսի 24-27, ԵՊԼՀ, ԳՊՀ, ՀՀ, «Erasmus+ SMART» ծրագրի շրջանակներում աշխատաժողով:
- 2019թ. հուլիսի 1, ԵՊԼՀ, ՀՀ, "Going Beyond Grades: Classroom Assessment Techniques (CAT) in Assessing Learning Process" թեմայով վերապատրաստում:
- 2019թ. հուլիսի 12, Հայաստանի ամերիկյան համալսարան, ՀՀ, "Women in Economics" թեմայով աշխատաժողով:
- 2019թ. հուլիսի 13, Հայաստան, Երևան, "Teach TOEFL, IELTS" թեմայով աշխատաժողով:
- 2019թ. օգոստոսի 17-26, Սլովակիայի Հանրապետություն, Ստարա Լեսնա «Erasmus+ Youth» ծրագրի շրջանակներում «Social Entrepreneurship Impact Lab» թեմայով վերապատրաստում:

Ավագյան Սաթիկ

- 2019թ. մարտի 17 – մարտի 22 - Իտալիա, Սալերնոյի համալսարան, ԵՄ Erasmus+» ծրագրի շրջանակներում դասախոսական աշխատանք:
- 2019թ. մայիսի 6 – մայիսի 10 – Պորտուգալիա, Մինհոյի համալսարան, ԵՄ «Erasmus+» ծրագրի շրջանակներում դասախոսական աշխատանք:

Նալբանդյան Նարինե

- 2019թ. մայիսի 13-17, Բուլղարիա, Ռուսե, Անգել Կանչևի անվան համալսարան, ԵՄ «ERASMUS +» ծրագրի շրջանակներում «Նորարարական մեթոդների կիրառումը ուսումնառության և դասավանդման մեջ» թեմայով աշխատաժողով:

Միրիբյան Գայանե

- 2019թ . հունիսի 22-26, Հայաստան, Ծաղկաձոր, Ակադեմիկոս Ա . Ղանալանյանի 110-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

Ասոյան Թաթուլ

- 2019թ. հոկտեմբերի 19, Հայաստան, Երևան, «Բազմավեպ» հանդեսի 175-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:

Ղռեջյան Լուսինե

- 2019թ . մայիսի 21-24, Հայաստան, Երևան, «Թաղման ծեսը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, հանրապետական գիտաժողով:
- 2019թ.հունիսի 26-27, Հայաստան, Երևան, «Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյան-125», ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, հանրապետական գիտաժողով:
- 2019թ . հունիսի 22-26, Հայաստան, Ծաղկաձոր, Ակադեմիկոս Ա . Ղանալանյանի 110-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

Ներսիսյան Վարսիկ

- 2019թ.մայիսի 15, Հայաստան, Երևան, «Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտաժողով:

Ավետիսյան Վարազդատ

- 2019 թ. ապրիլի 29-ից մայիսի 4 – Լեհաստան, Կրակով, ԵՄ «Erasmus+ DOCMEN» ծրագրի ամփոփիչ աշխատանքային հանդիպում:

Հովհաննիսյան Մարգար, **Գզրարյան Հարություն**

- 2019 թ. մայիսի 11-19 – Բուլղարիա, Ռուսե, ԵՄ «Erasmus+» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Բաղդոյան Շուշան

- 2019 թ. ապրիլ – Հայաստան, Երևան, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, «Որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում Ինստիտուցիոնալ հավատարմագրում» թեմայով երկփուլ վերապատրաստման դասընթաց:

Լալա Մկրտչյան

- 2018 թ. սեպտեմբերի 22-30 – Վրաստան, Բակուրիանի, «Be active, Be empowered» խորագրով դասընթաց:
- 2018 թ. հոկտեմբերի 6 – Հայաստան, Վանաձոր, Վանաձորի պետական համալսարանի գիտաժողով:
- 2019 թ. ապրիլի 9-14 – Ուկրաինա, Օդեսա, «Inclusion and Diversity» խորագրով դասընթաց:

- 2018 թ. օգոստոսից 2019 թ. հունիս – Հայաստան, Գավառ, «ԵՄ-ն հանուն մշակույթի» ծրագրի շրջանակներում կազմակերպված «PR-Մշակույթ և զբոսաշրջություն», «Մշակութային երկխոսություն. միջմշակութային հաղորդակցության հմտությունների զարգացում», «Համայնքի էկոզբոսաշրջային պատկերը», «Զբոսաշրջային պրոդուկտի ստեղծում» թեմաներով դասընթացներ:
- 2018 թ. սեպտեմբերից դեկտեմբեր – Հայաստան, Գավառ, Գավառի պետական համալսարանում կազմակերպված «Ծրագրային ապահովման նախագծերի կառավարում- Software Project Management» դասընթաց:

Ավետիսյան Կարինե, **Խաչիկյան Թերմինե**, **Հովհաննիսյան Մարինե**

1. 2019թ. մայիսի 6-11 – Իտալիա, Տեռամո, ԵՄ «ERASMUS+ AbioNet- Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Մուրադյան Վահագն

- 2019թ. հուլիսի 21-24 – Գերմանիա, Հալե, ԵՄ «Erasmus+ MENVIPRO» ծրագրի շրջանակներում հերթական աշխատաժողով

Հակոբյան Արսեն

- 2019թ. ապրիլի 18 - ապրիլի 20, ՌԴ, Սանկտ Պետերբուրգ, «Հարևանության բազմաշերտ «կարկանդակը». հեռու, մոտիկ, տարբեր հարևաններ…», միջազգային գիտաժողով, Անկախ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն:
- 2019թ. մայիսի 12 - մայիսի 19, Բուլղարիա, Ռուսե, դասախոսություններ ԵՄ «ERASMUS+» ծրագիր շրջանակներում, Ռուսեի համալսարան:

Հայրապետյան Քանաքարա

- 2019թ. մարտի 11- մարտի 14, Հայաստան, Երևան, ԵՄ «ERASMUS+ SMART Fostering university-enterprise cooperation and entrepreneurship of students via SMART Caffes)» ծրագրի շրջանակներում վերապատրաստման դասընթացներ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան:
- 2019թ. ապրիլի 8- ապրիլի 11, Հայաստան, Երևան, ԵՄ «ERASMUS+ SMART» ծրագրի շրջանակներում վերապատրաստման դասընթացներ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան:
- 2019թ. մայիսի 27- հունիսի 1, Բուլղարիա, Վառնա, ԵՄ «ERASMUS+ SMART» ծրագրի շրջանակներում վերապատրաստման դասընթացներ, Վառնայի կառավարման համալսարան:
- 2019թ. հունիսի 24-հունիս 28, Հայաստան, Երևան, ԵՄ «ERASMUS+ SMART» եվրոպական ծրագրի աշխատաժողով, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան:

Ամիրխանյան Սամվել

- 2018 թվականի հոկտեմբերի 9-13 - Մոլդովայի Հանրապետության Քիշնևի տնտեսագիտության ակադեմիա, Եվրոպական միության ԵՄ «Erasmus+REFINE» ծրագրի հերթական աշխատանքային հանդիպմանը մասնակցություն:

Ամիրխանյան Սամվել, **Հերգնյան Մարիամ**, **Ավետիսյան Աստղիկ**, **Ասատրյան Ռուզաննա**

- 2019թ. մարտի 20-ից ապրիլի 10 - Գավառի պետական համալսարանում կազմակերպված՝ Կրթության բովանդակությանը, չափորոշիչներին և ելքային արդյունքներին նվիրված վերապատրաստման դասընթաց:

Զաքոյան Հրաչյա

- 2019թ. հունվարի 27 - փետրվարի 9 – Նիդեռլանդներ, Ամստերդամի կիրառական գիտությունների համալսարան, ԵՄ «Erasmus+REFINE» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Զաքոյան Հրաչյա, **Հակոբյան Արմեն**, **Մարտիրոսյան Ռշտուն**, **Հովեյան Աստղիկ**

- 2019թ. հունիսի 30 – հուլիսի 13 – Ֆրանսիա, Նիցի Սոֆյա Անտիպոլիսի անվան համալսարան, ԵՄ «Erasmus+REFINE» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Ղուլոյան Հակոբ

- 2019թ. հունվարի 13-26 – Ավստրիա, Վիեննայի կիրառական գիտությունների համալսարան, ԵՄ «Erasmus+REFINE» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Ղուլոյան Հակոբ, **Հարությունյան Հարություն**, **Խաչատրյան Գայանե**, **Մուրադյան Գուրգեն**

- 2019թ . մարտի 31 – ապրիլի 13 - Նիդեռլանդներ, Ամստերդամի կիրառական գիտությունների համալսարան, ԵՄ «Erasmus+REFINE» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Հովեյան Աստղիկ

- 2018թ հունվարի 13-26 – Սլովակիա, Կոշիցեի տեխնիկական համալսարան, ԵՄ «Erasmus+REFINE» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:
- 2019թ հունիսի 10-21 - Կումասի, Գհանա, «Գյուղական ձեռներեցություն» թեմայով դասընթաց Նիդեռլանդների Վագենինգեն համալսարանի կողմից:

Մուրադյան Գուրգեն

- 2019թ. հունվարի 20 - փետրվարի 2 – Ֆրանսիա, Նիցի Սոֆյա Անտիպոլիսի անվան համալսարան, ԵՄ «Erasmus+REFINE» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Թորոսյան Դավիթ, **Խաչատրյան Գայանե**

- 2019թ. փետրվարի 10-16 – Իսպանիա, Սալամանկայի համալսարան, դասախոսական աշխատանք՝ ԵՄ «Erasmus+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում:

Հակոբյան Արմեն

- 2019 մարտ - Անգլիա, Լոնդոն, մասնակցություն TPMinds International միջազգային կոնֆերանսին:
- 2019 հուլիս – Անգլիա, Լոնդոն, մասնակցություն International Tax Congress միջազգային կոնֆերանսին:

Ասատրյան Ռուզաննա, **Ավետիսյան Աստղիկ**

- 2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր - Գավառի պետական համալսարանում կազմակերպված «Ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արդի ձեռքբերումների կիրառումը» վերապատրաստման դասընթաց:

Այրումյան Իրինա

- 2018թ. նոյեմբերի 12-ից 2019թ. հունվարի 20 – Հայաստանի ազգային ագրարային համալսարանում «In Recognition of Successful Completion of Elementary A English» դասընթաց:

Խաչատրյան Հակոբ

- 2018 թ. սեպտեմբերի 2-9, Բուլղարիայում, Վառնայի կառավարման համալսարան, ԵՄ Erasmus+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում «Ակադեմիական առաջնորդության դերը ձեռնարկատիրական համալսարանում» թեմայով վերապատրաստում
- 2019 թ. մայիսի 6-12 – Հունաստան, Պիրեուսի համալսարան, ԵՄ Erasmus+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում վերապատրաստում
- 2019 թ. մայիսի 16-23 – Իտալիա, Տուշայի համալսարան, ԵՄ Erasmus+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2018-2019 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանում հայտարարված էր որպես նոր մտածողության, նոր մոտեցումների և նոր տեսլականի տարի: Ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են բազմաբնույթ աշխատանքներ՝ բուհի առաքելությունից, համալսարանի կանոնադրությունից բխող, համալսարանի զարգացման ռազմավարական, հակակոռուպցիոն ծրագրերով նախատեսված, ինչպես նաև ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից արված առաջարկությունների, խորհրդատվությունների հաշվառմամբ, համալսարանում ընդունված կանոնակարգերի և ընթացակարգերի, նորմատիվային այլ ակտերի դրույթներին համապատասխան:

2018-2019 ուստարում ուսանողների թիվը առկա բակալավրիատում կազմում էր 240 ուսանող, մագիստրատուրայում՝ 149, հեռակա ուսուցման համակարգում՝ 623, ընդամենը՝ 1012 ուսանող:

Հաշվետու ուսումնական տարում ուսանողական համակազմի համալրման ցուցանիշներն են.

- Բակալավրիատի ընդունելություն՝

1. 2018թ.-ին համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի գծով ընդունվեց 19 դիմորդ:
2. Հեռակա ուսուցման ֆակուլտետ ընդունվեց 91-ը:

- Մագիստրատուրայի ընդունելություն՝

2018թ.-ին մագիստրատուրա ընդունվեց բակալավրիատի 85 շրջանավարտ:

- Ասպիրանտուրայի ընդունելություն՝ 2 դիմորդ
- Շարունակական կրթության կարգով ընդունելություն՝

Համալսարանում 2018-2019 ուսումնական տարում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո շարունակական կրթություն ստացողների քանակը կազմում է 15 ուսանող:

- Երկրորդ մասնագիտության կարգով ընդունելություն՝ 2 ուսանող:

- Տեղափոխություններ՝

ԳՊՀ-ից այլ բուհ ուսանող չի տեղափոխվել, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բուհերից հաշվետու տարում սահմանված կարգով Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 12 ուսանող:

- Վերականգնումներ՝

Ուսանողական իրավունքները վերականգնել են 94 ուսանողներ:

ԳՊՀ ուսանողական համակազմի համալրման հաշվետու և նախորդ ուստարիների համեմատական ցուցանիշները



2018-2019 **ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներն առկա ուսուցման համակարգում**:

Հաշվետու ուստարում առաջին կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 68,6% (նախորդ ուստարում՝ 75,1%), նկատվել է 6,5% նվազում:



Ուսանողների առաջադիմության համեմատումը՝ նախորդ և հաշվետու ուստարիների առաջին կիսամյակներում



Հաշվետու ուստարում երկրորդ կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 75,5%:

2018-2019 **ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն առկա համակարգում**



2018-2019 ուստարում բուհն ավարտեց առկա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների 99,4%-ը, ամփոփիչ ատեստավորման արդյունքներով համալսարանի առկա բակալավրիատի 92, հեռակա բակալավրիատի 98 և մագիստրատուրայի ավարտական կուրսերի 66 ուսանողի շնորհվեց համաեվրոպական նմուշի դիպլոմի երկլեզու հավելված՝ հայերեն և անգլերեն: Հեռակա ուսուցման ֆակուլտետն ավարտեցին նաև նախորդ տարիներին բուհը չավարտած 3 նախկին ուսանողներ: Հաշվետու ուստարում բուհն ավարտեց ուսանողների ընդհանուր թվի 99,2%-ը (2017-2018 ուստարում՝ 100%-ը):

Տվյալներ 2018-2019 **ուսումնական տարվա շրջանավարտների թվաքանակի վերաբերյալ**



Գավառի պետական համալսարանի 2018-2019 **ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ տվյալներ**



Ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ անվճար և վճարովի տեղերի փոխատեղման ընթացակարգի համաձայն հաշվետու ուստարվա ակադեմիական առաջադիմության

ցուցանիշներով առկա բակալավրիատի 24 և մագիստրատուրայի 2 ուսանողներ փոխատեղման մրցույթի արդյունքում ունեցան կարգավիճակի փոփոխություն:

Հաշվետու ուստարում շարունակվել են իրականացվել ուսանողներին ֆինանսական աջակցման բազմաթիվ ծրագրեր: Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորող ուսանողները ֆինանսական աջակցություն են ստացել պետական բյուջեից, համալսարանի միջոցներից, գործընկեր կազմակերպություններից, ԳՊՀ բարերարներից և տարբեր հիմնադրամներից:

Տվյալներ 2018-2019 **ուսումնական տարում ԳՊՀ դասախոսական կազմում ընդգրկված և գիտական աստիճաններ ունեցող աշխատակիցների վերաբերյալ**

Հաշվետու ժամանակահատվածում բուհում դասավանդել են 130 դասախոս, որոնց 7,1%-ը նաև գործատուներ են, նրանց կեսից ավելին՝ 50,8%-ը, ունեն գիտական համապատասխան աստիճան և կոչում: Ընդհանուր առմամբ բավարարված են բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմին առաջադրվող պահանջները:



Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվեցին և վերլուծվեցին ԳՊՀ զարգացման և բարեփոխման հայեցակարգի գործողությունների մշտադիտարկման 2017-2018թ. տարեկան և հնգամյա պլանների կատարողականները, գնահատվեց դրանց իրականացման արդյունավետությունը, արվեցին եզրահանգումներ, նպատակների սահմանման տեսանկյունից ուսումնասիրվեց բուհի կառուցվածքային ստորաբաժանումների, այլ ներքին և արտաքին շահակիցների ակնկալիքները:

Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ) նշված նպատակների իրականացման և խնդիրների լուծման համար անհրաժեշտ կառուցակարգերը, գործիքակազմերը, ակնկալվող արդյունքները լրամշակվեցին և ձևակերպվեցին կրթական ծրագրերի մասնագրերում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունների ծրագրերում, կանոնակարգերում, ընթացակարգերում, կարգերում և այլ փաստաթղթերում, որոնց կատարման գործընթացներն ապահովում են բուհի առաքելության ու նպատակների իրականացումը:

2018-2019 ուսումնական տարվա ավարտին կատարվել են բուհում մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) իրականացման գործընթացների, նաև այդ գործընթացների ելքային արդյունքների քննարկումներ և գնահատում՝ հաշվետվողականության սկզբունքին համապատասխան: Համալսարանի առաքելության, ծավալած գործունեության և ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի համապատասխանության մշտադիտարկման նպատակով իրականացվեց ԳՊՀ ՄԿԾ-ների վերջնարդյունքների և ՀՀ որակավորումների ազգային շրջանակում (ՈԱՇ) սահմանված իրազեկությունների քարտեզագրման գործընթաց: Գործընթացի արդյունքում վերանայվեցին ՄԿԾ-ների, ինչպես նաև առանձին դասընթացների վերջնարդյունքները:

Որակի ապահովման բաժնի կողմից ամփոփվել և վերլուծվել են շահակիցների բավարարվածությունը կրթության կազմակերպման բոլոր բաղադրիչների գծով: Վերլուծված տվյալները տրամադրվել են պատասխանատու ստորաբաժանումներին՝ հետագա բարելավման պլանների մշակման ժամանակ դրանց հաշվառման նպատակով, իրականացվել են քննարկումներ շահառու բոլոր կողմերի հետ:

Բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման իրականացման ձևաչափի վերաբերյալ շահակիցների շրջանում իրականացված քննարկումների արդյունքում, ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման նպատակով ԳՊՀ գիտական խորհրդում որոշում կայացվեց ամփոփիչ ատեստավորումն անցկացնել միայն ավարտական աշխատանքի պաշտպանության ձևով: Համապատասխանաբար վերանայվեցին և մշակվեցին գործընթացի իրականացման իրավական հիմքերը, և 2018-2019 ուսումնական տարվա առկա և հեռակա բակալավրիատի բոլոր շրջանավարտների համար նախատեսվեց հետազոտական աշխատանքի կատարման պահանջ: Ամփոփիչ ատեստավորման գործընթացի իրականացումից հետո կրկին ուսումնասիրվեցին ուսանողների, դասախոսների, գիտական ղեկավարների, գրախոսների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կարծիքները, դիտարկումներն ու առաջարկությունները, որոնց հաշվառմամբ դարձյալ վերանայվեցին իրավական կարգավորումները, փաստաթղթային այլ հիմքերը, այդ թվում՝ գնահատման մեթոդաբանությունն ու գնահատման գործոնների բաշխվածությունը:

2018-2019 ուսումնական տարվա վերջում՝ ամբիոնային և ֆակուլտետային քննարկումներից հետո, ԳՊՀ գիտական խորհրդին ներկայացվեցին համալսարանում ուսումնական, գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, ֆակուլտետների հաշվետվությունները, որոնք պարտադիր անդրադառնում են ՄԿԾ-ների իրականացման որակին՝ ելնելով կրթական ելքային արդյունքներից, հաշվի առնելով ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքը, շրջանավարտ-մասնագետների պատրաստվածության մակարդակը, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունները, ամփոփիչ ատեստավորմանը մասնակցող գործատուների կարծիքները, կրթական-հետազոտական ձեռքբերումները, ուսանողների հասարակական գործունեությունը և վերջում՝ արդյունքների վերլուծությունները և եզրակացությունները: Քննարկումների ընթացքում հաշվի առնվեցին շահակիցների բոլոր այն առաջարկությունները, որոնք ուղղված էին կրթական ծրագրերի որակի բարելավմանը և համալսարանում որակի ներքին ապահովման մշակույթի զարգացմանը՝ միտված լինելով համալսարանի առաքելության և ՌԾ-ի պահանջների իրականացմանը:

Համալսարանի գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցներից ստացված արձագանքները, ինչպիսիք են այլ բուհերից և գիտահետազոտական ինստիտուտներից հրավիրված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների եզրակացությունները, ուսանողների՝ գործընկեր կազմակերպություններում անցկացվող պրակտիկաների գնահատականները կամ արտահայտված կարծիքները, ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների և համալսարանի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության հաշվետվությունները, շրջանավարտների վերաբերյալ գործատուներից ստացված կարծիքներն ու առաջարկությունները համակողմանիորեն ուսումնասիրվել և վերլուծվել են տարեկան և կիսամյակային կտրվածքներով: Համալսարանի ուսումնական, գիտական, հետազոտական ոլորտներում իրականացրած գործունեության արդյունքները հիմնավոր վերլուծություններով ներկայացրել են ամբիոնների վարիչները, ֆակուլտետների դեկանները, պրոռեկտորները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներն իրենց ղեկավարած ստորաբաժանման ամենամյա հաշվետվություններում, ինքնավերլուծության զեկույցում: Հաշվետու ուստարին համարվում էր նաև ՈԱԱԿ-ի կողմից ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման միջնաժամկետ տարի, ուստի համալսարանում 2017-2019թթ. ժամանակահատվածում բոլոր ուղղություններով իրականացված բարելավման գործողությունների վերաբերյալ ներկայացվեց ինքնավերլուծության միջնաժամկետ հաշվետվություն՝ հավատարմագրման չափանիշներին համապատասխան՝ կից հավելվածներով, հիմնավորող փաստաթղթերով:

Հաշվետու ուստարում ամրագրվել է համալսարանի բոլոր ստորաբաժանումներում պահվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչը կառավարման և վարչարարության տեսակետից առավել օպերատիվ և թափանցիկ է դարձնում աշխատանքները: Ներդրվել է հաշվետվողականության նոր համակարգ՝ ըստ ռազմավարական գերակա ուղղությունների ու նպատակների, հստակ տարանջատվել են ստորաբաժանումների աշխատակիցների պարտականությունները և գործառույթները:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվեց նոր ձևաչափ, ըստ որի յուրաքանչյուր կիսամյակում ԳՊՀ աշխատակիցները, ելնելով իրենց զբաղեցրած պաշտոնների նկարագրերից, ներկայացնում են իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, որոնց հաշվառմամբ լավագույն աշխատակիցները ներկայացվում են նյութական խրախուսանքի: Ներդրված կառուցակարգի շնորհիվ աշխատակիցներին խրախուսման գործընթացներից 2%-ով աճ արձանագրվեց շահակիցների բավարարվածության մակարդակում:

Համալսարանի կառավարման բոլոր մակարդակներում բուհի քաղաքականությունների ու ընթացակարգերի իրականացումը որակի կառավարման ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) սկզբունքով իրականացնելու համար 2018-2019 ժամանակահատվածում վերանայվել և ըստ այդմ փոփոխվել և բարելավվել են ներքոհիշյալ կանոնակարգերը.

1. ԳՊՀ գործավարության կարգ (փոփոխություններով),

2. Գավառի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ,
3. Գավառի պետական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ,
4. Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգ (փոփոխություններով),
5. ԳՊՀ ուսանողական խորհրդի կանոնադրություն,
6. ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն,
7. Գավառի պետական համալսարանում ուսանողների հեռացման (ազատման)և վերականգնման կարգ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է նաև «Գավառի պետական համալսարանի աշխատողների և սովորողների գործուղումների կազմակերպման կանոնակարգ»-ը:

Լրամշակելով մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների կատարման կանոնակարգը՝ գնահատման հստակ չափանիշներ են սահմանվել նորարարական, հետազոտական, ստեղծագործական, վերլուծական և տեխնիկական բաղադրիչների համար, մշակվել են անհրաժեշտ փաստաթղթային ձևաչափերի նմուշօրինակները: Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացի պատշաճ իրականացման նպատակով կազմակերպվել են սեմինարներ գնահատման նկարագրիչների սահմանման մեթոդաբանության վերաբերյալ: Ուսանողների ավարտական և կուրսային աշխատանքները, մագիստրոսական թեզերը գնահատվել են նաև ըստ նորարարական, ստեղծագործական բաղադրիչների: Գործընթացից շահակիցների բավարարվածության աստիճանը կազմել է 77,2%:

Հաշվետու ժամանակահատվածում տարբեր փոխանակման ծրագրերի շրջանակներում ակտիվացել են բուհի արտաքին համագործակցային կապերը՝ կապված ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության հետ, ինչը խթանեց բուհում կրթության միջազգայնացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, որն արտահայտվեց բուհի կառավարման գործընթացներում: Մասնավորապես վարչական, դասախոսական անձնակազմի և ուսանողության համար կազմակերպվում են անգլերեն լեզվի դասընթացներ, օտարերկրացի ուսանողների համար մշակվել են անգլերեն լեզվով դասընթացների կամ առանձին մոդուլների ծրագրեր, որոնք կարող են հետագայում հիմք ծառայել օտարալեզու կրթական ծրագրերի իրականացման համար, ինչը բուհի գերակա ռազմավարական խնդիրներից է, իսկ դասախոսները հնարավորություն ունեն իրենց հետազոտական թեմաները իրականացնել համապատասխան համագործակից բուհերում կամ արտերկրի գործընկերների հետ: Շարունակվել են աշխատանքները ԵՄ ԷՐԱՍՄՈՒՍ+ << ABIONET>>, <<DOCMEN>>, <<REFINE>>, <<SMART>>, <<MENVIPRO>> ծրագրերի շրջանակներում, որը լավագույն հնարավորություններ է ընձեռել վերանայելու մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսուցման և ուսումնառության, ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանը նպաստող մեթոդներն ու ձևերը, գործատուների հետ աշխատելու մեթոդաբանությունը, ընդլայնվել է ուսանողների, դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակը:

Ուսանողների շրջանում կրթական միջավայրից բավարարվածության մակարդակի ուսումնասիրության արդյունքում վեր հանված խնդիրների լուծման նպատակով լրամշակվել է համալսարանում գործող էլեկտրոնային ուսուցման համակարգը՝ «E-Learning.GSU», նախագծվել է նոր համակարգ՝ «learn@gsu», որը բովանդակային և տեխնիկական առումներով գերազանցում է նախորդին, սակայն դեռևս ուսումնասիրված չեն ուսանողների կարծիքները, բավարարվածության աստիճանը, ինչը նախատեսվում է իրականացնել 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում: Շարունակվել են դասավանդման որակից ուսանողների բավարարվածության գնահատման նպատակով ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից պարբերաբար իրականացվող հարցումները ուսանողների շրջանում: Հարցումների արդյունքները վերլուծվել, քննարկվել են համապատասխան ամբիոններում, այնուհետև հաջորդաբար ֆակուլտետի խորհրդի, ռեկտորատի, ապա գիտական խորհրդի նիստերում: Քննարկման արդյունքում մշակվել են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասավանդման որակի բարելավմանը: Ուսանողների գրավոր կարծիքները թույլ են տալիս բացահայտելու առանձին ամբիոնների և դասախոսների ձեռքբերումներն ու թերացումները, պարզելու վերհանված թերությունների պատճառները և շտկելու դրանք, ներդնելու դասավանդման և ուսումնառության արդյունավետ մեթոդներ, օգտագործելու ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ: Հարցումների արդյունքում արձանագրվել են դասախոսների խրախուսման, ինչպես նաև՝ աշխատանքային պայմանագրերը չերկարաձգելու դեպքեր: Նախատեսվում է 2019-2020 ուսումնական տարում կիրառել դասախոսական կազմի խրախուսման նոր կառուցակարգեր՝ հիմնվելով հարցումների արդյունքների վրա:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված էր ակտիվացնել հանրակրթական դպրոցների հետ համալսարանի համագործակցությունը, բազմազանեցնել գործընկերության ուղղությունները, ներդնել այդ ոլորտում տարվող աշխատանքների արդյունավետության գնահատման կառուցակարգեր: Ուստի, վերանայվեցին նախորդ ուստարում դպրոցների հետ իրականացված ծրագրերը, գնահատվեց դրանց արդյունավետությունը, ինչի արդյունքում գիտխորհրդի կողմից որոշում կայացվեց յուրաքանչյուր ամբիոնում մշակել դպրոցների հետ համագործակցության ծրագրեր, իրականացնել նախանշված ծրագրերը, կատարել դրանց արդյունավետության գնահատումներ: ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ, Երանոս գյուղի թիվ 1 միջնակարգ, Գանձակ գյուղի թիվ 1, թիվ 2 միջնակարգ, Գավառի Ս. Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական, Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան թիվ 3 միջնակարգ, Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան թիվ1 միջնակարգ, Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դրպոցների հետ երկարաձգվեցին համագործակցության հուշագրերը: Մասնագիտական ամբիոններում դպրոցների հետ համագործակցության համար մշակվեց 7 ծրագիր, կազմակերպվեցին առարկայական օլիմպիադաներ դպրոցում ուսումնասիրվող 7 հիմնական առարկաների գծով 105 աշակերտի մասնակցությամբ, կիրառվեցին խրախուսման կառուցակարգեր: ԳՊՀ բնագիտական լաբորատորիայում մարզի թվով 22 դպրոցի 243 աշակերտների համար անցկացվել են գործնական և տեսական դասեր, ուսումնական, լաբորատոր փորձեր: Կատարված աշխատանքների արդյունավետությունը գնահատող վերլուծությունները փաստեցին նաև դրանց

ազդեցությամբ դիմորդների թվի դինամիկ աճի մասին: 2018-2019 ուստարում համալսարանում աշակերտների համար իրականացվել է նաև բաց դասերի շարք՝ «Գազային օրենքներ», «Ալկեններ», «Իոնափոխանակման ռեակցիաներ», «Թռչուններ», «Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները», «Կլիմայի գլոբալ փոփոխությունը և Հայաստանը», «Բնական աղետները և դրանց աշխարհագրական հետևանքները», «Աշխարհագրական դիրք հասկացությունը /ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքեր/» և այլ թեմաներով: 2018-2019 ուստարում Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնը և «Luseen Technologies» տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնադրամը համատեղ կազմակերպել են «Ծրագրավորողի մասնագիտությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատելու հնարավորությունները Գավառում» խորագիրը կրող միջոցառումների շարք, որոնց ընթացքում «Madatech», «Gazar.am», «Luseen Mobile», «AdonsLab» բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններից հրավիրված մասնագետներն անդրադարձել են աշակերտների մասնագիտական կողմնորոշման խնդրին, ծրագրավորողի մասնագիտությանը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների՝ սրընթաց զարգացող շուկայի պահանջներին և Գավառում ՏՏ ոլորտում աշխատելու հնարավորություններին: ՀՀ Գեղարքունիքի ‹‹Գեղամա›› մարզային հեռուստաընկերության միջոցով հեռարձակվել են համալսարանական կարևոր ծրագրերն ու միջոցառումները լուսաբանող նյութեր, պատրաստվել հանրամատչելի գիտական-կրթական հաղորդումներ: Մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների բնագիտական դասերի համար շարունակաբար օգտագործվել են համալսարանի բնագիտության լաբորատորիայի հնարավորությունները: Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների շրջանում իրականացվել են հարցախույզեր, անցկացված հարցումների արդյունքներն ամփոփվել են և արվել են վերլուծություններ, որոնց արդյունքում մշակվել և իրականացվել են լրացուցիչ կրթական ծրագրեր, մասնավորապես մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հարցմանը մասնակցած ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցների 9-ից 12-րդ դասարանների աշակերտների կրթական կարիքների բավարարման նպատակով ԳՊՀ միջոցներով կազմակերպվեց ռուսաց լեզվի անվճար դասընթաց: Համալսարանում իրականացված գեղարվեստական, ուսուցողական միջոցառումներին մասնակցել են բազմաթիվ աշակերտներ, քոլեջների, ուսումնարանների ուսանողներ: Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը ԳՊՀ գիտխորհրդի կողմից գնահատվել է բավարար: Ապահովվել է ուսուցման մեթոդների բազմազանություն՝ ըստ ՄԿԾ-ների առանձնահատկությունների, կարևորելով ուսանողների անհատական կրթական հետագծի ձևավորումը, վերահսկվել է ուսանողների կողմից կամընտրական կրթամասի դասընթացների ընտրության գործընթացը, ուսանողներին ցուցաբերվել է ակադեմիական աջակցություն, իրականացվել են բազմապիսի խորհրդատվական ծրագրեր, նրանց հետ տարվել շարունակական բացատրական աշխատանքներ, որպեսզի սովորողները ստանձնեն անձնական պատասխանատվություն իրենց ուսման գործընթացի և կրթական ելքային արդյունքների ձեռքբերման համար: Ուսանողների ձեռքբերած իրազեկությունների գնահատման օբյեկտիվության և թափանցիկության ապահովման նպատակով բազմազանեցվել են

ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ստուգման ու գնահատման ձևերը՝ կարևորելով գիտելիքի, կարողությունների և հմտությունների ստուգման տարբերակված մեթոդները: Շահակիցների բավարարվածության աստիճանը կուսումնասիրվի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում՝ նախորդ ուստարվա լուծարային շրջանի ավարտին: Ուսանողների համակարգչային գրագիտության բարձրացման նպատակով իրականացնվել է լրացուցիչ կրթական ծրագիր՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաներն ուսուցման համակարգում» թեմայով, ինչպես նաև կատարվել է դասընթացի առցանց ուսուցում: Դասընթացից շահակիցների բավարարվածությունը կազմել է 89 %: Ուսումնական խորհրդատուների կողմից կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, ճանաչողական և մասնագիտական էքսկուրսիաներ, որոնք լուսաբանվել են ԳՊՀ կայքում և ‹‹Դիմագիրք (Ֆեյսբուք)›› սոցիալական կայքում: Բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում առկա են կամընտրական դասընթացներ, ՄԿԾ մասնագրերում տրված է կամընտրական կրթամասի դասընթացների նկարագրությունը: Մշակվում են կառուցակարգեր կամընտրական դասընթացների ընտրության առումով ուսանողների մասնագիտական ճիշտ կողմնորոշմանն ուղղված աշխատանքների արդյունավետության գնահատման համար: Սովորողների հետ հետադարձ կապի ապահովման և դրա արդյունավետության ուսումնասիրման գործում ակտիվորեն ներգրավվել են ուսանողական ինքնակառավարման մարմինները: Գործընթացից ուսանողների բավարարվածության աճ է արձանագրվել: Հետևողականորեն կիրառվել են ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարության, ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթները և ԳՊՀ էթիկայի կանոնները, իրականացվել են ուսանողների իրավագիտակցության բարձրացմանը միտված ծրագրեր: Ուսանողների համար կազմակերպվել են կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումներ, ինտելեկտուալ մրցույթներ, անցկացվել են «Լավագույն ուսանող», «Լավագույն խումբ», «Լավագույն ֆակուլտետ» և այլ անվանակարգերում ամենամյա մրցանակաբաշխություններ, գիտելիքի արժևորմանն ուղղված այլ ծրագրեր, որոնց արդյունքում 2018-2019 ուստարում «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում հաղթեց ԳՊՀ 6 ուսանող, իսկ 2017-2018 ուստարում հաղթել էին ԳՊՀ 5 ուսանողներ: Այսպիսով, ԳՊՀ-ն արձանագրեց հանրապետական միջինից բարձր ցուցանիշ: Համալսարանի դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտման նպատակով կատարվել են անանուն հարցումներ, ամփոփվել արդյունքները: Հարցման արդյունքների համաձայն՝ կոռուպցիոն դեպքեր չեն արձանագրվել, ինչը վկայում է համալսարանում ձևավորված ակադեմիական ազնիվ միջավայրի մասին: Ուսանողների շրջանում պարբերաբար ուսումնասիրվել են նրանց սոցիալական պահանջները, շարունակաբար համալրվել է սոցիալապես անապահով ուսանողների անձնական տվյալների էլեկտրոնային բազան, կարիքավոր ուսանողներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն: Ուսումնասիրվել է սոցիալական աջակցությունից ուսանողների բավարարվածության մակարդակը, որը աճ է արձանագրել նախորդ տարիների համեմատ: Բարձրացվել է համալսարանի շրջանավարտների հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը, պահպանվել է բուհի շրջանավարտների հետ կապը, շարունակաբար համալրվել է շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազան, նրանց հետ իրականացվել է անմիջական և էլեկտրոնային հաղորդակցություն: ԳՊՀ շրջանավարտները իրազեկվել են թափուր

աշխատատեղերի մասին, նրանց տրվել է մարզի գործատուների վերաբերյալ տեղեկատվություն, շրջանավարտները պարբերաբար մասնակցել են համալսարանում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, բաց դասախոսություններին, ստացել հավաստագրեր: Միջոցառումներից նրանց բավարարվածության աստիճանը նույնպես աճ է արձանագրել: Մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների ծրագրերը, ուսումնասիրվել են դասախոսների լրացուցիչ կրթական կարիքները: Վեր հանված կարիքների հաշվառմամբ յուրաքանչյուր մասնագիտական ամբիոնում մշակվել են ներքոհիշյալ վերապատրաստումների ծրագրերը, նախատեսվել են վերջնարդյունքները, հատկացվող կրեդիտները: Այսպիսով, կազմակերպվել են.

1.‹‹Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցման համակարգում›› թեմայով դասընթաց, 52 մասնակից, շահառուների բավարարվածության աստիճանը ծրագրից կազմել է 94,4 %:

2 . ‹‹Ներառական կրթության համատեքստում դպրոցականների հոգեբանամանկավարժական ախտորոշիչ (դիագնոստիկ) և զարգացնող աշխատանքների կազմակերպում›› թեմայով դասընթաց, 27 մասնակից, շահառուների բավարարվածության աստիճանը ծրագրից կազմել է 97,8 %:

3.‹‹Մասնագիտության արդի հիմնախնդիրները›› (հայոց լեզու և գրականություն) թեմայով դասընթաց, 17 մասնակից, շահառուների բավարարվածության աստիճանը ծրագրից կազմել է 96,8 %:

4.‹‹Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ›› թեմայով դասընթաց, 18 մասնակից, շահառուների բավարարվածության աստիճանը ծրագրից կազմել է 97,9 %:

5. «Կրթության բովանդակություն և կրթության բաղադրիչներ» թեմայով դասընթաց, 34 մասնակից՝ շահառուների բավարարվածության աստիճանը ծրագրից՝ 91,8 %:

6.«Ուսուցման նոր՝ կոլեկտիվ եղանակի ներդրում» թեմայով դասընթաց, 22 մասնակից, շահառուների բավարարվածության աստիճանը ծրագրից՝ 97,8 %:

7. «Ցանցային տեխնոլոգիաներ» թեմայով առցանց վերապատրաստման դասընթաց, մասնակցել է 25 անձ: Մասնակից բոլոր շահառուներին տրվել են հավաստագրեր, շնորհվել կրեդիտներ, որոնք կհաշվառվեն հետագայում վարկանիշավորման համակարգի գործարկման ընթացքում:

Ըստ կիսամյակային և տարեկան ներկայացվող հաշվետվությունների՝ կատարվել են ԳՊՀ վեց աշխատակիցների պարգևատրումներ, կիրառվել են բարոյական խրախուսման միջոցներ:

Դասախոսների վերապատրաստումների գործընթացի մաս են կազմել նաև նրանց գործուղումները միջազգային ծրագրերով եվրոպական առաջատար համալսարաններ, ուսումնական, հետազոտական կենտրոններ: Հաշվետու ժամանակահատվածում գործուղվել են ԳՊՀ 21 դասախոս և աշխատակից, որը գերազանցում է նախորդ ժամանակահատվածի ցուցանիշը: Մասնակիցների կողմից ներկայացվել են հաշվետվություններ, անցկացվել են լավագույն փորձի քննարկումներ, կազմակերպվել վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, աշխատաժողովներ:

Շարունակվել են դասախոսների շրջանում կրթական միջավայրից, նյութական պայմաններից բավարարվածության աստիճանի գնահատումները, որոնց ամփոփ արդյունքները գերազանցել են նախորդ ժամանակահատվածի ցուցանիշին: Բարելավվել են

դասախոսների հանրակացարանային պայմանները, մասնավորապես սննդի, հանգստի, ժամանցի հնարավորությունները:

ԳՊՀ-ում շարունակաբար միջոցներ են ձեռնարկվում ուսումնական գործընթացի և գիտահետազոտական գործունեության կապի ապահովման, համալսարանի համար առաջնային կարևորություն ունեցող մագիստրոսական, ասպիրանտական ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի արդյունավետության ու հետազոտությունների կիրառական ուղղվածության աճի, բոլոր կրթական աստիճաններում առաջատար մասնագետների ներգավման, ուսումնական գործընթացում նրանց գիտահետազոտական գործունեության արդյունքների հաշվառման, հետազոտական աշխատանքների համար ֆակուլտետներում և ամբիոններում անհրաժեշտ ուսումնամեթոդական, գիտական և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման ուղղություններով:

Մշակվել են համալսարանի ամբիոնների գերակա գիտական ուղղությունները, սահմանվել են ամբիոններում կատարվող հետազոտական աշխատանքների հաշվետվությունների ներկայացման ժամանակացույց և ձևաչափ, ըստ որի ամբիոնների վարիչները, իրականացնելով գիտական ուղղություններին համապատասխան հետազոտական աշխատանքներ, հաշվետու ժամանակահատվածում գիտական խորհրդին ներկայացրել են հաշվետվություններ, կատարված աշխատանքների գնահատումների հիման վրա հրապարակել վերլուծություններ:

Հետևողական աշխատանքներ են կատարվել ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող կառուցակարգերի մշակման և գործարկման ուղղությամբ, ինչպես նաև ուսանողների համար անհրաժեշտ պայմաններ են ստեղծվել՝ գիտական-տեղեկատվական տարբեր շտեմարանների օգտագործման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման, հետազոտական աշխատանքների կատարման համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար նպատակ էր սահմանված արդիականացնել ամբիոնների հետազոտական գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան, արդյունքում տեխնիկապես հագեցվեց բնագիտական լաբորատորիան: Ընդլայնվել են ուսանողների հետազոտական պրակտիկաների բազաները, հաշվետու ժամանակահատվածում պայմանագրեր են կնքվել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, «Ծաղկաձոր Մարիոթ» հյուրանոցի, ՀՀ ոստիկանության տարբեր տարածքային ստորաբաժանումների հետ, ինչպես նաև կնքվել է եռակողմ պայմանագիր համալսարանի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և «Լուսին Թեքնոլոջիս» կազմակերպության հետ:

Միջբուհական գիտական ծրագրերի, համատեղ հետազոտությունների իրականացման, ֆինանսավորման նոր աղբյուրների, դրամաշնորհային ծրագրերի ընձեռած հնարավորությունների օգտագործման նպատակով բուհն անդամակցեց Եվրոպական միության ‹‹ERASMUS + MENVIPRO›› ծրագրին՝ բնապահպանության ոլորտում համատեղ գիտահետազոտական գործունեության իրականացման համար: Բուհի դասախոսների գիտական հետազոտությունների արդյունքներն արտացոլվեցին Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյա հոբելյանին նվիրված, ԳՊՀ 21(6)-րդ գիտաժողովի ընթացքում: Գիտական զեկուցումները տպագրվեցին ԳՊՀ գիտական հոդվածների ամենամյա ժողովածուի տեսքով, որի տպագրման պարբերականությունը հաշվետու

ժամանակահատվածում աճել է՝ դառնալով տարեկան երկու անգամ: Համալսարանի պաշտոնական կայքէջի ‹‹Գիտություն›› հատվածամասից զատ, նախագծվել է ԳՊՀ գիտական հոդվածների ամենամյա ժողովածուի առանձին պաշտոնական կայքէջ՝ publications@gsu.am: Խստացվել են նաև տպագրման աշխատանքներին, հոդվածների գրախոսմանը ներկայացվող պահանջները՝ նպատակ հետապնդելով բարձրացնելու հետազոտությունների գիտական հիմնավորվածության մակարդակը:

Հետազոտական գործընթացների որակի ապահովման և վերահսկման նպատակներով շարունակաբար ուսումնասիրվել են շահակիցների կարծիքները, կատարվել նրանց բավարարվածության գնահատման աշխատանքներ, վերլուծվել և հաշվի են առնվել արդյունքները:

ԳՊՀ ֆինանսական ծառայության կողմից արվել են համապատասխան վերլուծություններ՝ հիմնավորելով համալսարանի ֆինանսական գործունեության արդյունավետությունը, կատարվել է ֆինանսական պլանավորում: Համալսարանի 2018-2019 ուստարվա ֆինանսական գործունեության հաշվետվությունը ներկայացվել է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդին և հրապարակվելու է համալսարանի պաշտոնական կայքէջում՝ հասանելի դարձնելով ներքին և արտաքին բոլոր շահառուների համար:

Մշտական ուշադրության կենտրոնում է բուհի գիտական գրադարանի համալրումը: Հաշվետու ժամանակահատվածում համալրված գրքաֆոնդը կազմում է 441 միավոր, իսկ 2017-2018 ուստարում՝ 248 միավոր էր: Համալսարանում կազմակերպվող ամենամյա գիտաժողովի նյութերը շարունակաբար համալրում են գրադարանի մատենագիտական ցանկը:

Կատարվել են համապատասխան աշխատանքներ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար համալսարան մուտքի հեշտացումն ապահովելու ուղղությամբ, մասնավորապես, սահմանված կարգով կատարվել են նախապատրաստական՝ նախագծման, նախահաշվի կազմման, գնումների գործընթացի կազմակերպման աշխատանքներ և արդյունքում ԳՊՀ բոլոր մասնաշենքերի մուտքերին ներկառուցվել են չորս թեքահարթակներ:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը կրթական գործընթացում՝ հաշվետու ժամանակահատվածում համալսարանը համալրել է նորագույն համակարգչային տեխնիկայի, տեսալսողական սարքերի և սարքավորումների, գույքի բազան:

Պարբերաբար իրականացվել են համալսարանի մասնաշենքերի բարեկարգման, կապիտալ և ընթացիկ նորոգման, համակարգչային լսարանների արդիականացման, համացանցային աղբյուրներից ուսանողների և դասախոսների օգտվելու հնարավորությունների ընդլայնման աշխատանքներ: Համալսարանն ունի բավարար լսարանային ֆոնդ, որն ունի պատշաճ կահավորվածություն:

Հաշվետու ուստարում ևս իրականացվել է ռեսուրսների և ուսումնամեթոդական նյութերի առկա վիճակի հաշվեգրում (ինվենտարիզացիա) և մշտադիտարկում, որոնց արդյունքներով գնահատվել և բարելավվել է կրթական միջավայրը՝ հաշվի առնելով գիտության, տեխնիկայի, մշակույթի, տնտեսության, տեխնոլոգիաների և սոցիալական ոլորտի առաջընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում նախագծվեց համալսարանի նոր պաշտոնական կայքը՝ www.gsu.am: Առանձին բաժիններով ներկայացված են ֆակուլտետները՝ իրենց մասնագիտություններով և ամբիոններով: Առկա է «Ուսումնական գործընթաց» բաժինը՝ «Դիմորդի անկյուն» էջով, ստեղծված են «Հայտարարություններ», «Նորություններ», «Տեսասրահ» և այլ բաժինները: «Տեսասրահում» տեղադրված են միջոցառումների լուսանկարներ, տեսանյութեր: Ստեղծված է հետադարձ կապի հնարավորություն: Համալսարանի պաշտոնական կայքը ապահովում է տեղեկատվության հասանելիությունը հասարակության լայն շերտերին:

«Youtube»-ի՝ (http://www.youtube.com/user/gsuadmin) տիրույթում համալրվել են համալսարանի գործունեությունը լուսաբանող բոլոր տեսանյութերը («Համալսարանական ժամ», «Լուրեր», «Դասը վարում է ԳՊՀ պրոֆեսորը» հաղորդաշարերը):

Շահառուների շրջանում պարբերաբար ուսումնասիրվել են անհրաժեշտ ռեսուրսների նկատմամբ նրանց ունեցած կարիքները, կազմվել է անհրաժեշտ ուսումնական ռեսուրսների ցանկը, իրականացվել են գնման և տեղաբաշխման գործընթացներ: Շահակիցների շրջանում իրականացված կրթական միջավայրից բավարարվածության աստիճանի մշտադիտարկման արդյունքներով գրանցվել է կրթական միջավայրից բավարարվածության 2% աճ:

Բուհ-հասարակություն կապերի ամրապնդման, հասարակության տարբեր շերտերի կրթական կարիքների ուսումնասիրման, դրանց բացահայտման ու բավարարման, լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման նպատակներով հաշվետու ժամանակահատվածում կնքվել կամ վերակնքվել են համագործակցության և փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր ներքոնշյալ ՀՀ և օտարերկրյա հաստատությունների հետ.

1. Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան,
2. Սևանի բազմագործառութային պետական քոլեջ,
3. Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ,
4. «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպություն:
5. Մոսկվայի տարածաշրջանի բարձրագույն կրթության պետական ուսումնական հաստատություն «Պետական սոցիալ-հումանիտար համալսարան»,
6. Ն. Գ. Չերնիշևսկու անվան Սարատովի ազգային պետական հետազոտական համալսարան,
7. Բելոռուսի առևտրատնտեսական համալսարան
8. Մինսկի նորարարական համալսարան,

Կատարվել են հետազոտություններ հանրակրթության ոլորտի կարիքների բացահայտման և մասնագետներին ներկայացվող պահանջների վերհանման ուղղությամբ: Դրանց հաշվառմամբ մասնագիտական ամբիոնների կողմից մշակվել են ուսումնական մոդուլներ, որոնք միտված են հանրային որոշակի շերտերի կրթական կարիքների բավարարմանը, մասնավորապես կազմակերպել են օտար լեզուների լրացուցիչ դասընթացներ, մարզի հանրակրթական դպրոցներում շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրման նպատակով 146 աշակերտների և 73 ուսուցիչների շրջանում կատարվել են հարցումներ, որոնց արդյունքում առաջարկված թեմաներով իրականացվել են թվով 7 վերապատրաստումներ:

Մասնագիտական, մանկավարժական վերապատրաստումների կարիքի ուսումնասիրմանը մասնակցել է 98 ուսուցիչ:

Ամփոփ տվյալներով՝ 2018-2019 ուստարում վերապատրաստումներին մասնակցել են 255 շահառու, որից արտաքին շահառու՝ 167: Շահառուների բավարարվածության աստիճանը վերապատրաստման ծրագրերից կազմել է 92,9 %, իսկ 2017-1018 ուստարում գրանցվել է ընդհանուր մասնակցություն՝ 133 շահառու, որից արտաքին շահառու՝ 47: Շահառուների բավարարվածության աստիճանը՝ 89%, շահառուների բավարարվածության մակարդակը հաշվետու տարում գրանցել է 3,9 % աճ, ինչը բարձր է գնահատվել համալսարանի գիտխորհրդի կողմից: Բոլոր վերապատրաստման ծրագրերը իրականացվել են ԳՊՀ ֆինանսական և նյութական միջոցներով, արտաքին և ներքին շահառուների անվճար մասնակցության սկզբունքով՝ խրախուսելով յուրաքանչյուրի մասնակցությունը, շնորհելով համապատասխան կրեդիտներ, տրամադրելով հավաստագրեր:

Համալսարանի հանրային պատասխանատվության ծրագրերի շրջանակներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների արդյունքում յուրովի խրախուսվում է նաև մարզի մասնագիտական հանրույթի գիտական հետազոտություններ կատարելու ձգտումներ. համալսարանը հնարավորություն է ընձեռում նրանց մասնակցելու գիտաժողովների, քննարկումների, սեմինարների, գիտաժողովների, հանդես գալու զեկուցումներով, ինչպես նաև տպագրելու գիտական աշխատանքներ, որոնք մասնագիտական փորձաքննություն են անցնում համալսարանի համապատասխան ամբիոններում:

Կազմակերպվել է նաև առցանց դասընթաց՝ բաց մուտքի հնարավորությամբ:

Համալսարանը շարունակել է մարզի դպրոցներին առաքել ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուները, մանկավարժներին ցուցաբերել է մասնագիտական խորհրդատվություն, մեթոդական և բովանդակային աջակցություն:

ԳՊՀ-ն հաշվետու ժամանակահատվածում ևս ուսումնասիրել և կիրառել է արտերկրի առաջավոր համալսարանների փորձը, տեղայնացրել ուսուցման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները, հաշվետու ժամանակահատվածում կնքվել են նոր համագործակցության պայմանագրեր:

Հանրապետությունում և մասնավորապես ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացվող կրթամշակութային միջոցառումներում, սոցիալական տարբեր ծրագրերում առավելագույնս ներգրավվել են ԳՊՀ-ի աշխատակիցներն ու ուսանողները:

ԳՊՀ-ում, որպես կարևորագույն առաջնահերթություն, շարունակվել է համարվել կրթության որակի բարձրացումը, որակյալ ուսումնական, դաստիարակչական միջավայրի ապահովումը, որակի մշակույթի ամրապնդումը:

Հաշվետու ժամանակահատվածում կառուցվածքային ստորաբաժանումների, մասնագիտական ամբիոնների տարեկան հաշվետվությունները ներկայացվել են ըստ ՌԾ նպատակների և առավելապես կրել են վերլուծական բնույթ: Որակի ապահովման բաժնի կողմից վերահսկվել են բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տարեկան գործողությունների պլանով սահմանված ակնկալվող և փաստացի արդյունավետության ցուցիչների շեղումները, դրանք ներկայացվել են գիտխորհրդի քննարկմանը: Գիտխորհրդի որոշմամբ արդյունքները ներկայացվել են համապատասխան ստորաբաժանումներին՝

պահանջելով ներկայացնելու արձանագրած արդյունքների, դրանց նվազման պարագայում նաև պատճառների, հնարավոր հետևանքների վերաբերյալ վերլուծություններ:

Իրականացվել է ամբիոնների և ֆակուլտետների գործունեության թույլ կողմերի վերլուծություն, մշակվել են բարելավման ուղիներ՝ հաշվի առնելով վերլուծության արդյունքները: Բարելավվել են Որակի ապահովման բաժնի աշխատակիցների մասնագիտական հմտությունները, կազմակերպվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Որակի ապահովման համակարգի բարելավում» թեմայով վերապատրաստման երկփուլ դասընթաց՝ ինստիտուցիոնալ վերահավատարմագրման կամ հավատարմագրման պատրաստվող բուհերի մասնագետների համար /առաջին փուլ՝ 03.04.2019-05.04.2019թ., երկրորդ փուլ՝ 17.04.2019-19.04.2019թ./, որի նպատակն էր մասնակիցներին անհրաժեշտ մեթոդաբանության տրամադրումը բուհի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համար, որի արդյունքում մասնակիցներին տրվել է Որակի ապահովման աջակցի հավաստագիր: ԳՊՀ աշխատակիցները մասնակցել են նաև ՈԱԱԿ-ի և Հայ-ռուսական համալսարանի համատեղ կազմակերպված «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով աշխատաժողովին /14.06.2019թ./, որի նպատակն էր քննարկել ՀՀ-ում որակավորումների արժանահավատ շնորհման խնդիրը, կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման մոդելները, որոնք նաև կապահովեն դասախոսի և ուսանողի շահադրդումը, շեշտելու դասախոսի դերը վերջնարդյունքների ապահովման գործընթացում, վեր հանելու առկա լավագույն փորձը և նպաստելու դրանց տարածմանը: Կատարվել են շահակիցների շրջանում կրթության որակի ապահովման գործընթացներից բավարարվածության մասին հարցումների արդյունքների վերլուծություններ, գրանցվել է շահակիցների 1,74 % աճ: Համալսարանն ակտիվորեն շարունակել է մասնակցել հանրապետական և միջազգային տարբեր ծրագրերի: Բուհի դասախոսները, ուսանողները, վարչական անձնակազմի անդամները պարբերաբար մասնակցել են վերապատրաստման տարբեր դասընթացների և աշխատաժողովների, որոնց արդյունքում, ինչպես նաև համալսարանի փորձի հաշվառմամբ՝ մշտապես վերանայում, արդիականացնում և կատարելագործում են որակի ներքին համակարգը, կիրառվող գործիքակազմը և որակի ապահովման քաղաքականությունը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական և ուսումնամեթոդական նյութերի տպագրման աշխատանքները: Համալսարանի գիտխորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել ԳՊՀ դասախոս Վաչագան Գրիգորյանի հեղինակած «Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը» և Սամվել Խաչատրյանի հեղինակած «Հայոց Տրդատ 1-ին և Սանատրուկ թագավորների անձերի նույնության շուրջ», «Ընդունողականությունը որպես հայկական զրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի սկզբունք» ուսումնասիրությունները:

Հաշվետու ժամանակահատվածում գիտխորհուրդը ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Աշխունջ Ամիրխանի Պողոսյանին շնորհել է դոցենտի կոչում և համապատասխան ընթացակարգով որոշումը ներկայացրել ՀՀ ԲՈԿ՝ հաստատման:

2019-2020 **ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական զարգացման ռազմավարական ուղղությունները**

2019-2020 ***ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում որպես կարգախոս ընդունվել է Կրթություն հանուն զարգացման***

I. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Ուսուցման բոլոր ձևերով իրականացվող ՄԿԾ-ների դասընթացներին, ուսումնական այլ մոդուլներին կրեդիտների հատկացման և դրանց հաշվարկման նոր մեթոդաբանության մշակում, կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառում ուսումնական գործընթացում, դրանց արդյունավետության բարձրացում:
2. Կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում, դրանց արդյունքների, վերլուծությունների հրապարակում, շահակիցների ներգրավմամբ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում և ամբողջականացում՝ Համալսարանում իրականացվող բոլոր գործընթացների որակը գնահատելու և դրա շարունակական բարելավման ընթացքն ապահովելու նպատակներով:
3. ԳՊՀ ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչների մշակում՝ ըստ ռազմավարական ուղղությունների:
4. ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման աջակցության աշխատանքների իրականացում, նրանց հետ իրականացվող ծրագրերի բազմազանեցում:
5. Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորողների ուսումնական, արտադրական, նախաավարտական, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների արդյունավետության բարձրացում:
6. Որակի ապահովման բաժնի մասնագետների, ֆակուլտետային պատասխանատուների պարտականությունների ու գործառույթների հստակեցում, արդյունքահեն գործունեության կազմակերպում:

II. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Մասնագիտական կրթական ծրագրերում կարևորել հետազոտական բաղադրիչը, ակտիվացնել ուսանողների հետազոտական աշխատանքները:
2. Սահմանել ԳՊՀ ամբիոնների գերակա գիտական ուղղությունները՝ ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և Հայաստանի Հանրապետության տնտեսական առաջնահերթությունների, Գեղարքունիքի մարզի զարգացման պահանջների հաշվառմամբ:

3. Ամբիոններում իրականացրած հետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների, կատարված աշխատանքների գնահատումների հիման վրա հրապարակել վերլուծություններ:
4. ԳՊՀ գիտաժողովները անցկացնել առնվազն տարեկան երկու անգամ, պահպանել պարբերականությունը, դինամիկ զարգացնել գիտաժողովի պաշտոնական կայքէջը:
5. Հանրապետության առաջատար գիտահետազոտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների հետ կնքել պայմանագրեր, հետազոտական լաբորատորիաները համատեղ օգտագործելու վերաբերյալ, ընդլայնել ուսանողների հետազոտական պրակտիկաների բազաները:

III. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

6. Համալսարանի գործունեությունը կարգավորող ներքուհական փաստաթղթերի և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովում:
7. Կատարելագործել էլեկտրոնային ուսուցման համակարգի (learn.gsu.) տեխնիկական հնարավորությունները, նախագծել նոր ենթածրագեր, թարմացնել համակարգում ներբեռնված ուսումնական նյութերի բովանդակությունը:
8. Շարունակել շահառուների շրջանում նրանց անհրաժեշտ էլեկտրոնային ռեսուրսների կարիքների ուսումնասիրությունը, ձեռնարկել դրանց բավարարման ծրագրեր:
9. Արդիականացնել և համալրել լինգաֆոնային լսարանի սարքավորումները:
10. Իրավագիտության բաժնի ուսանողների գործնական հմտությունների զարգացման նպատակով հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում հիմնել կրիմինալիստիկայի լաբորատորիա՝ հագեցած փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով:

IV. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

11. Ուսանողներին խոր մասնագիտական գիտելիքների հաղորդում, համապատասխան ոլորտների տեսական և գործնական իմացության ապահովում, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, շարունակական կրթության մշակույթի արմատավորում:
12. Սովորողների հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացում, շարունակական կրթության միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորում:
13. Նախագծել և գործարկել օտարալեզու ուսումնական կայքէջ:
14. Բոլոր ՄԿԾ-ների գծով շարունակել օտարալեզու դասընթացների մշակման գործընթացը:

15. Սովորողների հետադարձ կապի ուսումնասիրման գործում ակտիվորեն ներգրավել ուսանողական ինքնակառավարման մարմիններին:
16. Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, Համալսարանի կառավարման գործընթացում նրանց ակտիվ դերակատարության ապահովում:
17. Ստեղծել ԳՊՀ գիտխորհրդին և ֆակուլտետների խորհուրդներին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովներ / 3-5 անդամ՝ ներառյալ ուսանողները/:
18. Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, Համալսարանի կառավարման գործընթացում նրանց ակտիվ դերակատարության ապահովում:

V. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

19. Բուհի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխում, գործունեության հստակ ուղղորդում, ներդաշնակ և համագործակցված աշխատանքի ապահովում:
20. Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունության պահպանում:
21. Կատարելագործել դասախոսական և վարչական անձնակազմի մրցույթի և ընտրության գործընթացները, ապահովել դրանց օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:
22. Երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, նրանց գիտահետազոտական աշխատանքների մեջ ընդգրկում:
23. Ներդնել դասախոսների ատեստավորման համակարգեր:
24. Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների գնահատում, ինչպես նաև խորքային վերլուծություններ, հրապարակել:

VI. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

25. Իրականացնել տարեկան ֆինանսական վերլուծություններ՝ ըստ համալսարանի ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների՝ հիմնավորելով համալսարանի ֆինանսական գործունեության արդյունավետությունը:
26. Տարեկան բյուջեն պլանավորելիս՝ ավելացնել գիտահետազոտական ծրագրերին տրվող հատկացումները:

27. Շարունակել ուսումնասիրել շահառուների բավարարվածության աստիճանը ֆինանսական ռեսուրսներից, բացահայտել անձնակազմի ֆինանսական կարիքները, ձեռնարկել միջոցներ դանց բավարարման համար:
28. Աշխատակիցների հաշվետվությունների հիման վրա իրականացնել գնահատումներ, կիրառել խրախուսման կառուցակարգեր, ԳՊՀ տարեկան բյուջեում պլանավորել աշխատակիցների խրախուսմանը տրամադրվող հատկացումներ:

VII. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

29. Համագործակցություն Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ:
30. Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում /բենչմարքինգի իրականացում/, Համալսարանի ինտեգրում եվրոպական գիտակրթական տարածք, միջազգայնացում:
31. «Համալսարան-դպրոցներ» բազմաբնույթ համագործակցության ապահովում, գործընկեր դպրոցների ցանկի ընդլայնում, մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդմիավորումների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում:

VIII. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

32. Համալսարանի աշխատակիցների և սովորողների սոցիալական կարիքների հետազոտություն և հնարավորության սահմաններում օժանդակության ցուցաբերում:
33. Ներառական կրթական միջավայրի ստեղծում, հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության մատչելիության ապահովում:
34. Կատարել շարունակական աշխատանքներ համալսարանում շահակիցներին տրամադրվող աջակցման ծրագրերի արդյունավետության գնահատման ուղղությամբ, ներկայացնել տարեկան վերլուծություններ և հաշվի առնել դրանց արդյունքները:
35. Համալսարանի ներքին շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, գործընկերների հետ արդյունավետ համագործակցության ապահովում:

IX. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

36. Վերանայել համալսարանում ծագած վեճերը քննող հանձնաժողովի գործունեության ընթացակարգը:
37. Կատարել բուհում անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի աշխատանքի արդյունավետության գնահատումներ, վերլուծություններ, հրապարակել:
38. ՀՀ Գեղարքունիքի մարզում հակակոռուպցիոն գործունեության ծավալում, մարզի ազգաբնակչության իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված ծրագրերի իրականացում:

Նելլի Կուտուզյան
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ և 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման՝ տվյալ տարվա գործողությունների ծրագիրը: Մասնավորապես, 2019 թվականի բյուջեն և 2020 թվականի բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը: Բյուջեում համապատասխան հոդվածների համամասնությունը պլանավորելիս՝ հիմք են ընդունվում տվյալ ուղղություններով նախատեսված գործողությունների արդյունավետության գնահատման ակնկալվող ցուցիչները:

Այսպիսով, ըստ ԳՊՀ 2017-2022թթ. Ռազմավարական ծրագրի ուղղությունների՝ ԳՊՀ բյուջեի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *<u>Ուսումնական գործընթացի կազմակերպման ոլորտում.</u>*

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, բյուջեում հատկացված տոկոսը՝ 62.09%, որը իր մեջ ներառում է նաև այլ ոլորտների համար նախատեսված միջոցները:

2. *<u>Գիտահետազոտական գործունեության ոլորտում.</u>*

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.65%: Այս գործունեության համար աշխատանքի վարձատրությանը, անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերմանը, պայմանների ստեղծմանը և այլ անհրաժեշտ ծախսերին ուղղվող միջոցները ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Ուստի, գիտահետազոտական ուղղությամբ կատարվող ընդհանուր ծախսերն ավելին են:

3. *<u>Կրթական միջավայրի արդիականացման ոլորտում.</u>*

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, բյուջեում հատկացված տոկոսը՝ 12.03%:

4. *<u>Ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման ոլորտում.</u>*

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների

ծախսեր, գրադարանային ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.8%:

5. *Վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում.*

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1.38%:

6. *Ֆինանսական գործունեության և ներքուհական տնտեսության կազմակերպման ոլորտներում.*

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.38%:

7. *Արտաքին կապերի և համագործակցության ոլորտում.*

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ փոստային և կապի վճարներ, այլ ծառայությունների և ներկայացուցչական ու գործուղման ծախսեր, մարքեթինգի և գովազի ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.66%:

8. *Համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում.*

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ուղղությամբ աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 6.82%:

9. *Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման ոլորտում.*

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.2 %:

Ստորև ներկայացվում է 2019 **թվականի բյուջեի կատարողականի և** 2020 **թվականի բյուջեի նախահաշվի վերլուծությունը**.

Գավառի պետական համալսարանի 2019 թվականի և 2020 թվականի բյուջեները կազմվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին: Այս սկզբունքը պահպանվել է 2019 թվականի ծախսերը կատարելիս՝ պակասուրդ չառաջացնելու նպատակով:

Այսպիսով, 2019 թվականին պլանավորված մուտքերի 78 տոկոսը բաժին է ընկնում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտներին, սակայն այս հոդվածի կատարողականը ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 78 տոկոս, քանի որ հոդվածի կատարողականը մոտ 13 տոկոսով պակաս է 2019 թվականի համար պլանավորված գումարից: Հոդվածի թերակատարումը պայմանավորված է ինչպես 2019թ-ին ուսանողների տրամադրված զեղչերի աճով, այնպես էլ ընդունելության արդյունքներով ուսանողների քանակի նվազումով, ինչն իր ազդեցությունն է թողել 2019 թվականի համար նախատեսված ծախսերի կատարողականի վրա: 2020 թվականի բյուջեով վճարովի ուսուցման

ծառայությունից եկամուտները կազմելու են բյուջեի ընդհանուր մուտքերի 69 տոկոսը, 2019թ-ի փաստացի կատարողականից այս մեծությունը ավել է նախատեսվել 6.7 տոկոս, բայց քանի որ դրամաշնորհներից մուտքերի աճ է կանխատեսվում, այդ պատճառով էլ այդ հոդվածը ընդհանուրի մեջ նվազել է:

Մուտքերի հաջորդ, համեմատաբար մեծ տեսակարար մասը, բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորմանը, որը, ըստ 2019 թվականի պլանավորման, կազմել է 12.9 տոկոս, սակայն ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները գերազանցել են պլանավորված մեծությունը, քանի որ պետության կողմից սոցիալապես անապահով ընտանիքների երեխա ուսանողներին հատկացվող ֆինանսավորման գումարը աճել է, 2020 թվականի համար պլանավորված գումարը սահմանվել է կատարողականի սահմաններում, այնուամենայնիվ՝ պայմանավորված 2020-2021 ուստարվա ընդունելության արդյունքների անորոշությամբ, հնարավոր չէ արժանահավատորեն կանխատեսել և գնահատել այդ մեծությունը:

Պլանավորված մուտքերի հաջորդ խումբը՝ 8.6 տոկոսից մի փոքր ավելի, կազմում են ոչ գործառնական մուտքերը, որոնք իրենց մեջ ներառում են դրամաշնորհներից և բարեգործական նվիրաբերություններից մուտքերը, բանկերում ներդրված գումարներից եկամուտները և վարձակալական եկամուտները: Ոչ գործառնական եկամուտներից մուտքերը կազմել են 4.6 տոկոս, քանի որ 2 դրամաշնորհային պայմանագրերի հերթական ֆինանսավորումը տեղափոխվել է 2020 թվական:

Պլանավորված մուտքերում հաջորդ ոչ էական խումբը՝ 0.6 տոկոսով, կազմում են գործառնական այլ եկամուտները, որոնք ներառում են ընդունելության քննություններից և գործերի ընդունումից մուտքերը, այլ ծառայություններից և վաճառակետից մուտքերը: Այս հոդվածի կատարողականը կազմել է գրեթե 0.6 տոկոս:

Գավառի պետական համալսարանի ելքերի ամենամեծ բաժինը՝ գրեթե 70.4 տոկոսը, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն են, որոնք իրենց մեջ ներառում են և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտի ծախսերը, և՛ ֆինանսական գործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպումը, և՛ մարդկային ռեսուրսների կառավարումը, և՛ վարչարարության, ինչպես նաև գիտահետազոտական գործունեության համար վճարումները:

Վճարումներ պետական բյուջե /Հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հոդվածը ներառված է ընդհանուր ծախսերի մեջ և ընդգրկում է համալսարանի կողմից վճարվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը և այլ հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ: Այս հոդվածի գծով 2019 թվականի համար պլանավորումը կազմել է գրեթե 0.8 տոկոս, բայց կատարվել է 0.4 տոկոսը: Հոդվածով նախատեսվել 0.7 տոկոս, քանի որ 2019 թվականի համար նախատեսվել է շահույթի ավելացում և դրա հետևանքով շահութահարկի վճարում:

Կոմունալ վճարները կազմում են պլանավորված բյուջեի գրեթե 4 տոկոսը, որն իր մեջ ներառում է և՛ հետազոտական գործունեության համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը, և բոլոր այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են կոմունալ ծախսեր: Հոդվածում առկա է մոտ 17 տոկոս տնտեսում, և 2020թ-ի համար նախատեսվել է բյուջեի մոտ 4 տոկոսը ծախսել կոմունալ ծախսերի համար:

Փոստային և կապի վճարներ պլանավորվել են 0.4 տոկոսի չափով: Հոդվածն ընդհանուր ծախսերի տեսանկյունից ըստ էության կատարվել է, չնայած պլանավորված

մեծությունից տնտեսվել է մոտ 16 տոկոսը և հաջորդ տարվա համար պլանավորվել է նույն չափաբաժնով: Ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2019 թվականի ընթացքում ինտերնետ կապի արագությունը կնկնապատկվել է, սակայն սակագինը կրկնակի նվազեցվել է, որպեսզի ինտերնետ ծառայության արագության կրկնապատկումը բյուջեի վրա որևէ ազդեցություն չունենա:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.2 տոկոսը, այս բաժինն իր մեջ ներառում է բոլոր ոլորտների համար անհրաժեշտ նյութերը (հետազոտական աշխատանքների, մարդկային ռեսուրսների կառավարման և վարչարարության, արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման և ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը): Այս հոդվածի կատարողական ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 0.9 տոկոս: 2020 թվականի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է մոտ 1.2 տոկոս:

Ծախսերի հաջորդ բաժինը Տրանսպորտային միջոցների ծախսերն են, որոնք կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.18 տոկոսը, որը նախատեսված է համալսարանի 2 մեքենաների համար, որոնք սպասարկում են ռեկտորին և համալսարանի այլ աշխատակիցներին, և 1 ավտոբուսի համար, որը սպասարկում է համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին: Այսինքն՝ այս հոդվածն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բազմաթիվ ոլորտների ծախսեր. և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը, և՛ ուսումնա-գիտահետազոտական գործունեության ոլորտը, և՛ արտաքին կապերի- համագործակցության ընդլայնման ոլորտը: Հոդվածով բացարձակ տեսանկյունից ունենք տնտեսում 7.11 տոկոսի չափով, բայց կատարողական ընդհանուր բյուջեում կազմել է 1.34 տոկոս, 2019թ-ի բյուջեի 1.18 տոկոսը նախատեսվել է տրանսպորտային միջոցների սպասարկման համար:

Ծախսերի հաջորդ բաժինը Ծառայությունների ձեռքբերման ծախսերն են, այս բաժնի համար պլանավորվել էր բյուջեի 0.56 տոկոսը, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ծառայությունների ձեռքբերում, ներառյալ տպագրության, մարքեթինգի և գովազդի համար պահանջվող ծախսերը: Նշված հոդվածի կատարողականը կազմել է 2019 թվականի բյուջեի 0.59 տոկոսը և 2020 թվականի համար նախատեսվել է բյուջեի 0.61 տոկոսը: Հոդվածը ներառում է նաև չնախատեսված իրավիճակների համար միջոցների պլանավորում:

Ծախսերի հաջորդ բաժինը գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք 2019 թվականի համար պլանավորվել էր 0.4 տոկոս, կատարողականը կազմել է ընդհանուր ծախսերի 0.4 տոկոսը, իսկ 2020թ-ի համար նախատեսվել է բյուջեի 0.65 տոկոսը ծախսել այս ուղղության ֆինանսավորման համար: Հոդվածը ներառում է գիտահետազոտական աշխատանքների և նյութերի համար անհրաժեշտ ծախսերը, բայց այս գործունեության համար անհրաժեշտ վարձատրության, կոմունալ, կապի և այլ անհրաժեշտ ծախսերը ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Այսինքն՝ գիտահետազոտական գործունեության համար ծախսերն ավելին են:

Ծախսերի հաջորդ բաժինը Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք կազմել են բյուջեի շատ փոքր մասը, քանի որ օգտագործվում են էլեկտրոնային լրատվամիջոցներ:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսերը: Այս հոդվածի կատարողականը գրեթե չի շեղվել պլանավորվածից, և 2020 թվականին հոդվածը պլանավորվել է նույն չափաբաժնով:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Ներկայացուցչական և գործուղման ծախսերը: Այս հոդվածը նույնպես կազմել է ծախսերի ընդամենը 0.1 տոկոսը: Նշված հոդվածը նախատեսված է ԳՊՀ-ում հյուրերի և պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպման համար, որի նպատակը արտաքին կապերի, համագործակցության ծրագրերի և բարերարների շրջանակների մեծացումն է: Նշված հոդվածով արձանագրվել է տնտեսում, իսկ հաջորդ տարվա համար նախատեսվել է ծախսերի 0.11 տոկոսը:

Ծախսերի հաջորդ բաժինը Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսերն են: Հոդվածը նախատեսված է ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորման և վերջիններիս ընթացիկ գործունեության ապահովման ծախսերը հոգալու համար: Նախատեսվել էր գրեթե 0.1 տոկոսը, կատարողականը կազմել է 0.03 տոկոս, իսկ 2020թ-ի համար նախատեսվել է 0.15 տոկոսը ընդհանուր ծախսերում, այս հոդվածով ծախսերի որոշ մասը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից: Նշենք որ ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից գիտահետազոտական գործունեության համար կատարված ծախսերը ներառվել են գիտահետազոտական գործունեության հոդվածում, որպեսզի այդ մարմինների ծախսերի համար ավելի շատ միջոցներ հատկացվեն:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Այլ ծախսեր›› հոդվածն է, որն իր մեջ ներառում է բազմաբնույթ ծախսեր, ինչպիսիք են հիմնադրամների հետ համագործակցության և բարեգործության համար անհրաժեշտ ծախսերը, աշխատաժողովների և գիտաժողովների, այլ միջոցառումների կազմակերպման համար պահանջվող ծախսերը, դրամաշնորհների գծով կատարվող ծախսերը, ինչպես նաև գրադարանների համար գրքերի ձեռքբերման ծախսերը: Հոդվածը կազմել է 2019 թվականի պլանավորված ծախսերի ավելի քան 10.5 տոկոսը: Հոդվածի կատարողականը կազմել է ծախսերի 9.85 տոկոսը, արձանագրված աճը բացատրվում է դրամաշնորհների ընթացիկ ծախսերի աճով պայմանավորված ֆինանսավորման աճով: Հիմնադրամների, Հասարակական կազմակերպությունների գծով ծախսերում արձանագրվել են որոշակի խնայողություններ, իսկ Գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար ծախսերը 2019թ-ի համար պլանավորվել են ծախսերի 0.12 տոկոսի չափով, փաստացի կատարողականը կազմել է ծախսերի գրեթե 0.1 տոկոսը, իսկ 2020 թվականի բյուջեում նախատեսվել է գրեթե 0.1 տոկոսի չափով:

2019 թվականի ընթացքում ԳՊՀ գրադարանային ֆոնդը համալրվել է ավելի քան 2 մլն 600 հազար դրամի գրականությամբ:

Ծախսերի հաջորդ բաժինը վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսերն են, որոնք կազմել են ծախսերի 0.1 տոկոսը: Հոդվածի կատարողականը կազմել է գրեթե 0.1 տոկոս, ինչպես նաև 2020 թվականի բյուջեում նախատեսվել է նույնպես գրեթե 0.1 տոկոսի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմում են ուսանողներին վճարվող կրթաթոշակի գումարները: Այս հոդվածը պլանավորվել է հետևյալ կերպ՝ ծախսերի 1.48 տոկոսը: Նշված հոդվածով իրականացվում է անվճար սովորող ուսանողների և ԳՊՀ բարերարների կողմից

ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների պլանավորում և վճարում: 2019 թվականին հոդվածը գերակատարվել է, քանի որ ՀՀ կրթության և գիտության, ապա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից պլանավորումն իրականացվել է մինչև սեպտեմբեր ամիսը և հետո վերահաշվարկվել, նույն սկզբունքով պլանավորվել է նաև 2020 թվականը: Ինչպես նաև ԳՊՀ բարերար Ժիրայր Նիշանյանի կողմից ուսանողներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ 2019 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում տրամադրվել է նվեր՝ մոտ 7 ամսվա կրթաթոշակի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը՝ ‹‹Կապիտալ ակտիվների ձեռքբերում›› հոդվածն է: Նշված հոդվածով ծախսերը կազմել են 2019 թվականի ծախսերի 8.43 տոկոսը: Այս հոդվածով նախատեսվել էր 13 տոկոս, սակայն 2019 թվականի ընթացքում դրամաշնորհներով նախատեսված գնումները տեղափոխվել են 2020 թվական, որի արդյունքում նախատեսվել է 2020 թվականի բյուջեի մոտ 11 տոկոսը ծախսել այս ուղղությամբ:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Ելքեր կապիտալ նորոգումների գծով›› բաժինն է: Այս հոդվածով 2019 թվականի ընթացքում պլանավորվել է 1.17 տոկոս, որը կատարվել է 2019 թվականի ընթացքում, մասնավորապես վերանորոգվել է գլխավոր մասնաշենքի տանիքը, իսկ 2019 թվականի համար պլանավորվել է 0.74 տոկոսը, որը օգտագործվելու է այլ վերանորոգումների և հատկապես՝ տրանսպորտային միջոցների համար:

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունը, ինչպես նաև ԳՊՀ 2017-2022թթ Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման գործողությունների պլանը՝ 2020**թ. բյուջեն ըստ հոդվածների /տողերի/ վերաբաշխվել է ներքոհիշյալ համամասնությամբ**.

1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, բյուջեում հատկացված տոկոսը՝ 62.5 %

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1.5 %

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, բյուջեում հատկացված տոկոսը՝ 4%

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, գրադարանային ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 4.5%:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ոլորտներում կատարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 2.3%:

6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.9%:

7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ մարքեթինգի և գովազդի ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.8%:

8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ոլորտում աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, բյուջեում հատկացված տոկոսը՝ 7.3 %:

9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.2 %:

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՄ

Առկա և կանխատեսվող ֆինանսական ռեսուրսների համադրմամբ, ֆինանսական ռիսկերի կանխատեսման և դրանց նվազեցման, ֆինանսավորման այլընտրանքային միջոցների որոնման, ինչպես նաև հետագայում անհրաժեշտ ռեսուրսների կարիքների բացահայտման նպատակով ԳՊՀ բյուջեում նախատեսվել են նաև պահուստային միջոցներ՝ ավելի քան 7 մլն ՀՀ դրամի չափով:

Գուրգեն Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ասոյան Թաթուլ Արտիկի*
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դեկանի տեղակալ՝ *Սարգսյան Ռուզաննա Մարատի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 **Մասնագիտական *մանկավարժություն***	
011401.19.6	*Հայոց լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
011401.20.6	*Ռուսաց լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
011401.21.6	*Անգլերեն լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 **Մասնագիտական *մանկավարժություն***	
011401.19.7	*Հայոց լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	*Ռուսաց լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	*Անգլերեն լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 79
Շրջանավարտների թիվը՝ 28

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1.**Ընդունելությունը և ուսանողական համակազմը**

2018-2019 ուսումնական տարում ընդունելություն կազմակերպվել է երեք մասնագիտությունների գծով. հայոց լեզու և գրականություն, անգլերեն լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն: Հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության բաժիններում 1-ին կուրս չի ձևավորվել, իսկ անգլերեն լեզվի և գրականության բաժին ընդունվել է 10 ուսանող: Մագիստրատուրայում ևս ընդունելության քննություններ կազմակերպվել են նշված մասնագիտությունների գծով: «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրատուրա են ընդունվել 5, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ՝ 5, «Ռուսաց լեզու և գրականություն»՝ 4 ուսանողներ: Այսպիսով, բակալավրիատի 1-ին կուրս են ընդունվել 14, իսկ մագիստրատուրայի 1-ին կուրս՝ 14 ուսանողներ, իսկ ընդհանուր առմամբ բանասիրական ֆակուլտետ են ընդունվել 24 /անցած ուստարում՝ 37/ ուսանողներ: Ուսանողական համակազմի առումով նկատելի է նվազման դինամիկա: Այսպես, 2015-2016 ուստարում ֆակուլտետում սովորում էր 137 ուսանող (բակալավրիատ՝ 115, մագիստրատուրա՝ 22), 2016-2017 ուստարում՝ 106 (բակալավրիատ՝ 78, մագիստրատուրա՝ 28), 2017-2018 ուստարում՝ 100 (բակալավրիատ՝ 63, մագիստրատուրա՝ 37), իսկ 2018-19-ում՝ 79 (բակալավրիատ՝ 53, մագիստրատուրա՝ 26):

2.**Ուսանողների ուսումնական առաջադիմությունը**

Բակալավրիատ

Հայոց լեզու և գրականություն – 2-րդ՝ 100%, 3-րդ՝ 66,67%

Անգլերեն լեզու և գրականություն- 1-ին՝ 90%, 2-րդ՝ 100%, 3-րդ՝ 100%

Ընդամենը ըստ բակալավրիատի՝ 91,43%

Մագիստրատուրա

Հայոց լեզու և գրականություն- 1-ին՝ 80 %

Անգլերեն լեզու և գրականություն- 1-ին՝ 100%

Ռուսաց լեզու և գրականություն- - 1-ին՝ 100%

Ընդամենը ըստ մագիստրատուրայի՝ 92,86%

Ընդամենը ըստ ֆակուլտետի՝ 91,84%:

2018-2019 ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետից ազատվել են երկու ուսանողներ, տարկետում է ստացել մեկ ուսանողուհի, հեռակայից առկա ուսուցման համակարգ են տեղափոխվել հինգ ուսանող (4-ը հայոց լեզվի և գրականության բաժին, 1-ը՝ անգլերեն լեզվի և գրականության), միջազգային շարժունության ծրագրերով արտասահմանում սովորել և վերադարձել են երկու ուսանողներ:

3.**Տվյալներ գործատուների՝ շրջանավարտներից բավարարվածության վերաբերյալ և կատարված հարցումների վերլուծություն**

Հարցումները հիմնականում անցկացվել են դպրոցների տնօրենների շրջանում՝ մշակված հարցաթերթիկների միջոցով: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ

ա) շրջանավարտներին տրվում են բարձր գնահատականներ,

բ) ուսանողներն իրենց ստացած գիտելիքներով համապատասխանում են մասնագիտությանը, և գործատուները ընդհանուր առմամբ գոհ են ուսանողների մասնագիտական պատրաստվածությունից,

գ) ուսանողների ուժեղ կողմեր են համարում մասնագիտական պատրաստվածությունը, տեսական գիտելիքների և ինտելեկտուալ բարձր մակարդակը, մասնագիտական առարկաների լավ իմացությունը,

դ) ուսանողների թույլ կողմ է համարվել այն, որ չնայած բարձր է տեսական գիտելիքների մակարդակը, սակայն դրանք գործնականում կիրառելու փորձը, կարողություններն ու հմտություններն են պակասում: Գործատուներն առաջարկում են ուշադրություն դարձնել ուսանողների մեթոդական պատրաստվածությանը, համակարգչային ծրագրերի և օտար լեզուների իմացությանը:

4.**Կրթական ծրագրերի զարգացումն ու փոփոխությունները**

Ժամանակի պահանջներին համապատասխան՝ փոփոխություններ են կրել ուսումնական պլանները: Հաշվետու ուսումնական տարում թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ուսումնական պլաններում որոշ փոփոխություններ են կատարվել՝ կապված որոշ առարկաների ժամաքանակի և կիսամյակային տեղաշարժերի հետ:

Հայոց լեզվի և գրականության բաժնի աշխատանքային ուսումնական պլաններում վերանվանվել են մի շարք դասընթացներ: Այսպես, հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսում նախատեսվող «Դասական գրականության ավանդները» կամընտրական դասընթացի փոխարեն ընդգրկվել է «Ֆրանսահայ գրականությունը 1920-1960-ական թվականներին» դասընթացը, «Հայերենի քերականագիտության պատմություն» կամընտրական դասընթացի փոխարեն՝ «Հայ մատենագրություն» դասընթացը:

Հայոց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսում «Հայերենի ուղղագրությունը» դասընթացը վերանվանվել է «Հայերենի ուղղագրության պատմություն», «Հրաչյա Աճառյանի լեզվաբանական հայացքները» և «Հոգելեզվաբանություն» կամընտրական դասընթացների փոխարեն ընդգրկվել են «Պատմական քերականություն» և «Տեքստագիտություն» դասընթացները, «Բառակազմություն և ձևաբանություն» կամընտրական դասընթացի փոխարեն ընդգրկվել է «Ժամանակակից հայերենի նորաբանությունները» դասընթացը:

«Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 4-րդ կուրսի աշխատանքային ուսումնական պլանում, «Անգլիական գրականության պատմություն» դասընթացի ընդգրկմամբ պայմանավորված, կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- «Երկրագիտություն՝ հիմնական օտար լեզվի» դասընթացին հատկացված 4 կրեդիտը դարձել է 3 կրեդիտ. 60 ժամը դարձել է 48 ժամ (30 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական):
- Աշխատանքային ուսումնական պլանում չեն ընդգրկվել «Անգլերենի դիրքը հնդեվրոպական լեզվաընտանիքում» և «Հոգելեզվաբանություն» կամընտրական

դասընթացները, դրանց փոխարեն ընդգրկվել է «Անգլիական գրականության պատմություն» դասընթացը:

Փոփոխություն է կատարվել՝ կապված ամփոփիչ ատեստավորման հետ. ուսումնական պլանով նախատեսված ամփոփիչ ատեստավորման քննությունների փոխարեն ուսանողները պաշտպանելու են ավարտական աշխատանք:

5.**Ծրագրերի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները**

Արդի ժամանակաշրջանում անհատից պահանջվում են խորը գիտելիքներ և դրանք կյանքում կիրառելու կարողություններ ու հմտություններ: Ուսանողակենտրոն ուսուցումը նպաստում է ինքնուրույն մտածելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: Դրան նպաստում են ծրագրերում ներառված դասավանդման և ուսումնառության մեթոդները, գիտելիքների գնահատման ձևերն ու չափանիշները, որոնցով ուղղորդվում են դասախոսները: Ելքային արդյունքներ նախատեսված են առարկայական ծրագրերում յուրաքանչյուր թեմայի համար: Իրականացվել է մասնագրերի, կրթական և առարկայական ծրագրերի շարունակական բարելավում, աշխատանքներ են տարվել բովանդակային և կառուցվածքային առումով դրանք կատարելագործելու ուղղությամբ՝ հիմք ունենալով հենանշային ուսումնասիրությունները: Մշտապես իրականացվել են կրթական ծրագրերի, դասախոսությունների, ուսանողներին տրամադրվող նյութերի թարմացում, վերանայում և արդիականացում՝ հաշվի առնելով մարդկային գործունեության բոլոր ոլորտներում և ըմբռնումներում տեղի ունեցող փոփոխությունները: Հետևողական աշխատանքներ են տարվել մանկավարժական առաջավոր փորձի լուսաբանման և տարածման ուղղությամբ՝ անցկացնելով նորագույն մեթոդներով և տեխնոլոգիաներով հագեցած բաց դասեր, քննարկումներ, մեթոդական զեկուցումներ նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ՝ բարձրացնելով դասի արդյունավետությունը, իրականացնելով ուսանողակենտրոն ուսուցում:

Կատարվել են դասալսումներ՝ որպես դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման ազդակ, քննարկվել և արվել են հետևություններ: Ուսանողների գնահատման գործընթացը դարձել է հնարավորինս թափանցիկ, ուսանողները իրազեկվել են բազմագործոն գնահատման համակարգի մասին:

6.**Ուսումնական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները**

Ամբիոնի դասախոսական կազմը հիմնականում համապատասխանում է իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի պահանջներին, քանի որ բոլոր մասնագետներն էլ աշխատում են իրենց մասնագիտական որակը բարելավելու, մանկավարժական վարպետությունը կատարելագործելու, իրենց տեխնիկական և հաղորդակցական գրագիտության բարձրացման ուղղությամբ, դրսևորում են բարձր արհեստավարժություն և պատասխանատվություն:

Օտար լեզվի և գրականության ամբիոնների դասախոսներից Գ. Միրիբյանը, Ա. Մուխսիխաչոյանը, Ա. Մելքոնյանը, Ռ. Սարգսյանը, Գ. Սարգսյանը, Ա. Հովհաննիսյանը մասնակցել են գիտաժողովների և աշխատաժողովների: Իտալիայի Սալերնոյի համալսարանում և Պորտուգալիայի Մինհոյի համալսարանում դասախոսական աշխատանք է իրականացրել Ս. Ավագյանը:

2018թ. հոկտեմբերին ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի կողմից անցկացվել են վերապատրաստման դասընթացներ հետևյալ թեմաներով.

«Ուսումնառության ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը ռուսագետ ուսանողների մասնագիտական պատրաստման համակարգում» (Սարգսյան Ռ.),

«Ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման ընթացքում» (Սարգսյան Գ.),

«Պատմական մեկնաբանությունը որպես տեքստի հետազոտման միջոց» (Հովհաննիսյան Ա),

«Սովորողների քննադատական մտածողության զարգացումը Էդվարդ դե Բոնոյի «Մտածողության 6 գլխարկներ» մեթոդի հիման վրա» (Մուխսիխաչոյան Ա.):

ՀԼԳ ամբիոնի դասախոսները (Թ. Ասոյան, Լ. Ղռեջյան, Վ. Ներսիսյան) մասնակցել են հանրապետական և միջազգային գիտաժողովների: Անցկացվել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնք վարել են բ.գ.դ., պրոֆեսորներ Ա.Առաքելյանը, Վ.Գրիգորյանը, Վ.Կատվալյանը: Այսպես.

«Ֆ.Կաֆկան և համաշխարհային գրականությունը» (Առաքելյան Ա.),

«Լ.Շանթը և եվրոպական դրամատուրգիան», «Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը» (Գրիգորյան Վ.),

«Մաշտոցյան այբուբենը և հայերենի ուղղագրական համակարգը», «Ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրների շուրջ» (Կատվալյան Վ.),

«Հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսակետները 5-19-րդ դարերում» (Ներսիսյան Վ.):

7.**Համագործակցային կապերը և դրանց կառավարումը**

Մասնագիտական կրթական ծրագրերի պլանավորման և իրականացման նպատակով ամբիոնները սերտորեն համագործակցում են համալսարանի այլ ստորաբաժանումների հետ՝ կապված առարկաների ժամաքանակների, բովանդակային կողմի, ինչպես նաև դասախոսական կազմին առչվող հարցերի հետ: Շարունակական է ամբիոնների կապը ԵՊՀ-ի, Մանկավարժական համալսարանի, Սլավոնական համալսարանի և Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի համապատասխան ամբիոնների հետ՝ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման և բարելավման նպատակով: Տեղի է ունենում մասնագիտական փորձի փոխանակում, ուսումնասիրվում են նշված ամբիոնների ուսումնական պլանները:

Խիստ արդիական է դպրոց-բուհ համագործակցային կապի ապահովումը, հատկապես, որ դրա անհրաժեշտությունը գիտակցում են նաև դպրոցների տնօրենները: Ֆակուլտետի աշխատակիցները պարբերաբար հանդիպումներ են ունեցել դպրոցների աշակերտների և ուսուցիչների հետ: Համագործակցության նոր ձևաչափի տեսակետից կարևոր էր հանդիպումը Վարդենիսի և Մարտունու տարածաշրջանների դպրոցների տնօրենների հետ: Հանդիպման ընթացքում երկկողմանի շահագրգիռ խոսակցություն ծավալվեց համագործակցության նոր ձևաչափեր մշակելու, հանդիպումների աշխարհագրությունը ընդլայնելու, աշակերտների ծնողների հետ հանդիպումներ կազմակերպելու ուղղությամբ:

Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ ֆակուլտետում կազմակերպված միջոցառումներին, դասընթացներին, մեթոդական քննարկումներին հաճախ մասնակցում էին տարբեր դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ: Թեմաները հիմնականում առաջարկվել և ընտրվել են դպրոցների ներկայացուցիչների կողմից:

8.**Ուսանողների**, **ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքներ**

Ֆակուլտետում աշխատանքներ են կատարվում ակտիվացնելու անմիջական շփումները ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ, արձագանքելու ուսանողների կողմից բարձրացված հարցերին, խնդիրներին՝ դրանց տալով անհրաժեշտ լուծումներ, քննարկել արված առաջարկությունները:

Ուշադրության կենտրոնում են եղել առաջին կուրսեցիները, որոնք շարունակաբար ծանոթացել են ԳՊՀ իրավական փաստաթղթերին՝ ներքին կարգապահական կանոններ, իրավունքներ և պարտականություններ, փոխատեղում, ուսման վարձի զեղչեր, կրեդիտային համակարգ, շարժունության ծրագրեր և այլն: Խրախուսվել է ուսանողների մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերի, համալսարանական և հանրապետական գիտաժողովների, քննարկումների, սեմինարների, տարբեր մրցույթների, միջոցառումների: Այսպես, երկու ուսանողներ սովորել են արտասահմանում, բակալավրիատի և մագիստրատուրայի երկուական ուսանողներ (Ղարիբյան Գ., Խաչատրյան Մ., Ներսիսյան Լ., Գրիգորյան Ա.) ճանաչվել են հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողներ, ուսխորհրդի և ուսանողական գիտական ընկերության կողմից խորհրդատուների աջակցությամբ կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ, գրքերի քննարկումներ («Դարերդ հայերեն են գալու», «Թումանյանական աշխարհում», «Ղողանջ հրաշագործման. Կոմիտաս-150», «Զատկի տոնը եվրոպական երկրներում», «Համո Սահյան-100», «Շեքսպիրի հեղինակության առեղծվածը», «Հայերենի առնչությունները ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ» և այլն): Ֆակուլտետում անցկացվեց Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված ուսանողական գիտաժողով, որին, բացի բանասիրական ֆակուլտետի ուսանողներից, մասնակցում էին նաև մյուս ֆակուլտետների ուսանողներ:

9.**Ամփոփիչ ատեստավորման քննություններ**

Ամփոփիչ ատեստավորման քննություններն անցկացվել են նախապես մշակված գործողությունների ժամանակացույցին համապատասխան: Ապահովվել են ատեստավորման քննությունների համար անհրաժեշտ ռեսուրսներն ու աշխատանքային պայմանները: Ատեստավորման գործընթացը բարեհաջող անցկացնելու համար հետևողական աշխատանքներ են տարվել մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման բնականոն ընթացքն ապահովելու նպատակով: Պահպանվել է մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների պաշտպանությունների՝ ԳՊՀ կանոնակարգերով նախատեսված ընթացակարգը: Թեմաների ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով նրանց տեսական և գործնական արդիականությունը:

Մշակվել են գիտական ղեկավարի, գրախոսի, քննական հանձնաժողովի նախագահի կարծիքների, աշխատանքների գնահատման ձևաթղթեր: Նշենք նաև, որ 2018-2019 ուսումնական տարում մագիստրոսական թեզերը տրվել են արտաքին գրախոսման:

Արդյունքներն ամփոփվել են, աշխատանքները գնահատվել են գերազանց և լավ: Ատեստավորմանը չի մասնակցել մեկ ուսանող (Ավետիսյան Արմենուհի, ՀԼԳ 4-րդ կուրս), որն ազատվել է համալսարանից: Առարկայական հանձնաժողովների նախագահներն արտահայտել են հետևյալ կարծիքները.

1.Հայոց լեզու և գրականություն: Աշխատանքները բավարարում էին առաջադրվող պահանջներին, թեմաները արդիական են, գրված են գրագետ, անդրադարձ կար հայագիտության մեջ եղած վիճահարույց խնդիրների, կառուցված էին տեսական և գործնական հետազոտությունների համադրումով: Աշխատանքները ներկայացվում էին պատշաճ մակարդակով:

Առաջարկվում է առավել կարևորել աշխատանքների գիտագործնական ուղղվածությունը, ուսանողների վերլուծական կարողությունները և գործնական հմտությունները:

2.Ռուսաց լեզու և գրականություն: Շրջանավարտների պատրաստման որակը գերազանց է, ունեն տեսական բարձր գիտելիքներ, աշխատանքներն ունեն ակնհայտ գործնական արժեք:

Առաջարկվում է հետագայում ևս ուսանողներին ներգրավել գիտահետազոտական աշխատանքների մեջ, նպաստել նրանց աշխատանքների տպագրմանը:

3.Անգլերեն լեզու և գրականություն: Աշխատանքները ներկայացվել են գրագետ անգլերենով և պատշաճ մակարդակով:

Առաջարկվել է ստեղծել հենակետային ուսհաստատություն, որտեղ ուսանողները կարող են գործնականում կիրառել ստացած գիտելիքները և արդյունքներն օգտագործել իրենց թեզերում:

Կարծիքները ներկայացվել և քննարկվել են ամբիոններում:

ԳՊՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հայեցակարգը մշակելիս՝ հաշվի են առնվել ԳՊՀ զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի (2017-2022թ.թ.), բանասիրական ֆակուլտետի զարգացման հնգամյա հայեցակարգի (2018-2023թ.թ.) դրույթները:

1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝

Մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) իրականացում՝ համապատասխան աշխատաշուկայի արդի պահանջներին և գիտության նորագույն նվաճումներին, ուսանողների կրթական կարիքների բացահայտում, մասնագրերի, առարկայական ծրագրերի լրամշակում, հենանշային ուսումնասիրությունների իրականացում:

Խնդիրները՝

1.1.Վերանայել և ըստ անհրաժեշտության լրամշակել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքները, դրանք քարտեզագրել՝ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան:

1.2.Լրամշակել ՄԿԾ-ների նկարագրերը, դասավանդման և ուսումնառության մեթոդները, ավելի որոշակիացնել գնահատման սանդղակը:

1.3.Իրականացնել ուսումնական պլանների վերանայում հենանշադրման արդյունքների հիման վրա:

1.4.Վերանայել և թարմացնել առարկայական ծրագրերը՝ դրանցում ներառելով գիտելիք, կարողություն և հմտություն բաղադրիչներն ըստ թեմաների և հաշվի առնելով գործատուների ու շահառուների կարծիքները:

1.5. Համակողմանիորեն ուսումնասիրել ուսանողների շրջանում որակի ապահովման բաժնի կողմից անցկացված հարցումների արդյունքները ուսումնական գործընթացի վերաբերյալ և կատարել վերլուծություն, արդյունքների հիման վրա մշակել ու իրականացնել բարելավմանը միտված գործողություններ:

1.6.Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու և նորագույն տեխնոլոգիաներ ու մեթոդներ կիրառելու նպատակով իրականացնել շարունակական դասալսումներ, կատարել վերլուծություններ:

1.7.Կատարելագործել մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների գնահատման սանդղակը, ապահովել գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:

1.8. Մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների թեմաներն առաջարկելիս՝ հաշվի առնել ոչ միայն դրանց արդիականությունը, այլև մեթոդական ուղղվածությունը:

1.9. Հետևողականորեն վերահսկել առարկայական ծրագրերի կատարման ընթացքը, իրականացնել կիսամյակային մշտադիտարկումներ:

1.10.Իրականացնել ֆակուլտետի գործունեության ամենամյա ինքնավերլուծություն:

2.ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝

Գիտահետազոտական գործընթացի պատշաճ կազմակերպում, պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտական աշխատանքների հրատարակում, դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական աշխատանքների իրականացում, կրթական և գիտահետազոտական գործընթացների համադրում, մասնակցություն գիտաժողովների:

Խնդիրները՝

2.1.Ակտիվացնել ամբիոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքները, որոշարկել դրանց ուղղվածությունը:

2.2.Խրախուսել պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ մասնակցելու հանրապետական և միջազգային գիտաժողովների, հրատարակելու հոդվածներ, ձեռնարկներ:

2.3.Սերտացնել աշխատանքները ուսանողական գիտական ընկերության հետ, ուսանողների միջավայրում խրախուսել գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ձգտումները:

2.4.Ակտիվացնել աշխատանքները դասախոս-ուսանող համագործակցությունը գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտում, դրանցում ներգրավել բարձր դասարանների աշակերտներին, ուսուցիչներին:

2.5.Շարունակել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների դասընթացները, ուսումնամեթոդական սեմինարները, բաց դասերը՝ ներգրավելով բարձր դասարանների աշխակերտներին և ուսուցիչների:

3.**ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ**

Նպատակը՝

Ուսումնական գործընթացի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովում, կրթական ավանդական և նորագույն տեխնոլոգիաների համադրում և օգտագործում, տեղեկատվական տեխնոլոգիաների լայնորեն կիրառում, ուսումնական գործընթացից և կրթական միջավայրից ուսանողների բավարարվածության աստիճանի բարձրացում:

Խնդիրները՝

3.1.Ուսումնական գործընթացի արդյունավետությունը, մատչելիությունը, հասանելիությունը ապահովելու նպատակով առարկայական ծրագրերին համապատասխան էլեկտրոնային ռեսուրսների առկայություն:

3.2.Ապահովել դասավանդման գործընթացում նորագույն և ավանդական տեխնոլոգիաների կիրառության բազմազանություն:

3.3.Ուսումնառության ընթացքում մեծացնել ուսանողների հետաքրքրությունը տեղեկատվական տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման արդյունավետ միջոցների կիրառման ուղղությամբ:

3.3.Մեծացնել ուսանողների հետ հեռավար շփումների հնարավորությունները, օգտվել համացանցի ընձեռած հնարավորություններից:

3.3.Ուսանողների հետ շփումների, անցկացված հարցումների վերլուծությունների միջոցով պարզել կրթական միջավայրից բավարարվածության աստիճանը՝ այն ծառայեցնելով կրթական միջավայրի արդիականացմանը:

4.**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Նպատակը՝

Ուսանողների շրջանում գիտելիքների կարևորության գիտակցության ամրակայում, իրավունքների և պարտականությունների հստակ գիտակցում, ուսման նկատմամբ պատասխանատվության դաստիարակում, ֆակուլտետի կառավարման գործընթացում ուսանողների ներգրավում, ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքների ակտիվացում, գիտահետազոտական աշխատանքներում և միջազգային շարժունության ծրագրերում ուսանողների ներգրավում:

Խնդիրները՝

4.1.Ուշադրության կենտրոնում պահել առաջին կուրսեցիներին, նրանց ծանոթացնել համալսարանում իրականացվող գործընթացներին, կանոնակարգերին, ուսանողի իրավունքներին ու պարտականություններին, ներքին կարգապահական կանոններին, գնահատման կրեդիտային համակարգին:

4.2.Նպաստել ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի աշխատանքների ակտիվացմանը:

4.3.Խրախուսել գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հակում ունեցող ուսանողներին՝ մասնակցելու ուսանողական համալսարանական և հանրապետական

գիտաժողովների, միջազգային շարժունության ծրագրերի, գիտամեթոդական ուղղվածություն ունեցող սեմինարների:

4.4.Համագործակցելով որակի ապահովման բաժնի հետ՝ ուսանողության շրջանում իրականացնել հարցումներ՝ ուսումնական գործընթացի արդյունավետության և դրանից ուսանողների բավարարվածության աստիճանի բացահայտման ու կրթական միջավայրի բարելավման նպատակով:

4.5.Կազմակերպել մշակութային, հոբելյանական միջոցառումներ՝ համագործակցելով ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ, նպաստելով նրանց համակողմանի զարգացմանը, գեղագիտական դաստիարակությանը:

5. **ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Նպատակը՝

Ֆակուլտետի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավում, ամբիոնային ճկուն գործունեության իրականացում, դեկանատ-ամբիոններ-ուսանողական ինքնակառավարման մարմիններ համագործակցության արդյունավետ իրականացում:

Խնդիրները՝

5.1.Ապահովել ֆակուլտետի աշխատակիցների աշխատանքային կարգապահությունը, բարձրացնել պատասխանատվությունը իրենց գործառույթների նկատմամբ:

5.2.Ամրապնդել դեկանատ-ուսանող փոխադարձ կապը, անմիջականորեն արձագանքել ուսանողների կողմից բարձրացված հարցերին:

5.3.Ապահովել ամբիոնների ակտիվ ու ճկուն գործունեություն, սերտացնել ամբիոնների և ուսանողների համագործակցությունը թե՛ ուսումնական գործընթացում, թե՛ գիտահետազոտական աշխատանքներում, թե՛ միջոցառումներում:

6.**ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Նպատակը՝

Ֆակուլտետի արտաքին կապերի և համագործակցության ընդլայնում, արդյունավետ և նպատակաուղղված աշխատանք գործատուների հետ, դպրոց-բուհ համագործակցության ամրապնդում և ընդլայնում Գեղարքունիքի մարզում, համագործակցություն համալսարանի մյուս ստորաբաժանումների հետ, մասնակցություն միջազգային շարժունության ծրագրերի:

Խնդիրները՝

6.1.Ապահովել ուսանողների և դասախոսների ներգրավումը միջազգային շարժունության ծրագրերում:

6.2.Նպատակաուղղված աշխատանքներ կատարել գործատուների հետ, կազմակերպել հանդիպումներ, անցկացնել զրույցներ, հարցումներ և կատարել վերլուծություններ:

6.3.Ամրապնդել համագործակցությունը Գեղարքունիքի մարզի կրթական, մշակութային հաստատությունների հետ՝ ընդլայնելով հանդիպումների աշխարհագրությունը և միջավայրը:

6.4.Համագործակցել Գավառի պետական համալսարանի կառուցվածքային մյուս ստորաբաժանումների հետ՝ ֆակուլտետի համակողմանի գործունեությունը ապահովելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

7.ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

Ֆակուլտետում հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների և էթիկայի կանոնների պահպանում, բարեվարքության կանոնների արմատավորում, բուհում ակադեմիական ազնիվ միջավայրի ապահովում:

Խնդիրները՝

7.1.Շարունակել ֆակուլտետում ապահովել կոռուպցիայից զերծ միջավայրի առկայություն, պարբերաբար իրականացնել հարցումներ:

7.2.ԳՊՀ-ում դասախոս – ուսանող հարաբերություններում ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների՝ ըստ անհրաժեշտության կիրառում:

7.3.Ուսանողության շրջանում էթիկայի և բարեվարքության կանոնների արմատավորում:

8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

Ֆակուլտետում կրթական կարիքների բավարարմանն ուղղված միջոցների և միջոցառումների իրականացում, որակյալ կրթական ծառայությունների մատուցում, ֆակուլտետի նկատմամբ արտաքին ու ներքին շահառուների և գործատուների վստահության ապահովում, ֆակուլտետի աշխատակազմի պատասխանատվության բարձրացում:

Խնդիրները՝

8.1. Գեղարքունիքի մարզում հանրության տարբեր շերտերի կրթական կարիքների ուսումնասիրում, հարցումների անցկացում:

8.2. Աջակցություն սոցիալապես անապահով ուսանողներին և ըստ ԳՊՀ կանոնակարգերի ընձեռած հնարավորությունների՝ օգնության ցուցաբերում:

8.3. Կրթական միջավայրի ներառականության ապահովում, համապատասխան միջավարի ստեղծում՝ հասարակական բոլոր շերտերի համար կրթություն ստանալու հավասար պայմաններ ստեղծելու նպատակով:

8.4.Ուսանողների, աշխատակիցների իրավունքների պաշտպանություն, պարտականությունների կատարման հնարավորությունների ստեղծում, համագործակցային և գործընկերային հարաբերությունների ապահովում ԳՊՀ ստորաբաժանումների, գործատուների, հիմնադրամների հետ:

9.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նպատակը՝

Ներֆակուլտետային ֆինանսական միջոցների, ուսման վարձավճարների հավաքագրման գործիքակազմի մշակում, ֆինանսական կազմակերպությունների և հիմնադրամների հետ աշխատանքի կազմակերպում, վարձավճարների զեղչերի՝ ԳՊՀ

կանոնակարգային դրույթներին համապատասխան, հարաբերություններում ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների՝ ըստ անհրաժեշտության կիրառում:

Խնդիրները՝

9.1.Ուսանողական վարձավճարների ամսական հավաքագրման արդյունավետ միջոցների կիրառում:

9.2.Ըստ անհրաժեշտության՝ վարձավճարների զեղչերի կիրառում:

9.3.Ուսանողական հիմնադրամներին ուսանողների դիմելու գործընթացի արդյունավետ կազմակերպում:

9.4.Ֆակուլտետում առկա նյութատեխնիկական միջոցների, գույքի պահպանում:

Թաթուլ Ասոյան
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, **դոցենտ**

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
2-րդ	8	-	6	87,50
3-րդ	6	-	3	66,67
4-րդ	9	-	5	100,00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	10	-	3	80,00
2-րդ	8	-	4	87, 50
3-րդ	4	-	1	75, 00
4-րդ	8	-	3	87, 50
Ընդամենը	53	-	25	84,91
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին կուրս	5	-	-	100,00
Հայոց լեզու և գրականություն 2-րդ կուրս	4	-	4	100,00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	5	-	2	60, 00
Անգլերեն լեզու և գրականություն 2-րդ կուրս	5	-	2	80, 00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին կուրս	4	-	1	75, 00
Ռուսաց լեզու և գրականություն 2-րդ կուրս	3	-	2	100,00
Ընդամենը	26	-	11	84. 62

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
2-րդ	8	-	1	100. 00
3-րդ	6	-	1	66. 67
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	10	-	2	90. 00
2-րդ	8	-	3	100. 00
3-րդ	4	-	1	100. 00
Ընդամենը	36	-	8	91.43
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին կուրս	5	-	1	80. 00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	5	-	1	100.00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին կուրս	4	-	1	100. 00
Ընդամենը	14	-	3	92.86

2018/2019 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված /հոդվածների ժողովածու	Զեկուցումների թեզիս
	1	-	-	32/1	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ ***Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի***
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ասոյան Թաթուլ Արտիկի** - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Կատվալյան Վիկտոր Լիպարիտի** - բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Արա Հրաչիկի** - բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. **Ներսիսյան Վարսիկ Արմենի** - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
5. **Ղռեջյան Լուսինե Խաչատուրի** - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
6. **Իսկանդարյան Նաիրա Մանվելի** - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
7. **Ղարիբյան Ալինա Ամբիկի –** ասիստենտ
8. **Խանդանյան Սիրանուշ Կառլենի –** ասիստենտ
9. **Սարգսյան Ռուզաննա Մարատի** - ասիստենտ
10. **Ղազարյան Օլգա Ալբերտի –** դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Կարապետյան Գայանե Լևիկի** - ասիստենտ
2. **Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի –** դասախոս
3. **Բագոյան Ալլա Սահակի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության, արևելահայերենի և արևմտահայերենի հիմնախնդիրների ուսումնասիրություն:
2. Բարբառների ուսումնասիրության հարցեր:
3. Գեղարքունիքի մարզում իրականացվող բանահավաքչական աշխատանքներ, բանահյուսական առանձին ժանրերի ուսումնասիրություն:
4. Արդի հայ և արտասահմանյան գրականության զարգացման միտումների ուսումնասիրություն:
5. Հայ գրականության պատմության հարցերի քննություն:
6. Հայ ժողովրդական դյուցազնավեպի ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված /հոդվածների ժողովածու	Զեկուցումներ ի թեզիս
-	1	-	-	17/1	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Գրիգորյան Վ.Ռ.**, Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը // «Արմավ» հրատարակչություն, Երևան, 2019, 430 էջ:
2. **Գրիգորյան Վ.Ռ.,** Լևոն Շանթ. մարդը և գործը, Գրքի առաջաբանը, Երևան, 2019, :
3. **Գրիգորյան Վ.Ռ.,** Լևոն Խեչոյանի հեքիաթները // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2019, էջ 234-241:
4. **Ասոյան Թ.Ա.**, **Ներսիսյան Լ.Վ.,** Հովհաննես Բարսեղյանը և հայերենի ուղղագրության հարցերը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2019, էջ 221- 233:
5. **Առաքելյան Ա. Հ.**, **Գրիգորյան Ա.Ա.**, Բնության և կենցաղի պատկերները Մնձուրու պատմվածքներում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2019, էջ 242- 253:
6. **Առաքելյան Ա. Հ.**,Նիբելունգների երգից մինչև «Հուլունքախաղ» // Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019, 291 էջ:
7. **Կատվալյան Վ. Լ.**, Մակուի խոսվածքը Գեղարքունիքի մարզում // «Հայերենագիտության արդի խնդիրներ» խորագրով գիտաժողովի նյութերի էլեկտրոնային ժողովածու, Ե., 2018, էջ 49-56 // http://language.sci.am/hy/conferences/institute-75-years-conferance:

8. **Ներսիսյան Վ.Ա.,** Նոյան և նոյյան բառերի կազմությունը և կիրառությունը հայերենում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2019, էջ 275-281:
9. **Ներսիսյան Վ.Ա.,** *Կիսել և կիսվել* բայերի իմաստային դրսևորումները հայերենում // «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ ԼԻ, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019, էջ 152-161:
10. **Բագոյան Ա. Ս.**, Միֆական պատկերները Վրթանես Փափազյանի «Վիշապ» ստեղծագործության մեջ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2019, էջ 282-294:
11. **Բագոյան Ա. Ս.**, Վիշապի մոտիվը հայ նոր գրականության մեջ. քննության փորձ //«Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2019, էջ 257-272:
12. **Բագոյան Ա.Ս.,Ղռեջյան Լ.Խ.,** Մանկական բանահյուսությունը Գավառի տարածաշրջանում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2019, էջ 254-272:
13. **Ղռեջյան Լ.Խ.**, **Միրիբյան Գ.Ա.**, О некоторых особенностях малых жанров фольклора (на материале армянских и русских проклятий, клятв, благопожеланий) // Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութեր՝ «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործունեության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով (հանձնված է տպագրության):
14. **Ղռեջյան Լ.Խ.**, Ժողովրդական բառ ու բանի, կյանքի ու կենցաղի դրսևորումները Գավառի տարածաշրջանում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 5, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2018, էջ 448-461:
15. **Ղռեջյան Լ.Խ.**, Վիշապամարտիկ սրբերը հայ գրավոր ու բանավոր ավանդության մեջ // «Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2019, էջ 428-438:
16. **Ղռեջյան Լ.Խ. Բագոյան Ա.Ս.**,Մանկական բանահյուսությունը Գավառի տարածաշրջանում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, «Արտագերս» հրատարակչություն, 2019, էջ 254-272:
17. **Ղռեջյան Լ.Խ.**,Թաղման ծիսակարգը Գավառի տարածաշրջանում և դրա արտացոլումը զվարճախոսություններում // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, հանրապետական գիտաժողով, 21.05-24.05 (հանձնված է տպագրության):
18. **Ղռեջյան Լ.Խ.**, Ասույթային բանահյուսության դրսևորումը Գեղարքունիքի տարածաշրջանում (ըստ 2005-2017թթ. գրառած նյութերի) // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, հանրապետական գիտաժողով, 26.06-27.06 (հանձնված է տպագրության):

19. **Ղռեջյան Լ.Խ.**, Անեծքների և երդումների դրսևորումները հայկական ժողովրդական երգերում (ժողովրդական խաղիկներ, հայրեններ, անտունիներ) Ակադեմիկոս Ա. Ղանալանյանի 110-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 23.06-26.06 (հանձնված է տպագրության):

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գայանե Աշոտի Միրիբյան*
բանասիրական գիտությունների թեկնածու

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի**- մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Հովհաննիսյան Ալլա Բորիսի** - բանասիրական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ
3. **Մարգարյան Արամ Հայկի** - ԳՊՀ պրոֆեսոր
4. **Միքայելյան Ռուզաննա Քրիստաֆորի** - ասիստենտ
5. **Ասրյան Մադլենա Սերգեյի** - ասիստենտ
6. **Հայթյան Սաթենիկ Հայրապետի** - ասիստենտ
7. **Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի –** ասիստենտ
8. **Բալագոզյան Կարինե Արամայիսի** - ասիստենտ
9. **Բալագոզյան Անիկ Կարապետի** - ասիստենտ
10. **Տիգրանյան Սաթենիկ Սաշայի** - ասիստենտ
11. **Մելքոնյան Աննա Վրեժի –** դասախոս
12. **Խաչատրյան Սիրանուշ Արտիկի** - դասախոս
13. **Թոռչյան Լիլիթ Գրիգորի –** դասախոս
14. **Նալբանդյան Նարինե Նորայրի –** ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Սարգսյան Ռուզաննա Ռուբենի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Սարգսյան Գայանե Ռուբենի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի** - ասիստենտ
4. **Պատվականյան Մարինե Արմանի –** դասախոս
5. **Ավագյան Սաթիկ Մարտինի** - դասախոս
6. **Սիմոնյան Սոնա Կոստանտի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մանկավարժության արդի հիմնախնդիրներ:
2. Ռուս և հայ ազգային մշակույթի, բանահյուսության և գրականության համեմատական ուսումնասիրություն:
3. Օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի հիմնահարցեր:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	15	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Միրիբյան Գ. Ա.**, О некоторых этапах предсвадебного обряда армян и русских // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 295-303:
2. **Միրիբյան Գ. Ա. Ղռեջյան Լ. Խ.**, О некоторых особенностях малых жанров фольклора (на материале армянских и русских проклятий, клятв, благопожеланий) // Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութեր՝ «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով (հանձնված է տպագրության):
3. **Մուխսիխաչոյան Ա. Մ.**, Особенности развития критического мышления учащихся в процессе обучения РКИ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 304-311:
4. **Մուխսիխաչոյան Ա. Մ.**, Формирование и развитие речевых умений студентов на основе рефлексии // Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների, ուսուցիչ-ների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միջազգային գիտա-գործնական գիտաժողովի նյութեր՝ «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով (հանձնված է տպագրության):
5. **Հովհաննիսյան Ա. Բ.**, Исторический комментарий как один из приемов формирования культурной компетентности на уроках литературы // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 334-353:
6. **Հովհաննիսյան Ա. Բ.**, Методика преподавания русской литературы с использованием информационных технологий // Ռուսաց լեզվի և գրականության դասախոսնե-րի, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միջազգային գի-տագործնական գիտաժողովի նյութեր՝ «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով (հանձնված է տպագրության):
7. **Սարգսյան Ռ. Ռ.**, Использование кейс-технологии в контексте проблемного обучения в системе профессиональной подготовки учителей иностранного языка // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 312-322:
8. **Սարգսյան Ռ. Ռ.**, **Ավակովա Է. Ռ.**, Межпредметная координация как основа модернизации содержания курсов “Развитие устной речи” и “Развитие письменной

речи” в вузах Армении // Русский язык зарубежом -4, М., изд-во Гос.унив-та русского языка им. А.С. Пушкина, 2019 ISSN 0131-615X, с. 96-101:

9. **Սարգսյան Ռ. Ռ.**, **Սարգսյան Գ. Ռ.**, К вопросу об уровне языковой подготовки студентов, обучающихся на факультетах/отделениях русской филологии в вузах РА // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 323-333:
10. **Սարգսյան Ռ. Ռ.**, **Խաչատրյան Գ. Ն.**, Conducting a SWOT Analysis of English Textbooks for the High School of the RA Aimed at the Development of Better Foreign Language Classes // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 354-362:
11. **Սարգսյան Ռ. Ռ.**, **Գրիգորյան Ա. Գ.**, Paper Dictionaries VS Online Dictionaries in an English Language Class: Results of the Experimental Teaching // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 363-374:
12. **Սարգսյան Ռ. Ռ.**, Об использовании ситуативных ролевых игр с целью формирования русскоязычной профессиональной компетенции учащихся // Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութեր՝ «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով (հանձնված է տպագրության):
13. **Սարգսյան Ռ. Ռ.**, **Սարգսյան Գ. Ռ.**, О развитии письменной речи слушателей курсов русского языка в рамках программы «Профессионал» // Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութեր՝ «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով (հանձնված է տպագրության):
14. **Սարգսյան Գ. Ռ.**, Структура и содержание курса «Информационные технологии в профессиональных исследованиях» в системе профессиональной подготовки учителей-русистов // Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութեր՝ «Ռուսաց լեզուն 21-րդ դարի մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխիք» թեմայով (հանձնված է տպագրության):
15. **Բալագոզյան Ա. Կ.**, The main ways of teaching secondary pronunciation of English sounds avoiding mistakes in class // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2019, էջ 375-389:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ ***Ավագյան Մարտին Պատվականի***
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ ***Խաչիկյան Թերմինե Գագիկի***
կենսաբանական գիտությունների թեկնածու

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 **Մասնագիտական** ***մանկավարժություն***	
011401.01.6	*Կենսաբանություն*	Մանկավարժության բակալավր
011401.03.6	*Աշխարհագրություն*	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 **Մասնագիտական** ***մանկավարժություն***	
011401.01.7	*Կենսաբանություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	*Աշխարհագրություն*	Մանկավարժության մագիստրոս
	052201.00.6 ***Բնապահպանություն և բնօգտագործում***	
052201.01.6	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի բակալավր
	052201.00.7 ***Բնապահպանություն և բնօգտագործում***	
052201.01.7	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի մագիստրոս
	053101.00.6 Քիմիա	
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
	054201.00.6 ***Աշխարհագրություն***	
054201.02.6	*Քարտեզագրություն և կադաստրային գործ*	Աշխարհագրության բակալավր
	061103.00.6 ***Համակարգչային ճարտարագիտություն***	
061103.01.6	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի բակալավր
	061103.00.7 ***Համակարգչային ճարտարագիտություն***	
061103.01.7	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի մագիստրոս
	101801.00.6 ***Սերվիս***	
101801.01.6	*Սերվիս*	Սերվիսի բակալավր

Ուսանողների թիվը՝ 57
Շրջանավարտների թիվը՝ 26

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հիմքում դրվել են 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի հիմնադրույթները, ինչպես նաև ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը: Ֆակուլտետում պարբերաբար հրավիրվել են խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող տարաբնույթ հարցեր, մշակվել են գործնական քայլեր համալսարանի ռազմավարական ծրագրի իրականացման ուղղությամբ:

Բնագիտական ֆակուլտետի ՄԿԾ-ներում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու նպատակով կիրառվել են տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդներ, ներառյալ հեռավար դասընթացների անցկացումը: Միջոցներ են ձեռնարկվել կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառման, ուսումնական գործընթացներում դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները վերլուծվել են ֆակուլտետի խորհրդում, ուսանողների դժգոհությունների վերանայման ուղղությամբ կատարվել են համապատասխան աշխատանքներ:

Բնագիտական ֆակուլտետում կրթական և գիտահետազոտական աշխատանքների հաջող իրականացմանն էականորեն նպաստում են ֆակուլտետում գործող ուսումնական, մասնավորապես էլեկտրատեխնիկայի և բնագիտության լաբորատորիաները:

Լաբորատոր-գործնական աշխատանքներին ներգրավված են ոչ միայն ուսանողները, այլև հանրակրթական դպրոցների աշակերտները: Մասնագիտական կողմնորոշման նպատակով ֆակուլտետի մասնագիտություններին ծանոթանալու, ինչպես նաև դիմորդներ ներգրավելու համար կազմված ժամանակացույցին համապատասխան ֆակուլտետի աշխատակիցների կողմից այցելություններ են կազմակերպվել ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներ: Դպրոցների տնօրենների հետ համագործակցության արդյունքում հնարավոր եղավ կազմակերպել աշակերտների այցելություն Գավառի պետական համալսարան: Արդյունքում համալսարանը 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում հյուրընկալել է 460-ից ավելի դպրոցականների Գավառի թիվ 1, թիվ 3, թիվ 4, թիվ 5 հիմնական, Գավառի թիվ 2, 7, թիվ 8 միջնակարգ, Գավառի ավագ, Սարուխանի թիվ 1, թիվ 2, թիվ 3, Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ, Գանձակի թիվ 1 միջնակարգ, Մարտունու ավագ, Մեծ Մասրիկի միջնակարգ, Սևանի ավագ, Վարդենիսի ավագ, Երանոսի թիվ 2 , Հայրավանքի, Չկալովկայի, Ծովազարդի, Լանջաղբյուրի, Դդմաշենի, Նորատուսի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցներից, որոնց համար բնագիտության լաբորատորիայում կազմակերպվել են գործնական աշխատանքներ կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի, աշխարհագրության դասընթացների շրջանակներում:

Բնագիտական ֆակուլտետում ուսանողների կրթական և սոցիալական կարիքների վերհանման նպատակով կատարվել են շարունակական աշխատանքներ, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

I. Ընդունելությունը, ուսանողական համակազմը

2018-2019 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետ են ընդունվել բակալավրիատի 5 և մագիստրատուրայի 2 ուսանողներ՝ Համակարգչային ճարտարագիտություն մասնագիտությամբ:

Նշենք, որ նախորդ տարում բնագիտական ֆակուլտետ ընդունվել էին 22 ուսանողներ: Ընդունելության ցածր ցուցանիշի պատճառներից մեկը դիմորդների սակավությունն է:

2018-2019 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ֆակուլտետում հաշվառված են եղել 57 ուսանողներ:

II. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը, ուսումնական առաջադիմությունը

2017-2018 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի հետ համեմատած՝ 2018-2019 ուսումնական տարվա նույն ժամանակահատվածում դիտվել է բակալավրիատում առաջադիմության նվազում 5,9%-ով, իսկ մագիստրատուրայում՝ բարձրացում 6,4%-ով՝:

Այսպես, նախորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը կազմել է 69,9%, իսկ հաշվետու կիսամյակում՝ 64,0%: Քննաշրջանին մասնակցելու իրավունք ստացել են 50 ուսանող, չեն ներկայացել 17-ը, բոլոր առարկաներից քննությունները հանձնել են 32-ը, գերազանց գնահատականներով կիսամյակը փակել են 14, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 12, խառը գնահատականներով՝ 6 ուսանողներ: Մեկ անբավարար գնահատական ստացել է 1 ուսանող:

Մագիստրատուրայում նախորդ ուսումնական տարում առաջադիմությունը կազմել է 71,4%, հաշվետու կիսամյակում՝ 77,8%: Քննաշրջանին թույլատրվել է մասնակցելու 9 մագիստրոսներ, չեն ներկայացել 2-ը: Բոլոր առարկաներից դրական գնահատական են ստացել 7 մագիստրոսներ, քննաշրջանը փակել են միայն գերազանց գնահատականով՝ 4, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 1, խառը գնահատականներով՝ 2 մագիստրոսներ: Միայն բավարար կամ անբավարար գնահատական ստացող մագիստրոսներ չեն եղել:

Հաշվետու ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում 100%-անոց բացարձակ առաջադիմություն են ցուցաբերել բակալավրիատի «Դեղագործական քիմիա» և «Կենսաբանություն» բաժինների մագիստրատուրայի 2-րդ կուրսերը: Ամենացածր առաջադիմությունը՝ 33%, գրանցվել է «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի 4-րդ կուրսում: Առաջադիմության նկատելի անկման հիմնական պատճառը անբավարար գնահատականներն են և ուսման վարձերի ոչ ժամանակին վճարելու հետևանքով քննաշրջանին չմասնակցելու հանգամանքը:

Ֆակուլտետի ընդհանուր բացարձակ առաջադիմությունը 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դրությամբ կազմել է 66,1%:

2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի հետ համեմատած՝ 2018-2019 ուսումնական տարվա նույն ժամանակահատվածում դիտվել է բակալավրիատում առաջադիմության բարձրացում 4,9%-ով, իսկ մագիստրատուրայում՝ նվազում 21,4%-ով:

Այսպես, նախորդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը կազմել է 74,4%, իսկ հաշվետու կիսամյակում՝ 79,3%: Քննաշրջանին մասնակցելու իրավունք ստացել են 32 ուսանող, չեն ներկայացել 8-ը, բոլոր առարկաներից քննությունները հանձնել են 24-ը, գերազանց գնահատականներով կիսամյակը փակել են 11, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 10, խառը գնահատականներով՝ 3 ուսանողներ:

Մագիստրատուրայում նախորդ ուսումնական տարում առաջադիմությունը կազմել է 71,4%, հաշվետու կիսամյակում՝ 50%: Քննաշրջանին թույլատրվել է մասնակցելու 1 մագիստրոսի, չի ներկայացել 1-ը: Բոլոր առարկաներից միայն գերազանց գնահատական է ստացել քննաշրջանին մասնակցած մեկ մագիստրոս:

Հաշվետու ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում 100%-անոց բացարձակ առաջադիմություն են ցուցաբերել բակալավրիատի «Դեղագործական քիմիա» բաժնի և «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի բակալավրիատի 2-րդ, «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի 3-րդ կուրսերը: Երեք խմբերում ամենացածր առաջադիմությունը գրանցվել է 50%: Առաջադիմության նկատելի անկման հիմնական պատճառը ուսման վարձերի ոչ ժամանակին վճարելու հետևանքով քննաշրջանին չմասնակցելն է:

Ֆակուլտետի ընդհանուր բացարձակ առաջադիմությունը 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դրությամբ կազմել է 74,0%:

III. **Ուսանողների շարժը**

Հաշվետու ժամանակահատվածում բնագիտական ֆակուլտետում իրենց ուսանողական իրավունքներն են վերականգնել 6, այլ ֆակուլտետներից բնագիտական ֆակուլտետ են տեղափոխվել 2 ուսանողներ, բնագիտական ֆակուլտետից բուհի այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 3 ուսանողներ, տարկետում տրամադրվել է 4 ուսանողի, հեռացվել են 7 ուսանողներ:

Անհարգելի բացակայած ուսանողներին արվել է գրավոր նկատողություն և խիստ նկատողություն:

Բնագիտական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ, որոնք ցուցաբերել են ուսման բարձր առաջադիմություն, հաշվետու ժամանահատվածում օգտվել են բարերարների և կրթական հիմնադրամների ֆինանսական օժանդակությունից, ինչպես նաև համալսարանի կողմից կիրառված զեղչերից.

ՀՕՖ-ի Ժիրայր Նիշանյան հիմնադրամ՝ 16 ուսանող,

Հայ կրթական հիմնարկություն՝ 3 ուսանող,

ՀՀ պետբյուջեից «Փարոս» համակարգ՝ 9 ուսանող,

«Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամ՝ 6 ուսանող,

Հայ երիտասարդական հիմնադրամ՝ 2 ուսանող,

«Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամ՝ 1 ուսանող,

ԳՊՀ միջոցներից՝ 9 ուսանող:

IV. Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները

Մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագերի վերանայում և արդիականացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում և բազմազանեցում ամբիոնների կողմից, ՄԿԾ-ների իրականացման արդյունքների մշտադիտարկում և դրանց շարունակական բարելավում:

Հստակեցվել են ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունները. կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ա. Ն. Բելազերսկու անվան ֆիզիկա-քիմիական ինստիտուտում սինթեզված հակաօքսիդանտների ուսումնասիրություն, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում՝

1. տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում,
2. համակարգչային թեստավորում,
3. արհեստական բանականության համակարգերի և նեյրոնային ցանցերի կիրառություններ,
4. անօդաչու թռչող սարքերի հետազոտում:

Ամբիոնների գիտական ուղղությունները որոշվում են՝ հաշվի առնելով ամբիոնների գիտական ներուժը, դասախոսների գիտական հետաքրքրությունների շրջանակը:

Գրադարանային ֆոնդի համալրման նպատակով ձեռք են բերվել 14 անուն գրականություն:

Բնագիտական ֆակուլտետում լաբորատոր-գործնական աշխատանքների ակտիվացման նպատակով աշխատանքներ են տարվել, և բնագիտության լաբորատորիան համալրվել է 44 անուն առաջին անհրաժեշտության քիմիական ռեակտիվներով և օժանդակ պարագաներով: ԵՄ «ERASMUS+ ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի շրջանակներում բնագիտության լաբորատորիան համալրվեց թանկարժեք և նորագույն տեխնիկայով, որի օգնությամբ գործնական աշխատանքներն առավել արդյունավետ կլինեն և կնպաստեն ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը:

2018-2019 ուստարում բնագիտական ֆակուլտետում գործող ամբիոններում կատարվել են որոշակի փոփոխություններ, կիսամյակից կիսամյակ առարկաների տեղափոխություններ՝ համաձայն ուսումնական պլանների: Այդ փոփոխությունները արձանագրվել են ամբիոնների համապատասխան նիստերում:

Գրեթե յուրաքանչյուր դասաժամի օգտագործվել են համակարգչային լսարանները, որոնք հնարավորություն են տալիս կիրառել նյութի մատուցման նոր եղանակներ՝ օգտվելով համացանցային կապից: Ակտիվորեն օգտագործվել է նաև բնագիտության լաբորատորիան, որտեղ, հնարավորության սահմաններում, անցկացվել են մասնագիտական դասընթացների գործնական աշխատանքները:

Բնագիտական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և ուսանողական անձնակազմերը ակտիվորեն մասնակցել են հանրապետական գիտաժողովների, ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել են ուսանողական գիտաժողովներ,

ուսանողների համար կազմակերպվել են լրացուցիչ գործնական աշխատանքներ: Այսպես, ԳՊՀ ամենամյա գիտաժողովին, որը նվիրված էր Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյա հոբելյանին, մասնակցել են ֆակուլտետի ամբիոնների դասախոսները: Ներկայացվել են 14 գիտական զեկուցումներ ըստ ոլորտների. կենսաբանական և էկոլոգիական գիտություններ՝ 8, աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն՝ 1, քիմիական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ՝ 2, տեխնիկական գիտություններ՝ 3 գիտական զեկուցումներ:

2018թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին «Կենսաբանություն» բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողների համար բնագիտության լաբորատորիայում մասնագիտական տարբեր դասընթացների շրջանակներում անցկացվել են փորձարարական բնույթի աշխատանքներ:

Բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, պրոֆեսոր Արտաշես Թադևոսյանի ղեկավարությամբ այցելել են ներքոհիշյալ կազմակերպություններ՝ իրենց տեսական գիտելիքները գործնականում ամրապնդելու նպատակով.

1. «ԼԻՔՎՈՐ» ընկերություն (դեղերի արտադրություն),
2. «ԲԻՈՔԻՄ» ՍՊԸ (կոսմետիկ միջոցների արտադրություն),
3. «ԱԷՍ Թրեյդ» ՍՊԸ (պլաստիկ իրերի ստացում),
4. «Էկո ինջիներինգ» ՍՊԸ (պլաստիկ իրերի և թղթաթափոնի վերամշակում):

V. Միջազգային կապեր

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ է եղել միջազգային ծրագրերին ֆակուլտետի աշխատակազմի մասնակցությունը:

Այսպես, 2018թ. սեպտեմբերի 20-ից 21-ը ԵՄ «ERASMUS+DOCMEN» ծրագրի շրջանակներում Իտալիայի Հանրապետության Թուրինի պոլիտեխնիկական համալսարանում ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը մասնակցել է աշխատաժողովի և վերապատրաստման:

2018թ. սեպտեմբերի 22-ից 30-ը Վրաստանի Հանրապետության Բակուրիանի ավանում տեղի ունեցած «Be active, Be empowered» խորագրով դասընթացին մասնակցել է ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի ուսումնական խորհրդատու Լալա Մկրտչյանը:

Հոկտեմբերի 9-ից 13-ը ԵՄ «ERASMUS+ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի հերթական աշխատաժողովին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դրեզդենի տեխնիկական համալսարանում մասնակցեցին ԲՆՖ փոխդեկան Թերմինե Խաչիկյանը և կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Մարինե Հովհաննիսյանը:

Հոկտեմբերի 26-ին ԵՄ «ERASMUS+ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի մշտադիտարկմանը Երևանի պետական համալսարանի կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնում մասնակցեցին ԲՆՖ փոխդեկան Թերմինե Խաչիկյանը և

կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Մարինե Հովհաննիսյանը: Փետրվարի 28-ին տեղի ունեցավ ծրագրի հերթական աշխատաժողովը բնագիտական ֆակուլտետում:

Մարտ ամսին Եվրոպական Միության ‹‹Էրազմուս+›› միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆալուլտետի դեկան Մարտին Ավագյանը մեկշաբաթյա դասախոսությամբ հանդես եկավ Իտալիայի Սալերնոյի համալսարանում:

Մարտի 30-ից ապրիլի 7-ը Իտալիայի Վիտերբոյի և Պորտուգալիայի Լիսաբոնի համալսարաններում կայացավ Եվրոպական Միության «Erasmus+ MENVIPRO» ծրագրի հերթական աշխատաժողովը, որին մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանն ու բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Մարինե Հովհաննիսյանը:

Մայիսի 2-ին Լեհաստանի Հանրապետության Կրակովի տեխնոլոգիական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական միության ‹‹ERASMUS+DOCMEN›› ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը, որին մասնակցեց ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, որը շնորհանդես-զեկուցմամբ ներկայացրեց ԳՊՀ-ում ‹‹DOCMEN›› ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը:

VI. Ամփոփիչ ատեստավորում

2018-2019 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորման գործընթացին, այն է՝ ավարտական աշխատանքների պաշտպանությանը ընդհանուր առմամբ թույլատրվել է մասնակցելու 26 ուսանողների, որոնցից 19-ը բակալավրի կրթական աստիճանում, 7-ը՝ մագիստրոսական կրթական աստիճանում:

«Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի 15 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել են 2-ը, լավ՝ 5-ը, բավարար՝ 8-ը: Գերազանցության դիպլոմի են արժանացել 2 շրջանավարտներ:

«Դեղագործական քիմիա» բաժնի 4 շրջանավարտներից գերազանց և լավ գնահատականներով բուհն ավարտել են 2-ական ուսանողներ: Գերազանցության դիպլոմի են արժանացել 2 շրջանավարտներ:

Բնագիտական ֆակուլտետում 2018-2019 ուսումնական տարում եղել են 7 մագիստրոս շրջանավարտներ «Համակարգչային ճարտարագիտություն», «Կենսաբանություն» մասնագիտություններով: Գերազանցության դիպլոմի արժանացել են «Կենսաբանություն» բաժնի 3 մագիստրոսներ:

VII. Համագործակցային կապերը և դրանց կառավարումը

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը բավականին ակտիվ է եղել արտաքին համագործակցության առումով: Գեղարքունիքի մարզի տարբեր հանրակրթական դպրոցներից ֆակուլտետը հյուրընկալել է ավելի քան 460 աշակերտների և ուսուցիչների, որոնց համար կազմակերպվել են բաց դասեր և գործնական աշխատանքներ: Ֆակուլտետի աշխատակիցների կողմից կատարվել են նաև այցելություններ դեպի դպրոցներ, ամրապնդվել է համագործակցությունը «Lousin technology» ընկերության հետ՝ որպես

գործատու: Ակտիվ է եղել նաև ուսանողների մասնակցությունը հանրապետական գիտաժողովներին, մասնավորապես՝ նոյեմբերի 6-ին Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցած ուսանողական գիտական ընկերության հերթական՝ 8-րդ նստաշրջանին մասնակցեցին և արդիական թեմաներով զեկուցումներով հանդես եկան ֆակուլտետի 6 ուսանողներ՝

1. Անահիտ Սաքեյան՝ «Դեղագործական քիմիա» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի,
2. Ջուլիետա Մուշեղյան՝ «Դեղագործական քիմիա» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի,
3. Գոհար Սահակյան՝ «Դեղագործական քիմիա» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի,
4. Ժենյա Գասպարյան՝ «Դեղագործական քիմիա» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի,
5. Խորեն Բաղդասարյան՝ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի 4-րդ կուրսի ուսանող,
6. Կարեն Մաստոյան՝ «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանող:

2018թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում ֆակուլտետի ներքոհիշյալ դասախոսները ևս անցկացրել են բաց դասեր, որին ներգրավված են եղել տարբեր դպրոցների՝ թվով 243 աշակերտներ.

1. Մարտին Ավագյան,
2. Արտաշես Թադևոսյան,
3. Կարինե Ավետիսյան,
4. Արտյոմ Շեկյան,
5. Լալա Մկրտչյան:

2018-2019 ուստարում Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնը և «Luseen Technologies» տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնադրամը համատեղ կազմակերպել են «Ծրագրավորողի մասնագիտությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատելու հնարավորությունները Գավառում» խորագիրը կրող միջոցառումների շարք, որոնց ընթացքում «Madatech», «Gazar.am», «Luseen Mobile», «AdonsLab» բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններից հրավիրված մասնագետներն անդրադարձել են աշակերտների մասնագիտական կողմնորոշման խնդրին, ծրագրավորողի մասնագիտությանը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց զարգացող շուկայի պահանջներին և Գավառում ՏՏ ոլորտում աշխատելու հնարավորություններին:

Այս համատեքստում ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ բուհում անցկացվեցին «Software Project Management - Ծրագրային ապահովման նախագծերի կառավարում» անվճար դասընթացներ:

Հաշվետու ուսումնական տարում արձանագրել ենք հերթական հաղթանակը՝ «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում 2-րդ տեղ է զբաղեցրել

«Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող Կարեն Մաստոյանը:

VIII. **Միջոցառումներ**

Բնագիտական ֆակուլտետում կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ, նոր տեսլական» կարգախոսով՝ սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, բարոյական, հոգևոր-մշակութային, բնապահպանական, գեղագիտական պաշտաճ դաստիարակության նպատակով:

2018թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցման համակարգում» վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել է նաև ամբիոնի ուսումնական խորհրդատու Լալա Մկրտչյանը:

2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Մարգար Հովհաննիսյանը անցկացրել է «Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցման համակարգում» վերապատրաստման դասընթաց՝ ԳՊՀ աշխատակիցների և Գավառի տարածաշրջանի դպրոցների ուսուցիչների համար, որին մասնակցել են նաև ֆակուլտետի ներքոհիշյալ դասախոսները և ուսանողները.

1. Նելլի Կուտուզյան՝ ԳՊՀ պրոռեկտոր, ԻՖՄԳ ամբիոնի դասախոս,
2. Մարտին Ավագյան՝ ԲՄՆՖ դեկան, ԿԲ ամբիոնի դասախոս,
3. Թերմինե Խաչիկյան՝ ԲՆՖ փոխդեկան, ԿԲ ամբիոնի դասախոս,
4. Մարինե Հովհաննիսյան՝ ԲՆՖ գործավար, ԿԲ ամբիոնի դասախոս,
5. Լալա Մկրտչյան՝ ԻՖՄԳ ամբիոնի ուսումնական խորհրդատու,
6. Շուշան Բաղդոյան՝ ԻՖՄԳ ամբիոնի դասախոս,
7. Կարեն Մաստոյան՝ 3-րդ կուրսի ուսանող,
8. Անուշ Բաղդասարյան՝ 1-ին կուրսի ուսանող:

2018թ. հոկտեմբերի 4-ին «Համակարգչային ճարտարագիտություն», «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժինների ուսանողները ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի և դասախոս Մարգար Հովհաննիսյանի հետ մասնակցել են «ԴիջիԹեք Էքսպո-2018» եռօրյա տեխնոլոգիական ցուցահանդեսին:

Նոյեմբերի 9-ին ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը կազմակերպել է «Ծրագրավորողի մասնագիտությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատելու հնարավորությունները Գավառում» թեմայով բաց հանդիպում գործատու համայնքի ներգրավմամբ:

Նոյեմբերի 16-ին բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում բնագիտական ֆակուլտետի «Կենսաբանություն» բաժնի 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Օհանյանը անցկացրեց բաց դաս թռչունների մասին, որի ընթացքում ներկայացված էին նաև թռչուններ:

Նոյեմբերի 30-ին առաջին կուրսի ուսանողները մասնակցեցին համահամալսարանական «Բարև՛, մենք ենք» միջոցառմանը:

Դեկտեմբերի 5-ին բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի ուսումնական խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի նախաձեռնությամբ և «Կենսաբանություն», «Համակարգչային ճարտարագիտություն» և «Դեղագործական քիմիա» բաժինների երկրորդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ կայացավ ուսուցողական ցերեկույթ՝ նվիրված հայ անվանի մարզիկներին: Միջոցառման ընթացքում ներկայացվեց ծանրամարտ մարզաձևը:

Դեկտեմբերի 20-ին «Համակարգչային ճարտարագիտություն», «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժինների ուսանողները կազմակերպել և անցկացրել են «Նոր տարվա խորհուրդը» խորագրով միջոցառում:

Դեկտեմբերի 21-ին բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի և «Դեղագործական քիմիա» բաժնի երրորդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ և նույն ամբիոնի ուսումնական խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի ղեկավարությամբ կայացավ «Էպիլեպսիա . դիվահարությունից մինչև գիտական բժշկություն» թեմայով գիտաժողով:

Ապրիլի 6-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի փոխնախագահ Գայանե Ղարիբյանի և բնագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Նորայր Մովսիսյանի նախաձեռնությամբ կայացավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսների հիշատակին:

Ապրիլի 16-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի երրորդ կուրսի ուսանողները ուսումնական խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի հետ միասին Երևանում մասնակցեցին թանգարանային օրվան նվիրված միջոցառումներին:

Ապրիլի 26-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի տարբեր կուրսերի ուսանողներ և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցները բուհի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի ղեկավարությամբ ճանաչողական այց կատարեցին բարձր տեխնոլոգիաների ոլորտի մի շարք ընկերություններ:

Մայիսի 2-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ ցերեկույթ՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին, որը կայացավ բուհի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի ակադեմիական խորհրդատու Լալա Մկրտչյանի նախաձեռնությամբ և բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի ուսանողների մասնակցությամբ:

ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

I. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Վերանայել առկա և հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերը, իրականացնել դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում, նախատեսել որակավորումներին համապատասխանող կրթական վերջնարդյունքներ՝ համապատասխանեցնելով ՈԱՇ-ին, ազգային և միջազգային չափանիշներին:
2. Ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի շարունակական թարմացում, մասնագիտական իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների հստակ սահմանում:
3. Դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդների արդյունավետ համադրում, նորարարական կրթական տեխնոլոգիաների շարունակական համալրում և արդիականացում:
4. Կրթության որակի շարունակական մշտադիտարկում, ամբիոնների կողմից դասալսումների միջոցով ուսումնական գործընթացի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, համապատասխան միջոցների ձեռնարկում:
5. Ամբիոնների կողմից հետևողական աշխատանքների իրականացում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ներկայացման, դրանք ուսանողների կողմից ընտրության հնարավորության ապահովման ուղղությամբ:
6. Ուսանողների շրջանում մշտական հարցումների իրականացում, կրթական կարիքների վերհանում:
7. Ուսումնական պլաններում կամընտրական մոդուլների նկարագրերի, վերջնարդյունքների վերաբերյալ ուսանողներին իրազեկում:

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. Բնագիտական ֆակուլտետի գրադարանի գրքաֆոնդի համալրում, նոր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ձեռքբերում՝ ըստ առարկայական ծրագրերում ներկայացվող գրականության ցանկի:
2. Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի կարևորում, գիտահետազոտական պրակտիկաների և գիտական սեմինարների արդյունավետության բարձրացում:
3. Համագործակցային նոր կապերի հաստատում հանրապետության և արտերկրի գիտական կառույցների հետ, նոր հուշագրերի կնքում՝

ուսումնական պրակտիկան համատեղ կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:

4. Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավում, համատեղ գիտական հոդվածների պատրաստում և տպագրում:
5. Ֆակուլտետում ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության խրախուսում, նոր ծրագրերի մշակում և համատեղ աստիճանաշնորհմամբ կրթական ծրագրերի իրականացում:
6. Միջազգային և հանրապետական հետազոտական դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցություն:
7. Ուսումնական ռեսուրսների շարունակական համալրում, բնագիտության լաբորատորիայի հնարավորությունների ընդլայնում, փորձարարական աշխատանքների կատարում:
8. Ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում երիտասարդ դասախոսներով, նրանց մասնագիտական որակների շարունակական բարելավում, վերապատրաստումների կազմակերպում:

III. «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԿԱՐԳԱԽՈՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Կրթության գործընթացը սովորողների բազմակողմանի զարգացմանը ծառայեցում, ուսանողների համար տարաբնույթ կրթադաստիարակչական, ժամանցային միջոցառումների կազմակերպում «Լավագույն խումբ», «Լավագույն ուսանող» անվանակարգերում:
2. Նոր որակ հաղորդել «Բնագետի ակումբ»-ի աշխատանքներին, «Տուրիզմի ակումբ»-ի հետ համատեղ կազմակերպել ճանաչողական նշանակության այցելություններ պատմաճարտարապետական հուշարձաններ և բնապահպանական հաստատություններ:
3. Կազմակերպել ակնարկային դասախոսություններ կրթության, մշակույթի գործիչների հետ, կլոր սեղաններ և այլ բնույթի միջոցառումներ:

IV. ԲՈՒՀ—ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Որակական նոր մոտեցումներ մշակել բուհ-հանրակրթական դպրոց համագործակցության ոլորտում, նոր հուշագրեր կնքել և իրականացնել:
2. Բնագիտության լաբորատորիայի և համակարգչային լսարանների հնարավորությունների լիարժեք օգտագործում՝ ըստ աշակերտների նախասիրությունների տարբեր առարկաներից լաբորատոր աշխատանքներ կազմակերպելու համար:
3. Աշակերտների համար կազմակերպել բաց դասեր, սեմինար-քննարկումներ, հանդիպումներ ամբիոնների առաջատար դասախոսների հետ:

4. Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվող գիտաժողովներին ակտիվ ներգրավել հանրակրթական դպրոցների բարձր դասարանցիներին, ակտիվացնել ուսանողների և աշակերտների համագործակցությունը:

Մարտին Ավագյան
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան,
գյուղ.գիտ.դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Կենսաբանություն				
2-րդ	5	-	-	80
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	5	-	1	80
2-րդ	4	-	-	75
3-րդ	8	1	5	87,5
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա				
4-րդ	15	-	2	33,3
Դեղագործական քիմիա				
2-րդ	3	-	2	100
3-րդ	6	-	2	50
4-րդ	4	-	2	75
Ընդամենը	50	1	14	64,0
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	2	-	1	50
2-րդ	3	-	-	66,7
Կենսաբանություն				
2-րդ	4	-	3	100
Ընդամենը	9	-	4	77,8

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Կենսաբանություն 2-րդ	4	-	1	75
Համակարգչային ճարտարագիտություն 1-ին	6	-	1	50
2-րդ	4	-	-	100
3-րդ	8	-	4	100
Դեղագործական քիմիա 2-րդ	3	-	2	100
3-րդ	6	-	2	50
Ընդամենը	31	-	10	76,9
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն 1-ին	2	-	1	50
Ընդամենը	2	-	1	50

2018/2019 ՈՒՍ.ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթո-դական ձեռնարկ	Հոդված	Զեկուցում-ների թեզիս
-	-	1	-	25	3

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Սիմոնյան Արմեն Արշալույսի** - ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ Բնական և էկոլոգիական գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳՊՀ պատվավոր պրոֆեսոր
2. **Ավագյան Մարտին Պատվականի –** գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի** - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Սարգսյան Վահան Արշավանի –** ԳՊՀ դոցենտ
5. **Հասասյան Գագիկ Գուրգենի –** դասախոս
6. **Մկրտչյան Լալա Արշալույսի** - դասախոս
7. **Հովհաննիսյան Մարինե Հրահատի** - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Ավագյան Արամայիս Ռուստամի –** աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Թադևոսյան Արտաշես Վահանի –** տեխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
3. **Գրիգորյան Վալերի Վոլոդյայի –** կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Մխիթարյան Ազնիվ Կառլենի –** տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. **Սիմոնյան Ռուզան Մաքսիմի –** կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
6. **Ավետիսյան Կարինե Սամվելի –** քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. **Մուրադյան Էդիկ Կամսարի –** տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. **Խաչիկյան Թերմինե Գագիկի** - կենս. գիտ. թեկնածու
9. **Մուրադյան Վահագն Սոսի –** աշխ. գիտ. թեկնածու
10. **Գալոյան Ռուսլան Պապինի** – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ա. Ն. Բելազերսկու անվան ֆիզիկո-քիմիական ինստիտուտում սինթեզված հակաօքսիդանտների ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումանմեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	-	22	3

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ավագյան Ա. Ռ.**, **Սուվարյան Ս. Ռ.**, **Փեթակչյան Մ. Հ.**, **Հովհաննիսյան Ն. Ա.**, Զբոսաշրջությունը որպես աշխարհագրության հետազոտության օբյեկտ // ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 53(2), Երևան, 2019, էջ 127-133:
2. **Ավագյան Ա. Ռ.**, **Սուվարյան Ս. Ռ.**, **Փեթակչյան Մ. Հ.**, Զբոսաշրջության դերը բնակչության միգրացիաների կանոնավորման գործում // Կրթությունը և գիտությունը Արցախում, 3-4, 2018, էջ 68-72:
3. **Եղիազարյան Ա. Ա.**, **Մուրադյան Վ. Ս.**, **Վարդանյան Թ. Գ.**, Վերընթաց լանդշաֆտային գոտիների գեղագիտական գրավչության աստիճանի գնահատում (Սյունիքի մարզի օրինակով) // ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, հ. 53, #1, 2019, էջ 44-49:
4. Muradyan V., Tepanosyan G., Asmaryan Sh., Saghatelyan A., F., Dell'Aqua Recent Remote Sensing Applications: Society and Environment // 2019, 14, pp. 158-169; DOI: https://doi.org/10.1016/j.rsase.2019.03.004:
5. Asmaryan, S., Muradyan, V., Tepanosyan G., Hovsepyan A., Saghatelyan A., Astsatryan H., Grigoryan H.. Abrahamyan R., Guigoz Y., Giuliani G., Paving the Way towards an Armenian Data Cube // Data 2019, 4, էջ 117:
6. **Тепаносян Г. О., Мурадян В. С., Овсепян А. А., Асмарян Ш. Г.**, Оценка эрозионного риска почв с использованием модели CORINE. Региональные проблемы дистанционного зондирования Земли // Материалы V Междунар. науч. конф., Красноярск, 11–14 сентября 2018, էջ 220-223:

7. **Եղիազարյան Ա. Ա.**, **Մուրադյան Վ. Ս.**, Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական հատկության օբյեկտիվ գնահատում և քարտեզագրում // Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջազգային «Աշխարհագրության եվ երկրաբանության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր Երևան, սեպտեմբերի 27-29, 2018, էջ 45-49:
8. Sinonyan K. V., Simonyan R. M., Babakhanyan M. A., Chavushyan V. A., Effect of Stevia on synaptic plasticity and NADPH- oxidase level of CNS in conditions of metabolic disorders caused by fructose // World Convention on Stevia, Abstract Book, Berlin, Germany, 2018, էջ 58-64:
9. Isoyan A. S., Simonyan K. V., Simonyan R. M., Babayan M. A., Simonyan G. M., Chavushyan V. A., Simonyan M. A., Superoxide-producing lipoprotein fraction from Stevia leaves: definition of specific activity // BMC Complementary and Alternative Medicine, 19, 2019, էջ 88-94:
10. **Симонян Р. М., Агаджанова Е. М., Бабаян М. А., Симонян Г. М., Алексанян С. С., Агаджанов М. И., Симонян М. А.**, Снижение содержания NADPH оксидазы в эктосомах эритроцитов и ее активирование NADPH содержащим липопротеином сыворотки крови у пациентов при инсулинзависимом диабете // Биол.Ж. Армении, 2019 (հանձնված է տպագրության):
11. Avetisyan K. S., Galstyan L. Kh., Tamazyan R. A., Aivazyan A. G., Synthesis and Structure of 5,5-Disubstituted N-[4-Methyl-3-phenylfuran-2(5H)-ylidene]-N′-phenylthioureas // Russian Journal of Organic Chemistry, Vol.54, No.7, 2018, էջ 1109-1111:
12. **Аветисян К. С., Галстян Л. Х.**, Синтез и превращения 1-фенил-3-(4-метил-5,5-замещенных 3-фенилфуран-2(5H)-илиден)тиокарбамидов // Сборник тезисов “Марковниковские чтения. Органическая химия: от марковникова до наших дней”, WSOC, 2018, 19-23 января, 2018, էջ 54:
13. Avetisyan K. S., Galstyan L. Kh., Study of the alkylation reaction of Synthesis and Structure of 5,5-Disubstituted N-[4-Methyl-3-phenylfuran-2(5H)-ylidene]-N′-phenylcarbamides // Russian Journal of Organic Chemistry, Vol.55, No.7, 2019,էջ 1075-1078:
14. **Թադևոսյան Ա. Վ.**, **Խլոպուզյան Ռ. Հ.**, «Շրջակա միջավայրի պաշտպանություն, խնդիրների ժողովածու» // Ուսումնական ձեռնարկ, ՀԱՊՀ, 2018, 62 էջ:
15. **Тадевосян А. В.**, **Мартиросян Р. Г.**, «Брикетирование древесных отходов – элемент экологических и ресурсосберегающих технологий» // ՀԱՊՀ, Բանբեր, Քիմիական և բնապահպանական տեխնոլոգիաներ №1, 2018, էջ 45-50:
16. **Թադևոսյան Ա. Վ.**, **Սաֆարյան Ա. Ա.**, **Մանուկյան Ա. Ս.**, «Պղնձի և մոլիբդենի իոններ պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակ», Արտոնագիր № 3317A, 2018:
17. **Սիմոնյան Ա.**, **Հովհաննիսյան Մ.**, Մեղրատու մեղվի ֆիզիոլոգիան // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6, 2019, էջ 66-79:

18. **Симонян Л., Симонян А.**, Технология проблемного обучения // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 80-85:
19. **Ավագյան Մ**., Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և վերարտադրության հիմնահարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 86-97:
20. **Симонян Р.**, pH-зависимое изменение оптических спектральных показателей nadph оксидазы из клеточных мембран легких крыс // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 98-104:
21. **Ստեփանյան Լ. Գ.**, **Խաչիկյան Թ. Գ.**, **Համբարյան Լ. Ռ.**, Սևանա լճի ջրհավաք ավազանի հիմնական գետերի և Հրազդան գետի ֆիտոպլանկտոնի որակական ցուցանիշների վերլուծություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 105-112:
22. **Մկրտչյան Լ. Ա.**, Նորատուսը մշտապես բնակեցված հնագույն բնակավայր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019 էջ 130-139:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ավետիսյան Վարազդատ Կորյունի
տեխնիկական գիտությունների թեկնածու

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Շեկյան Լավրենտի Արամի** - Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Հակոբյան Մամիկոն Զալիբեկի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Խուրշուդյան Արմեն Կորյունի** – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
5. **Մկրտչյան Լալա Արշալույսի** - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Կուտուզյան Նելլի Ալբերտի**- ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Դարբինյան Ալբերտ Սարգսի** - դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Հովհաննիսյան Մարգար Արտավազդի –** դասախոս
4. **Բաղդոյան Շուշան Գևորգի** –դասախոս
5. **Միրիբյան Արթուր Աշոտի** – դասախոս
6. **Գզրարյան Հարություն Վաղարշակի**-դասախոս
7. **Գասպարյան Շահեն Հրաչիկի**-դասախոս
8. **Թումանյան Անդրանիկ Սերգեյի**-դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ
2. Կառավարման ավտոմատացված համակարգեր
3. Ծրագրային ապահովման մշակում
4. WEB-տեխնոլոգիաներ
5. Համակարգչային թեստավորում

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցում-ների թեզիս
-	-	-	-	3	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Խուրշուդյան Ա. Կ.**, Արհեստական նեյրոնային ցանցի ռեդուկցիայի ունակության նախագծման հիմնահարցերը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 63-70:
2. **Кутузян Н. А., Шекян Л. А.**, Изгиб двух одинаковых балок на упругой шероховатой полосе линейно распределенной поперечной нагрузкой при наличии осевых сжимающих сил // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 40-49:
3. **Ավետիսյան Վ. Կ.**, **Հովհաննիսյան Մ. Ա.**, **Մաստոյան Կ. Ա.**, Տեսակոնֆերանսային համակարգերի կիրառությունը հեռավար ուսուցման գործընթացում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 40-49:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ղաջոյան Համլետ Գրիշայի
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Գևորգյան Գոհար Վոլոդյայի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011301.00.6 ***Ընդհանուր մանկավարժություն***	
011301.01.6	*Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*	Մանկավարժության բակալավր
	011301.00.7 ***Ընդհանուր մանկավարժություն***	
011301.01.7	*Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*	Մանկավարժության մագիստրոս
	011401.00.6 **Մասնագիտական *մանկավարժություն***	
011401.18.6	*Պատմություն*	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 **Մասնագիտական *մանկավարժություն***	
011401.18.7	*Պատմություն*	Մանկավարժության մագիստրոս
	042101.00.6 ***Իրավագիտություն***	
042101.01.6	*Իրավագիտություն*	Իրավագիտության բակալավր
	042101.00.7 ***Իրավագիտություն***	
042101.01.7	*Իրավագիտություն*	Իրավագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 133
Շրջանավարտների թիվը՝ 54

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը

Հաշվետու ժամանակաշրջանում հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը (ՀՄՖ) կրթական ծրագրեր է իրականացրել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում հետևյալ մասնագիտություններով՝ իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա: 2018-2019 ուսումնական տարում իրավագիտության բաժնի բակալավրիատ է ընդունվել 2 ուսանող: Իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրս ընդունվել է 20 ուսանող, տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժին՝ 17 ուսանող, պատմության բաժին՝ 7 ուսանող:

Բակալավրիատի դիմորդների թվի նվազումը պայմանավորված է ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվի պակասով:

Մագիստրատուրայում գրանցվել է դիմորդների թվի աճ 10-ով:

1. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ուսումնական առաջադիմությունը.

Հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատում ուսման առաջադիմությունը կազմել է 86 %, մագիստրատուրայում՝ 55,5%, ֆակուլտետում՝ 70.8%: Նախորդ ուսումնական տարվա համեմատ բակալավրիատում ուսման առաջադիմությունը նվազել է 2,1%-ով (88.1%), իսկ մագիստրատուրայում աճել է 2,5%-ով (53 %): Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 5,2%-ով (53 %):

100 % առաջադիմություն գրանցվել է 8 խմբում (նախորդ տարի՝ 6-ում):

Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքներով ուսման առաջադիմությունը կազմել է 100 %:

Ուսման առաջադիմության նվազումը բակալավրիատում բացատրվում է զինվորական ծառայությունից վերադարձած ուսանողների ոչ բավարար պատրաստվածությամբ, իսկ մագիստրատուրայում այլ բաժիններից ընդունված ուսանողների մասնագիտական գիտելիքների ցածր մակարդակով: Ուսման առաջադիմության բարձրացմանը խոչընդոտող հանգամանքներից է նաև ուսանողների անհարգելի բացակայությունները: Անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն են ստացել 28 ուսանող, խիստ նկատողություն՝ 1 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում ներբուհական տեղափոխման կարգի համաձայն ԳՊՀ այլ ֆակուլտետներից հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ տեղափոխվել են 10 ուսանող, ՀՄՖ-ից այլ ֆակուլտետներ՝ 4 ուսանող, ներֆակուլտետային տեղափոխություն՝ 1 ուսանող, ուսանողական իրավունքները վերականգնել են 2-ը, տարկետում տրամադրվել է 5 ուսանողի, համալսարանից հեռացվել են 11 ուսանող, ազատվել՝ 4-ը: Միջազգային փոխանակման ծրագրով եվրոպական այլ բուհերում ուսումը շարունակել են 2 ուսանողներ:

Հաշվետու ուսումնական տարում պետության կողմից անվճար սովորելու իրավունքով սովորում են բակալավրիատի և մագիստրատուրայի 15 ուսանողներ:

2018-2019 ուսումնական տարվա փոխատեղման արդյունքներով 12 ուսանող պահպանել են անվճար սովորելու իրավունքը, 3-ը կորցրել են այդ իրավունքը, 3-ը՝ ստացել: Ֆակուլտետում ուսանողների քանակը կազմել է 133, նախորդ տարվա հետ համեմատած նվազել է 28-ով (161), որը բացատրվում է 1-ին կուրս ընդունված ուսանողների քիչ թվաքանակով:

Հաշվետու ուսումնական տարում դեկանատը ուսումնասիրել է ուսանողների սոցիալական կարիքները և ժամանակին տրամադրել տեղեկատվություն՝ հիմնադրամների հայտարարած մրցույթներին մասնակցելու համար: Ֆակուլտետի 69 ուսանողներ օգտվել են տարբեր հիմնադրամներից. «Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամ՝ 8, «ԱՄՔՈՐ»՝ 2, «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ»՝ 3, «Ժիրայր Նիշանյան»՝ 13, «Փարոս» համակարգ՝ 8, սահմանամերձ համայնքի բնակիչ՝ 2, «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամ՝ 5, Հայ ավետարանչական ընկերություն՝ 2: Գավառի պետական համալսարանի կողմից 26 ուսանողների տրվել է ուսման վարձի զեղչ:

2. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ:

2017-2018 ուստարվա բակալավրիատի 46 շրջանավարտներից հաշվետու ուսումնական տարում մագիստրատուրայում ուսումը շարունակել է 20 ուսանող՝ իրավագիտություն՝ 10 ուսանող, տարրական մանկավարժություն և մեթոդիկա՝ 6, պատմություն՝ 4: Մագիստրատուրա ընդունվածներից 6-ը աշխատում են իրենց մասնագիտությամբ:

Գործատուների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզվել է, որ գործատուները գոհ են շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մակարդակից, օտար լեզուների, տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունից:

3. Կրթական ծրագրերի զարգացումն ու փոփոխությունները

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի երեք մասնագիտությունների ուսումնական պլանները համեմատվել են հանրապետության առաջատար բուհերի՝ Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի հետ: Կատարվել են հետևյալ փոփոխությունները. վերանայվել և թարմացվել են ուսումնական պլանում ներառված դասընթացների ծրագրերը, ուսումնական պլանում ներառվել են հետևյալ նոր դասընթացները՝ ՀՀ ընտրական իրավունք, Հարկային իրավունք, Հայ բառարանագրությունը XX-XXI դարերում, Ճարտասանական արվեստի հիմնահարցեր:

Ամփոփիչ ատեստավորման քննությունները փոխարինվել են ավարտական աշխատանքների պաշտպանությամբ: Ամբիոնները և դեկանատը հսկել են բակալավրիատի երեք բաժինների առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Մագիստրոսական թեզերի գրախոսման ընթացակարգի փոփոխության համաձայն՝ երեք բաժինների մագիստրոսական թեզերը ներկայացվել են արտաքին գրախոսման:

Հաշվետու ուսումնական տարում կատարվել է պատմության և տարրական մանկավարժության և մեթոդիկայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների, մասնագրերի, դասընթացների ծրագրերի արտաքին փորձաքննություն: Արտաքին փորձագետների կողմից ստացվել են դրական կարծիքներ մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ: Պատմության մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրում կարևորվել է «Պատմության փիլիսոփայություն» և «Պատմական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացների դերը մասնագետների պատրաստման գործում, ըստ այդմ հարստացել է դասընթացների բովանդակությունը, կիրառվել են ուսուցման նոր մեթոդներ:

4. Ծրագրի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները

Հաշվետու ուսումնական տարում վերանայվել են 3 մասնագիտությունների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններում ներառված դասընթացների ծրագրերը, որտեղ նախատեսվել են ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները, հստակեցվել գնահատման չափանիշները, դասընթացների ծրագրերում ներառված թեմատիկ պլանների յուրաքանչյուր թեմայի համար նշվել ելքային արդյունքներ: Մշտադիտարկման նպատակով ուսանողների շրջանում անցկացվել են հարցումներ: Գրանցվել են հետևյալ արդյունքները.

1. Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից՝ 2017-2018 – 3,77 միավոր, 2018-2019 – 4,81 միավոր,
2. Պրակտիկաների օգտակարությունը՝ 2017-2018 – 4,69 միավոր, 2018-2019 – 4,7 միավոր,
3. Ուսումնառությունը համալսարանում տալի՞ս է տեսական գիտելիքներ՝ 2017-2018 – 4,86 միավոր, 2018-2019 – 4,79 միավոր,
4. Ուսումնառությունը ձևավորու՞մ է գործնական հմտություններ՝ 2017-2018 – 4,86 միավոր, 2018-2019 – 4,76 միավոր,
5. Ուսումնառությունը ապահովու՞մ է մասնագիտական օտար լեզուների իմացություն՝ 2017-2018 – 4,60 միավոր, 2018-2019 – 4,55 միավոր:
6. Դասընթացներն ապահովվու՞մ են անհրաժեշտ ուսումնական և մեթոդական նյութերով՝ 2017-2018 – 4,68 միավոր, 2018-2019 – 4,5 միավոր:

6.**Ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները**

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում կատարվեց կառուցվածքային փոփոխություն. միավորվեցին պատմության և հասարակական գիտությունների ամբիոնները՝ կազմելով ընդհանուր հասարակական գիտությունների ամբիոն: Ֆակուլտետի 2 ամբիոններում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններում ներառված դասընթացներն իրականացնում են գիտությունների 7 դոկտոր, 15 թեկնածու, 14 երիտասարդ դասախոսներ: Ամբիոնների դասախոսների կողմից տպագրման են ներկայացվել 30 գիտական հոդված, որից 1-ը՝ ուսանող-դասախոս համահեղինակությամբ:

Միջազգային գիտական հանդեսներում տպագրվել է 2 գիտական հոդված, հանրապետական և ներբուհական ուսանողական գիտաժողովներին մասնակցել են ֆակուլտետի 9 ուսանող: Ամբիոնների դասախոսական կազմից վերապատրաստման

դասընթացներին մասնակցել է 8 դասախոս: Հաշվի առնելով ներքին և արտաքին շահառուների կարիքները՝ ֆակուլտետի 2 դասախոս իրականացրել են վերապատրաստումներ:

Կրթական միաջավայրից ուսանողների բավարարվածությունը պարզելու նպատակով իրականացվել են հարցումներ: Արդյունքներն են.

1. Լսարանների կահավորվածությունից բավարարվածությունը՝ 2017-2018 – 3,94 միավոր, 2018-2019 – 3,40 միավոր:
2. Մասնագիտական գրականության հագեցվածությունը՝ 2017-2018 – 4,22 միավոր, 2018-2019 – 3,90 միավոր:
3. Էլեկտրոնային գրադարանի հագեցվածությունը և հասանելիությունը՝ 2017-2018 – 3,94 միավոր, 2018-2019 – 3,86 միավոր:
4. Համակարգչային լսարանի կահավորվածությունը՝ 2017-2018 – 4,40 միավոր, 2018-2019 – 4,0 միավոր:
5. Տեղեկատվական համակարգի հասանելիությունը՝ 2017-2018 – 82%, 2018-2019–82 %:
6. Գրադարանի սպասարկումը՝ 2017-2018 – 4,89 միավոր, 2018-2019 – 4,91 միավոր:
7. ‹‹Learning.GSU.am›› համակարգից բավարարվածությունը և հասանելիությունը՝ 2017-2018 – 4,85 միավոր, 2018-2019 – 4,69 միավոր:

Նվազումը հիմնականում բացատրվում է ֆակուլտետում համակարգչային լսարանի տեխնիկական հագեցվածության ոչ բավարար վիճակով, համացանցային կապի բացակայությամբ, էլեկտրոնային ուսուցման նոր համակարգի գործարկմամբ:

Ուսումնական խորհրդատուները նախաձեռնել և կազմակերպել են մասնագիտական, գրական-գեղարվեստական 9 միջոցառում:

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի վարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցները ներկայացրել են հաշվետվություններ՝ ըստ աշխատանքային նկարագրերի: Ֆակուլտետի 2 աշխատակից, որպես խրախուսում, ստացել են դրամական պարգևներ:

8. Որակի կառավարման գործընթացը

Ֆակուլտետի դեկանատը և ամբիոնները համագործակցում են բուհի Որակի ապահովման բաժնի հետ: Որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների շրջանում կատարված հարցումների արդյունքները և դրանց վերլուծությունները, ինչպես նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների վերլուծության արդյունքները մշտապես քննարկվում են ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերում: Քննարկելով ուսանողների դիտողությունները և առաջարկությունները՝ դեկանատը կազմել է թերությունների շտկման և ներկայացված առաջարկությունների իրականացման գործողությունների պլան:

9. Համագործակցային կապերը և դրանց կառավարումը

Հաշվետու ուսումնական տարում դպրոց–բուհ համագործակցության շրջանակներում ֆակուլտետի աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվել են այցելություններ

մարզի հանրակրթական դպրոցներ, որի հիմնական նպատակն է հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումներ, ներկայացվել են բուհում գործող մասնագիտությունները, աշխատաշուկայում տվյալ մասնագիտությամբ աշխատելու հնարավորություններն ու հեռանկարները, ԳՊՀ ուսանողներին առաջարկվող՝ արտերկրում ուսումը շարունակելու հնարավորությունները, ուսումնասիրվել են աշակերտների նախասիրություններն ու կրթական կարիքները: Ուսումնասիրվել է վերջին տարիներին ֆակուլտետի երեք բաժինների դիմորդների թվաքանակը և վերլուծվել է դիմորդների հետ տարվող աշխատանքի արդյունավետությունը:

Ֆակուլտետի երեք բաժինների ուսումնական պլաններով նախատեսված նախաավարտական, մանկավարժական և ուսումնական պրակտիկանները կազմակերպվել են հանրակրթական դպրոցներում, ՀՀ իրավապահ տարբեր մարմիններում, այլ հաստատություններում: Պրակտիկաների վայրերի ղեկավարների կողմից տրվել են գրավոր և բանավոր կարծիքներ ու առաջարկություններ, որոնք քննարկվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում:

Ֆակուլտետում ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների կիրառման, ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանման արդյունքների մշտադիտարկման նպատակով ուսանողների շրջանում անցկացվել են անանուն հարցումներ: Հարցումների արդյունքների համաձայն՝ կոռուպցիոն դրսևորումներ չեն արձանագրվել:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում:
2. «Իրավագիտություն», «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ների մասնագրերի վերանայում:
3. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման կառուցակարգերի արդյունավետության բարձրացում:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Ֆակուլտետի 2 ամբիոնների դասախոսների գիտական հետազոտական գործունեության խրախուսում:
2. Գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, ուսանող -դասախոս համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում:

III. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Ֆակուլտետի կրթական միջավայրի վերաբերյալ շահառուների շրջանում հարցումների անցկացում, կարիքների բացահայտում և բարելավում:
2. Էլեկտրոնային ուսուցման (‹‹Learning.GSU.am››) համակարգի բարելավում:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ

1. Ուսանողներին խոր մասնագիտական գիտելիքների հաղորդում, համապատասխան ոլորտների տեսական և գործնական իմացության ապահովում, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, շարունակական կրթության մշակույթի ձևավորում:
2. Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, ուսանողների մասնակցություն միջազգային փոխանակման ծրագրերին:

V. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Ֆակուլտետի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների հաշվետվողականություն՝ ըստ աշխատանքային նկարագրերի:
2. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարողությունների շարունակական զարգացում:
3. Միջազգային և հանրապետական գիտաժողովներին գիտամանկավարժական կազմի անդամների մասնակցություն:

VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Ուսանողների սոցիալական վիճակի ուսումնասիրություն:

VII. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում /բենչմարքինգի իրականացում/:
2. Հանրությանը համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի կրթական ծառայությունների ներկայացում և լիարժեք տեղեկատվության տրամադրում:

VIII. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Ֆակուլտետի ուսանողների սոցիալական կարիքների ուսումնասիրություն:
2. Ֆակուլտետի ներքին շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, գործընկերների հետ աշխատանքային առողջ և համագործակցային մթնոլորտի ապահովում:

IX. **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ**

1. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիման վրա ֆակուլտետում ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանում:

Համլետ Ղաջոյան
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի դեկան,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՔՆՆԱՀՐՁԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՁԱՆ

2	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	2	-	1	100
3-րդ	10	-	5	90
4-րդ	13	-	1	46.1
Պատմություն				
2-րդ	7	-	1	100
4-րդ	4	-	2	100
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
2-րդ	6	-	3	100
3-րդ	7	-	2	100
4-րդ	8	-	2	87.5
Ընդամենը	57	-	17	84.2
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	17	-	3	70.5
2-րդ	20	-	1	15
Պատմություն				
1-ին	6	-	-	100
2-րդ	5	-	5	100
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	15	-	3	66.6
2-րդ	6	-	2	100
Ընդամենը	69	-	14	60.9

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	1	-	1	100
2-րդ	5	-	1	40
3-րդ	10	-	4	80
Պատմություն				
2-րդ	7	-	5	100
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				100
2-րդ	6	-	3	100
3-րդ	7	-	1	100
Ընդամենը	36		15	86
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	16	5	3	43.8
Պատմություն	6	-	1	66.6
Տարր. մանկավարժ. և մեթոդիկա	14	-	2	64.2
Ընդամենը	36		6	55.5

2018/2019 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	5	-	-	33	1

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 2

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Համլետ Մալխասի Հարությունյան - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1.**Պողոսյան Աշխունջ Ամիրխանի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
2.**Ղաջոյան Համլետ Գրիշայի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու
3.**Օհանյան Հայկ Հեքիմի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
4.**Քուրքչյան Լուսիկ Ներսեսի**- մանկավարժական գիտությունների թեկնածու
5.**Մայիլյան Անուշ Տոլիկի –** մանկավարժական գիտությունների թեկնածու
6.**Հայրապետյան Քանաքարա Խաչիկի –** ասիստենտ
7.**Գարեյան Մելանյա Վարդանի** - դասախոս
8.**Խաչիկյան Հայկ Խաչիկի –** դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1.**Այվազյան Էդվարդ Իշխանի** – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2.**Թունյան Վալերի Գեորգիի** - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
3.**Պողոսյան Էդուարդ Վանիկի –** պատմական գիտությունների դոկտոր
4.**Հակոբյան Արսեն Աշոտի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
5.**Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
6.**Բարսեղյան Պարգև Աշոտի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
7.**Զարգարյան Արփինե Հրանտի** - դասախոս
8.**Կոտոլկյան Թամարա Հակոբի** - դասախոս
9.**Սաֆարյան Ալիտա Սոսի** - դասախոս
10.**Դավթյան Արմինե Վահրամի –** դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Երևանի նահանգը 1849-1917 թվականներին,
2. Ներառական կրթության մանկավարժական, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական հիմնախնդիրները և մանկավարժների մասնագիտական-մանկավարժական իրազեկությունները (կոմպետենտությունները):

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումներ ի թեզիս
-	2		-	21	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հարությունյան Հ. Մ., Սաղաթելյան Մ. Լ.**, Առողջապահությունը Երևանի նահանգում ըստ 1891թ. վիճակագրական տվյալների //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 6 (21), 2019, էջ 135-144:
2. **Հակոբյան Ա. Ա., Խառատյան Լ.**, Դրվագներ Հայաստանի Խորհրդային անցյալից. հայ-ադրբեջանական համակեցության հետքերով, Երևան, ՀԱԻ, 2019:
3. **Պողոսյան Ա. Ա.**, Դասական վիշապագորգերի ծագումնաբանության ու տիպաբանման հարցերի մասին,Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին//Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2019, էջ 304-324:
4. **Պողոսյան Ա. Ա.**, Արցախյան ծագումով երկու գորգերի մասին//Համազգային Արցախի մշակութային-գրական տարեգիրք, Երևան-Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2019, էջ 19-27:
5. **Թունյան Վ. Գ.**, Ռուս-հայկական մարտական համագործակցությունը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 6 (21), 2019, էջ 144-155:
6. **Թունյան Վ. Գ.**, Манук-бей Мирзаян: грани созидания, Ереван, 2019, Изд. НПУА, էջ 172:
7. **Թունյան Վ. Գ.**, Технология азерпропа по фальсификации истории Армении, История и культура//«Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2019, N 1, էջ 86-94:
8. **Թունյան Վ. Գ.**, Дестабилизирующий фактор Кавказа, История и политика //«Պատմություն և քաղաքականություն», 2019, N 1, էջ 31-44:
9. **Թունյան Վ. Գ.**, Армянский фактор: разлом имперской политики и глобализация//«Պատմություն և քաղաքականություն», 2019, N 2, էջ 44-67:
10. **Թունյան Վ. Գ.**, Эдвард Эриксон Армяне и турки//Հայագիտության հարցեր, 2019, N 1, էջ 215-221:
11. **Թունյան Վ. Գ.**, Дж. Макарти, Арслан, Ташкыран, Туран. Ванское восстание//«Հայագիտության հարցեր», 2019, N 2, էջ 223-228:
12. **Թունյան Վ. Գ.**, Управление Армянской церкви в Российской империи, Ежегодник Богословского факультета//Տարեգիրք, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2019, էջ 62-73:
13. **Քուրքչյան Լ. Ն.**, Դպրոցական բուլլինգի սոցիալ-հոգեբանական պատճառականությունը//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 6 (21), 2019, էջ 353-364:

14. **Բարսեղյան Պ. Ա.**, Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների դասակարգման մի քանի հարցեր//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 6 (21), 2019, էջ 332-341:
15. **Բարսեղյան Պ. Ա.**, Մարդու արարումը և փրկությունը սիկհիզմում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 607-612:
16. **Բարսեղյան Պ. Ա.**, Ազգայինն ու հայկականը Մաղաքիա արք. Օրմանեանի բանախօսութիւններում//«Էջմիածին», ԺԱ, Ս. Էջմիածին, 2018, էջ 150-164:
17. **Բարսեղյան Պ. Ա.**, Մաղաքիա արք. Օրմանյանը իսլամի մասին// Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Ա, Երևան, 2019, էջ 123-132:
18. **Բարսեղյան Պ. Ա.**, Միայն Եկեղեցին կարող է պահպանել հայութիւնը//«Էջմիածին», Զ, Ս. Էջմիածին, 2018, էջ 132-141:
19. **Барсегян П. А.**, Особенности культа солнца в древней Армении // История религии: материалы V Международной научно-практической конференции «Религия и история», Минск, 20–22 апреля 2017 г., Минск, Ковчег, 2018, էջ 37-42:
20. **Հայրապետյան Ք. Խ.**, Տեր Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին// ԵՊՀ, Հայագիտության հարցեր, N 6 (17), Երևան, 2019, էջ 58-69:
21. **Հայրապետյան Ք. Խ.**, Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի՝ Երևանի փոխթեմակալության վերջին շրջանը. Խորհրդային իշխանության հաստատման տարիներ (1920-1924 թվականներ)//Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, ԵՊՀ, N 2, 2019, 20 էջ:
22. Hayrapetyan K., About Archbishop Khoren Muradbekyan's election as Catholicos of all Armenians//«Բանբեր հայագիտության», Հայագիտական միջազգային հանդես, N 2 (20), 2019, ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 5-17:
23. **Խաչիկյան Հ. Խ.**, Կազմակերպությունների ղեկավարման ռազմավարության շախմատային մոդելավորում և ռազմական մտածողության ուսուցում խաղային զուգահեռների հիման վրա // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 6 (21), 2019, էջ 341-347:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

2.**Ապրոյան Արսեն Հրաչիկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու
3.**Խաչատրյան Սամվել Արտաշեսի** - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
4.**Հովհաննիսյան Օլգա Արտյոմի** - ԳՊՀ դոցենտ
5.**Ղազարյան Քրիստինե Վարդանի** - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Հրանուշ Հրանտի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Խաչատրյան Աշոտ Հայկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
3. **Հարությունյան Մնացական Հայկի** – իրավաբանական գիտությունների թեկնածու
4. **Վարդանյան Գեղեցիկ Մարատի** - ասիստենտ
5. **Հարությունյան Արևիկ Տելեմակի –** ասիստենտ
6. **Լազարյան Վարդան Գերասիմի** - դասախոս
7. **Վարդանյան Մարզպետունի Գոռի** - դասախոս
8. **Ղաջոյան Վարդան Համլետի –** դասախոս
9. **Գրիգորյան Տարոն Վրեժի** - ասիստենտ
10. **Բախտիկյան Լուսինե Վանիկի** - ասիստենտ

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,*
2. *ՀՀ սահմանադրական, քաղաքացիական իրավունքի ինստիտուտներ,*
3. *Հայաստան-Սփյուռք գործակցություն:*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
	3			12	1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հակոբյան Հ. Հ.**, Սփիւռքը նոր հորիզոններու դիմաց, Սփիւռքի հայի ինքնահասկացողութիւնը// «Սփիւռք և ինքնութիւն» գիտաժողովի նյութեր, Անթիլիաս, 2018, էջ 21-45:

2. **Հակոբյան Հ. Հ.**, Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման հիմնախնդիրները երեսուն տարի անց// Թեզիսներ ՀՀ ԳԱԱ միջազգային գիտաժողովի նյութեր, 2018, 4 էջ:
3. **Հակոբյան Հ. Հ.**, Սպիտակի երկրաշարժի դասերը (վերլուծություն երեսուն տարի անց) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 19-31:
4. **Հակոբյան Հ. Հ.**, Կառավարման ձևի փոփոխությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 7 (22), (հանձնված է տպագրության):
5. **Հակոբյան Հ. Հ.**, **Հակոբյան Ռ. Խ.**, Իրավունքի սկզբունքները որպես հիմնարար գաղափարներ// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 730-739:
6. **Հակոբյան Ռ. Խ.**, Կրթությունը որպես բազմաչափ հասկացություն// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019, էջ 426-440:
7. **Հակոբյան Ռ. Խ.**, Սահմանադրական պահանջներ՝ ՀՀ պաշտոնատար անձանց թեկնածուներին. անհրաժեշտությո՞ն, թե՞ պայմանականություն// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 7 (22), (հանձնված է տպագրության):
8. **Հակոբյան Ռ. Խ.**, Հայաստանի Հանրապետության նախագահի լիազորությունները և սահմանադրական պատասխանատվությունը՝ ըստ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների (համեմատա-իրավական վերլուծություն)// «Գիտական Արցախ», N 1 (2), Երևան, 2019, էջ 222-232:
9. **Ապրոյան Ա. Հ.**, Երեխայի իրավական կարգավիճակի սահմանման միջազգային-իրավական հիմքերի մասին// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 740-750:
10. **Խաչատրյան Ս. Ա.**, Ընդունողականությունը որպես հայկական զրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի սկզբունք// ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019, 220 էջ:
11. **Խաչատրյան Ս. Ա.**, Ամբարտավանությունը որպես հայկական զրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի նորմ// ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019, 296 էջ:
12. **Խաչատրյան Ս. Ա.**, «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ (քննություն ապացուցման տեսության հիման վրա) // ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019, 327 էջ:
13. **Խաչատրյան Ս. Ա.**, Հայոց Տրդատ Առաջին և Սանատրուկ թագավորների անձերի նույնության շուրջ (ուսումնասիրություն իրավաբանական և տրամաբանական ապացուցման եղանակներով ու մեթոդներով)//«Արդարադատություն», N3 (44), Երևան, էջ 44-54:
14. **Հարությունյան Ա. Տ. ,** Ապահովագրության պատմական էվոլյուցիան// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 761-771:
15. **Հովհաննիսյան Օ. Ա.**, Փոխնակ մայրության իրավական /օրենսդրական/ կարգավորման որոշ խնդիրների վերաբերյալ//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու,Երևան, N 5 (20), 2018, էջ 751-760:

16. Khachatryan A. Samvel, Age groups law: children, youths, adults and elders in zoroastrian and early Christian Armenia// European journal of humanities and social sciences, N 3, Vienna, 2018, էջ 156-162, ISSN 2414-2344:

Համլետ Ղաջոյան

Հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի դեկան,
Փիլ.գիտ.թեկնածու

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ ***Ամիրխանյան Սամվել Գրիգորի,***
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ ***Հերգնյան Մարիամ Նորիկի,***
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	041101.00.6 ***Հաշվապահական հաշվառում և հարկում***	
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
	041101.00.7 ***Հաշվապահական հաշվառում և հարկում***	
041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
	041201.00.6 ***Ֆինանսներ***	
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
	041201.00.7 ***Ֆինանսներ***	
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
	031101.00.6 ***Տնտեսագիտություն***	
031101.01.6	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
	031101.00.7 ***Տնտեսագիտություն***	
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 141
Շրջանավարտների թիվը՝ 62

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

«Ֆինանսներ /ըստ ոլորտի/» բաժնի բակալավրիատի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը երկրորդ կիսամյակում, ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, կազմել է 100%:

Երկրորդ կուրսում առաջադիմությունը նվազել է համապատասխանաբար 16%-ով և 3,2 %-ով:

Երրորդ կուրսի առաջադիմությունը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 0,8%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 12,1%-ով:

« Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» բաժնի երկրորդ կուրսի առաջադիմությունը 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 6,7%-ով, իսկ հաշվետու տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 40%-ով:

Երրորդ կուրսի առաջադիմությունը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 15,1%-ով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 16,6%-ով:

«Տնտեսագիտություն» բանժի առաջին կուրսում նախորդ և հաշվետու տարում առաջադիմությունը կազմել է 100%, իսկ երկրորդ կուրսում երկու կիսամյակներում էլ՝ 80 %:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները (%-**ներով**) **մագիստրատուրայում**

Բաժինը, կուրսը	2017-2018 ուստարվա II կիսամյակ	2018-2019 ուստարվա I կիսամյակ	2018-2019 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2017-2018 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2018-2019 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ I կուրս	63	**23,1**	85	+22	+61,9
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /ՄՖԴ/ II կուրս	-	**55,6**	-	-	-
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ I կուրս	100	**66,7**	67	-33	+0,3
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ /ՄՀՀ/II կուրս	-	**50**	-	-	-
Տնտեսագիտություն I կուրս	25	**66,7**	100	+75	+33,3
Տնտեսագիտություն II կուրս /ՄՏ/	-	**57,1**	-	-	-

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսում առաջադիմությունը ինչպես նախորդ տարվա երկրորդ կիսամյակի, այնպես էլ հաշվետու տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է համապատասխանաբար 22 և 61,9%-ով:

«Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/» բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսում առաջադիմությունը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 33%-ով, իսկ հաշվետու տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 0,3%-ով:

«Տնտեսագիտություն» բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսում առաջադիմությունը աճել է համապատասխանաբար 75%-ով և 33,3%-ով:

Ֆակուլտետում ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն, հեռացում): Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի 47 ուսանողներ ստացել են նկատողություն, իսկ 6 ուսանող՝ խիստ նկատողություն:

Անվճար տեղերում սովորող ուսանողները դրսևորում են բարձր առաջադիմություն՝ ձգտելով պահպանել իրենց կարգավիճակը: Ֆակուլտետի 27 ուսանող բակալավրիատից և 13 ուսանող մագիստրատուրայից սովորում են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ:

Անվճար տեղերի առկայությունը բակալավրիատում և մագիստրատուրայում խթանում է ուսանողների ակտիվությունը և նպաստում ուսման որակի բարձրացմանը, իսկ մրցակցությունը ուսանողներին մղում է առաջընթացի:

Համալսարանի ռեկտորատը, դեկանատը մշտապես մտահոգվում են ուսանողների սոցիալական խնդիրներով և միջոցներ են ձեռնարկում նրանց նյութապես աջակցելու համար: Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները օգտվում են ներքոհիշյալ հովանավոր կազմակերպությունների կրթաթոշակներից.

Տնտեսագիտական ֆակուլտետի կրթաթոշակառու ուսանողների թիվը

Հովանավոր կազմակերպությունը	Ուսանողների թիվը
«Հրայր և Աննա Հովնանյաններ» բարեգործական հիմնադրամ	12
ԳՊՀ կողմից կատարված ուսման վարձի զեղչեր	11
Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	10
Ընտանիքի անապահովության «Փարոս» համակարգում ընդգրկված ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում պետբյուջեից	9
Հայ կրթական հիմնարկություն	3
Հայ երիտասարդական հիմնադրամ	1
Ընդամենը	46

3. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ

2017թ. «Ֆինանսներ» մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի 30 շրջանավարտներից աշխատում են 14-ը, որոնցից 12-ը՝ մասնագիտությամբ: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ 2017թվականին բակալավրիատի շրջանավարտներ չեն եղել, սակայն ԳՊՀ մագիստրատուրա այլ բուհերից ընդունված 3 ուսանողներից 2-ը աշխատում են մասնագիտությամբ: «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ 16 շրջանավարտներից 4-ը աշխատում են, որոնցից 3-ը՝ մասնագիտությամբ:

2018թ. «Ֆինանսներ» մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի 37 շրջանավարտներից աշխատում են 23-ը, որոնցից 18-ը՝ մասնագիտությամբ: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով 12 շրջանավարտներից աշխատում են 5-ը, որոնցից 4-ը՝ մասնագիտությամբ: «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ 13 շրջանավարտներից 6-ը աշխատում են, որոնցից 4-ը՝ մասնագիտությամբ: 2018թ. շրջանավարտների 55 տոկոսը աշխատում է, նրանցից 76 տոկոսը՝ մասնագիտությամբ:

Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Շրջանավարտներն ըստ մասնագիտությունների	**«Ֆինանսներ»**		**«Հաշվապահական հաշվառում»**		**«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում»**	
	2017**թ**.	2018**թ**.	2017**թ**.	2018**թ**.	2017**թ**.	2018**թ**.
Բակալավրիատի շրջանավարտ	24	29	-	9	13	10
Ընդունվել են մագիստրատուրա	13	15	3	2	8	6
Մագիստրատուրայի շրջանավարտ	6	8	-	3	3	3
Նրանցից աշխատում են /մասնագիտությամբ/	14/12/	23/18/	2/2/	5/4/	4/3/	6/4/

Ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են շրջանավարտների գիտելիքներից և կարողություններից գործատուների բավարարվածության վերաբերյալ հարցումներ, որոնց արդյունքները քննարկվում են ֆակուլտետի խորհրդում, իսկ հետագա անելիքները ձևակերպվում են գործողությունների ծրագրում:

Տնտեսագիտական ֆակուլտետի արդյունավետ գործունեությանը կնպաստի նաև շրջանավարտների միավորում ստեղծելը, որի անդամների հաջողության պատմությունները կներկայացվեն ֆակուլտետի ուսանողներին:

Տնտեսագիտական ֆակուլտետը տարեցտարի արդիականացնում է կրթական տեխնոլոգիաներն ու մեթոդները, ապահովում փոխներգործուն ուսուցում:

Տնտեսագիտական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հայեցակարգային խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.

1.Դիմորդների ներգրավումը հայեցակարգային խնդիր է, որից ելնելով՝ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատը, ամբիոնները յուրաքանչյուր տարի մասնագիտական կողմնորոշման աշխատանք են իրականացնում՝ դպրոցի շրջանավարտներին ԳՊՀ դիմորդների կազմում ընգրկելու համար: Այդ նպատակով տնտեսագիտական ֆակուլտետը կազմակերպել է այցելություններ մարզի դպրոցներ և քոլեջներ: Դպրոցի շրջանավարտների շրջանում զրույցներ են անցկացվել տնտեսագիտական թեմաներով և տնտեսագետի մասնագիտության կարևորության ու արդիականության վերաբերյալ: Կազմակերպվել են նաև աշակերտների այցելություններ համալսարան՝ ծանոթանալու և միջոցառումների մասնակցելու նպատակով:

2. Կրթության որակի բարձրացման և արդյունավետ ուսուցման ապահովման հայեցակարգային խնդրի իրականացման գործողությունները և դրանց կատարման ցուցիչները ներկայացված են հաշվետվության «Որակի ապահովման գործընթացը» բաժնում:

3.ՄԿԾ-ների մասնագրերի արդի միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով.

- լրամշակվել են տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը, որտեղ նախատեսվել են ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու համար տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդներ,
- ուսումնասիրություն է անցկացվել ՄԿԾ-ների վերջնարդյունքների ՈԱՇ-ի հետ համապատասխանության վերաբերյալ՝ ուսումնառություն-դասավանդում-գնահատում գործընթացի մշտադիտարկմամբ:

4. Առարկայական ծրագրերի, մասնագիտական կրթական ծրագրերի ելքային արդյունքների՝ գործատուների պահանջներին համապատասխանեցման և արդականացման հայեցակարգային կետի պահանջներով նախատեսված ցուցիչը կատարվել է, այն է՝ 3-րդ կուրսերի առարկայական ծրագրերում նախատեսել էինք կատարել ուսումնասիրություն և վերլուծություն շահակիցների հետ:

5. Շրջանավարտների գիտելիքների համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին և գործատուների ակնկալիքներին գտնվում է ֆակուլտետի մշտական ուշադրության կենտրոնում: Այստեղ գործողությունների ծրագրի ցուցիչը կատարվել է 50-100%-ով:

6. Հայեցակարգում նախատեսված էր դասավանդման արդիական մեթոդների և այլ նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառումը, որի արդյունավետության ցուցիչը վերլուծել ենք ըստ ուսանողների բավարարվածության վերաբերյալ անցկացված հարցումների 2- 4-րդ կուրսերում:

7.Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման և հետազոտական հմտությունների զարգացման ուղղությամբ շնորհիվ ԵՄ «REFINE» ծրագրի, 2018թ. 2-րդ կիսամյակում մշակվեց «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ծրագիրը, որի մեթոդաբանությամբ նախատեսում ենք մշակել նաև մյուս մասնագիտությունների ՄԿԾ-ները: Կիրառվեց մագիստրոսական թեզի 2 ղեկավար ունենալու պրակտիկան:

8. Միջազգային շարժունության ծրագրերին ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցության ապահովման հայեցակարգային պահանջի համաձայն՝ տնտեսագիտական ֆակուլտետի 8 դասախոսներ անցել են վերապատրաստում Ամստերդամի կիրառական գիտությունների և Նիցցայի Սոֆիա Անտիպոլիս համալսարաններում: Արդյունավետության ցուցիչը դասախոսների վերապատրաստման մասով աճ է արձանագրել, իսկ ուսանողներինը մնացել է նույնը՝ 5:

9. Ուսումնական և արտադրական պրակտիկաների արդյունավետության բարձրացման հայեցակարգային նպատակը իրականացվել է հետևյալ կերպ. արտադրական պրակտիկայի ծրագիրը վերանայել ենք 50%-ով, 100%-ով կատարել ենք նոր պրակտիկայի վայրի պայմանագրերի կնքման և հարցումների անցկացման պահանջները:

10. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի բարելավումները կատարվել են՝ ելնելով ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կանոնակարգի պահանջներից:

11.Տնտեսագիտական ֆակուլտետի ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նրանց աշխատանքը զուգորդում ենք դասախոսների, ֆակուլտետի վարչական աշխատողների գործունեության հետ՝ կարևորելով ուսանողների շահերը, կազմակերպելով բազմաթիվ ուսուցողական միջոցառումներ:

12.ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «learn.gsu» համակարգի կիրառման արդյունավետության բարձրացումը մշտական հայեցակարգային խնդիր է և այն իրականացվում է: Արդյունքում՝ կատարվել է բոլոր առարկաների գծով ռեսուրսների 20% համալրում:

13.Կարևորվել է տնտեսագիտական ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում գերակա գիտական ուղղությունների հստակեցումը, Գեղարքունիքի մարզի տնտեսական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրումը:

14.Դրամաշնորհային ծրագրերին հայտ ներկայացնելու և ծրագրեր իրականացնելու ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարվում:

15. Ասպիրանտական կրթության կազմակերպումը իրականացնում ենք ԳՊՀ համապատասխան կանոնակարգի համաձայն, ինչպես նաև, ելնելով հայաստանյան և արտասահմանյան բուհերի փորձից, օգտվում ենք ԵՄ «Արարատ» ծրագրի դրույթներից:

Ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքներում լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների սոցիալական կարիքների բացահայտմանը և նրանց աջակցությանը: Թարմացվել են ուսանողների էլեկտրոնային տվյալները: Իրականացվել են ներֆակուլտետային տարաբնույթ միջոցառումներ, որոնք նպաստում են ուսանողների ինտելեկտուալ, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական զարգացմանը: Սովորողների հայրենասիրական, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակությանը մեծապես նպաստում են կազմակերպված միջոցառումները, որոնց թիվը աճել է 10%-ով:

Տնտեսագիտական ֆակուլտետի վարչական աշխատակիցների և ուսանողական ինքնակառավարման մարմինների /ՈՒԽ-ը, ՈՒԳԸ/ կապերի ամրապնդումը հանգեցնում է վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացմանը:

4. **Կրթական ծրագրի զարգացումն ու փոփոխությունները, դասավանդման և գնահատման մեթոդները**

Հաշվետու ժամանակաշրջանում լրամշակվել են ՄԿԾ-ները, որտեղ ներառվել են ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդներ:

Ուսումնառության գործընթացի բարելավման նպատակով կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Սովորողների գիտելիքների գնահատման «Examination GSU» համակարգի միջոցով քննությունների անցկացման թեստային համակարգում ներառվել են ևս երկու դասընթացներ՝ «Ֆինանսական իրավունք» և «Հարկեր և հարկային քաղաքականություն»: Առցանց համակարգն հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել ուսանողների գիտելիքները, ուսանողների մոտ զարգացնել պատասխանատվությունը ուսման արդյունքների հանդեպ:
- Դասավանդման ընթացքում կիրառվել են ժամանակակից առցանց մեթոդներ, ինչպիսիք են «www.linolit.com», «www.mindmup.com» համակարգերը, որոնց կիրառման նպատակն է դասապրոցեսն ավելի նպատակային և արդյունավետ դարձնելը: Առցանց ռեսուրսների համակարգը հնարավորություն է տալիս ներկայացված նյութի շրջանակներում կազմակերպել գործնական քննարկում, որը նպաստում է ստացված գիտելիքների ամրապնդմանը: Առցանց համակարգերից «www.linolit.com» համակարգը հնարավորություն է տալիս քննարկումներ կազմակերպել և կարծիքներ փոխանակել դասաժամի ընթացքում: Արդյունքում դասաժամը դառնում է արդյունավետ, կառուցողական և հետաքրքիր:
- «Մարքեթինգի հիմունքներ», «Տնտեսական գործունեության պլանավորում» առարկաների դասավանդման ժամանակ օգտագործվել է «Գիտելիքահեն տնտեսության կառուցում ձեռնարկությունների ձևավորման ճանապարհով» մեթոդոլոգիայի գործիքակազմը: Կիրառական գիտելիքների զարգացման համատեքստում բիզնեսի կառավարմանը և անհատական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման նշված մեթոդը հիմնված է ուսանողների կոնկրետ գործողությունների և փորձի վրա: Կիրառվող գործիքակազմը հնարավորություն է տալիս նաև զարգացնել արժեքների վրա հենված ձեռնարկատիրական գործունեության մոտեցումները:

ԵՄ ‹‹ERASMUS+REFINE›› ծրագրի շրջանակներում վերափոխվել են «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության գծով 4 մագիստրոսական առարկայական ծրագրեր, ձևակերպվել են նոր վերջնարդյունքներ, կիրառվել դասընթացների անցկացման նոր մեթոդներ: Առարկայական ծրագրերը լրամշակվել և քննարկվել են եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների (Ամստերդամի կիրառական գիտությունների համալսարան, Կոշիցեի տեխնիկական համալսարան,

Վիեննայի կիրառական գիտությունների համալսարան և Նիցցայի Սոֆիա Անտիպոլիս համալսարան) մասնագետների հետ համատեղ աշխատանքի արդյունքում:

5.**Ուսումնագիտական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները**

Արդի ժամանակաշրջանում հնարավոր չէ որոշակի գործողություն ծավալել առանց համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների:

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են բուհի ամենամյա 21-րդ գիտաժողովին՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակին:

Ֆակուլտետն ունի կայուն պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որն իրականացնում է որակյալ գիտամանկավարժական գործունեություն: Ֆակուլտետի ամբիոններում դասավանդում են 31 դասախոսներ, այդ թվում՝ 3 դոկտոր և 14 թեկնածու:

ԳՊՀ-ն՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, կրթական ծրագրերն իրացնում է՝ ունենալով որոշակի նյութատեխնիկական բազա:

ԳՊՀ-ն ունի իր կայքէջը, համակարգչային լսարաններ, էլեկտրոնային գրադարան, գրադարան, էլեկտրոնային ուսուցման համակարգ, որոնք մատչելի են և նպաստում են արդյունավետ ուսումնառությանը:

6.**Որակի ապահովման գործընթացը**

Կրթական համակարգում որակի ապահովումն ունի իր առանձնահատկությունները, որի դերակատարները՝ դասախոսները և ուսանողները, պետք է կիրառեն ժամանակի պահանջներին համապատասխանող գործիքներ:

Այդ գործիքների մի մասը գտնվում են կրթական համակարգից դուրս, մյուս մասը՝ կրթական համակարգի ներսում: Կրթական վերջնարդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է երկուսն էլ հաշվի առնել: Օրինակ՝ համակարգի ներսում է գտնվում դասաժամը գրավիչ դարձնելու գործը, կրթության և հետազոտության, տեսության և պրակտիկայի կապերը կարևորելը:

Կրթական համակարգից դուրս այն վերաբերում է արտաքին շահառուների և գործատուների հետ կապերի ամրապնդմանը և նրանց մասնագիտական առաջարկությունները ուսումնական գործընթացում կիրառելը:

Որակյալ կադրերի պատրաստման համար կարևոր գործոն է դասախոսների կողմից ուսանողներին ինքնուրույն աշխատանքին մղելը՝ նրանց ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը: Նախատեսում ենք շարունակել հարցաթերթիկների միջոցով ուսանողի «SWOT» վերլուծություն կատարելու պրակտիկան, որը կնպաստի սեփական առաջնահերթությունների որոշմանն ու կենսագործմանը:

Այդ գործընթացի իրականացմանը նպաստում են մշտադիտարկումը, դասախոսների և ուսանողների շրջանում անցկացված հարցումների վերլուծությունը:

Ուսանողների կրթական կարիքների բարելավմանը նպաստում են նաև ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցումների արդյունքներով ֆակուլտետի վերաբերյալ բացահայտված խնդիրների ներկայացումը:

Տնտեսագիտական ֆակուլտետում ուսման որակի բարձրացմանը նպաստում է ակադեմիական առաջադիմությունը խրախուսող կառուցակարգերի հետևողական կիրառումը:

Կարևոր է յուրաքանչյուր ուսանողի միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հետևողական բարձրացումը:

2018-2019 ուստարում ըստ մասնագիտությունների և կուրսերի ձևավորված ՄՈԳ-ը համապատասխան սանդղակով 2017-2018 ուստարվա համեմատությամբ

Մասնագիտություններ, կուրսեր	ուսանողների թիվը	1,7-2,9		3,0-3,5		3,6-4,0	
		ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս
Ֆ 1-ին	-/1	-/-	-/-	-/-	-/-	-/1	-/100
Ֆ 2–րդ	4/13	1/5	25/38	1/3	25/24	2/5	50/38
Ֆ 3–րդ	9/14	2/7	22/50	2/1	22/10	5/6	56/40
Ֆ 4–րդ	11/10	2/3	18/30	2/2	18/20	7/5	64/50
ՀՀ 2–րդ	3/5	1/1	33/20	-/1	-/20	2/3	67/60
ՀՀ 3–րդ	6/6	2/-	33/-	4/3	67/50	-/3	-/50
ՀՀ 4-րդ	12/11	3/1	25/9	2/1	17/9	7/9	58/82
Տ 1-ին	-/2	-/-	-/-	-/1	-/50	-/1	-/50
Տ 2–րդ	3/6	1/1	33.3/17	1/2	33.3/33	1/3	33.3/50
ԶՏԿ 4–րդ	11/10	¼	9/40	3/1	27/10	7/5	64/50

3,6-4,0 ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը աճել է «Ֆինանսներ /ըստ ոլորտի/» մասնագիտության 2-րդ և 3-րդ կուրսերում և «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» բաժնի 2-րդ, 4-րդ և «Տնտեսագիտություն » բաժնի 2-րդ կուրսում: Այն նվազել է «Ֆինանսներ» 4-րդ և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 4-րդ կուրսում: Որոշ կուրսերում աճել է 1,7-2,9 ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը: Անհրաժեշտ է շարունակել աշխատանքները ուսանողների առաջադիմության արդյունքները բարձրացնելու ուղղությամբ:

7. **Համագործակցային կապերը և դրանց կառավարումը**

Տնտեսագիտական ֆակուլտետի ուշադրության կենտրոնում են դպրոցականների մասնագիտական կողմնորոշման խնդիրները, որոնք արդի ժամանակներում պահանջում է նոր մոտեցումներ:

Համալսարան-գործատու կազմակերպություն կապերը դիտվում են որպես ուսումնական և պրակտիկ գործընթացների կարևոր բաղադրիչ, որի իրականացման համար հիմք կարող է հանդիսանալ աշխատաշուկայի վերլուծությունը:

Համագործակցելով «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» հետ՝ «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակներում իրականացվել է աշխատաշուկայի հետազոտություն: Աշխատանքային թիմում ներգրավված են եղել ԳՊՀ ավելի քան 10 ուսանողներ, դասախոսներ և վարչական աշխատակիցներ: Աշխատանքների իրականացման գործընթացում թիմը մասնագիտական աջակցություն է ստացել սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, Գավառի պետական համալսարանի դասախոս Արմեն Սահակյանից: Նախաձեռնությունը նպատակ ուներ բացահայտելու Գավառ քաղաքում գործող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջները՝ մասնագիտությունների և շրջանավարտների

մասնագիտական հմտությունների նկատմամբ: 102 կազմակերպություններում իրականացված գրավոր հարցման արդյունքում պարզվել է, որ վերջիններիս մոտ առավելապես կարևորվում են հետևյալ պահանջները՝

●Մասնագիտական որակներ.

- ✓ ժամանակակից բանկային, հաշվապահական, բյուջետային և այլ ծրագրերի տիրապետում,
- ✓ լեզվական գրագիտության բարձրացում,
- ✓ կամավորական աշխատանքային փորձի կուտակում,
- ✓ ոլորտային օրենքների իմացություն և իրավագիտակցության աստիճանի բարձրացում,
- ✓ աշխատանքային փորձի կուտակման նպատակով գործատուների հետ շփման հնարավորությունների մեծացում, պրակտիկաներին ակտիվ մասնակցություն:

●Անձնային որակներ.

- ✓ թիմում աշխատելու ունակություն,
- ✓ բազմակողմանի զարգացում,
- ✓ բանակցություններ վարելու ունակություն,
- ✓ նախաձեռնողականություն,
- ✓ ռիսկի դիմելու կարողություն:

Նախաձեռնող խումբը բացահայտված տեղեկատվությունը շնորհանդեսի միջոցով ներկայացրեց ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ առաջարկությունները հաշվի առնելու և դասավանդման գործընթացում համապատասխան փոփոխություններ իրականացնելու նպատակով: Տնտեսագիտական ֆակուլտետը խնդիր ունի հետազոտության արդյունքները հաշվի առնել համապատասխան առարկաների ուսումնական ծրագրերը բարելավելիս:

Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ իրականացվել է մագիստրոսական թեզերի թեմաների ընտրություն, որոնք բխում են ՀՀ տնտեսական համակարգի առաջնահերթություններից, հարկային, ֆինանսական, բյուջետային, արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորման սոցիալ-տնտեսական համակարգային խնդիրներին լուծում տալու պահանջներից: Թեմաների ընտրությունից զատ՝ համատեղ մշակվել է նաև թեմատիկ պլան, ինչպես նաև ուսանողներին ցուցաբերվել է աջակցություն՝ մագիստրոսական թեզերի պատրաստման բոլոր փուլերում: Արդյունքում ներկայացված թեզերը արտացոլում էին տնտեսության բնագավառում առկա իրական խնդիրները և բովանդակում դրանց լուծման որոշակի կառուցակարգեր: Այս մասին են վկայում տրված գրախոսական եզրակացությունները, որոնցում շեշտադրվում է վերլուծված թեմաների արդիականությունն ու կարևորությունը:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի բարելավմանը նպաստում են համագործակցային կապերը հայաստանյան բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, մարզպետարանի, համայնքապետարանների, Հայաստանի գործատուների հանրապետական միության, առանձին ձեռնարկությունների հետ՝ որպես գործատու կազմակերպություններ: Նրանց հետ համատեղ քննարկումներում արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվում ծրագրերում փոփոխություններ կատարելիս:

Ֆակուլտետը համագործակցում է համալսարանի մյուս ֆակուլտետների և ստորաբաժանումների հետ: Այդ համագործակցության ակտիվացումը և օպերատիվ կապի ամրապնդումը կնպաստի ֆակուլտետի հայեցակարգային խնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով բուհական կրթության արդիականացման պահանջները և ուսումնամեթոդական փոփոխված բազան՝ անցկացվել է դասախոսների վերապատրաստում:

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 8 դասախոսներ անցել են վերապատրաստում Ամստերդամի կիրառական գիտությունների և Նիցցայի Սոֆիա Անտիպոլիս համալսարաններում: Վերապատրաստման ծրագրում ներառված են եղել թեմաներ՝ հետևյալ մասնագիտական ուղղություններով. «Դիդակտիկա», «Վարկային ռիսկ», «Որակի ապահովման գործընթացներ և մեխանիզմներ», «Կորպորատիվ ֆինանսներ», «Կորպորատիվ կառավարում», «էթիկա և վարքագծային ֆինանսներ», «Եվրամիության ֆինանսական շուկաներ և կառույցներ», «Մանկավարժական նորարարություն և թվային ուսուցում», «Դասավանդում անգլերենով», պրակտիկայի կազմակերպում (Ինթերնշիփ): Վերապատրաստումը հնարավորություն է ընձեռել բացահայտելու ուսուցման նոր մեթոդներ, ուսումնասիրվող թեմաների շրջանակներում ծանոթանալու նոր հասկացությունների և մոտեցումների, վերլուծելու և հասկանալու դրանց արդյունավետությունը և կիրառման կառուցակարգերը: Վերապատրաստմանը մասնակցել են Հայաստանի ևս 2 բուհեր և Մոլդովայի 3 համալսարաններ: Նշված համալսարանների փորձի ներկայացումը ևս համեմատություններ անցկացնելու և երկու երկրներում բարձրագույն կրթությանը, մասնավորապես տնտեսագիտական կրթությանը ներկայացվող պահանջները, համակարգային ընդհանրություններն ու տարբերությունները, կրթական առանձնահատկությունները հասկանալու հնարավորություն է տվել:

Եվրոպական միության «Erasmus+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի դասախոսներ Դավիթ Թորոսյանն ու Գայանե Խաչատրյանը մեկշաբաթյա դասախոսական աշխատանք են կատարել Իսպանիայի Թագավորության Սալամանկայի համալսարանում, որտեղ հանդես են եկել դասախոսություններով ֆինանսական համակարգի, բյուջեի, հարկային բեռի, տնտեսության մեջ զբոսաշրջության կարևորության, տուրիզմ-տնտեսություն կապերի վերաբերյալ:

8. Տնտեսագիտական ֆակուլտետի գործունեության «SWOT» վերլուծություն՝ ըստ որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ
1. Փորձառու դասախոսներ, որոնք նաև պրակտիկ աշխատողներ են տնտեսության տարբեր ոլորտներում՝ բանկեր, ապահովագրական ընկերություններ, բիզնեսին աջակից կառույցներ, միջազգային կազմակերպություններ և այլն: 2. Շուկայի հետազոտություն, արդյունքների վերլուծություն և հաշվառում: 3. Առարկայական ծրագրեր, որտեղ տեսությունը համադրվում է գործնական պարապմունքների հետ, ինչպիսիք են՝ շուկայի հետազոտությունը: 4. Կրթությունը կարևորող ուսանողների մոտիվացիա /բարձր առաջադիմության մղում/: 5. Սերտ համագործակցություն գործատուների միության, հաշվապահական և աուդիտորական ընկերությունների, հասարակական և միջազգային մասնագիտական կազմակերպությունների հետ: 6. Ուսանողների ակտիվ մասնակցություն եվրոպական շարժունության ծրագրերին: 7. Հետևողական աշխատանք որակյալ առարկայական մասնագիտական ծրագրերի մշակման և պահանջվող ստանդարտներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ: Մասնավորապես, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության գծով մագիստրոսական ծրագիրը կազմվել է աշխատաշուկայի հետազոտության, ինչպես նաև շրջանավարտների, ուսանողների, դասախոսների գնահատումների արդյունքում՝ եվրոպական բուհերի չափորոշիչներին համապատասխան: 8. Ֆակուլտետի շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածության բարձր ցուցանիշ: Մագիստրատուրայի շրջանավարտ-ների 80 %-ը աշխատում է իր մասնագիտությամբ: 9. Ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար առկա է նպաստող միջավայր՝ առցանց «learn.gsu» համակարգ, մասնագիտական գրքերով համալրված գրադարան, համակարգչային լսարաններ, ուսանող-դասախոս համագործակցություն լսարանից դուրս՝ էլեկտրոնային կապով:	1. Հետազոտական գործունեության համապատասխանեցում Գեղարքունիքի մարզի զարգացման առանձնահատկություններին: 2. Աշխատաշուկայի վերլուծություն, ուսանող-գործատու կապերի ուժեղացում: 3. Հանրապետությունում գործող ձեռ-նարկությունների հետ նոր պայմանագրերի կնքում, ուսանողների պրակտիկայի հնարավորությունների ընդլայնում: 4. Փորձի փոխանակման հնարավորություն-ների օգտագործում՝ ծրագրերը բարելավելու նպատակով: 5. Հյուր-խոսնակների, մասնագետների հրավիրում: 6. Դպրոց-ամբիոն-դեկանատ կապերի ամրապնդում, մասնագիտական կողմնորոշման նոր մեթոդների կիրառում: 7. ԳՊՀ-ի կողմից նոր համագործակցային պայմանագրերի կնքում: 8. Կրթության որակի բարձրացմանը միտված միջոցների ձեռնարկում: 9. ԵՄ «Erasmus+» և միջազգային ակադեմիական շարժունության այլ ծրագրերի շրջանակում արտերկրում դասախոսների վերապատրաստման և ուսանողների կրթության կազմակերպում:

10. Անվճար կրթություն ստանալու հնարավորություններ՝ պետությունից, անհատ ներդրողներից, հիմնադրամներից և համալսարանից տրամադրվող:	

Թույլ կողմեր	Վտանգներ
1. Հետազոտական հնարավորությունների պակաս: 2. Հրապարակված հոդվածների և գիտաժողովներին մասնակցության ցածր ցուցանիշ: 3. Որոշ դասախոսների կողմից առավելապես տեսական գիտելիքների հաղորդում՝ գործնական առաջադրանքները պակաս կարևորելով: 4. Դասախոսների վերապատրաստման հնարավորությունների պակաս: 5. Լսարանային կահավորանքի, տեխնիկական հնարավորությունների և նոր մասնագիտական գրականության պակաս: 6. Դեռևս ցածր է նոր կրթական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը դասավանդման գործընթացում: 7. Կամընտրական դասընթացների ոչ միշտ նպատակային ընտրություն: 8. Նորագույն տեխնոլոգիաների պակաս՝ աշխատաշուկայի պահանջներից բխող, բանկային, հաշվապահական, բիզնեսի և այլ ոլորտներում: 9. Գործատուների հետ հետադարձ կապերի ամրապնդման խնդիրներ:	1. Ժողովրդագրական բացասական ցուցանիշների, մարզի ազգաբնակչության թվաքանակի նվազում: 2. Բնակչության շրջանում աճող արտագաղթի ցուցանիշներ: 3. Աշխատատեղերի պակաս, գործազրկություն: 4. Մագիստրոսական կրթություն ստանալու մոտիվացիայի անկում: 5. ՓՄՁ ոլորտում հստակ քաղաքականության բացակայություն, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներ:

9.**Ֆակուլտետի շրջանավարտները**.

Ամփոփիչ ատեստավորումը՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունն անցկացվել է 2019թ. մայիս ամսին՝ սահմանված կարգով, հաստատված ժամանակացույցին համապատասխան:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 31 և մագիստրատուրայի 19 ուսանողներ:

Ամփոփիչ ատեստավորմանը բակալավրիատի «Ֆինանսներ» մասնագիտությամբ մասնակցել է 10 ուսանող, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ՝ 11 ուսանող, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ 10 ուսանող: Հաշվետու տարում բակալավրիատի «Ֆինանսներ» բաժինն ավարտեց 10 ուսանող, որոնցից գերազանցությամբ՝ 4 ուսանող:

« Հաշվապահական հաշվառում» բաժինն ավարտեց 11 ուսանող, որոնցից գերազանցությամբ՝ 8 ուսանող:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժինն ավարտեց 10 ուսանող, 4-ը՝ գերազանցությամբ:

Մագիստրատուրան ավարտել են 19 մագիստրոսներ, այդ թվում՝ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ՝ 10 ուսանող, որոնցից 4-ը գերազանցությամբ, «Հաշվապահական հաշվառում /ըստ ոլորտի/ » մասնագիտությամբ՝ 2 ուսանող, որոնցից 1-ը՝ գերազանցությամբ, «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ՝ 7 ուսանող, որոնցից 4-ը գերազանցությամբ:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ /բակալավր/	Ավարտական աշխատանք	10	3	1	2					3	1	
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	10	4		1	2		1		2		
Հաշվապահական հաշվառում /բակալավր/	Ավարտական աշխատանք	11	2	5	2	1					1	
Հաշվապահական հաշվառում /ըստ ոլորտի//մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	3		1		1						1
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /բակալավր/	Ավարտական աշխատանք	10	3	1		1	2			1	2	
Տնտեսագիտություն /մագիստրատուրա /	Մագիստրոսական թեզ	7	3	1			1		1	1		

Հանձնաժողովները բարեխղճորեն կատարեցին իրենց պարտականությունները և հանդես եկան հետագա աշխատանքները կատարելագործելու վերաբերյալ առաջարկություններով:

10.**ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի** 2018-2019 **ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների առաջարկությունների կենսագործման միջոցառումների պլան**

Առաջարկություններ և դիտողություններ	Կուրս	Նպատակ	Գործողություն
		Բակալավրիատ	
1.Հետևել ուսանողների կողմից պրակտիկաների և գործնական պարապմունքների ընթացքում փաստացի հաշվարկների և վերլուծությունների իրականացման հմտությունների ձևավորմանը:	Ֆ ՁՏԿ	Դիպլոմային աշխատանքների թեմայի ուսումնասիրությունը կատարել պրակտիկաների վայր հանդիսացող կազմակերպություններում:	➢ Նախատեսում ենք ուսումնասիրել պրակտիկայի վայրերի ռեսուրսները և հնարավորինս ապահովել թեմայի «համարժեքությունը»: ➢ Դուրս գալ տարածաշրջանի սահմաններից, այդ նպատակով ընդգրկել Երևանում գտնվող ձեռնարկությունները, ընկերությունները:

2.Ավարտական աշխատանքներում խորացնել թեմաների ֆինանսական ուղղվածությունը:	Ֆ ՁՏԿ	Թեմաների ֆինանսական ուղղվածության խորացումը կնպաստի ուսանողի մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը:	Մասնագիտական ամբիոնների կողմից թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների վերանայում, նոր թեմաների ներառում:
3.Ուշադրություն դարձնել գիտական ղեկավարի կողմից ուսանողների հետ տարվող աշխատանքի որակի բարելավման և նոր մեթոդների կիրառման վրա:	Ֆ ՁՏԿ	Գիտական աշխատանքների ղեկավարման նոր մեթոդների կիրառումը կբարելավի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմանը:	Հետևել ղեկավարի կողմից իրականացվող աշխատանքներին:
4.Պահպանել ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները, մասնավորապես շատ չգերազանցել վեջինիս ծավալները:	Ֆ ՁՏԿ	1.Աշխատանքի ծավալի սահմանափակումը հարկավոր է կապել գիտական խնդրի արդյունավետ և լիարժեք բացահայտման հետ: 2.Ձևաչափի պահպանումը կարևոր է նրանով, որ աշխատանքն ունենա տրամաբանական կառուցվածք:	2019-2020 ուստարվա սեպտեմբերի վերջին շաբաթում ավարտական կուրսի ուսանողների համար հրավիրել ենք գիտագործնական սեմինար՝ ավարտական աշխատանքի նախապատարաստման ընթացքը և հիմնական սկզբունքները պարզաբանելու նպատակով: Դասախոսների ուշադրությունը հրավիրել ուսումնառության ընթացքում /կուրսային աշխատանք կատարելիս/ ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորմանը և հմտությունների զարգացմանը:
5.Ցանկալի կլինի ավարտական աշխատանքում արված առաջարկությունները բխեցնել և հիմնավորել կոնկրետ հաշվարկներից:	Ֆ ՁՏԿ	Առանձնացնել տվյալ աշխատանքի էական կողմերին վերաբերող հարցեր: Կազմել ուսումնասիրված խնդիրների ցուցակ և որոշել կարևորները:	➢ Ավարտական աշխատանքը պետք է ենթարկվի ոչ միայն տեսական, այլև պրակտիկ նշանակության: ➢ Նկատվում է գործնական կարևորության պակաս:
6.Ուշադրություն դարձնել, որ գրախոսները հնարավորինս լինեն հաշվապահական հաշվառման և աուդիտի մասնագետներ:	ՀՀ	Իրոք հաշվապահական հաշվառման և ուդիտի գծով ավարտական աշխատանքների և թեզերի գրախոսումը և գնահատումը պահանջում է ընտրել պրակտիկ հմտություններ ունեցող մասնագետների:	Ներգրավել փորձառու մասնագետների, որոնք ունեն համապատասխան աշխատանքի փորձ:
Մագիստրատուրա			
1.Ուշադրություն դարձնել գրախոսությունների մասնագիտական տեղաբաշխման և դրանց նկատմամբ ավելի քննադատական մոտեցումներ ցուցաբերելու հանգամանքի վրա:	ՄՖԴ	Աշխատանքները գրախոսման ներկայացնելիս՝ համագործակցել հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտացված ամբիոնների հետ:	Ամբիոնները, դեկանատը ներգրավեն հանրապետության բուհերում առկա մասնագիտական ամբիոնների ռեսուրսները:
2.Խորացնել մագիստրոսական թեզերի թեմաների ֆինանսական ուղղվածությունը:	ՄՖԴ	Թեմաների ֆինանսական ուղղվածության խորացումը կնպաստի ուսանողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը:	Ամբիոնները վերանայեն թեմաների ցանկը և առաջարկեն նոր թեմաներ:
3.Պահպանել մագիստրոսական	ՄՖԴ,	Աշխատանքի ծավալի	2019-2020 ուստարվա

թեզերին ներկայացվող պահանջները՝ չգերազանցելով վերջինիս ծավալները:	ՄՏ	սահմանափակումը հարկավոր է կապել գիտական խնդրի արդյունավետ և լիարժեք բացահայտման հետ:	սեպտեմբերի վերջին շաբաթում ավարտական կուրսի ուսանողների համար հրավիրել ենք գիտագործնական սեմինար՝ մագիստրոսական թեզի նախապատարաստման ընթացքը և հիմնական սկզբունքները պարզաբանելու նպատակով:
4.Շնորհանդեսները ներկայացնել հնարավորինս հակիրճ՝ դրանցում ներառելով թեզի միայն կարևորագույն հատվածները:	ՄՖԴ, ՄՏ	Բացահայտել ուսանողի կողմից գիտական նյութի իմացությունը, հիմնական բովանդակությունը հակիրճ արտահայտելու կարողությունը:	Կարևորել աշխատանքի կարևոր դրույթները, նորությունները և գործնական նպատակները: 2018-2019 ուստարվա հոկտեմբեր ամսին կազմակերպել խորհրդատվություն՝ շնորհանդես պատրաստելու հմտությունների վերաբերյալ:
5.Մագիստրոսական թեզերում արված առաջարկները կրեն գործնկական բնույթ և բխեցվեն կոնկրետ հաշվարկներից:	ՄՀՀ	Առանձնացնել տվյալ աշխատանքի էական կողմերին վերաբերող հարցերը: Ձևակերպել հիմնական դրույթները, որոշել կարևոր եզրահանգումները, որպեսզի կայանա հիմնավորված պաշտպանություն:	➢ Ավարտական աշխատանքը պետք է ենթարկվի ոչ թե տեսական, այլև պրակտիկ քննության: ➢ Կազմակերպել քննարկումներ պրակտիկ մասնագետների հետ:
6.Ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերում ներկայացված առաջարկությունների վրա, որոնք պետք է լինեն հիմնականում հաշվարկների և վերլուծությունների արդյունք:	ՄՀՀ	Առանձնացնել տվյալ աշխատանքի էական կողմերին վերաբերող հարցերը: Կազմել ուսումնասիրված խնդիրների ցանկը և որոշել կարևորները, ապահովել աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը:	Վերանայել մասնագիտական առարկաների ծրագրերը և դրանցում ավելացնել գործնական հաշվարկներ կատարելուն ուղղված խնդիրները՝ որևէ ֆիրմայի օրինակով ամրապնդելով ուսանողների պրակտիկ հմտությունները:

Միաժամանակ, կարևորում ենք ուսանողների կողմից ավարտական աշխատանքները ներկայացնելու հմտությունների զարգացումը և գիտամեթոդական, տեխնիկական պահանջների կատարումը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2019-2020 ուսումնական տարվա զարգացման

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1.1.ԳՊՀ դիմորդների ներգրավում, աշակերտներին տնտեսագիտական մասնագիտությունների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում, աջակցություն մասնագիտական կողմնորոշման հարցում:

1.2.Կրթության որակի բարձրացում, արդյունավետ ուսուցման և ուսումնառության ապահովում:

1.3. Մասնագիտական կրթական ծրագրերի և դրանցում ներառված առարկայական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին և դրանց արդիականացում:

1.4.Գեղարքունիքի մարզում աշխատաշուկայի ուսումնասիրություն, աշխատաշուկայի պահանջներին և գործատուների ակնկալիքներին կրթական վերջնարդյունքներին հնարավորինս համապատասխանեցում:

1.5.Նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառում, ուսուցման մեթոդների արդյունավետության բարձրացում, եվրոպական կրթական մեթոդների ուսումնասիրում և մեթոդական զինանոցի հարստացում ու բազմազանեցում:

1.6.Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման գործընթացի բարելավում և մագիստրոսների հետազոտական հմտությունների զարգացում:

1.7.Միջազգային շարժունության ծրագրերին ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցության ապահովում:

1.8. Ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման արդյունավետության բարձրացում:

1.9.Ամփոփիչ ատեստավորման գործընթացի բարելավում, սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների և մասնագիտական կարողությունների օբյեկտիվ գնահատում:

1.10.Տնտեսագիտական ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների, Գեղարքունիքի տնտեսական զարգացման առանձնակատկությունների հաշվառմամբ:

1.11. Ֆակուլտետի դասախոսների խրախուսում՝ դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու նպատակով:

1.12.Ասպիրանտական որակյալ կրթության ապահովում:

2.ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2.1.Ֆակուլտետի ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի և հետ տարվող աշխատանքների շարունակական բարելավում և դրանց արդյունավետության բարձրացում:

2.2. Ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, թղթային և էլեկտրոնային անձնական գործերի կազմում, սոցիալական օժանդակության հասցեագրված ծրագրերի իրականացում:

2.3.Ուսանողների կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումների, ինտելեկտուալ մրցույթների, գիտելիքի արժևորմանը միտված ծրագրերի իրականացում:

2.4.Սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության ապահովում:

2.5. Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:

3.ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

3.1.Փորձառու և սկսնակ դասախոսների համագործակցության ապահովում, գիտական աստիճան չունեցող երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, պրոֆեսորադասախոսական կազմի համալրում փորձառու մասնագետներով, երիտասարդ կադրերով:

3.2.Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական բարելավում:

3.3. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների կատարման և գիտաժողովներին մասնակցության խրախուսում:

4.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

4.1. Ֆակուլտետի շրջանավարտների հետ հետադարձ կապի պահպանում, նրանց տվյալների էլեկտրոնային բազայի շարունակական համալրում, շրջանավարտների միության ստեղծում:
4.2.Հանրապետության տնտեսագիտական հաստատությունների և ընկերությունների հետ ակտիվ համագործակցության և փորձի փոխանակման ապահովում, փոխըմբռնման հուշագրերի կնքում ու իրականացում:
4.3.Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ կապերի շարունակական բարելավում, համատեղ ծրագրերի իրականացում:
4.4.Համալսարան–դպրոց կապերի ապահովում և ընդլայնում: Աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող փոխադարձ հանդիպումների և մասնագիտական կողմնորոշմանը միտված տարաբնույթ միջոցառումների կազմակերպում:

5.ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

5.1. Գործատուների ներգրավում կրթական ծրագրերի մշակման, դրանց փորձաքննության իրականացման և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացներում:
5.2.Գործատուների կարիքների բացահայտման և արդյունքների վերլուծության ուղղությամբ մշտադիտարկման իրականացում:
5.3.Տնտեսվարող սուբյեկտների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում, խորհրդակցությունների, քննարկումների, «կլոր սեղանների» անցկացում՝ կրթության որակի բարձրացման, մրցունակ մասնագետների պատրաստման նպատակով:

6.ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

6.1.ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառում:
6.2.ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների պահպանում և իրագործում:
6.3.ԳՊՀ էթիկայի կանոնների, բարեվարքության նորմերի պահպանում:

Սամվել Ամիրխանյան՝
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՔՆՆԱՀՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	1	-	1	100
2-րդ	12	5	4	41.7
3-րդ	14	-	4	57.1
4-րդ	10	-	3	70.0
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին	-	-	-	-
2-րդ	5	-	2	100
3-րդ	6	-	1	83.3
4-րդ	10	-	1	50.0
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	1	100
2-րդ	5	-	3	80
3-րդ	-	-	-	-
4-րդ	10	1	2	70.0
Ընդամենը	75	6	22	65.3
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	13	-	2	23.1
2-րդ	9	-	3	55.6
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	3	-	1	66.7
2-րդ	2	-	-	33.3
Տնտեսագիտություն				
1-ին	3	-	1	66.7
2-րդ	7	-	4	57.1
Ընդամենը	37	-	11	45.9

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՁԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	1	-	1	100
2-րդ	13	-	3	38.5
3-րդ	13	-	3	69.2
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին	-	-	-	-
2-րդ	5	1	2	60.0
3-րդ	6	-	-	66.7
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	1	100
2-րդ	5	-	1	80.0
3-րդ	-	-	-	-
Ընդամենը	45	1	11	62.2
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	13	-	4	85.0
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	3	-	2	67.0
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	1	100
Ընդամենը	18	-	7	83

2018/2019 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական ձեռնարկ	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	3	-	12	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ ***Զաքոյան Հրաչյա Սամվելի,***
տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հերգնյան Մարիամ Նորիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. **Խաչատրյան Հակոբ Հայկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Խաչատրյան Գայանե Արտիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Հարությունյան Հարություն Սարգսի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
5. **Մուրադյան Գուրգեն Գևորգի** - ասիստենտ
6. **Բագոյան Սոնա Սահակի** - ասիստենտ
7. **Մարտիրոսյան Ռշտուն Հովակիմի** - դասախոս
8. **Հովեյան Աստղիկ Գագիկի** - դասախոս
9. **Քալոյան Մանվել Խաչիկի** - դասախոս
10. **Բաղինյան Արա Պավելի** – դասախոս
11. **Թադևոսյան Նարինե Հակոբի –** դասախոս
12. **Ավետիսյան Աստղիկ Սիմոնի** - դասախոս
13. **Ասատրյան Ռուզաննա Կարապետի –** դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Սահակյան Արմեն Կոլյայի** - տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Սուքիասյան Սերգեյ Սպարտակի** - տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
3. **Նալչաջյան Վահրամ Թորգոմի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Բաղդասարյան Արեգ Մերուժանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. **Ղազարյան Արմեն Յուրիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. **Թորոսյան Դավիթ Լևոնի** – դասախոս
7. **Գևորգյան Կորյուն Սեդրակի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունները ՀՀ- ում:
2. Տեղական և տարածքային տնտեսական զարգացման հիմնախնդիրներ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական ձեռնարկ	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	6	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Багдасарян А.М.,** Интеграционные возможности и проблемы регулирования рынка капитала в странах, входящих в Евразийский экономический союз // Экономико-правовые и социально-культурные аспекты взаимодействия и сотрудничества в интеграционном обществе. Сборник статей международной научно-практической конференции, Москва, 2019, стр. 15-19
2. Khachatryan H. H., Additive analysis of seasonality of tourism by RA data // Известия НАУА 4, Ереван, 2018
3. **Хачатрян А. А., Вартанян Н. В., Матевосян Л.А**., Экономико -правовые и социально-культурные аспекты взаимодействия и сотрудничества в интеграционном обществе // Сборник статей международной научно-практической конференции, Москва, 2019
4. **Арутюнян А. С., Хачатрян Г.,** Проблемы реализации с/х продукции в РА // Глобализация и иновационные тенденции развития экономики: Международная конференция §Кибернетическое управление экономическими обьектами в условиях глобализации¦, Винницкий национальный аграрный университет, Украина 2018 г.
5. **Арутюнян А. С., Восканян А. Е., Мнацаканян К. П.,. Казарян М. В.,** Возможности формирования и развития сельскохозяйственных маркетинговых кооперативов в РА // Proceedings of the XV International Scientific and Practical Conference Social and Economic Aspects of Education in Modern Society, RS Global, Warsaw, Poland, July 25, 2019, стр. 20-24
6. **Հարությունյան Հ. Ս**., **Փահլավունի Ա**., Տարածքային սոցիալ-տնտեսական ռեսուրսների մեթոդոլոգիական գնահատման հարցերը և մոտեցումները // «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» գիտական հանդես # 3, Երևան, հուլիս-սեպտեմբեր 2019թ., էջ 305-315

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ղուլոյան Հակոբ Մելսիկի
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ամիրխանյան Սամվել Գրիգորի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, *ԳՊՀ պրոֆեսոր*
2. **Մարգարյան Հասմիկ Անդրանիկի** - ասիստենտ
3. **Քոչարյան Գևորգ Արմենի** - դասախոս
4. **Հակոբյան Անահիտ Ալեքսանի** - դասախոս
5. **Ղաջոյան Կարինե Համլետի** - դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Արմեն Աշմատի**- տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
2. **Այրումյան Իրինա Գագիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Վալերի Հովհաննեսի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Մարկոսյան Սևակ Մեսրոպի** - տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործման հիմնախնդիրները:
2.Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:
3.Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	3	-	6	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Ա. Ա.**, Տրանսֆերային գնագոյացման արդյունքների հաշվետվողականության էվոլյուցիան // «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, N 1 (2), Երևան, 2019թ., էջ 134-140
2. **Հակոբյան Ա. Ա.**, **Մեջլումյան Ա.**, Կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման հիմնախնդիրները // Եվրոպական համալսարան՝ գիտական հոդվածների ժողովածու, N 10 (01), Երևան, 2019թ., էջ 110-123
3. **Հակոբյան Ա. Ա.**, Տրանսֆերային գնագոյացման բնագավառում կառավարչական հաշվառման գործառույթները // «Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական հանդես, N 1 (3), ՀՈՒՄԿ, Երևան, 2019թ., էջ 142-152
4. **Հակոբյան Ա. Ա.**, Տրանսֆերային գնագոյացման շարժառիթները և դրսևորումները հարկային ոլորտում // «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», N2, Երևան, 2019թ., էջ 36-45
5. **Առաքելյան Վ. Հ.**, **Բաբայան Հ. Հ.**, **Ղուկասյան Լ. Մ.**, Հաշվառման կազմակերպումը փոքր բիզնեսում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2018, 96 էջ
6. **Առաքելյան Վ. Հ.**, **Բաբայան Հ. Հ.**, **Սուքիասյան Հ. Հ.**, **Սիմոնյան Մ. Ժ.**, Հաշվապահական հաշվառման հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2019, 96 էջ
7. **Առաքելյան Վ. Հ.**, **Բաբայան Հ. Հ.**, **Սուքիասյան Հ. Հ.**, **Սիմոնյան Մ. Ժ.**, Հարկման հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2019, 164 էջ
8. **Հակոբյան Ա. Ա.**, Հաշվառման մի շարք հիմնահարցեր արտասահմանյան երկրներում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019թ., էջ 178-186
9. **Ղաջոյան Կ. Հ.**, Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնախնդիրները հաշվապահական հաշվառման մեջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 6 (21), 2019թ., էջ 187-192

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատասխանատու՝ ***Կուրուզյան Նելլի Ալբերտի,***
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.01.6	*Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*	Մանկավարժության բակալավր
	011401.00.6 **Մասնագիտական *մանկավարժություն***	
011401.01.6	*Կենսաբանություն*	Մանկավարժության բակալավր
011401.03.6	*Աշխարհագրություն*	Մանկավարժության բակալավր
011401.18.6	*Պատմություն*	Մանկավարժության բակալավր
011401.19.6	*Հայոց լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
011401.20.6	*Ռուսաց* լեզու *և գրականություն*	Մանկավարժության բակալավր
	041101.00.6 ***Հաշվապահական հաշվառում և հարկում***	
041101.01.6	*Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/*	Տնտեսագիտության բակալավր
	042101.00.6 ***Իրավագիտություն***	
042101.01.6	*Իրավագիտություն*	Իրավագիտության բակալավր
	052201.00.6 ***Բնապահպանություն և բնօգտագործում***	
052201.01.6	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի բակալավր
	053101.00.6 ***Քիմիա***	
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
	054201.00.6 ***Աշխարհագրություն***	
054201.02.6	*Քարտեզագրություն և կադաստրային գործ*	Աշխարհագրության բակալավր
	061103.00.6 ***Համակարգչային ճարտարագիտություն***	
061103.01.6	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի բակալավր
	101801.00.6 ***Սերվիս***	
101801.01.6	*Սերվիս*	Սերվիսի բակալավր

ՈՒսանողների թիվը՝ 623
Շրջանավարտների թիվը՝ 101

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019թ. ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2020թ. ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2019 թվականի ուսումնական տարում կրթական գործընթացն իրականացվել է բակալավրիատի 9 մասնագիտությունների գծով:

Տարեսկզբին հեռակա ուսուցման համակարգում սովորողների թիվը կազմում էր 578 (նախորդ ուստարվա նույն ժամանակահատվածում՝ 697): Բուհում ընդունված ներքին կարգապահական կանոնների համաձայն՝ անհարգելի բացակայելու համար 421 ուսանող ստացել է նկատողություն, 127 ուսանող՝ խիստ նկատողություն: Դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով համալսարանից հեռացվել է 149, ժամանակավոր կցագրումից՝ 3 ուսանող, բուհից ազատվել է 3 ուսանող, իսկ համապատասխան հիմքով տրամադրված տարկետման ժամկետը լրանալու պատճառով՝ 2 ուսանող:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ՀՀ բարձրագույն ուսումնական այլ հաստատություններից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 14 ուսանող, իսկ ԳՊՀ-ից այլ բուհ տեղափոխվողներ չեն եղել:

Երկրորդ մասնագիտություն ստանալու համար հեռակա ուսուցման ֆակուլտետ դիմել և սահմանված կարգով ընդունվել է 2 ուսանող, քոլեջն ավարտելուց հետո շարունակական կրթության սկզբունքով՝ 11 ուսանող, ԳՊՀ առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 3 ուսանող, ուսանողական իրավունքները վերականգնել են 76 ուսանող, հեռակա ուսուցման ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 20 ուսանողներ, ֆակուլտետի տարբեր բաժիններ՝ 6 ուսանող, տարկետում տրամադրվել է 16 ուսանողի:

Մասնագիտական կրթական ծրագրերի պատշաճ իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում ևս համալսարանի մասնագիտական աբիոնների կողմից մշտադիտարկման աշխատանքներ են իրականացվել ուսանողների հաճախելիության, կարգապահական, էթիկայի նորմերի պահպանման, առաջին կուրսի ուսանողների՝ ուսումնական գործընթացին ինտեգրման, ուսումնամեթոդական նյութերի՝ ժամանակին տրամադրման, ֆինանսական աջակցման ծրագրերի մասին օպերատիվ իրազեկման և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթների տրամադրման և այլ ուղղություններով: ՀՀ կրթության կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպված ընդունելության քննությունների արդյունքներով համալսարան ընդունվեցին 91 դիմորդ հանրապետության տարբեր մարզերից, Երևան քաղաքից: Ֆակուլտետում ուսանողական համակազմի համալրման մյուս խումբը երկրորդ բարձրագույն, ինչպես նաև շարունակական կրթություն ստացողներն են, որոնց ընդունելությունը կազմակերպվեց սահմանված ժամկետներում, այդ նպատակով ձևավորված հանձնաժողովի որոշման համաձայն: Առաջին կուրս ընդունվածներին, ինչպես նաև այլ ընթացակարգերով ուսանողական իրավունքներ ստացած անձանց համար կազմակերպվեցին բազմազան միջոցառումներ՝ ժողովներ, խորհրդատվություններ,

ուսուցողական սեմինարներ, որոնց ընթացքում համակողմանիորեն ներկայացվել են համալսարանի կրթական գործընթացների կանոնակարգային փաստաթղթերը, ուսուցման, գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգերը, բուհի ենթակառուցվածքների գործունեությունը, համալսարանում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերը, ինչպես նաև նրանց տրամադրվեց էլեկտրոնային ուսուցման համակարգի , էլեկտրոնային գրադարանի մուտքի թույլտվություններ՝ համապատասխան ձևով, պարզաբանվեցին դրանցից օգտվելու տեխնիկական պահանջները:

Հեռակա ուսուցման համակարգում սովորող բոլոր ուսանողների համար ապահովված են եղել համալսարանի ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունները: Կրթական ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ իրականացված անանուն հարցումների արդյունքները աճ են արձանագրել:

Միջոցներ են ձեռնարկվել՝ բարձրացնելու ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետությունը, բացահայտելու ուսանողների կրթական կարիքները, վեր հանելու և համապատասխան լուծումներ տալու նրանց խնդիրներին, խրախուսելու սովորողների ինքնուրույնությունն իրենց կրթական անհատական ծրագիրը կազմելու և ուսմանը վերաբերող այլ հարցերում:

Հաշվետու ուստարում ամփոփիչ ատեստավորման ձևաչափը փոփոխություն կրեց հեռակա ուսուցմամբ սովորողների համար, և բոլոր կրթական ծրագրերի գծով շրջանավարտները ստացան ավարտական աշխատանքներ կատարելու թույլտվություն: Ուսանողներին տրամադրվեց ավարտական աշխատանքների թեմաների ցանկը, և նրանք իրենց հետաքրքրությունների հաշվառմամբ ընտրեցին թեմաներ, որից հետո մանագիտական ամբիոններում նշանակվեցին գիտական ղեկավարները: Շրջանավարտները ցուցաբերեցին հետազոտական աշխատանք կատարելու լավ և բավարար ունակություններ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններում արձանագրվեցին դրական կարծիքներ:

Հստակ և ժամանակին կազմակերպվեցին ուսանողների ավարտական աշխատանքների ղեկավարման գործընթացները, և ամփոփիչ ատեստավորմանը թույլատրված 102 ուսանողներից դրական գնահատական ստացան 101-ը: Ամփոփիչ ատեստավորմանը չներկայացավ 1 ուսանող: 2019թ. բուհն ավարտեց հեռակա ուսուցման բակալավրիատի թվով 98 շրջանավարտ: Նախորդ տարիներին բուհը չավարտած 3 նախկին ուսանողի ևս համալսարանի կողմից սահմանված ժամկետներում տրամադրվեցին ավարտական աշխատանքների թեմաներ: Ընդհանուր թվով՝ 101 շրջանավարտ, այսինքն՝ ուսանողների թվի 99%-ը (2018թ. ուստարում՝ 100%-ը) բուհը ավարտեց՝ ստանալով պետական դիպլոմներ՝ համաեվրոպական նմուշի երկլեզու հավելվածներով:

Գերազանցության դիպլոմ շնորհվեց «Իրավագիտություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հաշվապահական հաշվառում» բաժինների 5 ուսանողի: Շարունակաբար մշակվել են ուսանողների ակադեմիական տեղեկագրերը՝ ըստ կիսամյակների և ուստարիների նրանց արձանագրած ակադեմիական առաջընթացի:

2019թ. ուսումնական տարում իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Էդիկ Հովհաննեսի Զազյանը ԵՄ «ERASMUS+» շարժունության ծրագրի շրջանակում սովորեց արտերկրում՝ Իսպանիայի Թագավորության Սալամանկայի համալսարանում, 5 ամիս տևողությամբ:

Շարունակվել են աշխատանքներն առկա և հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերի բովանդակության համապատասխանեցման ու արդիականացման, ուսումնական պլանների բեռնաթափման, ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացման, կրթական ելքային արդյունքների վերանայման, ակնկալվող արդի մասնագիտական իրազեկությունների սահմանման, աշխատաշուկայի պահանջների հաշվառման ուղղությամբ՝ համադրելով համալսարանի առկա ուսուցման կրթական ծրագրերի, ինչպես նաև հանրապետության առաջատար բուհերի նույնանուն մասնագիտական կրթական ծրագրերի հետ:

Կարևորելով էլեկտրոնային ուսուցման գործիքների կիրառումը հեռակա ուսուցման համակարգում՝ մշտադիտարկվել են ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի «Learn.GSU» առարկայական տիրույթներում տեղակայված ուսումնական նյութերի առկայությունն ու բովանդակությունը, լրամշակվել են դասընթացների կրթական վերջնարդյունքները՝ յուրաքանչյուր թեմայի համար սահմանելով և առարկայական ծրագրերում ամրագրելով համապատասխան վերջնարդյունքներ, քարտեզագրելով ուսուցման, ուսումնառության, գնահատման մեթոդները, ամրագրելով գնահատման նկարագրիչները, դրանք տրամադրելով ուսանողներին:

Ֆակուլտետում հաճախակի անցկացվում են հանձնաժողովային ստուգումներ, ինչպես նաև կիրառվում են փոխգործընկերային գնահատումներ, որոնք օգնում են բացահայտելու գնահատման համակարգում տեղ գտած բացթողումները, ստուգելու գնահատման գործընթացի օբյեկտիվությունը:

Աջակցություն է ցուցաբերվել ուսանողներին՝ ֆինանսական տարբեր ծրագրերում ընդգրկվելու համար, որի արդյունքում «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության միջոցներից օգտվում է 1 ուսանող, «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ծրագրի» միջոցներից՝ 6 ուսանող, «Հրայր և Աննա Հովնանյաններ» բարեգործական հիմնադրամի միջոցներից՝ 7 ուսանող, ընտանիքների սոցիալական անապահովության «Փարոս» համակարգում ընդգրկված 42 ուսանողների՝ ըստ անապահովության միավորների: Սահմանված կարգով պետական բյուջեից տրամադրվել է ֆինանսական աջակցություն, «Հայ երիտասարդական հիմնադրամ»-ի կողմից ֆինանսական աջակցություն են ստացել 4 ուսանողներ իսկ «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից՝ 3: Համալսարանի կողմից ուսման վարձերը զեղչվել են 57 ուսանողի համար: 2019թ. ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 5 ուսանող:

Ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունենում նաև բուհում կազմակերպվող միջոցառումներին: Տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի 1-ին կուրսի ուսանողները մասնակցեցին դեկանատի կողմից կազմակերպված միջոցառմանը, որը կրում էր <<Տիեզերական հավերժություն>> խորագիրը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150- ամյակին: Դպրոց-բուհ համագործակցության շրջանակներում միջոցառմանը հրավիրվել էին բարձր դասարանների աշակերտներ և ուսուցիչներ: Դպրոց-բուհ

համագործակցության շրջանակներում դեկանատի աշխատակիցներն այցելել են ՀՀ Գեղարքունիքի մարզի տարբեր դպրոցներ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողներն ակտիվ մասնակցություն ունեցան <<Քաղաքացու օրվա>> համաքաղաքային միջոցառումներին, այլ ձեռնարկների:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020**թ**. **թվականի ուսումնական տարվա զարգացման**

ԳՊՀ Ռազմավարական ծրագրի նպատակներից ելնելով՝ 2019թ թվականին նախանշվում են ֆակուլտետի զարգացման հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

1. Ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայում, ուսումնական ծրագրերի բեռնաթափում, մասնագիտական կրթամասի դասընթացներին տրվող լսարանայի ժամաքանակի ավելացում:
2. Հեռակա ուսուցման համակարգում դասավանդող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ուսումնական գործընթացում լիարժեք ինտեգրման նպատակով մեթոդական, խորհրդատվական ծրագրերի հետևողական իրականացում, դասալսումների գործընթացի արդյունավետ կատարում:
3. Հեռակա ուսուցման համակարգում իրականացվող կրթական ծրագրերի ուսումնամեթոդական նյութերի, էլեկտրոնային ուսուցման բաղադրիչների արդիականացում, ուսանողների հետազոտական աշխատանքների կարևորում, գործնական հմտությունների զարգացման նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում, անհատական, կուրսային, ավարտական աշխատանքների կատարման կառուցակարգերի բարելավում:
4. Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների՝ կրթական միջավայրից բավարարվածության ուսումնասիրում, կրթաական միջավայրի, ուսուցման ռեսուրսների արդիականացում, նոր լրացուցիչ կրթական ծրագրերի մշակում, դրանց վերաբերյալ ուսանողության շրջանում տեղեկատվության տարածում:
5. Երիտասարդ դասախոսների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում:
6. Սոցիալապես անապահով ուսանողների անձնական տվյալների էլեկտրոնային բազայի շարունակական համալրում:
7. Ակադեմիական շարժունության ծրագրերի վերաբերյալ հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների շրջանում իրազեկվածության աստիճանի բարձրացում,

ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցողների քանակի աճի ապահովում:

8. Ուսանողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության զարգացում, «learn@gsu», էլեկտրոնային ուսուցման համակարգից և «E.Library.GSU.am» էլեկտրոնային գրադարանից, հեռահար ուսուցման այլ ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում, համալսարանում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերին ուսանողների մասնակցության հնարավորության ընձեռում:
9. Ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ստուգման ու գնահատման գործընթացների մշտադիրկում՝ կարևորելով գիտելիքի, կարողությունների և հմտությունների ստուգման տարբերակված մեթոդները:
10. Ֆակուլտետի դեկանատի անձնակազմի գործառույթներրի հստակեցում՝ դրանք համապատասխանեցնելով ֆակուլտետի խնդիրների և նպատակների իրականացմանը հիմնական ուղղություններին:

Նելլի Կուտուզյան՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ԳՊՀ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԱՔՎ) աշխատանքները 2018-2019 ուսումնական տարում կազմակերպվել են՝ ԳՊՀ գործողությունների 2018-2019թթ. պլանում նշված առաջնահերթությունները, ԳՊՀ ԱՔՎ կանոնակարգի դրույթները, ԱՔՎ 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները հաշվի առնելով:

2018-2019 ուսումնական տարում շարունակվել են արդիականացվել և քարտեզագրվել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական բոլոր ծրագրերում ներառված դասընթացների կրթական վերջնարդյունքները, դրանց հասնելու համար կիրառվող ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդները՝ միաժամանակ դրանք համապատասխանեցնելով Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) և Որակավորումների ոլորտային շրջանակի (ՈՈՇ) պահանջներին: 2018-2019 ուսումնական տարում ԱՔՎ-ում վերանայվել են ԳՊՀ դասախոսների կողմից դասավանդվող 520 առարկայական ծրագրերը: Արձանագրվել է, որ դրանցից 267-ը բարելավվել են: Ստուգումների արդյունքում ըստ ամբիոնների պատկերը հետևյալն է.

	Ամբիոն	**Ամբիոնների դասախոսների կողմից դասավանդվող առարկաների ընդհանուր քանակ**	**որից՝** 2018-2019 **ուստարում ԱՔՎ-ի կողմից ստուգված՝ բարելավված առարկայական ծրագրերի քանակ**
1	Հայոց լեզվի և գրականության	68	47
2	Օտար լեզվի և գրականության	85	54
3	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	61	12
4	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատի-կական գիտությունների	63	
5	Իրավագիտության	53	19
6	Հասարակական գիտությունների	57+23	35+23

7	Կառավարման և ֆինանսների	68	32
8	Հաշվապահական հաշվառման	42	13
	Ընդամենը	520	267

Հաշվետու տարում ԱՔՎ-ում վերանայվել են բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվող բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլանները, դրանցից ածանցված աշխատանքային պլանները, ստուգվել են ամբիոնների դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները, անհրաժեշտ ուշադրություն է դարձվել դասատախտակների կազմմանը և ուսումնական գործընթացի՝ լսարանային ֆոնդով ապահովվածությանը, կատարվել է ուսումնական գործընթացի, միջանկյալ և ընթացիկ քննությունների անցկացման վերահսկում, աշխատանքներ են կատարվել լուծարային շրջանը հստակ կազմակերպելու, փոխատեղման արդյունքներն օբյեկտիվ, հասանելի ու թափանցիկ դարձնելու ուղղություններով, կատարվել է ուսումնական գործընթացի փաստաթղթային հիմքերի ապահովում և վերահսկում,ապահովվել է պատշաճ գործավարություն:

Պարբերաբար իրականացվել են ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների, քոլեջների դասախոսների, Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչների, նախակրթական հաստատությունների աշխատակիցների համար վերապատրաստումների ծրագրեր:

Շարունակական կրթության պահանջներից ելնելով՝ 2018-2019 ուսումնական տարում ԱՔՎ-ի կողմից կազմակերպվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու գործընթաց, երկրորդ մասնագիտություն ստացողների ընդունելություն, ինչպես նաև ապահովվել են միջբուհական և ներբուհական տեղափոխությունների կազմակերպում ու վերահսկում:

ԱՔՎ-ի կողմից նախապատրաստվել և հաշվառվել են ԳՊՀ ուսանողների շարժի՝ տարկետման, վերականգման, հեռացման, ազատման, տեղափոխությունների փաստաթղթային հիմքերը:

*2018-2019 **ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ ուսանողների հետևյալ շարժը՝** 2017-2018 **ուսումնական տարվա համեմատությամբ.***

		2017-2018 **ուստարի**	2018-2019 **ուստարի**
1	**Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել**	21	12
2	**ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել**	0	0
3	**Երկրորդ մասնագիտություն ստացողներ**	6	2
4	**Քոլեջից ԳՊՀ են ընդունվել/ուսուցիչներ**	15	15
5	**Ներբուհական տեղափոխություններ**	29	35
	➢ Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	8	3
	➢ Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	11	20
	➢ Ներֆակուլտետային տեղափոխություններ	10	12
6	**Տարկետում են ստացել**	34	18
	➢ առողջական վիճակի պատճառով	2	6
	➢ զինծառայության մեկնելու հիմքով	32	12
7	**ԳՊՀ-ից հեռացվել են**	146	176
8	**ԳՊՀ-ից ազատվել են**	14	8
9	**Վերականգնվել են ԳՊՀ՝**	99	94
	➢ զորացրումից հետո	39	54
	➢ հեռացումից հետո	42	37
	➢ տարկետումից հետո	2	0
	➢ ազատումից հետո	1	0
	➢ ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրվել են նախորդ տարիներին բուհը չավարտած անձինք	15	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԺԸ		364	360

Վարչությունն իր գործառույթների շրջանակներում ապահովել է փաստաթղթային փաթեթների կազմման, զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների ներկայացման գործընթացները:

Կատարվել են ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ. ստուգվել են շրջանավարտների դիպլոմների հավելվածների բոլոր գնահատականները, ապահովվել է դիպլոմների ստացման, բաշխման գործընթացների իրականացումը: Ամփոփվել և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն են ներկայացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները՝ համաձայն սահմանված կարգի:

2018-2019 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 259 դիպլոմ:

2018-2019 ***ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը***

Ֆակուլտետ		***ոչ գերազանցության***	***գերազանցության***	***ընդամենը***
Բանասիրական	Բակալավր	7	9	*16*
	մագիստրոս	2	10	*12*
Բնագիտական	Բակալավր	15	4	*19*
	մագիստրոս	4	3	*7*
Հումանիտար մասնագիտությունների	Բակալավր	14	12	*26*
	մագիստրոս	14	14	28
Տնտեսագիտական	Բակալավր	15	16	*31*
	մագիստրոս	10	9	*19*
ԸՆԴԱՄԵՆԸ	Բակալավր	*51*	*41*	*92*
	մագիստրոս	*30*	*36*	*66*
Հեռակա	Բակալավր	93	5	98
	Դիպլ. մասն.	3	-	*3*
ԸՆԴԱՄԵՆԸ		*177*	*82*	*259*

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն են ներկայացվել «1-ԳՄ›› և «3-ԳՄ›› ձևաչափերով ամենամյա վիճակագրական հաշվետվությունները:

Հաշվետու ուսումնական տարում շարունակվել են ուսանողների տվյալների բազաների լրացման աշխատանքները, որոնց հիման վրա յուրաքանչյուր եռամսյակը մեկ ներկայացվել են համապատասխան հաշվետվություններ:

ԳՊՀ ԱՔՎ-ի 2019-2020 **ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները**.

2019-2020 ուսումնական տարում ԱՔՎ-ն իր գործունեությունը շարունակելու է հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Շարունակել քարտեզագրել ՄԿԾ-ների վերջնարդյունքները՝ ՄԿԾ-ների և դասընթացների վերջնարդյունքներին հասնելու նպատակով, ուսուցման, ուսումնառության և գնահատման ներդրված մեթոդներն ավելի հասանելի և չափելի դարձնելով:
2. Ամբիոններում կազմակերպել սեմինար-քննարկումներ՝ ապահովելով դասախոսների հաջողված փորձի փոխանակում, գնահատման նոր մեթոդների, ուսուցման ժամանակակից գործիքների տարածում, դասալսումների արդյունքների մշտադիտարկում:

3. Շարունակաբար կազմակերպել վերապատրաստումներ՝ ԳՊՀ դասախոսների մասնագիտական որակների բարձրացման նպատակով, միաժամանակ օգտագործելով համալսարանի գիտական ներուժը և բացահայտելով մարզի մասնագիտական տարբեր հանրույթների կրթական կարիքները՝ վերապատրաստման դասընթացներ կազմակերպել նաև գործընկեր կազմակերպությունների աշխատակիցների, մանկավարժների, հաշվապահների, մասնագիտական այլ խմբերի համար:
4. Շարունակել կազմակերպել լրացուցիչ կրթական դասընթացներ համալսարանի ներքին և արտաքին շահակիցների համար:
5. Օգտագործելով համալսարանի գիտական ներուժը՝ ավանդույթ դարձնել նշանավոր անձանց և կարևոր տարեդարձների մասին գիտահանրամատչելի դասախոսությունների կազմակերպումը և համացանցով կամ մարզային հեռուստաալիքով դրանց հեռարձակումը:
6. Օգտագործելով համացանցը և մարզային հեռուստաալիքը՝ ուսանողների միջոցով կազմակերպել ակնարկային հաղորդաշարեր, որոնց միջոցով պարբերաբար կներկայացվեն համալսարանի այն շրջանավարտները, որոնք աշխատանքում լավ արդյունքներ են գրանցել և նրանցից գործատուները գոհ են, կամ այն գործատուները, որոնք որևէ ձևով գործակցել են համալսարանի հետ, և այդ գործակցությունը արդյունավետ է եղել:
7. ԳՊՀ-ն, գործելով տարածաշրջանում, իր դասախոսների, ասպիրանտների ու մագիստրոսների գիտահետազոտական գործունեության ուղղությունները պետք է համապատասխանեցնի մարզի զարգացման հիմնախնդիրներին, որոնք կարող են և պիտի դառնան ԳՊՀ ամբիոնների և միջամբիոնային հետազոտությունների ոչ միայն միջնաժամկետ, այլ նաև երկարաժամկետ ուսումնասիրության ռազմավարական ուղղություններ: Մասնավորապես ամբիոններում գիտական հետազոտությունների համար ուսումնասիրության կարևոր ուղղություններ կարող են լինել տարածաշրջանում գյուղատնտեսության զարգացման ուսումնասիրումը՝ հողերի մելիորացիա, համապատասխան մշակաբույսերի աճեցում, բիզնես նախագծերի և բանկային ոլորտի զարգացմանը նպաստող ուսումնասիրությունները, տարածաշրջանի կենդանական, բուսական, ջրային ռեսուրսների հետազոտությունը, «Սևան» ազգային պարկի հիմնախնդիրները, մարզի պատմաճարտարապետական և պատմամշակութային հուշարձանների քարտեզագրումը և ուսումնասիրությունը, բանահյուսական, բարբառագիտական և ազգագրական հարուստ նյութի գրառումը և ուսումնասիրությունը, զբոսաշրջության զարգացման հեռանկարները՝ կրթական տուրիզմ, էկոտուրզմ, էթնոտուրիզմ, գաստրոտուրիզմ, մշակութային տուրիզմ և այլն:
8. Շարունակել ԳՊՀ-դպրոցներ համագործակցությունը՝ օգտագործելով բոլոր միջոցները. աշակերտական օլիմպիադաներ, փոխայցելություններ, խորհրդատվություններ, դասախոսություններ, բաց դասերի անցկացում, միջոցառումներ և այլն՝ այդ գործընթացներում առավելագույնս ներգրավելով դասխոսների և ուսանողների:
9. Շարունակել համագործակցությունը Հայաստանի Հանրապետության, և մասնավորապես Գեղարքունիքի մարզի կրթադաստիարակչական, մշակութային,

իրավական, բանկային, բիզնես կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, կազմակերպել համատեղ միջոցառումներ, դրանք հանրայնացնել, համալսարանը դարձնել տարածաշրջանում գործարար հանրույթի հանդիպման հարթակ, պարբերաբար հրավիրել և արտաքին շահակիցներին ներկայացնել բուհի կողմից առաջարկվող ծառայությունների փաթեթները և այն խնդիրները, որոնք կարող են իրենց լուծումներն ունենալ շահակիցների հետ համագործակցության արդյունքում, որն էլ կնպաստի ավելի արդյունավետ և փոխշահավետ դարձնել համալսարան-գործատու համագործակցությանը միտված ծրագրերի իրականացումը:

Ալինա Ղարիբյան
ԳՊՀ ակադեմիական
քաղաքականության վարչության պետ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2018-2019 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժինը հետևողական աշխատանքներ է իրականացրել ԳՊՀ որակի ներքին գործընթացների ապահովման, դրանց բարելավման, որակի վերահսկողության կառուցակարգերի կիրառման ուղղությամբ:

Ներդրվել է համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության պլանների, նրանցում ամրագրված ակնկալվող արդյունավետության ցուցիչների ներկայացման, ապա դրանց իրականացման արդյունավետության գնահատման հաշվետվողականության համակարգը: Կառուցվածքային ստորաբաժանումների, մասնագիտական ամբիոնների տարեկան հաշվետվությունները ներկայացվել են Գավառի պետական համալսարանի 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի՝ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունների պլանի իրականացման համատեքստում:

Համալսարանում կրթության որակի վերահսկման գործընթացներին մասնակցում են ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, ներքին և արտաքին շահակիցներ:

Հաշվետու ուստարում իրականացվել են 12 հարցումներ ներքին և արտաքին շահառուների շրջանում, ուսումնասիրվել են կրթական կարիքները, իրականացվել են համապատասխան վերլուծություններ: Հարցումներն անցկացվել են և՝ էլեկտրոնային, և՝ թղթային տարբերակներով: 1-ին կիսամյակում գործարկվել է երկու հարցաթերթիկ, 2-րդ կիսամյակում՝ 10: Հարցումներ են իրականացվել առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողների և շրջանավարտների, 1-ին կուրսեցիների, դասախոսների, գործատուների, աշակերտ-դիմորդների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների, ուսուցիչների շրջանում:

Ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվել են հետևյալ հարցումները՝

Ուսանողների և շրջանավարտների հարցումներ /2018-2019**թթ.**/

Հ/հ	Հարցման տեսակները	Ուսուցման համակարգը	Հարցման մասնակիցների թիվը		Մասնակցության տոկոսը	
			2017/2018	2018/2019	2017/2018	2018/2019
1	Դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման	առկա	278	287	59%	75%
		հեռակա	316	321	53%	52%
2	ԳՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատման	առկա	306	289	63%	75%
		հեռակա	338	341	51%	56%
3	ԳՊՀ-ում ստացած կրթությունից	առկա	117	89	56%	96%

	շրջանավարտների բավարարվածության գնահատման	հեռակա	84	55	63%	54%

Հարցումների արդյունքների վերլուծությունները, ուսանողների և շրջանավարտների կողմից բարձրացված խնդիրներն ու առաջարկությունները ներկայացվել են համապատասխան ֆակուլտետներ, որոնց վերաբերյալ ֆակուլտետների խորհուրդներում, համալսարանի գիտական խորհրդում, ռեկտորատում անցկացվել են քննարկումներ, պարզաբանումներ: Արդյունքները որոշակի դեր են ունեցել ուսումնական ծրագրի և կրթական միջավայրի բարելավմանն ուղղված գործողությունների իրականացման համար:

Դասախոսների և կրթական ծրագրերի ղեկավարների շրջանում իրականացվել են հարցումներ, որոնք միտված են ուսումնական դասընթացների, դասավանդման, ուսումնառության, կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի անընդհատ բարելավմանը:

Տվյալներ դասախոսների և կրթական ծրագրերի ղեկավարների շրջանում իրականացված հարցման վերաբերյալ /2018-2019**թթ.**/

Հ/հ	Հարցման տեսակները	Հարցման մասնակիցների թիվ		Մասնակցության տոկոս	
		2017/2018	2018/2019	2017/2018	2018/2019
1	ԳՊՀ կրթական միջավայրից դասախոսների բավարարվածության գնահատման	72	54	61%	42%
2	Դասախոսը՝ կրթական ծրագրի ղեկավարի գնահատմամբ	79	57	66%	44%
3	Դասախոսը՝ դասախոսի գնահատմամբ	20	34	17%	26%

Բակալավրիատում ամփոփիչ ատեստավորման գործընթացը ավարտական աշխատանքի միջոցով անցկացնելու, պաշտպանության կազմակերպման, գնահատման և ընդհանուր գործընթացի արդյունավետությունը պարզելու վերաբերյալ մշակվել են համապատասխան հարցաթերթիկներ, և իրականացվել են հարցումներ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների, անդամների, ինչպես նաև շրջանավարտների շրջանում (հանձնաժողովների 11 նախագահ և 20 անդամ, 142 շրջանավարտ), կատարվել է արդյունքների վերլուծություն:

ԳՊՀ ֆակուլտետների հետ համատեղ իրականացվել են 37 գործատուների շրջանում շարունակական ուսումնասիրություններ ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական որակների ուժեղ և թույլ կողմերի գնահատման, ԳՊՀ-ի հետ համագործակցության ուղղությունների հստակեցման վերաբերյալ: Ուսումնասիրություն է իրականացվել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների 146 աշակերտ-դիմորդների շրջանում, որոնցից 62-ը՝ 12-րդ դասարանցիներ :

Իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի տարբեր դպրոցներում՝ 73 ուսուցիչների շրջանում, վերապատրաստումների կազմակերպման վերաբերյալ կատարված հարցումների վերլուծություն:

Կազմակերպված 8 վերապատրաստման դասընթացների 255 մասնակիցների շրջանում կատարվել են հարցումներ, իրականացվել հարցումների արդյունքների վերլուծություններ:

Իրականացվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ ՈԱԲ) 2018-2019 ուսումնական տարվա տարեկան ինքնավերլուծություն, ապահովվել են համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների միջնաժամկետ ինքնագնահատման արդյունքների վերլուծության, համապատասխան զեկույցի պատրաստման և հաջորդող բարելավման գործողությունների պլանավորման ու վերահսկման գործընթացները:

Արտաքին կապերի և լրատվության բաժնի հետ համատեղ ՈԱԲ-ը ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների 12-րդ դասարանների աշակերտների շրջանում կազմակերպել է առարկայական օլիմպիադաներ՝ «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից :

Համալսարանում իրականացվող բոլոր գործընթացների որակը գնահատելու և դրա շարունակական բարելավման ընթացքն ապահովելու նպատակով ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ, կատարվել են հարցադրումներ, դիտարկումներ և վերլուծություններ, ներկայացվել են առաջարկություններ:

ՈԱԲ-ի ու արտաքին կապերի և լրատվության բաժնի հետ մշտադիտարկվել են Գավառի պետական համալսարանի և ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների, կազմակերպությունների հետ գործող 147 պայմանագրեր և հուշագրեր:

ՏՏ բաժնի հետ համատեղ իրականացվել է ՈԱԲ-ի էլեկտրոնային հարթակի ստեղծում համալսարանի պաշտոնական կայքում, որտեղ առկա են նաև արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրման համար առանձին բաժիններ:

Արտաքին կապերի և լրատվության, ՏՏ բաժինների հետ համատեղ կատարվել է կարիերայի կենտրոնի էլեկտրոնային հարթակի վերագործարկում, շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազայի հավաքագրում, մուտքագրում, նույն հարթակում գործատուի կողմից աշխատանքի հայտարարության մուտքագրման, հանրության տարբեր շերտերի, շրջանավարտների կողմից աշխատանքի փնտրման համապատասխան հարթակների ստեղծում:

Գավառի պետական համալսարանի ՈԱԲ աշխատակիցները հաշվետու ուսումնական տարում մասնակացել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված պլանային հանդիպումներին և աշխատաժողովներին:

Կրթության որակի ապահովմանը նվիրված միջոցառումներին մասնակցելուց հետո բուհի ներսում ՈԱԲ աշխատակիցների կողմից բուհում կազմակերպվել են համապատասխան թեմաների շուրջ վերապատրաստումներ, քննարկումներ.

1. ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Որակի ապահովման համակարգի բարելավում» թեմայով վերապատրաստման երկփուլ դասընթաց՝ ինստիտուցիոնալ վերահավատարմագրման կամ հավատարմագրման պատրաստվող բուհերի մասնագետների համար /առաջին փուլ՝ 03.04.2019-05.04.2019թ., երկրորդ փուլ՝ 17.04.2019-19.04.2019թ./. նպատակն էր մասնակիցներին անհրաժեշտ մեթոդաբանության տրամադրումը՝ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համար, որի արդյունքում տրվել է Որակի ապահովման աջակցի հավաստագիր:

2. ՈԱԱԿ-ի և Հայ-ռուսական համալսարանի հետ համատեղ կազմակերպված «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով աշխատաժողովին /14.06.2019թ./. նպատակն էր քննարկել որակավորումների արժանահավատ շնորհման խնդիրը, կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման մոդելները, որոնք կապահովեն դասախոսի և ուսանողի մոտիվացվածությունը, կկարևորեն դասախոսի դերը վերջնարդյունքների ապահովման գործընթացում, վեր կհանվեն լավագույն փորձը և կնպաստեն նրա տարածմանը:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2019-2020 **ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները**

ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխան՝ նախատեսվում են ՈԱԲ գործունեության հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. Որակի ապահովման բաժնի կողմից անցկացվող հարցումների հարցաթերթերի լրամշակում, բարելավում:
2. Հարցումների անցկացում արտաքին և ներքին շահակիցների շրջանում, արդյունքների վերլուծություն և դրանց ներկայացում ֆակուլտետներում, ռեկտորատի և գիտխորհրդի նիստերում, առաջարկությունների ներկայացում:
3. ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման աշխատանքների իրականացում՝ համալսարանական և ֆակուլտետային ինքնավերլուծության աշխատանքային խմբերի հետ համագործակցությամբ:
4. Էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկում:
5. ՈԱԲ-ի մասնագետների, ֆակուլտետային պատասխանատուների պարտականությունների ու գործառույթների հստակ իրականացում:

II. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

1. Համալսարանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի արտաքին գնահատման և վերլուծական համադրման (բենչմարքինգի) գործընթացների մշտադիտարկում:

2. Մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխան դասընթացների առարկայական պլանների արտաքին կարծիքների մշտադիտարկում:
3. Ամբիոններում անցկացվող դասալսումների վերլուծությունների մշտադիտարկում:
4. ԳՊՀ 22-րդ /7-րդ/ և 23-րդ /8-րդ/ գիտական հոդվածների ժողովածուների համար գիտական հոդվածների հավաքագրում:

III. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Որակի ապահովման ձեռնարկի լրամշակում:
2. Բուհի էլեկտրոնային գրադարանի (‹‹E.Library.GSU.am››) համալրմանը հետևում:
3. Կրթական միջավայրի վերաբերյալ հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն, համապատասխան առաջարկությունների ներկայացում ռեկտորատին, գիտական խորհրդին:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1. Որակի ապահովման ներբուհական գործընթացներում ուսանողների մասնակցության ակտիվացում:
2. Ուսանողների կարիքների վերհանման և դրանց բավարարման հնարավոր ուղիների վերաբերյալ հարցումների անցկացում, դրանց արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում:
3. Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության անդամների հետ հանդիպումների, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում, առաջարկությունների հաշվառում:

V. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

1. ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի իրականացման 2018-2019 ուսումնական տարվա գործողությունների պլանների մշտադիտարկում համալսարանական և ֆակուլտետային մակարդակներով՝ ըստ պատասխանատուների, պլանավորված և կատարված արդյունավետության գնահատման ցուցիչների, և դրանցից շեղումների ներկայացում:

VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՃԿՈՒՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

1. Շահակիցների շրջանում պարբերաբար և կանոնավոր ուսումնամեթոդական, հետազոտական ռեսուրսների պահանջների ուսումնասիրում, վերլուծությունների կատարում, բարելավմանը միտված առաջարկությունների ներկայացում:

VII. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

1. Համալսարանի կողմից կնքված պայմանագրերի, փոխըմբռնման հուշագրերի գործունեության ժամկետների վերանայում, ժամկետները լրացած և ուժը կորցրած պայմանագրերի վերակնքում, համագործակցության շրջանակներում իրականացվող գործառույթների իրականացմանը նպաստում:
2. Շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազայի շարունակական համալրում:
3. Արտաքին շահակիցների կրթական կարիքների վերհանում, վերլուծություն:

VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1. Համալսարանի իրականացրած հանրային պատասխանատվության ծրագրերի արդյունքների մշտադիտարկում, առաջարկությունների ներկայացում:
2. Շահակիցների շրջանում անանուն հարցումների իրականացում, մատուցվող կրթական ծառայությունների որակից բավարարվածության աստիճանի գնահատում:
3. Հանրության տարբեր շերտերի կրթական կարիքների ուսումնասիրում և սպասելիքներին համապատասխան ծրագրերի իրականացում:

IX. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ անանուն հարցումների իրականացում, արդյունքների ամփոփում:

Շուշան Բաղդոյան, **Մարիամ Նախրատյան**
ԳՊՀ որակի ապահովման բաժնի մասնագետներ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժինը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում իրականացրել է տարաբնույթ տեղեկատվական, ուսուցողական, ճանաչողական ծրագրեր ու կազմակերպել միջոցառումներ, կատարել բուհի գիտահետազոտական, կրթական, ուսումնամեթոդական, դաստիարակչական գործունեության լուսաբանում՝ ապահովելով սերտ համագործակցություն գործընկեր կազմակերպությունների, ներքին ու արտաքին շահակիցների հետ:

✓ Դպրոց-բուհ համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կազմակերպվել են փոխադարձ այցելություններ, համատեղ միջոցառումներ: Բաժնի կողմից հիշյալ հաստատություններ են առաքվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ, ուսումնամեթոդական նյութեր, գրքեր:

✓ Բաժինը շարունակել է համագործակցել ԳՊՀ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների՝ («Ժիրայր Նիշանյան», «Հրայր և Աննա Հովնանյաններ», «Հայ կրթական հիմնարկություն», «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ», «ԱՄՔՈՐ Հայաստան» «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություններ, անհատ բարերարներ) հետ:

✓ Ամենօրյա աշխատանքներ են իրականացվել բուհում սովորող սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանքների երեխա-ուսանողների, հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ ուսանողների հետ: Թարմացվել է վերոնշյալ ուսանողների տվյալների բազան, որի հիման վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են մի շարք կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում,

✓ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ամենամյա ծրագրի շրջանակում բաժինը կազմակերպել է Գավառի պետական համալսարանի ուսանողների՝ հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին Հանքավանի մանկական ճամբարներում որպես ջոկատավարներ աշխատելու գործընթացը:

✓ Կազմակերպել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տարբեր հասարակական կազմակերպությունների, կրթական, մշակութային, երիտասարդական, մարզական և այլ կառույցների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների հետ ԳՊՀ փոխհամագործակցությունը, ապահովել բազմաթիվ համատեղ ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացումը:

✓ Բաժնի կողմից համակարգվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար անցկացված առարկայական օլիմպիադաների կազմակերպչական աշխատանքները:

✓ Կատարվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր», «Ի լրումն» հաղորդաշարերով ԳՊՀ-ին վերաբերող եթեր հեռարձակված բոլոր հայտարարությունների, տեսագրությունների տեղադրում ԳՊՀ համացանցային

պաշտոնական տեսահարթակում:

✓ Համալրվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուն, որում ներառված են հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում լույս տեսած ԳՊՀ-ին վերաբերող տեղեկատվությունը:

✓ Համալրվել է «Հանրային պատասխանատվություն» ալբոմ-ժողովածուն, որում ներառված են ԳՊՀ-ում կայացած հանրային բնույթ կրող միջոցառումների վերաբերյալ նյութեր:

✓ Բաժնի կողմից համակարգվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչների, դաստիարակների համար կազմակերպված տարաբնույթ վերապատրաստումների, աշակերտների համար նախատեսված միջոցառումների կազմակերպչական աշխատանքները, որոնց մասնակցել են շուրջ 600 շահառու:

✓ Հաշվետու ժամանակահատվածում բուհում կայացած բազմաբնույթ վերապատրաստումների, մրցույթների, միջոցառումների համար ըստ պահանջի պատրաստվել են շնորհակալագրեր, հավաստագրեր, պատվոգրեր շուրջ 357 անձի համար:

✓ Հաշվետու ժամանակահատվածում բուհի պաշտոնական կայքում թարմացվել ու տեղադրվել են դասախոսների, ուսանողների տվյալներ, բազմաբնույթ տեղեկատվական նյութեր:

✓ Իրականացվել է ԳՊՀ-ում կայացած միջոցառումների և հիշարժան իրադարձությունների լուսաբանում, լուսանկարում /նկարված լուսանկարներն արխիվացվել են/:

✓ Բաժնի կողմից պատրաստվել են համագործակցության հուշագրեր, հարցաթերթիկներ, տեղեկատվական թերթիկներ և առաքվել դպրոցներ:

✓ Համակարգված աշխատանքային գործունեություն է ծավալել ԳՊՀ ֆակուլտետների, ամբիոնների, ակադեմիական քաղաքականության վարչության, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, զբոսաշրջության կենտրոնի, բուհում գործող ակումբների և այլ ստորաբաժանումների հետ:

✓ Իրականացվել են ԳՊՀ պաշտոնական կայքէջի ամենօրյա թարմացման աշխատանքներ:

✓ Իրականացվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն:

✓ ԳՊՀ ‹‹Դիմագիրք›› (Facebook) սոցիալական ցանցում կատարվել են ադմինիստրատիվ աշխատանքներ, թարմացումներ, պատասխան են տրվել բոլոր հաղորդագրություններին և մեկնաբանություններին:

✓ Պատասխաններ են տրվել ԳՊՀ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին՝ info@gsu.am, infogsu@mail.ru, ուղղված բազմաթիվ նամակներին և հարցումներին:

✓ Հաշվետու տարվա ընթացքում ԳՊՀ պաշտոնական կայքէջում www.gsu.am և ԳՊՀ ֆեյսբուքյան պաշտոնական (https://www.facebook.com/gavarstateuniversity/) էջում բաժնի կողմից պատրաստվել և տեղադրվել է 419 նորություն՝ համապատասխան լուսանկարներով:

✓ Աշխատանքներ են տարվել ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից օգտվող 149 ուսանողի հետ:

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ	
«Ժիրայր Նիշանյան հիմնադրամ» կրթավճար ծրագիր	59
«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն	3
«Հայաստանի երիտասարդական հիմնադրամ»	10
«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն	9
«Հայ կրթական հիմնարկություն»	6
«Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամի կրթաթոշակառուներ	37
«Հայ Ավետարանչական ընկերակցություն»	4
«Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամ	21
ԸՆԴԱՄԵՆԸ՝	149

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	
Տնտեսագիտական ֆակուլտետ	38
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ	34
Բանասիրական ֆակուլտետ	30
Բանգիտական ֆակուլտետ	29
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	18
ԸՆԴԱՄԵՆԸ՝	149

ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԳՊՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործունեության ոլորտները	2017-2018 **ուսումնական տարի**	2018-2019 **ուսումնական տարի**
www.gsu.am	346	419
«info@gsu.am», «infogsu@mail.ru» **էլեկտրոնային փոստի հասցեներին ուղղված նամակների քանակը**	3282	4079
Լուսանակարահանված միջոցառումներ/ արխիվացված լուսանկարների քանակը	11026/480	11834/545
ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր», «Ի լրումն» հաղորդաշարերով ԳՊՀ-ին վերաբերող եթեր հեռարձակված տեսագրություններ	5/38. 7	6/23.58
ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից օգտվող ուսանողների քանակը	177	**149**
Կնքված և վերակնքված հուշագրերի և պայմանագրերի քանակը	25	**21**
Տպված շնորհակալագրերի և հավաստագրերի քանակը		**357**

2019-2020 **ուսումնական տարում ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի զարգացման հիմնական ուղղությունները**

1. ԳՊՀ միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանում:
2. ԳՊՀ-ում միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպման աշխատանքների համակարգում:
3. Օտարերկրյա բուհերի հետ փոխըմբռնման հուշագրերի և գիտակրթական ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքմանն ուղղված աշխատանքների իրականացում:
4. ՀՀ տարբեր հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների, անհատ հովանավորների և ԳՊՀ բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողների միջև փոխադարձ կապերի ապահովում, կրթաթոշակների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման, ներկայացման աշխատանքների համակարգում, սոցիալական տարբեր ծրագրերի վերաբերյալ ուսանողների շրջանում տեղեկատվության տարածում:

5. ԳՊՀ ուսանողների ներգրավում կամավորական աշխատանքներում:

6. Զանգվածային լրատվամիջոցների, ուսումնական հաստատությունների, գործընկեր այլ կազմակերպությունների հետ համագործակցության գործընթացի պլանավորում, կազմակերպում և իրականացում:

7. ԳՊՀ-ում իրականացվող կարևորագույն միջոցառումների, ծրագրերի մասին տեղեկատվության տարածում:

8. Ֆակուլտետների, ամբիոնների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության ապահովում:

9. ԳՊՀ կրթաշնորհառու ուսանողների հետ հանդիպումների կազմակերպում, ուսանողներին մտահոգող հարցերի քննարկում և բարձրաձայնում ԳՊՀ ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում:

10.Համալսարանի արտաքին կապերի համակարգում և զարգացում, հանրային պատասխանատվության ծրագրերի իրականացում, լրատվության օպերատիվ տրամադրում:

11.այլ գործառույթների իրականացում:

Նունե Միրիբյան**, **Սիրանույշ Մկրտչյան
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության
բաժնի մասնագետներ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բաժնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ Մշակվել և ամբողջապես համալրվել են ԳՊՀ կայքի տասից ավելի էջեր:
- ✓ Թարմացվել է կայքի տեղեկատու բաժինը:
- ✓ Մշակվել և համալրվել են կայքի անգլերեն լեզվով շուրջ 15 էջեր:
- ✓ Ինֆորմատիկայի և ֆիկիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի ուսանողների հետ համատեղ ստեղծվել է «inform.gsu.am» կայքէջը:
- ✓ Շարունակական սպասարկման և ինֆորմացիոն համալրման է եթարկվել «international.gsu.am» կայքէջը:
- ✓ Կազմակերպվել են համացանցի հասանելիության, ցանցի կառավարման, սերվերային կենտրոնի սպասարկման և մշտադիտարկման աշխատանքները:
- ✓ Կատարվել են համակարգչային լսարանների արդիականացման աշխատանքներ:
- ✓ Կատարվել են ԳՊՀ պաշտոնական կայքում հայտարարությունների, էջերի օպերատիվ թարմացումներ, տեղադրվել են դասացուցակները, պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցերը, «Գնումներ» էջում պարբերաբար հրապարակվել են գնումների վերաբերյալ հայտարարությունները, էլեկտրոնային հարցումների հղումները:
- ✓ Կազմակերպվել են ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի էլեկտրոնային էկրանին ցուցադրվող նյութերի համակարգչային մշակումներ և թարմացումներ, ապահովվել է պաշտոնական հանդիպումների, միջոցառումների համակարգչային սպասարկում:
- ✓ Էլեկտրոնային ուսուցման համակարգը վերազինվել է նոր ծրագրային թարմացմամբ, տեղի է ունեցել համակարգի դոմեյնային անվան փոփոխություն՝ «learn.gsu.am»:
- ✓ Կազմակերպվել է 2018-2019թ ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի «E-Learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «E-Learning. GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, թղթային տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկներ:
- ✓ Կազմակերպվել է 2018-2019թ. ուսումնական տարվա հեռակա ուսուցման ֆակուլտետում «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Տեղադրվել են բոլոր խմբերի ուսումնական պլանները, ուսանողների ցանկերը: Համակարգի միջավայրում

ստեղծվել են առարկայական ուսուցման փաթեթներ: Թղթային տարբերակով տրամադրվել են համակարգից օգտվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկները:

- ✓ Շարունակական բնույթ է կրել «E-Learning. GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը:
- ✓ Իրականացվել է «Office 365» էլեկտրոնային փոստերի ծառայությունների համակարգի սպասարկում:
- ✓ Վերագործարկվել է «Examenation Gsu» քննական թեստային համակարգը՝ նոր ծրագրային միջավայրով և հզոր կարողություններով, համակարգը հասանելի է «exam.gsu.am» դոմեյնային հասցեով:
- ✓ Ներդրվել է «ԳՊՀ ՏԵՍԱԿՈՆՖԵՐԱՆՍ» համակարգը: Համակարգի օգտատերերի հետ աշխատանքի համար ստեղծվել է «webinar.gsu.am» կայքէջը:
- ✓ Էլեկտրոնային գրադարանի համար ստեղծվել է նոր կայքէջ, բազմաթիվ հնարավորություններով, կայքէջը հասանելի է «library.gsu.am» դոմենային հասցեով: Բացի էլեկտորնային գրադարան համակարգից, այն հնարավորություն է տալիս ներբեռնել տեսաուղեցույցներ և կազմակերպել էլեկտրոնային ռեսուրսների առցանց վաճառք:
- ✓ SS բաժնի կողմից իրականացվել են աշխատակազմի վերապատրաստումներ:
- ✓ Իրականացվել են համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում, խորհդատվությունների տրամադրում:
- ✓ Կատարվել են սերվերային կենտրոնի պահուստային պատճենման աշխատանքներ:
- ✓ Սինխրոնիզացվել են որոշ ենթակայքերի աշխատանքները սերվերային կենտրոնի հետ:
- ✓ Սերվերային կենտրոնում դրվել են համակարգի մոնիթորինգ իրականացնելու ծրագրեր:
- ✓ Իրականացվել է տպիչների սպասարկում՝ լիցքավորում, վերանորոգում:
- ✓ Քննարկվել և ներկայացվել են համակարգչային գույքի գնումների ցուցակները:
- ✓ Իրականացվել է անլար հասանելիություն ապահովող սարքերի սպասարկման աշխատանքներ:

ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2019-2020 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները

- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի կատարելագործում, անգլերեն և ռուսերեն տարբերակների համալրում:
- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի դիզայնի և ֆունկցիոնալության փոփոխության մշակում:
- ✓ «Տեսակոնֆերանս» համակարգի շարունակական զարգացում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում համակարգի միջոցով:
- ✓ Սերվերային կենտրոնի կատարելագործում, սերվերների վրա «VMWARE EXI» նոր օպերացիոն համակարգի ներդրում:
- ✓ «Էլեկտրոնային գրադարան» համակարգի կատարելագործում և ինֆորմացիոն համալրման շարունակական աշխատանքներ:
- ✓ Համակարգչային թեստավորման համակարգի կատարելագործում:
- ✓ SS բաժնի կայքի նախագծում՝ «It.gsu.am» դոմեյնային անվամբ:
- ✓ Ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ամպային համակարգի ներդրում «Mail.ru Group» ծառայության հենքի վրա:
- ✓ «Mail.ru Group» փաթեթի ծառայությունների միջավայրում ներքին փաստաթղթերի ամպային տիրույթի կառուցվածքի նախագծում և մշակում:
- ✓ Դասացուցակների և ժամանակացույցերի կայք տեղադրելու գործընթացի ավտոմատացում:
- ✓ Համակարգչային գույքի գույքագրման, համարակալման, տեխնիկական անձնագրերի կազմման, տվյալների բազայի հավաքագրման աշխատանքների կազմակերպում:
- ✓ Էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում):
- ✓ «Examination. GSU» համակարգով քննությունների նախապատրաստում և կազմակերպում:
- ✓ Համակարգչային լսարանների ղեկավարման «Veyon» համակարգի ներդնում:
- ✓ Լոկալ ֆայլային սերվերի ստեղծում SS բաժնի համար:
- ✓ «MYTEAM» հավելվածի կիրառում ներքին փաստաթղթաշրջանառության և կորպորատիվ հաղորդակցության համար:
- ✓ Համալսարանում համացանցի կապի տրամադրման, համակարգչային ցանցի, բաժանորդային համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկման, վերահսկման աշխատանքների իրականացում:
- ✓ Անլար հասանելիության կետերի ավելացում և սպասարկում:
- ✓ Նորացվող համակարգչային գույքի տեղադրման, համակարգչային լսարանների գույքի վերաբաշխման աշխատանքների իրականացում:
- ✓ Նոր լսարանների նախագծում ոչ մասնագիտական խմբերի համար, մեկ համակարգչի և լուսացրիչից օգտվելու հնարավորությամբ:

- ✓ Աշխատակիցների համար առցանց տեխնիկական աջակցության ծառայության հիմնում:
- ✓ Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների համակարգի ստեղծում:
- ✓ Տպիչների սպասարկման էլեկտրոնային զեկուցագրերի ավտոմատացում ապահովող լոկալ համակարգի ներդրում:
- ✓ Տեխնիկական աջակցության հայտերի ընդունման համակարգի ներդրում:
- ✓ ԳՊՀ դոմեյնային անվամբ էլեկտրոնային փոստերի ստեղծում ուսանողների համար: Էլեկտրոնային փոստի ծառայություններից օգտվելու վերաբերյալ վերապատրաստումների իրականացում SS բաժնի կողմից:
- ✓ Ուսանողական խորհրդի կայքի կատարելագործում:
- ✓ ԳՊՀ լոկալ ցանցի արդիականացում ժամանակակից սարքավորումներով և վիրտուալ ցանցի ստեղծում:
- ✓ Ցանցի և սերվերային համակարգերի անխափան աշխատանքի համար «Load Balancer» համակարգի ներդրում:
- ✓ Օպերացիոն համակարգերը արագ վերականգնող «Restore» սերվերի նախագծում և ներդրում:
- ✓ «Domain controller» համակարգի ներդրում:
- ✓ «Linux Ubuntu» օպերացիոն համակարգի կիրառմանն ուղղված վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես նաև ներդրում որոշ համակարգիչների վրա:
- ✓ ԳՊՀ լոկալ ցանցի արատորոշման և մշտադիտարկման համար «Observium» համակարգի ներդրում և գործարկում:
- ✓ «ԳՊՀ մեդիասերվեր» համակարգի ստեղծում:
- ✓ SSL անվտանգության սերտիֆիկատի ակտիվացում «gsu.am» դոմեյնի համար:

Մարգար Հովհաննիսյան
ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաղուց ապացուցված ճշմարտություն է, որ գիրքը ուսուցանում, հարստացնում, կերտում ու զարգացնում է մարդուն, դարձնում աշխարհաճանաչ ու լայնախոհ:

Գավառի պետական համալսարանում գործող գրադարանը և կից ընթերցասրահները ծառայում են ուսանողներին, դասախոսներին ու վարչական անձնակազմին՝ մասնագիտական ու գեղարվեստական գրականության ձեռք բերման և ուսումնասիրման գործում: ԳՊՀ գրադարանը տեղակայված է կենտրոնական և բնագիտական մասնաշենքերում: Կենտրոնական մասնաշենքում գործող գրադարանը համալրված է հումանիտար ուղղվածությամբ մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, իսկ բնագիտական ֆակուլտետի մասնաշենքի գրադարանը՝ բնագիտության ոլորտի մասնագիտական գրականությամբ:

ԳՊՀ գրադարանը բարեխղճորեն կատարում է գրադարանային գործառույթներն ու պարտականությունները՝ ապահովելով սովորողներին անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, տեղեկատվական տարբեր աղբյուրներով:

Գրադարանը նպաստում է ուսումնական գործընթացին՝ համալրելով գրքաֆոնդը, կազմակերպելով և ընթերցողներին տրամադրելով մասնագիտական գրականություն և շտեմարաններ, սովորողների մոտ ձևավորելով տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողություններ ու հմտություններ, զարգացնելով ընթերցանության մշակույթ: Այս նպատակների իրագործման համար գրադարանը մատուցում է հետևյալ ծառայությունները.

- ընթերցողների գրանցում, որն իրավունք է տալիս ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից՝ սպասարկման սահմանված ձևերով,
- ընթերցասրահում և գրադարանում ընթերցողների սպասարկում՝ ավանդական և էլեկտրոնային եղանակներով,
- տեղեկատվական-մատենագիտական սպասարկում, անհատական և խմբային աշխատանքի տարբեր ձևերի և մեթոդների կիրառում,
- գրականության մատենագիտական ցանկերի ցուցադրում, գրքերի ցուցահանդեսների կազմակերպում, գրապահոցի «Բաց դռների օրեր»-ի անցկացում,
- անմիջական օգնություն ընթերցողին՝ տեղեկատվություն որոնելու, ընտրելու, գրադարանի կայքից օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում,
- խորհրդատվություն գեղարվեստական գրականության ընտրության հարցում:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ գրադարանում աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

- գրադարանային ֆոնդի համալրում,
- մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում,
- համալրումների ցուցադրում և դրանց մասին տեղեկատվության ապահովում,
- գրքապաշարի մշակում,

- գրքերի շրջանառում,
- վնասված գրքերի վերանորոգում,
- մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում,
- մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում,
- ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի համալրում:

Գրադարանային ֆոնդի համալրում

Հաշվետու ուսումնական տարում գրադարանը համալրվել է 441 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որոնք ձեռք են բերվել ԳՊՀ ռեկտորատի և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ: Իրենց ներդրումն են ունեցել Հ. Հակոբյանը, Ա. Ապրոյանը, Հ. Գզրարյանը, Ռ. Սարգսյանը և ուրիշներ:

Մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում

Համալրված 441 միավոր գրքերը մուտքագրվել, նկարագրվել և դասակարգվել են: Արդյունքում ավելացել են.

- 114 ուսումնական ձեռնարկ, դասագիրք, սեղմագիր,
- 71 գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ,
- 169 գեղարվեստական գրականություն,
- 87 այլ նյութեր:

Այսպիսով, ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում ունի 45059 գրադարանային միավոր, որից

- հայերեն՝ 21.388 գիրք,
- ռուսերեն՝ 17.298 գիրք,
- այլ լեզուներով՝ 6. 373 գիրք:

Գրքերի շրջանառում և վնասված գրքերի վերանորոգում

Հաշվետու ուստարում, ուսումնական գործընթացի և ակադեմիական առաջադրանքների պահանջներից ելնելով, ակտիվ շրջանառվել է ինչպես մասնագիտական, այնպես էլ գեղարվեստական գրականությունը: Ուսանողների շրջանում գեղարվեստական գրքերի նկատմամբ մեծ պահանջ է արձանագրվել: Բանասիրական ֆակուլտետի ուսանողներից բացի՝ ակտիվություն են ցուցաբերել տնտեսագիտական և բնագիտական ֆակուլտետներում սովորողները: Գրքատացքին նպաստում են համալրված գրականության ցուցադրությունը գրադարանում և ընթերցասրահներում, համալրումների մասին տեղեկատվության տարածումը, խորհրդատվությունների մատուցումը: Այս ամենի արդյունքն է նաև ԳՊՀ ամբիոններում գեղարվեստական բազմաժանր գրքերի քննարկումների շարքը:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր և փետրվար-մարտ ամիսներին, կազմակերպվում են գրադարանի «բաց դռների օրեր», որոնց ընթացքում ուսանողները, հատկապես առաջին կուրսեցիները, ծանոթանում են համապատասխան մասնագիտական գրքապաշարին:

Հետևողական աշխատանքներ են կատարվել ողջ գրքաֆոնդի ֆիզիկական պահպանման, վնասված գրքերի վերանորոգման ուղղությամբ:

Աշխատանքներ են կատարվել նաև գրքի հանձնումն ուշացնող, հեռացված կամ տարկետման մեջ գտնվող ուսանողների հետ՝ գրքի վերադարձման մասին զգուշացնելու, գրքային պարտքերի վերադարձը ապահովելու ուղղությամբ: Գրադարանում մեծ պատասխանատվությամբ են կատարվել նաև պատվիրած և պահանջ ներկայացրած ընթերցողներին գրականության առկայության մասին տեղեկատվության ապահովումը և նրանց բարեխիղճ սպասարկումը՝պահանջագրերի հիման վրա:

Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում.

Կատարվել է 45059 գրքերից կազմված գրքաֆոնդի մասնագիտական գրացուցակների լրամշակում: Արդյունքում ստացել ենք յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան մասնագիտական գրքերի հետևյալ քանակը.

- Հայոց լեզու և գրականություն՝ 2958
- Ռուսաց լեզու և գրականություն՝ 2433
- Անգլերեն լեզու և գրականություն՝ 2289
- Պատմություն՝ 1645
- Իրավագիտություն՝ 1734
- Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 1343
- Կառավարում և ֆինանսներ՝ 2326
- Հաշվապահական հաշվառում՝ 2326
- Կենսաբանություն՝ 2437
- Դեղագործական քիմիա՝ 238
- Աշխարհագրություն՝ 933
- Բնապահպանություն և բնօգտագործում՝ 106
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2524
- Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 60
- Սերվիս՝ 42:

Համալսարանի կողմից իրականացվում է մասնագիտական գրականության համալրման շարունակական գործընթաց:

Մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում

Մասնագիտական տեղեկատվական բազան ներառում է մասնագիտական հոդվածների մատենագիտական ցանկերը: Գրադարանում համալրվում և լրամշակվում է թեմատիկ հանձնարարականների մատենագիտական ցանկը, որտեղ ներառված են տարբեր հանդեսների, գիտական նյութերի ժողովածուներում ընդգրկված հոդվածների վերնագրերը (պարունակում է 3965 հոդված), և ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը՝ 12 մասնագիտական ուղղություններով (պարունակում է 1523 հոդված):

Այս ցանկերը, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված են նաև ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի «Գրադարան» հատվածամասում և պարբերաբար լրացվում են:

ԳՊՀ գրադարանի համագործակցությունը

ԳՊՀ գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ է, համագործակցում է Հայաստանի ազգային գրադարանի հետ, որի շրջանակներում ներկայացնում է ամենամյա հաշվետվություն գրադարանի հագեցվածության մասին: Գրադարանի հագեցվածության մասին ցուցանիշները հրատարակվում են Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում:

ԳՊՀ հրատարակությունների օրինակներ են տրամադրվում Հայաստանի ազգային գրադարանին, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի ու Արցախի պետական համալսարանի, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների գրադարաններին, Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարաններին:

ԳՊՀ գրադարանը սերտ համագործակցում է Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարանների հետ, որի շնորհիվ համալսարանի գրքերի նվիրատվություններով վերոնշյալ գրադարաններում տարեցտարի համալրվում է ԳՊՀ հրատարակությունների ֆոնդը: Մարզային գրադարանի հետ համագործակցության շրջանակում անցկացվում է գրքերի ամենամյա փոխադարձ նվիրատվություն: Գեղարքունիքի մարզային գրադարանի կողմից ԳՊՀ գրադարանավարն արժանացել է շնորհակալագրի:

2019-2020 **ՈՒՍՏԱՐՈՒՄ ԳՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2019-2020 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է ԳՊՀ գրադարանի գործունեության ակտիվացում՝ հետևյալ ուղղություններով.

- շարունակել ԳՊՀ գրադարանի համագործակցությունը ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի, ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի և Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների գրադարանների հետ,
- շարունակական աշխատանքներ իրականացնել գրադարանի գրքաֆոնդի համալրման ուղղությամբ՝ ելնելով դասընթացների ծրագրերում ներկայացվող գրականության ցանկերից և գրադարանում հաճախ պատվիրվող և բացակայող գրականությունից,
- «E-Library.GSU» էլեկտրոնային գրադարանի շարունակական համալրում՝ անհրաժեշտ գրականությամբ,
- ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասում «Համալրված գրականություն» բաժնի ստեղծում, որտեղ պարբերաբար կտեղակայվեն տեղեկություններ գրքաֆոնդը համալրած գրականության մասին,
- ընթերցասրահում համակարգչային-տեղեկատվական սպասարկման ապահովմամբ ակտիվացնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական աշխատանքները,
- դասախոսների և ուսանողների շրջանում իրականացնել հարցումներ՝ գրքաֆոնդն անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ համալրելու նպատակով,
- պարբերաբար կազմակերպել դասական և ժամանակակից գրողների գրքերի քննարկումներ, դրանով իսկ նպաստել ուսանողների բարոյական, հոգևոր – մշակութային, գեղագիտական դաստիարակությանը,

- ձեռք բերել ժամանակակից գրողների ստեղծագործություններ: Հետևողական աշխատանքներ իրականացնել՝ ուսանողների շրջանում ընթերցանությունը խթանելու և ընթերցանության բարձր մշակույթ արմատավորելու նպատակով:

Ալվարդ Թոռչյան
ԳՊՀ գրադարանավարուհի

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի (այսուհետ՝ ՄՌԿ) աշխատանքները 2018-2019 ուսումնական տարում կազմակերպվել են ՀՀ օրենսդրության, ԳՊՀ կանոնադրության և ներքուհական ակտերի հիման վրա:

		2017-2018 **ուստարի**	2018-2019 **ուստարի**
	➢ **Ընդունվել են աշխատանքի**		
1.	**Դասախոսներ**	-	5
2.	**ԳՊՀ այլ աշխատակիցներ**	2	2
3.	**Ընդամենը**	2	7
	➢ **Ազատվել են աշխատանքից**		
4.	**Դասախոսներ**	6	3
5.	**Այլ աշխատակիցներ**	5	1
6.	**Ընդամենը**	11	4
	➢ **Գործուղում ԵՄ Ծրագրերով**		
7.	**Դասախոսներ**	29	36
8.	**Այլ աշխատողներ**	5	4
9.	**Ընդամենը**	34	40
	Գործուղում ՀՀ տարածքում		
10.	Աշխատող	17	3
11.	**Ուսանող**	42	9
12.	**Ընդամենը**	59	12
	➢ **Պարգևատրումներ**		

13.	**Աշխատող**	14	17
	➢ Նկատողություններ		
	Աշխատող	5	1
	➢ Երեխայի խնամքի արձակուրդ	-	6
	➢ Հղիության և ծննդաբերության արձակուրդ	-	2

Հաշվետու տարում վերանայվել են աշխատակիցների անձնական գործերը, նախապատրաստվել են կադրային, վարչական, ժամանակավոր կցագրման, ուսանողական և այլ հրամաններ, ինչպես նաև իրականացվել են բուհ ընդունման, ազատման, տեղափոխման, հեռացման և ՄՌԿ բաժնին վերաբերող այլ գործառույթներ:

*2018-2019 **ուսումնական տարում ԳՊՀ աշխատակիցների շարժը***

2017 և 2018 թվականների դեկտեմբեր ամսին բոլոր հիմնական աշխատողներին համապատասխան հրամանով տրվել է պարգևատրում:

Համաձայն գործող ընթացակարգի՝ 2017-2018 ուսումնական տարում բաց մրցույթ է հայտարարվել բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների դեկանների պաշտոնների թափուր տեղերի համար, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ամբիոնի վարիչների թափուր տեղերի համար:

Համաձայն գործող կարգի՝ 2018-2019 ուսումնական տարում բաց մրցույթ է հայտարարվել բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնի թափուր տեղի և բանասիրական, բնագիտական և տնտեսագիտական ֆակուլտետների ամբիոնի վարիչների թափուր տեղերի համար:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինված ուժերի Գեղարքունիքի մարզի մարզային զինվորական կոմիսարիատ է ներկայացվել տարկետման իրավունք ունեցող ուսանողների վերաբերյալ Ձև 26 տեղեկանքներ:

Գավառի պետական համալսարանը հանդիսանում է Կամոյի (այժմ՝ Գավառ) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և թիվ 70 պրոֆտեխուսումնարանի իրավահաջորդը և արխիվային փաստաթղթերը գտնվում են համալսարանի արխիվում: ՈՒստի ԳՊՀ-ն սահմանված կարգով տրամադրում է վերոհիշյալ ուսումնական հաստատությունների աշխատողների և ուսանողների վերաբերյալ տեղեկանքներ: Ստորև ներկայացնում ենք հաշվետվություն տրամադրված տեղեկանքների վերաբերյալ.

	➢ **Տեղեկանքներ**	**Հայերեն**	**Ռուսերեն**
1.	Գրության պատասխան	21	7
2.	Ինդուստրիալ մանկավարժական քոլեջ	36	11
3.	Թիվ 70 Պրոֆտեխուսումնարան	12	5
4.	Ընդամենը	69	23

Խ. Ժ. Սաֆարյան

ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի *վարիչ*

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ *2018-2019* ***ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ***

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակում է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատողների և ուսանողների համար:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով արհեստակցական կազմակերպության և համալսարանի ռեկտորի միջև կնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիր:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը ինչպես ՀՀ բուհերի արհեստակցական կազմակերպությունների հանրապետական խորհրդի, այնպես էլ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

Հաշվետու ուսումնական տարում մշտական ուշադրություն է դարձվել աշխատողների և ուսանողների առողջության պահպանման, սոցիալական աջակցության, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման, սոցիալական ծրագրերի իրականացման խնդիրներին:

Ֆինանսական օգնության, բուժման կամ սոցիալապես խիստ կարիքավոր աշխատակիցներին և ուսանողներին ԳՊՀ արհմիությունը տրամադրել է 1 միլիոն 370 հազար դրամ:

2018-2019 ուսումնական տարում կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ:

2019թ. երկու անգամ Գավառի Լևոն Քալանթարի անվան պետական թատրոնում կազմակերպվել է բեմադրության կոլեկտիվ դիտում՝ ԳՊՀ աշխատակիցների և ուսանողների համար:

Նշված ժամանակահատվածում բուհի ուսանողական խորհուրդը կազմակերպել է ուսանողական միջոցառումների շարք համալսարանի չորս ֆակուլտետներում՝ նվիրված համալսարանի կազմավորման 25-ամյակին:

Արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրության գործառույթներին համապատասխան կաշխատի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերման, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծման ուղղությամբ:

Լյովա Սիրունյան
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության
նախագահ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ նաև ՈՒԽ) և ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ նաև ՈՒԳԸ) բուհում շարունակել են իրենց ակտիվ գործունեությունը՝ որպես սովորողների ինքնակառավարման մարմիններ: ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն մասնակցել են համալսարանի կառավարման գործընթացներին, ներկայացրել ուսանողների իրավունքներն ու օրինական շահերը, տեսակետն ու դիրքորոշումները, համակարգել են սովորողների համար իրականացվող ծրագրերը: Կառույցները համագործակցել են ԳՊՀ որակի ապահովման բաժնի հետ և համատեղ կազմակերպել ուսանողների և շրջանավարտների հարցումներ՝ ուղղված բուհի ուսումնական և այլ գործառույթների իրականացման որակի բացահայտմանն ու բարելավմանը:

Կազմակերպել են ուսուցողական, ճանաչողական ու դաստիարակչական ուղղվածություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ, ուսանողական ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, բանավեճեր, բաց դասեր, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, սպորտային և ինտելեկտուալ միջոցառումներ՝ նպաստելով ուսանողների ընդհանուր աշխարհայացքային, ստեղծագործական և մասնագիտական զարգացմանը:

Ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը համագործակցել են ՀՀ այլ բուհերի ուսանողական կառույցների, դպրոցների, քոլեջների, երիտասարդական, կրթական, մարզական, սոցիալ-մշակութային ոլորտները ներկայացնող կառույցների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, մասնակցել հանրապետական ուսանողական գիտաժողովների, տարբեր սեմինարների, քննարկումների, աշխատաժողովների ու բանավեճերի:

Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդն ու ուսանողական գիտական ընկերությունը նախաձեռնել և իրականացրել են հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

- 2018 թվականի հոկտեմբերի 19-ին բուհի ինքնակառավարման մարմինների անդամների նախաձեռնությամբ կայացավ «Մեծ մարդը հավերժության մեջ» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված Շառլ Ազնավուրի հիշատակին:
- 2018 թվականի հոկտեմբերի 20-ին տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացավ «Ֆրանկոֆոնիան յուրօրինակ կամուրջ՝ Հայաստանի և Ֆրանսիայի միջև» խորագիրը կրող տեղեկատվական-ուսուցողական միջոցառում:
- 2018 թվականի հոկտեմբերի 20-ին Գավառի մանկան տան սաները այցելեցին Գավառի պետական համալսարան: ԳՊՀ ուսանողական խորհրդի անդամներն անցկացրին հետաքրքիր դաս՝ նվիրված կրթության իրավունքին:

- 2018 թվականի նոյեմբերի 6-ին ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները մասնակցեցին Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում կայացած Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին հանրապետության հռչակման 100-ամյակներին նվիրված գիտաժողովին:
- 2018 թվականի նոյեմբերի 24-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ բուհում տեղի ունեցավ հետաքրքիր դատախաղ:
- 2018 թվականի դեկտեմբերի 1-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացավ ուսուցողական միջոցառում՝ նվիրված Ալեքսանդր Թամանյանի կյանքին ու գործունեությանը:
- 2018 թվականի դեկտեմբերի 1-ին բուհի ուսանողական ինքնակառավարման մարիմնիների անդամների նախաձեռնությամբ կայացավ «Բարև, ես եմ» խորագիրը կրող միջոցառումը:
- 2018 թվականի դեկտեմբերին Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը կազմակերպեց «Իմ Քյավառը 2750 տարեկան է» խորագիրը կրող էսսեների, արձակ և չափածո ստեղծագործությունների, ինչպես նաև պաստառների, լուսանկարների, ձեռարվեստի աշխատանքների մրցույթ:
- 2018 թվականի դեկտեմբերի 21-ին ուսանողական գիտական ընկերության և բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի նախաձեռնությամբ կայացավ ուսանողական գիտաժողով՝ «Էպիլեպսիա. դիվահարությունից մինչև գիտական բժշկություն» թեմայով:
- 2019 թվականի փետրվարի 19-ին բուհի ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները մասնակցեցին ‹‹Նվիրի՛ր գիրք, պարգևի՛ր ժպիտ›› ակցիային:
- 2019 թվականի փետրվարի 22-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացավ «Դարերդ հայերեն են գալու» խորագրով ցերեկույթ՝ նվիրված Մայրենի լեզվի միջազգային օրվան:
- 2019 թվականի մարտի 21-ին ուսանողական ինքնակառավարման մարիմնիների կողմից կայացավ «Գարնանային հրաշք» խորագիրը կրող գրական-գեղարվեստական ցերեկույթը՝ նվիրված կանանց միամսյակին:
- 2019 թվականի ապրիլի 4-ին ՈւԽ անդամները մասնակցեցին Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված «Նշանավոր կանայք» խորագիրը կրող ուսանողական գիտաժողովին:
- 2019 թվականի ապրիլի 6-ին ուսանողական ինքնակառավարման մարիմնիների նախաձեռնությամբ կայացավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսների հիշատակին:
- 2019 թվականի ապրիլի 11-ին կազմակերպվեց միջոցառում «Մեզ ծանոթ և անծանոթ Թումանյանը» խորագրով՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին:
- 2019 թվականի ապրիլի 12-ին կազմակերպվեց ՈւԽ անդամների ընտրություն:
- 2019 թվականի ապրիլի 20-ին տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության անդամները դասախոսների հետ միասին կազմակերպեցին

ուսանողական գիտաժողով՝ «ՀՀ տնտեսության արդի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները՝ ըստ ՀՀ Կառավարության 2019 թվականի գործունեության ծրագրի» թեմայով:

- 2019 թվականի ապրիլի 25-ին ՈՒԽ անդամների կողմից կազմակերպվեց միջոցառում-ներկայացում՝ «Ոտքի՛, դատարանն է գալիս» խորագրով, Պերճ Զեյթունցյանի համանուն պիեսի հիման վրա՝ նվիրված Սողոմոն Թեհլերյանի դատավարությանը:
- 2019 թվականի մայիսի 5-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի և բուհի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին:
- 2019 թվականի օգոստոսի 6-ին ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները մասնակցեցին Արցախի պետական համալսարանի կողմից կազմակերպած միջազգային ամառային դպրոց-ճամբարին:
- ՈՒԽ-ն ողջ տարվա ընթացքում ‹‹Մաքուր համալսարան›› ծրագրի շրջանակներում պարբերաբար կազմակերպել է շաբաթօրյակներ, մաքրել և կարգի է բերել բուհի հարակից տարածքները:
- ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն ակտիվորեն համագործակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզի, հատկապես, Գավառի տարածաշրջանի դպրոցների աշակերտական խորհուրդների հետ, իրականացրել տարբեր ուսուցողական միջոցառումներ, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը միտված ձեռնարկներ:
- ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի կողմից կյանքի են կոչվել այլ ծրագրեր, որոնց իրականացմանն աջակցել են ԳՊՀ ռեկտորատը, դեկանատները, բուհի կառուցվածքային մյուս ստորաբաժանումները:

2019-2020 **ուսումնական տարում ԳՊՀ ինքնակառավարման մարմիններն իրականացնելու են գործունեություն հետևյալ հիմնական ուղղություններով**

1 . Ակտիվ մասնակցություն ԳՊՀ կառավարման գործընթացներին, որոշումների ընդունմանը, բուհում ուսանողակենտրոն քաղաքականության իրականացմանը:

2. Սովորողների իրավունքների և շահերի ներկայացում ու պաշտպանություն:

3. ԳՊՀ 2017-2022 զարգացման ռազմավարական ծրագրի և վերջինիս հիման վրա 2019-2020 տարեկան գործունեության ծրագրի իրականացմանը մասնակցություն:

4. ԳՊՀ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների հետ կրթության որակի բարձրացման ուղիների և կառուցակարգերի քննարկում, կրթության որակի ապահովման գործընթացներին մասնակցություն:

5.ԳՊՀ գիտական խորհրդի, ռեկտորատի, դեկանատների, ամբիոնների և դասախոսների հետ ուսանողների կողմից առաջարկված ուսուցման մեթոդների և կրթական տեխնոլոգիաների քննարկում և դրանց կիրառմանը նպաստում:

6.Ավարտական կուրսերի ուսանողների հետ կրթական վերջնարդյունքների ձեռքբերման և բուհում ստացածմասնագիտական կրթության վերաբերյալ հարցումների անցկացում,

արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում բուհի ղեկավար մարմիններին:

7.ԳՊՀ որակի ապահովման բաժնի հետ համատեղ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողների շրջանում հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն և եզրակացությունների ներկայացում բուհի ղեկավարությանը:

8.ԳՊՀ ուսանողների պրակտիկաների արդյունավետության բարձրացման նպատակով պրակտիկան անցկացնող կազմակերպություններում հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն և առաջարկությունների ներկայացում, դրանց կենսագործմանը նպաստում:

9.Աշխատաշուկայի պահանջները, գործատուների կարիքներն ու ակնկալիքները բացահայտելու նպատակով գործատուների շրջանում հարցումների անցկացում, գործատուների հետ հանդիպումների ու քննարկումների կազմակերպում:

10.Հասցեական աշխատանքներ ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ, գերազանցիկ ուսանողների կողմից խորհրդատվությունների, սեմինարների կազմակերպում:

11.ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ակադեմիական ազնվության հայեցակարգի և էթիկայի կանոնների վերաբերյալ ուսանողներին իրազեկում և դրանց հետևողական կիրառում:

12.Ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովների, բազմաբնույթ ցերեկույթների, ուսուցողական, մշակութային և դաստիարակչական միջոցառումների կազմակերպում:

13.Սեմինարների, բանավեճերի, դերային խաղերի, ֆիլմերի դիտում-քննարկումների, գրական ստեղծագործությունների քննարկումների անցկացում:

14.Համագործակցություն ԳՊՀ տնտեսագետների, ստեղծագործողների և այլ ակումբների հետ, ուսանողական տարբեր նախաձեռնությունների խրախուսում:

15.Համագործակցություն ԳՊՀ-ի և ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի համատեղ հիմնած Գեղարքունիքի զբոսաշրջության զարգացման և հետազոտությունների կենտրոնի հետ:

16.Ինտելեկտուալ խաղերի, մրցույթների կազմակերպում:

17.Ուսումնական, ճանաչողական էքսկուրսիաների նախաձեռնում:

18.Փոխայցելություններ դպրոցներ և քոլեջներ, համատեղ ծրագրերի իրականացում:

19.Հանդիպումներ Գավառի ևմարզի այլ համայնքների դպրոցների աշակերտների, մանկատան և հատուկ դպրոցի սաների հետ,

20.Գավառի տարածաշրջանի ավագ դպրոցների աշակերտների համար մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:

21.Համագործակցություն ՀՀ այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

Անահիտ Շահինյան

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ,

Կորյուն Սարգսյան

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ

ԳՊՀ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմը միավորում է բուհի տեխնիկական, անվտանգության ապահովման, տնտեսական, սպասարկման ոլորտների աշխատակիցներին: Անձնակազմի աշխատանքը նպատակաուղղված է ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Համալսարանի տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվում է հետևյալ բաժինների ուժերով.

- *տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ծրագրավորողներ, Համալսարանի կայքէջի սպասարկման և այլ մասնագետներ),*
- *տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցապաներ, սանտեխնիկ և այլ մասնագետներ),*
- *տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարեկներ, տնտեսուհիներ, բանվոր),*
- *սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):*

2018-2019 ուսումնական տարում տնտեսատեխնիկական անձնակազմը պատշաճ կերպով իրականացրել է իր գործառույթները, ԳՊՀ ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացրել Համալսարանի տնտեսական, տեխնիկական, տեղեկատվական տեխնոլոգիաների և սպասարկման ոլորտում անհրաժեշտ միջոցառումների և ծրագրերի իրականացման վերաբերյալ, աջակցել է Համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի համապատասխան դրույթների իրականացմանը, ապահովել է ներհամալսարանական տնտեսավարումը, սպասարկել և արդիականացրել է Համալսարանի համակարգչային տեխնիկան, բնագիտական ֆակուլտետի կենսաքիմիայի լաբորատորիան, ստորաբաժանումներում ապահովել է համացանցային կապը, ինչպես նաև իրականացրել է իր կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, համակարգվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

Հաշվետու տարվա ընթացքում բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

Համալսարանի ուսումնական գործընթացը կազմակերպվել է ԳՊՀ երեք մասնաշենքերում՝ օգտագործելով բոլոր աշխատասենյակները, լսարանները, գրադարաններն ու ընթերցասրահը, լաբորատորիաները, համակարգչային սրահները և այլ ուսումնաօժանդակ տարածքներ: Համալսարանի գործունեության համար ամրակցված ընդհանուր տարածքը կազմում է 18.505 քմ, որից օգտագործվում է մոտ 14.858 քմ-ն:

Ուսումնական գործընթացն անխափան ապահովելու նպատակով անհրաժեշտ նյութերով, սարքերով ու սարքավորումներով ապահովվել են Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները՝ համաձայն ԳՊՀ գնումների պլանի:

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել է Համալսարանի նյութատեխնիկական բազան. Համալսարանի և ԵՄ «Էրասմուս + ՍՄԱՐԹ» ծրագրի միջոցների հաշվին ձեռք են բերվել ժամանակակից համակարգչային տեխնիկա, հեռուստացույցներ, դյուրակիր համակարգիչներ: Սահմանված կարգով ձեռք են բերվել գրենական պիտույքներ, անհրաժեշտ պարագաներ, ԳՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով: Սահմանված կարգով կազմակերպվել է համակարգչային պահեստամասերի, տպիչների, գրատախտակների, մարզական գույքի, ուսումնաօժանդակ նյութերի գնում, ինչպես նաև շինանյութի, տնտեսական ապրանքների, կենցաղային տեխնիկայի ձեռքբերում:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Կատարվել են ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի շքամուտքի հիմնանորոգման աշխատանքներ, չորս թեքահարթակներ են կառուցվել Համալսարանի կենտրոնական մասնաշենքի, հումանիտար մասնագիտությունների և բնագիտական ֆակուլտետների շենքերի մուտքերին:

Ձեռք են բերվել Համալսարանի կենսաքիմիայի և կենսաբանության լաբորատորիայի համար անհրաժեշտ նոր սարքավորումներ ու նյութեր՝ Համալսարանի և ԵՄ «Էրասմուս + ԱԲԻՈՆԵՏ» ծրագրի միջոցների հաշվին:

Ներքին հարդարման աշխատանքներ են կատարվել ԳՊՀ բոլոր մասնաշենքներում:

Հիմնանորոգվել է ԳՊՀ գլխավոր մասնաշենքի տանիքը, իսկ բնագիտական և հումանիտար մասնագիտությունների մասնաշենքերի տանիքները վերանորոգվել են մասնակի:

ԳՊՀ տրանսպորտային միջոցներով իրականացվել են բազմաթիվ ուղերթներ, միաժամանակ, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի, գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների, ինչպես նաև արտասահմանյան հյուրերի սպասարկման և գիտաժողովների կազմակերպման համար օգտագործվել են այլ կազմակերպություններից սահմանված կարգով վարձված տրանսպորտային միջոցները:

ԳՊՀ մասնաշենքերում ամենօրյա աշխատանքներ են կատարվել նաև սանիտարական մաքրության պահպանման ուղղությամբ: Դրան օժանդակել են ձեռք բերված նոր, արդյունավետ սարքավորումները: Հետևողական աշխատանքների արդյունքում սանիտարական մաքրության վիճակը Համալսարանի մասնաշենքերում հասցվել է պատշաճ մակարդակի: Համալսարանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել համապետական և քաղաքային բոլոր շաբաթօրյակներին՝ առաջնորդվելով ‹‹Մաքուր Համալսարան›› կարգախոսով:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման աշխատանքներ:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ,

վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

Համալսարանի կաթսայատան միջոցով ջեռուցվում են բոլոր մասնաշենքերը, հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել բոլոր մասնաշենքերում և կաթսայատանը: Վերակառուցվել և վերանորոգվել են ջրատաքացուցիչ կաթսաները, նորացվել են ինքնաաշխատ (ավտոմատ) հսկման համակարգերը:

Համալսարան էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ապահովելու համար կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ ինչպես տրանսֆորմատորային ենթակայաններում, այնպես էլ բուհի մասնաշենքերում՝ լսարաններում, լաբորատորիաներում ու միջանցքներում նորմալ լուսավորություն ապահովելու և լաբորատոր դասընթացների անցկացման համար անհրաժեշտ սարքերն աշխատանքային բնականոն վիճակում պահելու ուղղությամբ:

Համալսարանում ներքին և արտաքին որակյալ ու անխափան կապն ապահովվում է «Ռոստելեկոմ» կազմակերպության կողմից ներդրված նոր, ժամանակակից թվային ավտոմատ հեռախոսակայանի և հեռախոսացանցի միջոցով: Տարվա ընթացքում Համալսարանի հեռախոսակապն աշխատել է անխափան:

Համալսարանի փաստաթղթաշրջանառությունը կազմակերպվում է նամակագրության ներքին շրջանառության էլեկտրոնային համակարգով, ինչպես նաև արտաքին փաստաթղթաշրջանառության ‹‹Mulberry›› համակարգով:

2019-2020 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները

1. Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները բոլոր մասնաշենքներում.

✓ իրականացնել մասնաշենքերի տեխնիկական փուլային փորձաքննություն, մշակել հիմնանորոգման և վերակառուցման տարբերակված պլան և ապահովել դրա իրականացումը,

✓ պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ և վերանորոգումներ, ապահովել շարունակական արդիականացում և համապատասխանեցում կրթական գործընթացի զարգացման պահանջներին, ուսանողների և դասախոսների սպասելիքներին, որակյալ կրթության ապահովման հրամայականին,

✓ ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով ու սարքավորումներով,

✓ ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան,

✓ շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաների տեղադրումը:

2. Ապահովել Համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան.

➢ գնահատել Համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների, և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ մասնագիտությունների,

➢ ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ ճյուղային զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ Համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների ներդրումներից,

➢ զարգացնելով և ընդլայնելով արտադրական գործընկեր կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել նոր համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջների բավարարմանը (գործնական օրինակ է ԳՊՀ Էկոլոգիայի գերազանցության կենտրոնը),

➢ նպաստել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի, ինչպես նաև առանձին գործատու կազմակերպությունների ու բարերար անհատների միջոցներով, կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան, առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման նախաձեռնություններին:

3. Ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ Համալսարանի բոլոր ֆակուլտետներում.

❖ մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր պլան և Համալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով Համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների, անհատների ներդրումները,

❖ ստեղծել Համալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,

❖ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի ապագայի հարցը,

❖ օգտագործել արտաքին հնարավորությունները՝ Համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար,

❖ շարունակել Համալսարանի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ հիմնական շեշտը դնելով համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունների վրա:

4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի արձանագրումը Համալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում.

• ակտիվացնել Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործունեությունը,

• զարգացնել Համալսարանի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական

ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման կազմակերպման համար,

- կատարելագործել ուսուցման համացանցային հենքով էլեկտրոնային համապիտանի համակարգը (Learn.gsu.am, E-Library.gsu.am)՝ ապահովելով ուսումնական նյութերի շարունակական համալրում և արդիականացում,
- կատարելագործել ուսանողական համացանցային պորտալը (students.gsu.am)՝ կցված համացանցային-ուսուցման համակարգին՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը Համալսարանի բոլոր ուսանողների համար: Անհատականացված պորտալը կծառայի ուսանողին նաև բուհն ավարտելուց հետո,
- խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը Համալսարանի ամբիոնների հետազոտական ծրագրերում, նախագծերում և մագիստրոսական ավարտական աշխատանքներում:

Նախատեսված ռազմավարական խնդիրների լուծումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը Համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

Արսեն Ապրոյան
ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ, ԵՎ ՀՆՉԵՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ

01.09.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում հանդիսավորությամբ նշվեց սեպտեմբերի 1-ը՝ Գիտելիքի և դպրության տոնը, հնչեց առաջին զանգը, և ավանդույթի համաձայն՝ կատարվեց առաջին կուրսեցիների օրհնության կարգ: Նորընծա ուսանողներին օրհնության խոսք հղեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը:

ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

08.09.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի աշխատակիցները մասնակցեցին շաբաթօրյակի՝ հավատարիմ մնալով «Մաքուր համալսարան» կարգախոսին, քանզի միայն մաքուր միջավայրում է հնարավոր ապահովել ստեղծագործ աշխատանքին և որակյալ ուսմանը տրամադրող մթնոլորտ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ

14.09.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հերթական հաշվետու հանդիպումը Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրին մասնակցած ուսանողների հետ:

Հաշվետվություններով հանդես եկան ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի չորրորդ կուրսի ուսանողներ Խորեն Բաղդասարյանը և Նորայր Մովսիսյանը, ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ» բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Լուսինե Մարգարյանը, ովքեր հինգ ամիս սովորել էին համապատասխանաբար Հունգարիայի Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների և Իսպանիայի Ալմերիա համալսարաններում:

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

15.09.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ սեմինար-քննարկում ‹‹Վորլդ Վիժն. Հայաստան›› կազմակերպության կողմից իրականացվող «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում:

Բանախոսները ներկայացրին իրենց հաջողությունները և այն դժվարությունները, որոնք հաղթահարել են տարբեր կարծրատիպերի պատճառով՝ երիտասարդներին կոչ անելով լինել ակտիվ, աշխատասեր ու նպատակասլաց:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

19.09.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունը ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնի, Գավառի ‹‹Օրհուս›› կենտրոնի հետ համատեղ կազմակերպել էր սեմինար-քննարկում՝ նվիրված կայուն օրգանական աղտոտիչների, մասնավորապես թունաքիմիկատների օգտագործման հիմնախնդիրներին, ինչպես նաև բնակավայրերում կենցաղային թափոնների գոյացման, աղբավայրերից շրջակա միջավայր արտանետվող վնասակար նյութերի ազդեցությանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴ

21.09.2018 թ.

2018 թվականի սեպտեմբերի 21-ին լրացավ Հայաստանի Հանրապետության անկախության 27-րդ տարեդարձը: Հայաստանի անկախության 27-րդ տարեդարձը Գավառի պետական համալսարանում նշվեց տոնական միջոցառմամբ՝ ‹‹Գավառի պետական համալսարանը անկախության ծնունդ›› խորագրով:

ОСТИЖЕНИЯ МАГИСТРОВ ГГУ

22.09.2018 г.

В сентябре 2018 года студенты — магистры 2 курса отделения Русский язык и литература Гаварского государственного университета Мери Джаноян в соавторстве с Гоар Восканян опубликовали педагогическую статью с методическими разработками “О необходимости логопеда в дошкольных учреждениях Гегаркуникской области Республики Армения в рамках преподавания русского языка как иностранного” на международном портале Академии Развития Творчества «АРТ-талант».

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ ‹‹DOCMEN›› ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

24.09.2018 թ.

Ս. թ. սեպտեմբերի 20-21-ին Իտալիայի Հանրապետության Թուրինի պոլիտեխնիկական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական միության «ERASMUS+DOCMEN» ծրագրի հերթական աշխատաժողովը:

Միաժամանակ անցկացվեց վերապատրաստում ծրագրի անդամ բուհերի, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների համար:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՁԵՌՆԱՐԿ

27.09.2018 թ.

Լույս տեսավ Գավառի պետական համալսարանի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Արմեն Ղազարյանի «Համակարգչային գրաֆիկա» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Ձեռնարկի նպատակն է ուսանողներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ համակարգչային գրաֆիկայի վերաբերյալ:

Տեսական մասից բացի՝ ձեռնարկում ներառված են գործնական առաջադրանքներ, խնդիրներ, ինքնուրույն աշխատանքի թեմաներ, տրամաբանական մտածողությունը զարգացնող վարժություններ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ

28.09.2018 թ.

Գավառի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներ ակտիվորեն մասնակցում են «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և Եվրամիության կողմից իրականացվող «Բանավեճ, քննարկում և փոփոխություն» ծրագրին:

Մասնակցելով ծրագրին՝ Գավառի պետական համալսարանի ուսանողները կատարել են տարբեր հետազոտական աշխատանքներ, մասնակցել ներքաղաքային բանավեճերի և հեռուստաբանավեճերի:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներ Անահիտ Գարգրցյանը, Մերի Աբաչյանը, Սիրուշ Գյարգրցյանը, Անգելինա Պետրոսյանը, բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Խորեն Բաղդասարյանը հնարավորություն ստացան մասնակցելու միջքաղաքային բանավեճերի:

ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

28.09.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Գավառի ավագ դպրոցի 11 - 12-րդ դասարանների աշակերտներին՝ փոխտնօրեն Ալիտա Բաբասյանի և կազմակերպիչ Լիանա Բալագոզյանի ուղեկցությամբ: Աշակերտները եղան բուհի՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանում, որից հետո նրանք այցելեցին բուհի բնագիտության լաբորատորիա: Անցկացվեց բաց դաս՝ նվիրված աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցերին:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

28.09.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հերթական հաշվետու հանդիպումը Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրին մասնակցած ուսանողների հետ:

Հանդիպմանը ներկա էին ԳՊՀ ուսանողներ, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամներ, Գավառի ավագ դպրոցի աշակերտներ:

Հաշվետվությամբ հանդես եկան ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մելինե Բոստանջյանը, «Ֆինանսներ» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ռոբերտ Միրիբյանը, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժնի 4-րդ կուրսի ուսանող Տիգրան Հովեյանը, բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ռոբերտ Բուռնուչյանը, ինչպես նաև հեռակա ուսուցման ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի ուսանողուհի Մարիա Աբրահամյանը, ովքեր սովորել են համապատասխանաբար Բուլղարիայի Վառնայի կառավարման, Հունգարիայի Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների և Իտալիայի Սալերնո համալսարաններում:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ «ԴԻՋԻԹԵՔ ԷՔՍՊՈՅՈՒՄ»

*05.10.2018 **թ.***

Ս. թ. հոկտեմբերի 5-ին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի «Երևան էքսպո» ցուցահանդեսային համալիրում մեկնարկեց «ԴիջիԹեք 2018» եռօրյա տեխնոլոգիական ցուցահանդեսը, որը կրում էր «ՏՏ համաշխարհային համաժողովի ճանապարհին» խորագիրը:

Գավառի պետական համալսարանից ցուցահանդեսին մասնակցեցին բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժինների տարբեր կուրսերի ուսանողներ և աշխատակիցներ՝ բուհի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի ղեկավարությամբ:

ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵՑԻՆ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*05.10.2018 **թ.***

Այսօր Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչները՝ ուսանողներ ու աշխատակիցներ, այցելեցին բացառիկ հայորդի Շառլ Ազնավուրի երևանյան կեցավայր և հարգանքի տուրք մատուցեցին մեծն հայորդու հիշատակին:

«ԵՂԵ՛Ք ԱԿՏԻՎ, ԵՂԵ՛Ք ՆԱԽԱՁԵՌՆՈՂ»

*07.10.2018 **թ.***

Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի խորհրդատու Լալա Մկրտչյանը Եվրոպական միության «Erasmus+ Salto Youth» ծրագրի շրջանակում Վրաստանի Հանրապետությունում մասնակցեց «Եղե՛ք ակտիվ, եղե՛ք նախաձեռնող» խորագիրը կրող վերապատրաստման դասընթացին, որի հիմնական նպատակը երիտասարդների հետ աշխատելու նոր ձևերի ու մեթոդների ուսուցումն էր՝ միտված կրթության և դաստիարակության բովանդակության հարստացմանը, ուսուցման պատշաճ որակի ապահովմանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երիտասարդների դերի ակտիվացմանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ‹‹ԱՐԵՆԻ›› ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

08.10.2018 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի նախաձեռնությամբ ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպվեց հերթական մեկօրյա արտադրական պրակտիկան ‹‹Արենի›› գինու գործարանում:

Նման պրակտիկաները կարևորվում են ուսանողների գործնական կարողությունները զարգացնելու առումով:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ

10.10.2018 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գևորգ Հերգնյանը Դիլիջանում մասնակցել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող երիտասարդների տնտեսական հզորացման ծրագրին (Youth Economic Empowerment / Easter Partnership Civil Society Forum), որը վերաբերում էր սոցիալական ձեռներեցությանը և նրա հետագա, հեռանկարային զարգացմանը մասնակից երկրներում: Նրա ներկայացրած ծրագիրը արժանացել է բարձր գնահատականի:

ԳՊՀ «ՆԱԻՐԻ» ԹԻՄԸ ԴԱՏԱԽԱՂԻ ՄԱՍՆԱԿԻՑ

11.10.2018 թ.

Ս. թ. հոկտեմբերի 6-ին Աղվերանում մեկնարկեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) կողմից արդեն երրորդ տարին անցկացվող քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված միջբուհական դատախաղի բանավոր փուլը: Այս տարի մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել Հայաստանի Հանրապետության և Արցախի տարբեր բուհեր ներկայացնող 10 թիմեր:

Գրավոր փուլը հաջողությամբ հաղթահարեցին Գավառի պետական համալսարանի «Նաիրի», Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի «BONA FIDE» և «Ավրորա», Երևանի պետական համալսարանի «ԵՊՀ 1» և «ԵՊՀ 2», ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Օրենքի պատվար» թիմերը:

ԳՊՀ-ն ներկայացնող «Նաիրի» թիմն արժանացավ ՀՀ դատավորների միության կողմից սահմանված «ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների նշանակության կարևորման և լավագույն կիրառման համար» մրցանակին:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «ABIONET» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

14.10.2018 թ.

Ս. թ. հոկտեմբերի 9 - 13-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դրեզդենի տեխնիկական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական միության «ERASMUS+ - ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի հերթական աշխատաժողովը:

Աշխատաժողովին ներկա էին պատվիրակներ ծրագիրը համակարգող Հունաստանի Սալոնիկի Ալեքսանդրի տեխնոլոգիական ինստիտուտից, եվրոպական գործընկեր բուհերից՝

Դրեզդենի տեխնիկական համալսարանից, Իտալիայի Տեռամոյի համալսարանից, Պորտուգալիայի կաթոլիկե համալսարանից, ծրագրի անդամ հանդիսացող հայաստանյան բուհերից, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանից:

‹‹ԱՊՐԱԾ ԵՎ ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐ››-Ը ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

14.10.2018թ.

Ս. թ. հոկտեմբերի 13-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի ակադեմիական խորհրդատու Լալա Մկրտչյանի նախաձեռնությամբ և համակարգչային ճարտարագիտության բաժնի 1-ին կուրսի ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ գրքի քննարկում:

Քննարկվեց հայ արձակագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի «Ապրած և չապրած տարիներ» վիպակը, որը հեղինակը նվիրել էր իր եղբոր՝ Կարո Պետրոսյանի հիշատակին:

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋ

15.10.2018 թ.

2018 թվականի հոկտեմբերի 9 - 13-ը Մոլդովայի Հանրապետության Քիշնևի տնտեսագիտության ակադեմիայում տեղի ունեցավ Եվրոպական միության ‹‹Էրասմուս + ՌԵՖԱՅՆ›› ծրագրի հերթական աշխատանքային հանդիպումը:

Ծրագրին անդամակցում են եվրոպական համալսարաններ Ավստրիայից, Նիդերլանդներից, Ֆրանսիայից և Սլովակիայից, ինչպես նաև բուհեր Մոլդովայից և Հայաստանի Հանրապետությունից՝ Գավառի պետական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական և Հայ-ռուսական համալսարանները:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՐԳԱՀՈՎԻՏՈՒՄ

18.10.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներ «Հայաստան. ծառատունկ» ծրագրի շրջանակներում այցելեցին Լոռվա մարզում գտնվող Մարգահովիտ գյուղ՝ բոստոնաբնակ Օհանյան ընտանիքի կողմից ֆինանսավորվող կրթական կենտրոն:

ԳՊՀ ուսանողները մասնակցեցին կենտրոնի կողմից կազմակերպված «Թափոններ» խորագրով համագործակցային (ինտերակտիվ) բնույթ կրող բնապահպանական դասընթացին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍՐԸՆԹԱՑ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ

19.10.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում կայացավ հերթական շնորհանդես-հաշվետվությունը: Բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի

նախաձեռնությամբ և ղեկավարությամբ բուհի համակարգչային ճարտարագիտության, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժինների տարբեր կուրսերի ուսանողներ ներկա էին գտնվել «ԴիջիԹեք Էքսպո-2018» եռօրյա տեխնոլոգիական ցուցահանդեսին, որը կրում էր «ՏՏ համաշխարհային համաժողովի ճանապարհին» խորագիրը:

ԳՊՀ -Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

19.10.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում հյուրընկալվեցին Մարտունու ավագ դպրոցի աշակերտները՝ դպրոցի տնօրեն Վարդան Ավետիսյանի ղեկավարությամբ և աշխատանքային գծով կազմակերպիչ Արփինե Ավետիսյանի ուղեկցությամբ:

Հյուրերին ողջունեց և բաց դաս վարեց Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, որից հետո նրանք եղան բուհի բնագիտության լաբորատորիայում և թանգարանում:

ՄԵԾ ՀԱՅԸ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ. ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ

19.10.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի, բուհի ուսանողական խորհրդի փոխնախագահ Գայանե Ղարիբյանի նախաձեռնությամբ և բանասիրական ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ կայացավ խոնարհման հուշ-ցերեկույթ՝ նվիրված Հայաստանի Ազգային հերոս Շառլ Ազնավուրի հիշատակին:

Ուսանողները մեծ ներշնչանքով ներկայացրին աշխարհահռչակ հայորդու կյանքն ու գործունեությունը:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԿԱՄՈՒՐՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԻՋԵՎ

20.10.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի, տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ալլա Սարգսյանի նախաձեռնությամբ կայացավ «Ֆրանկոֆոնիան յուրօրինակ կամուրջ Հայաստանի և Ֆրանսիայի միջև» խորագիրը կրող տեղեկատվական-ուսուցողական միջոցառումը:

Միջոցառմանը մասնակցում էին տնտեսագիտական ֆակուլտետի տարբեր բաժինների ուսանողներ:

ԳՊՀ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ

20.10.2018 թ.

Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը բուհի դասախոսների և դպրոցների ուսուցիչների համար անցկացրեց վերապատրաստման

դասընթաց՝ նվիրված ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արդի ձեռքբերումների կիրառմանը:

Վերապատրաստումն իրականացվեց ԳՊՀ ռազմավարական ծրագրում նախատեսված, կրթության որակի բարձրացմանը միտված գործողությունների, ինչպես նաև ‹‹ԳՊՀ-դպրոցներ›› համագործակցության ծրագրի շրջանակներում:

Դասընթացը վարեց ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Մարգար Հովհաննիսյանը:

ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ-2800

21.10.2018 թ.

Սույն թվականի հոկտեմբերի 21-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսի ուսանողները բուհի օտար լեզուների ամբիոնի դասախոս Աննա Բալագոզյանի և պատմության ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանի ղեկավարությամբ այցելեցին Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, ապա մասնակցեցին Էրեբունի-Երևանի ծննդյան 2800-ամյակին նվիրված տոնական միջոցառումներին:

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

23.10.2018 թ.

Գավառի պետական համալսարանը դասախոսների, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչների, կրթադաստիարակչական հաստատություններում աշխատող մանկավարժների, ուսանողների համար կազմակերպեց ‹‹Ներառական կրթության համատեքստում դպրոցականների հոգեբանամանկավարժական ախտորոշիչ (դիագնոստիկ) և զարգացնող աշխատանքների կազմակերպում›› խորագրով վերապատրաստման դասընթաց: Դասընթացը վարեց ԳՊՀ դասախոս Արմինե Դավթյանը:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

24.10.2018 թ.

2018 թվականի հոկտեմբերի 19-21-ը Հայաստանի Հանրապետության Դիլիջան քաղաքում անցկացվեց ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպված «Փախստականների իրավունք» խորագիրը կրող 8-րդ աշնանային դպրոցի դասընթացը:

Գավառի պետական համալսարանի պատվիրակների կազմում էին բուհի պրոռեկտոր, իրավաբանական կլինիկական կրթության ծրագրի ղեկավար Արսեն Ապրոյանը, ուսանողներ Մարիամ Տեր-Հակոբյանը, Անի Հարությունյանը, Նարեկ Հովեյանը, Անահիտ Ասատրյանը, Ռոբերտ Միրիբյանը և Տիգրան Հովեյանը, ովքեր ակտիվորեն մասնակցեցին դպրոցի աշխատանքներին և արժանացան խրախուսանքների:

ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

25.10.2018 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի բնագիտության լաբորատորիան հյուրընկալեց Գավառի թիվ 5 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին՝ կենսաբանության ուսուցչուհի Իրինա Խաչիկյանի ղեկավարությամբ:

Այցելության նպատակը «Կենսաբանություն» առարկայից գործնական աշխատանքների կազմակերպումն էր ԳՊՀ բնագիտության լաբորատորիայում:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՄ «ABIONET» ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

26.10.2018 թ.

Ս. թ. հոկտեմբերի 26-ին Երևանի պետական համալսարանի կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնում «ERASMUS+» հայաստանյան գրասենյակի կողմից անցկացվեց Եվրոպական միության «ERASMUS+ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի մշտադիտարկում:

Մշտադիտարկմանը հրավիրված էին ծրագրի մասնակից անդամներ Երևանի, Գավառի, Շիրակի պետական և Հայաստանի ազգային ագրարային համալսարաններից:

Գավառի պետական համալսարանում ծրագրի ընթացիկ արդյունքները ներկայացրին բուհի պրոռեկտոր, ծրագրի համակարգող Արսեն Ապրոյանը, բնագիտական ֆակուլտետի փոխդեկան Թերմինե Խաչիկյանը և կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Մարինե Հովհաննիսյանը:

ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՆ ՏԱՆ ՍԱՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

28.10.2018 թ.

Միավորված ազգերի կազմակերպության կողմից իրականացվող «Իմ իրավունքի ուժը /MRP/» ծրագրի շրջանակում Գավառի մանկան տան սաները այցելեցին Գավառի պետական համալսարան:

Նրանք հանդիպեցին բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանին, այնուհետև ԳՊՀ ուսանողական խորհրդի անդամներն անցկացրին հետաքրքիր դաս՝ նվիրված կրթության իրավունքին:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

30.10.2018 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի նախաձեռնությամբ ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժինների ուսանողների համար անցկացվեց հերթական մեկօրյա արտադրական պրակտիկա: ԳՊՀ ուսանողները այցելեցին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, որտեղ հանդիպեցին աշխատակիցների հետ, շրջեցին ազգային բանկի թանգարանում, ծանոթացան հնում գործածության մեջ եղած մետաղադրամներին ու թղթադրամներին, ինչպես նաև շրջանառության մեջ դրված նոր թղթադրամներին:

ԿԱՅԱՑԱՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

02.11.2018 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանն այցելեց Գավառի պետական համալսարան և հանդիպեց բուհի ուսանողների, պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի անդամների հետ: Բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ներկայացրեց Գեղարքունյաց աշխարհի միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատության ստանձնած առաքելությունը, 25 տարիների անցած ճանապարհը, արձանագրած ձեռքբերումները, մարզի կրթական, սոցիալական, մշակութային ոլորտներում ունեցած դերակատարությունը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

07.11.2018 թ.

Ս. թ. նոյեմբերի 6-ին Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցավ ուսանողական գիտական ընկերության հերթական՝ 8-րդ նստաշրջանը՝ նվիրված Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին հանրապետության հռչակման 100-ամյակներին:

Գիտաժողովին մասնակցում էին ուսանողներ Գավառի պետական, Հայաստանի ամերիկյան, Վանաձորի, Արցախի, Հայաստանի պետական մանկավարժական համալսարաններից, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտից, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից, Գևորգյան հոգևոր ճեմարանից:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՆ ԳԱՎԱՌՈՒՄ

08.11.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանը և «Luseen Technologies» տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոնը համատեղ իրականացրին «Ծրագրավորողի մասնագիտությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատելու հնարավորությունները Գավառում» թեմայով բաց դասախոսություն:

Միջոցառման նպատակն էր աշակերտներին ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտությունների առանձնահատկությունները, բացահայտել ծրագրավորողի մասնագիտական նկարագիրը, ցույց տալ Գավառում աշխատելու իրական հնարավորությունները:

Բաց դասախոսությանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ուսուցիչներ և աշակերտներ Սևանի ավագ, Սարուխանի թիվ 3 միջնակարգ, Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոցներից:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏԻ ՀԱՅ ՀՍԿԱՆ՝ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

09.11.2018 թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Արփինե Զարգարյանի նախաձեռնությամբ կայացավ գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված հայ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ Արամ Խաչատրյանի 115-ամյակին:

Միջոցառմանը ներկա էին Գավառի երաժշտական դպրոցի ներկայացուցիչներ, բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի անդամներ, ուսանողներ, աշակերտներ Սարուխանի թիվ 3 միջնակարգ դպրոցից՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Վարդուհի Աբրահամյանի ղեկավարությամբ:

ԳՊՀ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵՑ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՑ ԴԱՍԵՐԻ ՇԱՐՔ

14.11.2018 թ.

Գավառի պետական համալսարանում կազմակերպվեց բաց դասերի շարք՝ «Կենսաբանություն», «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաների շրջանակներում, դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար: Թեմաներն ընտրվել էին համապատասխան հարցումների արդյունքում:

ԲԱՑ ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ

16.11.2018 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության բաժնի 2-րդ կուրսի գերազանցիկ ուսանող Նարեկ Օհանյանը անցկացրեց բաց դաս՝ նվիրված թռչուններին:

Դասը խիստ հետաքրքրական էր, քանի որ հմուտ դասախոսի դերում հանդես եկող ԳՊՀ ուսանողը լսարանին ներկայացնում էր կենդանի թռչուններ:

Բաց դասին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ուսուցիչներ և աշակերտներ Գավառի թիվ 1, թիվ 3, թիվ 4, թիվ 5 հիմնական դպրոցներից և Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցից:

«ԳԱԶԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱ

17.11.2018 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արտյոմ Շեկյանը անցկացրեց բաց դաս՝ նվիրված գազային օրենքներին: Բաց դասին ներկա էին ուսանողներ, ուսուցիչներ և աշակերտներ Գավառի թիվ 8, Նորատուսի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցներից, ինչպես նաև Գավառի թիվ 1 հիմնական դպրոցից:

ԲԱՑ ԴԱՍ ԳՊՀ-ՈՒՄ

17.11.2018 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Ավետիսյանն անցկացրեց բաց դաս՝ «Իոնափոխանակման ռեակցիաներ» թեմայով:

Բաց դասին մասնակցում էին Գավառի թիվ 4 հիմնական դպրոցի, Նորատուսի թիվ 1 և թիվ 3 միջնակարգ դպրոցների ուսուցիչներ ու աշակերտներ:

ՍԵՎԱՆԱ ՀՔՆԱՂ ԼՃԻ ԱՄՈՔՈՒՄԸ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՊԱՀԱՆՋ

18.11.2018 թ.

Ս . թ. նոյեմբերի 17-ին կայացավ գիտաժողով՝ նվիրված Սևանա լճի հիմնախնդիրներին: Գիտաժողովը կազմակերպվել էր Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) և Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի կողմից՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների եվ բնական պաշարների նախարարության աջակցությամբ: ԳՊՀ-ից գիտաժողովին մասնակցեցին տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը, կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոսներ Գայանե Խաչատրյանը և Աստղիկ Ավետիսյանը, «Ֆինանսներ» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Քրիստինե Հակոբյանը և բնագիտական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիաննա Գասպարյանը:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՌՈՒՍԱՅ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

18.11.2018 թ.

Գավառի պետական համալսարանի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Սարգսյանը վարեց բաց դասախոսություն՝ «Ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործընթացում» թեմայով: Դասախոսության նպատակն էր բուհի դասախոսական անձնակազմին, ուսանողներին և թեմայով հետաքրքրված անձանց ներկայացնել նորագույն տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման փորձը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում:

ԵՄ «SMART» ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

19.11.2018 թ.

2018 թվականի նոյեմբերի 12 - 18-ը Իսպանիայի Թագավորության Մուրսիայի կաթոլիկ համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական միության «SMART-ուսանող-ձեռնարկություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացում՝ «խելացի սրճարանների» (SMART caffees) միջոցով» ծրագրի հեթական աշխատանքային հանդիպումը: Աշխատանքային հանդիպմանը Գավառի պետական համալսարանից մասնակցեցին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և գլխավոր հաշվապահ, տնտեսագիտական ֆակուլտետի դասախոս Գուրգեն Մուրադյանը:

«ԱԼԿԵՆՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԲԱՑ ԴԱՍ ԳՊՀ-ՈՒՄ

20.11.2018 թ.

Ս. թ. նոյեմբերի 18-ին Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներին՝ քիմիայի ուսուցչուհի Սիրանուշ Գրիգորյանի ուղեկցությամբ: Աշակերտների մասնակցությամբ կայացավ բաց դաս, որը վարում էին ԳՊՀ դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Արտաշես Թադևոսյանն ու ԳՊՀ «Դեղագործական քիմիա» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Սաքեյանը:

ՈԱԱԿ-Ի ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՅՑ ԳՊՀ

20.11.2018 թ.

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) մշտադիտարկումներ է իրականացնում պետական և ոչ պետական, հավատարմագրված և դեռևս ինստիտուցիոնալ հավատարմագրում չունեցող բուհերում, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու համակարգային խնդիրները, արձանագրելու բուհերի ձեռքբերումները և վեր հանելու լավագույն փորձը: Գավառի պետական համալսարանը սահմանված կարգով ինստիտուցիոնալ հավատարմագրում է ստացել 2017 թվականին՝ չորս տարի ժամկետով: ՈԱԱԿ-ի մշտադիտարկման հանձնաժողովը այցելեց Գավառի պետական համալսարան՝ ծանոթանալու բուհում որակի ապահովման գործընթացներին, տեղեկանալու բարելավման պլանի իրականացման գործողություններին և արդյունքներին:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

22.11.2018 թ.

Ս. թ. նոյեմբերի 21-ին Գավառի պետական համալսարանում կայացավ «Ռուսաց լեզուն որպես մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային շփման երաշխիք 21-րդ դարում» խորագրով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովը կազմակերպել էր Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը: Գիտաժողովին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ռուսաց լեզվի ուսուցիչներ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի թիվ 4 հիմնական, Սևանի ավագ, Հրազդանի թիվ 7 և թիվ 11 հիմնական դպրոցներից, Կարմիրգյուղի թիվ 2, Գանձակի թիվ 1 և թիվ 2, Լանջաղբյուրի, Ծաղկաշենի միջնակարգ դպրոցներից: Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մասնագիտական բաժանմունքներում:

ՏԵՍԱԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՄԱԿԱՐԳ ԳՊՀ-ՈՒՄ

23.11.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բաժնի աշխատակից Մարգար Հովհաննիսյանը և բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Կարեն Մաստոյանը ինտերակտիվ ձևաչափով ներկայացրին «BigBlueButton» տեսակոնֆերանսի համակարգը:

ԳՊՀ ՏՏ բաժնի կողմից առաջարկվող համակարգը հնարավորություն է ընձեռում անցկացնելու հեռավար դասեր, համակարգչային կոնֆերանսներ, վեբինարներ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ

24.11.2018 ***թ.***

Սույն թվականի նոյեմբերի 14 - 18-ը Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Խաչատրյանը մասնակցեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին քաղաքում կայացած միջազգային համաժողովին՝ նվիրված Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի 100-ամյակին: Համաժողովը կազմակերպել էր Ֆրանկո-գերմանական երիտասարդական համագործակցության գրասենյակը (OFAJ -DFJW): Միջազգային համաժողովին մասնակցում էին 500 պատվիրակներ աշխարհի 48 երկրներից:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ ԳՊՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ

24.11.2018 ***թ.***

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողները, բնագիտության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Թերմինե Խաչիկյանի ղեկավարությամբ ‹‹Գենային ճարտարագիտություն›› դասընթացի շրջանակում իրականացրին փորձարարական դաս՝ գել-էլեկտրաֆորեզ մեթոդի կիրառմամբ: Ուսանողները դասախոսի օգնությամբ պատրաստեցին ագարոզային գել (1%-անոց), որտեղ հատուկ բաղադրիչի միջոցով ձևավորեցին գրպանիկներ, որոնք նախատեսված էին ԴՆԹ-ի չորս տեսակի նմուշների ներմուծման համար:

ԳՊՀ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼՍԱՐԱՆԸ ՎԵՐԱԾՎԵԼ ԷՐ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ

24.11.2018 ***թ.***

Այսօր Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ բուհում տեղի ունեցավ հետաքրքիր և յուրօրինակ դատավարություն: Շահամիր Շահամիրյանի անվան լսարանը վերածվել էր դատական նիստերի դահլիճի: Դատական նիստը վարում էր Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության ամբիոնի սիրված դասախոս Մնացական Հարությունյանը: Նիստին մասնակցում էին վերոնշյալ ֆակուլտետի իրավագիտության բաժնի ուսանողները:

ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

25.11.2018 թ.

Ս. թ. նոյեմբերի 25-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի 1-ին կուրսի ուսանողները կուրսղեկ Լալա Մկրտչյանի նախաձեռնությամբ կազմակերպեցին գրքի քննարկում: Այս անգամ ուսանողների առաջարկությամբ ընտրվել էր Ռաքել Պալացիոյի «Հրաշք» (‹‹Wonder››) վեպը, որը հրատարակվել է 2012 թվականին:

ПРЕДСТАВИТЕЛИ ГГУ НА МЕЖДУНАРОДНОМ ФОРУМЕ

27.11.2018 г.

21-24 ноября 2018 года в Ереванском государственном университете языков и социальных наук имени В. Я. Брюсова состоялся XIV Международный форум “Диалог языков и культур СНГ и ШОС /Шанхайская организация сотрудничества/ в XXI веке”. Форум был организован совместными усилиями Московского государственного лингвистического университета и Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Я. Брюсова при финансовой поддержке Межгосударственного фонда гуманитарного сотрудничества СНГ.

ԿԼԻՄԱՅԻ ԳԼՈԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

30.11.2018 թ.

Ս. թ. նոյեմբերի 30-ին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում կայացավ հերթական բաց դասը «Աշխարհագրություն» առարկայից՝ ‹‹Կլիմայի գլոբալ փոփոխությունը և Հայաստանը›› թեմայով:

Բաց դասին մասնակցեցին Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի և Դդմաշենի ավագ դպրոցի աշակերտներ և ուսուցիչներ: Դասի ընթացքում ներկայացվեցին կլիմայի գլոբալ փոփոխությունները, դրանց առաջացման պատճառներն ու հետևանքները:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԻՆ

30.11.2018 թ.

Սույն թվականի նոյեմբեր ամսին լույս տեսավ Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Աշխունջ Պողոսյանի հեղինակած ուսումնամեթոդական ձեռնարկը՝ նվիրված Հայաստանի պատմական ժողովրդագրությանը:

ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

30.11.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ավագ դպրոցի և Դդմաշենի միջնակարգ դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին:

Հյուրերին ողջունեց բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ով աշակերտների հետ անցկացրեց դաս՝ «Ապագայի իմ տեսլականը» թեմայով: Այնուհետև ԳՊՀ բնագիտական լաբորատորիայի վարիչ Թերմինե Խաչիկյանը հյուրերին ծանոթացրեց լաբորատոր

սարքավորումներին: Հյուրերը այցելեցին նաև բուհի՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական, հնագիտական թանգարան:

ԲԱՐԵՎ, ՄԵ՛ՆՔ ԵՆՔ...

30.11.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում կայացավ բուհում ամենասիրված և սպասված միջոցառումներից մեկը, որը կրում է «Բարև՛, մե՛նք ենք...» խորագիրը: Գեղեցիկ և ինքնատիպ ցերեկույթի հերոսները առաջին կուրսեցիներն էին՝ ‹‹Գավառի պետական համալսարան›› կոչվող մեծ ընտանիքի կրտսեր անդամները, համալսարանի ուսանողների 26-րդ սերնդի ներկայացուցիչները:

ԹԱՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՔԱՐԵ ՍԻՄՖՈՆԻԱՆ ...

01.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը խորհրդի նախագահ, «Ֆինանսներ» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալլա Սարգսյանի ղեկավարությամբ նախաձեռնել էր հետաքրքիր և ուսուցողական միջոցառում՝ նվիրված Ալեքսանդր Թամանյանի կյանքին ու գործունեությանը:

Ցերեկույթին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսանողական համակազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև ուսանողներ և դասախոսներ՝ Գավառի՝ ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից, աշակերտներ և ուսուցիչներ Վարդենիսի ավագ դպրոցից:

ИСТОРИЧЕСКИЙ КОММЕНТАРИЙ КАК СПОСОБ ИССЛЕДОВАНИЯ ТЕКСТА

02.12.2018 г.

1 декабря 2018г. в Гаварском государственном университете преподавателем кафедры иностранного языка и литературы филологического факультета А.Б. Оганесян была проведена открытая лекция на тему «Исторический комментарий как способ исследования текста». Среди присутствующих были начальник департамента академической политики ГГУ А.А. Гарибян, декан филологического факультета Т.А. Асоян, зав. кафедрой иностранного языка и литературы Г.А. Мирибян, преподаватели и студенты факультета.

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՎԱՌՆԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԸ ԳՊՀ-ՈՒՄ

02.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Բուլղարիայի Վառնայի կառավարման համալսարանի դասախոս, հետազոտող Ռալկո Վլադիսլավին, ով հանդես եկավ բաց դասախոսությամբ:

Դասախոսությունը նվիրված էր բիզնեսի կայունության ապահովման խնդիրներին:

ՄԱՇՏՈՑՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ ԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

03.12.2018 թ.

Ս. թ. դեկտեմբերի 2-ին Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն պարոն Վիկտոր Կատվալյանը անցկացրեց բաց դասախոսություն՝ «Մաշտոցյան այբուբենը և ուղղագրական համակարգը» թեմայով:

Դասախոսությանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ուսանողներ:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

05.12.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի ակադեմիական խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի նախաձեռնությամբ կայացավ ուսուցողական ցերեկույթ՝ նվիրված հայ անվանի մարզիկներին:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց ծանրամարտ մարզաձևը: Կենսաբանության, համակարգչային ճարտարագիտության, դեղագործական քիմիայի բաժինների երկրորդ կուրսերի ուսանողները բովանդակալից շնորհանդեսների միջոցով ներկայացրին հայ անվանի մարզիկներին, նրանց ձեռքբերումները համաշխարհային սպորտում:

ԳԱՎԱՌԻ ՍԱՄՎԵԼ ՔՈՉԱՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

06.12.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի բնագիտության լաբորատորիան հյուրընկալել էր Գավառ քաղաքի Սամվել Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտներին՝ կենսաբանության ուսուցչուհի, ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի շրջանավարտ Մարինա Սաղաթելյանի ուղեկցությամբ:

Այցելության նպատակը «Կենսաբանություն» առարկայից գործնական աշխատանքների կազմակերպումն էր ԳՊՀ բնագիտության լաբորատորիայում:

ԴԴՄԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

07.12.2018 թ.

Գավառի պետական համալսարան էին այցելել ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտները և ուսուցիչները: Աշակերտները նախ եղան բուհի բնագիտական լաբորատորիայում, որտեղ մասնակցեցին ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատոր փորձերի:

Աշակերտները ներկա գտնվեցին նաև Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին նվիրված բաց դասին:

ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

07.12.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ բաց դաս՝ «Բնական աղետները և դրանց հետևանքները» թեմայով՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին:

Դասը վարում էր բագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանը:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԶԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

08.12.2018 թ.

Ս. թ. դեկտեմբերի 7-ին Գյումրիում մեկնարկեց «Մարզերի հզորացումը բարձր տեխնոլոգիաների խթանմամբ» խորագրով երկօրյա համաժողովը:

Համաժողովը համախմբել էր տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում ներգրավված ձեռնարկատերերի, երիտասարդ մասնագետների Հայաստանի բոլոր մարզերից:

ՀՀ Գեղարքունիքի մարզի պատվիրակությունը ղեկավարում էր ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, «Luseen Mobile» ընկերության համահիմնադիր, «Luseen technologies» SS կենտրոնի համահիմնադիր նախագահ Վարազդատ Ավետիսյանը:

ՆԱՄԱԿ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻՆ...

09.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանը շարունակում է «Նամակ հայ զինվորին» խորագրով ակցիան:

Ամանորին ընդառաջ բուհի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները պատրաստեցին հայ զինվորին հասցեագրված նամակներ:

Նամակներն առաքվեցին Հայաստանի և Արցախի տարբեր զորամասերում ծառայող քաջարի զինվորներին՝ փոխանցելով սիրո, ջերմության, երախտագիտության զգացումներ ու ամանորյա բարեմաղթանքներ:

ԿԱՅԱՑԱՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ «ERASMUS+BOOST» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

13.12.2018 թ.

Ս. թ. դեկտեմբերի 12-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում Եվրոպական միության «ERASMUS+ BOOST-Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանում» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ վերապատրաստման դասընթաց: Գավառի պետական համալսարանից վերապատրաստմանը մասնակցեց բուհի արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ «ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԵՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

15.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին «Լրագրողական մարտեր» մրցութային նախագծին և ավելի քան երկու ամիս «մարտնչեցին» Երևանի պետական համալսարանի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, Շիրակի պետական համալսարանի և Վանաձորի պետական համալսարանի լրագրող ուսանողների հետ:

Դեկտեմբերի 14-ին կայացավ «Լրագրողական մարտեր» մրցանակաբաշխության արարողությունը: ԳՊՀ ուսանողներին՝ Գայանե Ղարիբյանին, Նարեկ Ասատրյանին և Վահե Գոզեյանին, հաղթողի մրցանակը հանձնեց «Ազատություն» ռադիոկայանի տնօրեն Հրայր Թամրազյանը՝ նշելով, որ իր համար ուրախալի է մարզերում այսպիսի տաղանդավոր երիտասարդներ տեսնելը:

ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

15.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ բուհի ամենամյա՝ 21-րդ գիտաժողովը, որը նվիրված էր Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-րդ տարեդարձին:

Գիտաժողովին մասնակցեցին ութսունից ավելի հեղինակներ և համահեղինակներ Գավառի պետական համալսարանից և Հայաստանի տարբեր բուհերից ու գիտահետազոտական ինստիտուտներից: Ձեկուցում էր ներկայացվել նաև Արցախի պետական համալսարանից:

СЕТЕВАЯ ЛИТЕРАТУРА (СЕТЕРАТУРА) КАК ЯВЛЕНИЕ ПОСТМОДЕРНИЗМА

17.12.2018 г.

В Гаварском государственном университете состоялся открытый урок «Сетевая литература (Сетература) как явление постмодернизма», который провела заведующий кафедрой иностранного языка и литературы филологического факультета ГГУ, кандидат филологических наук Мирибян Гаяне Ашотовна.

На уроке присутствовали декан филологического факультета ГГУ Т. Асоян, заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ В. Григорян, начальник департамента академической политики ГГУ А. Карибян, преподаватели, студенты факультета.

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՂԱԾ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

17.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ շրջանավարտ Վարսիկ Ներսիսյանը վարեց բաց դասախոսություն՝ «Հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսակետները 5-19-րդ դարերում» թեմայով:

Բաց դասին մասնակցում էին բանասիրական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների հայոց լեզվի և գրականության, տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժինների մագիստրատուրայի առաջին կուրսերի ուսանողները:

ԳՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԸ ‹‹ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ››

18.12.2018 թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը երեք տարի անընդմեջ իրականացնում է «Երիտասարդական մրցանակաբաշխություն» ծրագիրը:

Ամփոփվեցին «Երիտասարդական մրցանակաբաշխություն-2018» ծրագրի արդյունքները: Եզրափակիչ միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնակատար Արայիկ Հարությունյանը, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանը, փոխնախարարներ, զինվորականներ, այլ հյուրեր:

Այս տարի առաջին անգամ ներկաների ընտրությամբ որոշվեց «Տարվա երիտասարդը»: Նշված անվանակարգում հաղթող ճանաչվեց Գավառի պետական համալսարանի շրջանավարտ, «Գեղարեգ» կրթամշակութային երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ, Գավառ համայնքի ավագանու անդամ, Գավառի և Գեղարքունիքի զարգացման գործի ջատագով Գրիգոր Դաշտոյանը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

21.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի ուսումնական խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի նախաձեռնությամբ կայացավ ուսանողական գիտաժողով՝ «Էպիլեպսիա. դիվահարությունից մինչև գիտական բժշկություն» թեմայով:

Ուսանողական գիտաժողովի նպատակն էր ներկայացնել տարածված և դեռևս մինչև վերջ չբացահայտված հիվանդության՝ էպիլեպսիայի ծագումնաբանությունը, պատճառները, դրսևորումները, ախտորոշման և բուժման եղանակները:

РАЗВИТИЕ КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ ПРИ ОБУЧЕНИИ РУССКОМУ ЯЗЫКУ КАК ИНОСТРАННОМУ: ТЕХНОЛОГИЯ “ШЕСТЬ ШЛЯП МЫШЛЕНИЯ” ЭДВАРДА ДЕ БОНО

23.12.2018 թ.

В Гаварском государственном университете состоялась открытая лекция на тему “Развитие критического мышления учащихся при обучении русскому языку как иностранному: технология “Шесть шляп мышления” Эдварда де Боно”. Лекцию провела доцент кафедры иностранного языка и литературы, кандидат педагогических наук Мухсихачоян А. М. На лекции присутствовали декан филологического факультета ГГУ Асоян Т., начальник департамента академической политики ГГУ Карибян А., заведующий кафедрой иностранного языка и литературы Мирибян Г., учителя школ, преподаватели кафедры иностранного языка и литературы, студенты факультета.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԱԽՆԴԻՐ ՊԱՀԱՆՋ

24.12.2018 թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) նախագահ Գագիկ Մակարյանին և Կոտայքի ու Գեղարքունիքի մարզերի գործատուների տարածքային միությունների նախագահներ Աշոտ Օհանյանին և Վահան Գևորգյանին:

Գավառի պետական համալսարանի պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը հանդես եկավ բացման խոսքով՝ կարևորելով բուհ-աշխատաշուկա կապերի ակտիվացումը, գործատուների կարիքների և պահանջների բացահայտումը և դրանց համապատասխան միջոցների ձեռնարկումը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԳՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՆ ԳՐՔԻ ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԹԻՎ

26.12.2018 թ.

Լույս է տեսել Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի շրջանավարտ Թամարա Ավանեսյանի՝ «Բիզնես էթիկայի պարզ արվեստը» գիրքը, որի շնորհանդեսը կայացավ ս. թ. դեկտեմբերի 25-ին:

Գիրքը բովանդակում է բիզնես էթիկայի կանոններ, որոնք հենվում են բարեվարքության ընդհանուր կանոնների վրա և միաժամանակ հաշվի են առնում գործարար ոլորտի առանձնահատկությունները:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ԳՊՀ ՊԱՏՎՈԳՐԵՐՈՎ ՈՒ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ

28.12.2018 թ.

Ս. թ. դեկտեմբերի 27–ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողներ Գայանե Ղարիբյանը, Վահե Գոզեյանը, Նարեկ Ասատրյանը արժանացան պատվոգրերի՝ «Լրագրողական մարտեր» մրցույթին մասնակցելու և հաղթող ճանաչվելու համար, իսկ նույն բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Ալվինա Գրիգորյանը, անգլերեն լեզվի և գրականության բաժնի չորրորդ կուրսի ուսանողներ Սեդա Հակոբյանն ու Մարիամ Խաչատրյանը ստացան շնորհակալագրեր՝ մրցույթի առաջին փուլին ակտիվորեն մասնակցելու համար:

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

30.12.2018 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում կայացավ ամանորյա գեղեցիկ միջոցառում:

Համալսարանական մեծ ընտանիքի անդամները միասին, բարձր տրամադրությամբ, յուրօրինակ ձևով ամփոփեցին 2018 թվականի գործունեության արդյունքները և արտահայտեցին իրենց դրական սպասումները 2019 թվականից:

Տոնական միջոցառումն ուղեկցվեց ինտելեկտուալ խաղերով, հումորով, երգ-երաժշտությամբ, ջերմ բարեմաղթանքներով, սիրո և երախտագիտության անկեղծ խոսքերով:

ԳՊՀ-ՈՒՄ ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ‹‹ԱՄԱՆՈՐՅԱ ԽՈՐՀՈՒՐԴ. . .›› ԽՈՐԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*30.12.2018 **թ.***

2018 թվականի դեկտեմբերին Գավառի պետական համալսարանում կազմակերպվեց ներբուհական մրցույթ՝ ‹‹Ամանորյա խորհուրդ. . .›› խորագրով:

Ամանորյա մրցույթի արդյունքներն ամփոփվեցին, և ‹‹ԳՊՀ ամենատոնական ֆակուլտետ›› անվանակարգում հաղթող ճանաչվեց բանասիրական ֆակուլտետը:

‹‹ԳՊՀ ամենագեղեցիկ լսարան›› անվանակարգում ‹‹հաղթեց›› հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի երաժշտության լսարանը:

‹‹Ամանորյա խորհրդին համահունչ ԳՊՀ աշխատասենյակ›› ճանաչվեցին համալսարանի վարչական անձնակազմի բոլոր աշխատասենյակները:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՄ ‹‹MENVIPR›› ԾՐԱԳԻՐԸ

*15.01.2019 **թ.***

Ս. թ. հունվարի 14-15-ին Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ազգային էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում կայացավ Եվրոպական միության «Հայաստանում և Վրաստանում շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ կրթական ծրագրերի արդիականացում (MENVIPR)» թեմայով ծրագրի մեկնարկային աշխատաժողովը:

Ծրագրին որպես գործընկեր անդամակցում է Գավառի պետական համալսարանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ‹‹ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ›› ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ

*15.02.2019 **թ.***

2018 թվականի «Լավագույն ուսանող» մրցույթում հաղթող ճանաչվեցին Գավառի պետական համալսարանի վեց գերազանցիկ ուսանողներ. 1-ին տեղը զբաղեցրեց ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհի Մելսիդա Թովմասյանը, 2-րդ տեղում հաղթող ճանաչվեցին բնագիտական ֆակուլտետի բակալավրիատի ուսանող Կարեն Մաստոյանը, բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհիներ Ալվինա Գրիգորյանը և Լիլիթ Ներսիսյանը, երրորդ տեղում՝ բանասիրական ֆակուլտետի բակալավրիատի ուսանողուհիներ Մարիամ Խաչատրյանն ու Գայանե Ղարիբյանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱԼԱՄԱՆԿԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

18.02.2019 թ.

Ս. թ. փետրվարի 10-16-ը Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի դասախոսներ Դավիթ Թորոսյանն ու տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գայանե Խաչատրյանը մեկշաբաթյա դասախոսական աշխատանք կատարեցին Իսպանիայի Թագավորության Սալամանկայի համալսարանում:

ԳՊՀ դասախոսները հանդես եկան ութժամյա դասախոսություններով, որոնց թեմաներն առնչվում էին ֆինանսական համակարգին, բյուջեին, հարկային բեռին, տնտեսության մեջ զբոսաշրջության կարևորությանը, տուրիզմ-տնտեսություն սերտ կապերին:

ԿԱՅԱՑԱՎ ‹‹ՆՎԻՐԻ՛Ր ԳԻՐՔ, ՊԱՐԳԵՎԻ՛Ր ԺՊԻՏ›› ԱԿՑԻԱՆ

19.02.2019 թ.

Հայաստանում փետրվարի 19-ը՝ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, 2008 թվականից ՀՀ կառավարության և Գրողների միության նախաձեռնությամբ նշվում է որպես գիրք նվիրելու օր:

Կարևորելով ընթերցանության խրախուսումը՝ Գավառի պետական համալսարանն ու ՀՀ Գեղարքունիքի մարզի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնն այսօր Գավառի հրապարակում կազմակերպել էին գրքեր նվիրելու ակցիա:

ԳՊՀ աշխատակիցներն ու ուսանողները, Գեղարքունիքի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի ներկայացուցիչներն ավելի քան 100 գիրք բաժանեցին անցորդներին՝ նրանց պարգևելով ժպիտ ու բարձր տրամադրություն:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԳՊՀ ՊՐՈՖԵՍՈՐ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆԻՆ

20.02.2019 թ.

«Ասողիկ» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» գրքի առաջին հատորը: Այն հեղինակել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Կատվալյանը: Աշխատության մեջ ընդհանուր գծերով ներկայացված են Գեղարքունիքի մարզում գործածվող բարբառային միավորները, տրվում են տեղեկություններ բնակչության տեղաշարժերի, խոսվածքների բարբառային պատկանելության վերաբերյալ, բերվում են մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 37 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՑ 6-Ը ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԵՆ

20.02.2019 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի ռեկտորատի նիստում խրախուսվեցին ‹‹Լավագույն ուսանող›› հանրապետական մրցույթում հաղթող ճանաչված ԳՊՀ ուսանողները:

Մրցութային հանձնաժողովի որոշմամբ ‹‹Լավագույն ուսանող›› տիտղոսին արժանացան ՀՀ 15 բուհի 37 ուսանողներ, որոնցից 6-ը Գավառի պետական համալսարանի ուսանողներ են:

Բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն շնորհավորեց ուսանողներին, մաղթեց նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ և ռեկտորատի կողմից պատվոգրեր շնորհեց նրանց:

‹‹ԴԱՐԵՐԴ ՀԱՅԵՐԵՆ ԵՆ ԳԱԼՈՒ. . .››

*21.02.2019 **թ.***

Այսօր Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանատի և բուհի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացավ «Դարերդ հայերեն են գալու. . .» խորագիրը կրող ցերեկույթը՝ նվիրված Մայրենի լեզվի միջազգային օրվան:

Ցերեկույթին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչներ, ինչպես նաև Գավառի ավագ դպրոցի աշակերտները՝ փոխտնօրեն Ալիտա Բաբասյանի ուղեկցությամբ:

ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ԵՄ** «ERASMUS+ ABIONET» **ԾՐԱԳԻՐԸ

*28.02.2019 **թ.***

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական միության «ERASMUS+ ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրին:

Այսօր ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ ծրագրին նվիրված հերթական աշխատաժողովը:

Ծրագրային թիմի անդամներ Մարինե Հովհաննիսյանն ու Թերմինե Խաչիկյանը շնորհանդեսի միջոցով ֆակուլտետի ուսանողներին և դասախոսներին ներկայացրին ծրագրի նպատակներն ու խնդիրները, ընձեռած հնարավորությունները, աշխատանքների ընթացքը, միջանկյալ արդյունքները:

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

*01.03.2019 **թ.***

Այսօր Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հավաքագրման և ներգրավման ղեկավար Գոռ Նազարյանին և հավաքագրման մասնագետ Երվանդ Աբրահամյանին, ովքեր ներկայացրին հիմնադրամի ծրագրերն ու գործունեության նպատակը:

Հանդիպմանը ներկա էին տարբեր ֆակուլտետների ուսանողներ, դասախոսներ:

ԳՊՀ-Ն ԱՆՑԿԱՑՐԵՑ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՇԱՐՔ

*14.03.2019 **թ.***

Գավառի պետական համալսարանը ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար կազմակերպեց առարկայական օլիմպիադաների շարք «Հայոց լեզու և գրականություն», «Հայ ժողովրդի պատմություն»,

«Անգլերեն», «Ռուսաց լեզու», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Մաթեմատիկա» և «Կենսաբանություն» առարկաներից:

ԲԱՑ ԴԱՍ՝ «ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱԿԻՑ ԵՎ ՈՉ ՑԵՂԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԵՏ» ԽՈՐԱԳՐՈՎ

16.03.2019 թ.

Ս. թ. մարտի 16-ին Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարսիկ Ներսիսյանի նախաձեռնությամբ և հայոց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ բաց դաս ՝ «Հայերենի առնչությունը ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ» խորագրով:

Ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, հայոց լեզվի և գրականության, անգլերեն լեզվի և գրականության բաժինների ուսանողներ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՐԵԿՈՒՅԹ ԳՊՀ-ՈՒՄ

20.03.2019 թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանի, բուհի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Օլգա Ղազարյանի և ԳՊՀ դասախոս, Գավառի երաժշտական դպրոցի տնօրեն Արփինե Զարգարյանի համատեղ նախաձեռնությամբ ֆակուլտետում կայացավ գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին:

ԳՊՀ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

20.03.2019 թ.

Գավառի պետական համալսարանում անցկացվեց կրթության բովանդակությանը վերաբերող վերապատրաստման դասընթաց: Դասընթացը վարեց մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳՊՀ դասախոս Էդվարդ Այվազյանը:

Մասնակցեցին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, մանկավարժներ Գավառի Սամվել Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցից, Գավառի Մնացական Բունիաթյանի անվան թիվ 8, Կարմիրգյուղի թիվ 2, Նորատուս գյուղի թիվ 1, Գանձակ գյուղի թիվ 2 և Լճափ գյուղի միջնակարգ դպրոցներից:

ԲԱՑ ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ ԵՆ ԳՊՀ ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԸ

20.03.2019 թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողներ Մերի Ջանոյանը և Գոհար Ոսկանյանը իրենց մագիստրոսական պրակտիկայի շրջանակներում անցկացրին բաց դաս՝ «Արտթերապիա, հեքիաթաթերապիա» թեմայով:

Դասին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

ԳՊՀ-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

*20.03.2019 **թ.***

Ս. թ. մարտի 11 - 18-ը Լեհաստանի՝ Եվրոպական միության «էրազմուս+» ծրագրի գրասենյակի նախաձեռնությամբ Լոձի սոցիալական գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ աշխատաժողով, և կայացան «էրազմուս+» ծրագրերի տեղեկատվական օրերը:

Աշխատաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ տարբեր պետություններից՝ Հայաստանից, Վրաստանից, Բելառուսից, Ուկրաինայից, Ուզբեկստանից, ինչպես նաև պատվիրակներ ԱՄՆ-ից, Արգենտինայից, Վիետնամից:
Հայաստանի Հանրապետությունից աշխատաժողովին մասնակցեց Գավառի պետական համալսարանի պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

ԿԱՅԱՑԱՎ ԿԱՆԱՆՑ, ՄԱՅՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՐԵԿՈՒՅԹ

*22.03.2019 **թ.***

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի փոխնախագահ Գայանե Ղարիբյանի նախաձեռնությամբ կայացավ «Գարնանային հրաշք» խորագիրը կրող գրական-գեղարվեստական ցերեկույթ, որին մասնակցում էին բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության, հայոց լեզվի և գրականության բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողուհիները:

ԳՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ‹‹ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ›› ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՑԵՐԵԿՈՒՅԹ

*23.03.2019 **թ.***

Ս. թ. մարտի 23-ին Գավառի պետական համալսարանի դասախոս Վիկտորիա Խաչատրյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ‹‹Տիեզերական հավերժություն›› խորագիրը կրող ցերեկույթ՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին:

Ցերեկույթին մասնակցում էին համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի առաջին կուրսի ուսանողուհիները:
Նրանք ներկայացրին մեծն Թումանյանի կյանքի և գործունեության որոշ հիշարժան դրվագներ, հանդես եկան բանաստեղծական ու երաժշտական գեղեցիկ կատարումներով, ցուցադրվեց Թումանյանի մասին պատմող տեսաֆիլմ:

ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՍԱԼԵՐՆՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

*27.03.2019 **թ.***

Եվրոպական միության ‹‹էրազմուս +›› միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆալուլտետի դեկան Մարտին Ավագյանը մեկշաբաթյա դասախոսությամբ հանդես եկավ Իտալիայի Սալերնոյի համալսարանում: Դասախոսությունների թեմաներն առնչվում էին հողի

օրգանական նյութերին, հումուսին և դրա նշանակությանը, ագրո-էկոհամակարգերին, դրանց տեսակներին, կառուցվածքին և գործառույթներին, Հայաստանի Հանրապետության վերընթաց գոտիականությանը, հողակազմական գործոններին ու գործընթացներին, գյուղատնտեսական ռեսուրսների կառավարմանը, հատուկ տարածքների պահպանությանը և այլ մասնագիտական հիմնահարցերի:

ՎԵՐԱԿՆՔՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԵՐ

27.03.2019 թ.

Գավառի պետական համալսարանում վերակնքվեցին համագործակցության հուշագրեր բուհի և ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների միջև: Տարբեր ուղղություններով համագործակցությունը շարունակելու համաձայնագրերը ստորագրեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Գավառի Ս. Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Գայանե Ղարիբյանը, Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Հասմիկ Եղիազարյանը, Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Անուշ Բարսեղյանը, Մեծ Մասրիկի դպրոցի տնօրեն Ատոմ Հակոբյանը, Սարուխանի Ս. Մակարյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Հայկ Մուդոյանը և Սարուխանի Հ. Խաչատրյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն Սուսաննա Հովհաննիսյանը: Համաձայնագրերի ստորագրումից հետո կայացավ կրթության բովանդակությանը նվիրված հերթական վերապատրաստման դասընթացը:

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ ԿՅԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

30.03.2019 թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Աննա Բալագոզյանի նախաձեռնությամբ կայացավ գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված անգլիացի դրամատուրգ, բանաստեղծ, համաշխարհային գրականության ամենախոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Վիլյամ Շեքսպիրի կյանքին ու գործունեությանը:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

06.04.2019 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում կայացավ սեմինար-քննարկում՝ «Տուրիզմի զարգացումը Գեղարքունիքի մարզում» թեմայով: Սեմինար-քննարկումը կազմակերպել էր Գեղարքունիքի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնը:

Սեմինարին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ուսանողներ, դասախոսներ, քննարկման առարկայով հետաքրքրված անձինք: Սեմինարի ընթացքում կենտրոնի համակարգող Արեգ Սինանյանը ներկայացրեց տուրիզմի կենտրոնի գործունեությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզում իրականացված և նախատեսված ծրագրերը:

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

06.04.2019 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի փոխնախագահ Գայանե Ղարիբյանի և բնագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Նորայր Մովսիսյանի նախաձեռնությամբ կայացավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսների հիշատակին:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «ERASMUS+ MENVIPRO» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

08.04.2019 թ.

Ս. թ. մարտի 30-ից ապրիլի 7-ը Իտալիայի Վիտերբոյի և Պորտուգալիայի Լիսաբոնի համալսարաններում կայացավ Եվրոպական միության «Erasmus+ MENVIPRO» ծրագրի հերթական աշխատաժողովը: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանն ու բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Մարինե Հովհաննիսյանը:

ԿՆՔՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

10.04.2019 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Սևանի բազմագործառութային պետական քոլեջի տնօրեն Գեղամ Խաչատրյանը ստորագրեցին համագործակցության պայմանագիր, որով կողմերը պարտավորվում են համագործակցել տարբեր ուղղություններով, համալսարանում սահմանված կարգով կազմակերպել քոլեջի բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթության շարունակումը այն մասնագիտություններով, որոնց գծով թույլատրվում է քոլեջից համալսարան շարունակական կրթության իրականացում: Գավառի պետական համալսարանի ռեկտորը համագործակցության պայմանագրեր է կնքել նաև Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջի, Լճաշեն գյուղի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ, Երանոս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցների տնօրենների հետ:

ՄԵԶ ԾԱՆՈԹ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

11.04.2019 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում կայացավ հերթական միջոցառումը՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին: Միջոցառումը, որը կրում էր «Մեզ ծանոթ և անծանոթ Թումանյանը» խորագիրը, ինքնատիպ փորձ էր՝ թափանցելու մեծ մարդու, հանճարեղ գրողի և հայրենասեր գործչի կյանքի ու ստեղծագործության՝ մեզ ծանոթ ու անծանոթ շերտերը, նորովի բացահայտելու բոլորիս այնքան սիրելի Թումանյանին:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

14.04.2019 թ.

Ս. թ. մարտի 31-ից ապրիլի 13-ը Եվրոպական միության «Էրազմուս+ REFINE» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը, ֆակուլտետի դասախոսներ Գուրգեն Մուրադյանը, Հարություն Հարությունյանը և Գայանե Խաչատրյանը Նիդեռլանդների Թագավորության Ամստերդամի կիրառական գիտությունների համալսարանում մասնակցեցին երկշաբաթյա վերապատրաստման դասընթացին:

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐ ԳՊՀ-ՈՒՄ

17.04.2019 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի ուսանողների համար «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամի թրաֆիքինգի ծրագրերի փորձագետ Հասմիկ Էդիյանը վարեց թրաֆիքինգի կանխման և վտանգների նվազեցման վերաբերյալ տեղեկատվական դաս: Քննարկվեցին թրաֆիքինգի դրսևորման ձևերը՝ մարդավաճառությունը, մարդկանց ստրկական, սեռական, աշխատանքային բռնի և անօրինական շահագործումը

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ ԲԱՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19.04.2019 թ.

Ս. թ. ապրիլի 18-ին Գավառի պետական համալսարանում Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում տեղի ունեցան բաց դասախոսություններ՝ նվիրված տեղեկատվական տեխնոլոգիաներին և անգլերենի դասավանդման մեթոդներին, որոնք վարեցին Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարանից ժամանած դասախոսներ Կիրալի Ռոլանդը, Էդ Թրոլը և Ռոզալիա Սզաբոն:

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԵՄ «ԷՐԱԶՄՈՒՍ+ HARMONY» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

19.04.2019 թ.

Ս. թ. ապրիլի 18-ին Եվրասիա միջազգային համալսարանում տեղի ունեցավ «ԵՄ և գործընկեր երկրների բարձրագույն կրթության, հետազոտության և նորարարության բնագավառների միջազգայնացման ներդաշնակության զարգացման HARMONY» ծրագրի ամփոփում: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեց արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՍՈՎՈՐԱԾ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

19.04.2019 թ.

Հաշվետվություններով հանդես եկան ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Ռաֆիկ Մարտիրոսյանը, հումանիտար մասնագիտությունների և հեռակա

ուսուցման ֆակուլտետների իրավագիտության բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներ Մելիտա Ավագյանն ու Էդիկ Զազյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման բաժնի 4-րդ կուրսի ուսանող Նորայր Բունիաթյանը, ովքեր Եվրոպական միության՝ «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ սովորել էին Իսպանիայի Սալամանկայի և Ալմերիայի համալսարաններում:

ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

20.04.2019 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության անդամների և ուսումնական խորհրդատուներ Ռուզաննա Ասատրյանի և Աստղիկ Ավետիսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ «ՀՀ տնտեսության արդի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները՝ ըստ ՀՀ կառավարության 2019 թվականի գործունեության ծրագրի» թեմայով: Գիտաժողովին հետաքրքիր զեկուցումներ ներկայացրին տնտեսագիտական ֆակուլտետի տարբեր կուրսերի ուսանողներ:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

21.04.2019 թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ սեմինար-քննարկում՝ «Ուսուցման կոլեկտիվ եղանակի ներդրումը» թեմայով, որը վարեց ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի մանկավարժության գիտահետազոտական բաժնի մասնագետ Վարսենիկ Հովսեփյանը: Սեմինար-քննարկմանը ներկա էին Գավառի տարածաշրջանի տարբեր դպրոցների ուսուցիչներ, ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ:

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԴԱՍՎԱԾ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

25.04.2019թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Հայոց Ցեղասպանության սրբադասված զոհերի հիշատակին: Միջոցառումը կազմակերպվել էր բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Հովհաննիսյանի նախաձեռնությամբ, նույն ֆակուլտետի տարբերի կուրսերի ուսանողների մասնակցությամբ:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

26.04.2019 թ.

Այսօր Գավառի պետական համալսարանում կայացավ սեմինար-քննարկում՝ «Որակի ապահովման համակարգի մշակում և բարելավում: Ինստիտուցիոնալ

հավատարմագրում» թեմայով: Սեմինարը վարեց Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի մասնագետ Շուշան Բաղդոյանը, ով մասնակցել էր Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում իրականացված վերապատրաստման դասընթացին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ՝ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

27.04.2019 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի տարբեր կուրսերի ուսանողներ և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցներ բուհի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի ղեկավարությամբ ճանաչողական այց կատարեցին բարձր տեխնոլոգիաների ոլորտի մի շարք ընկերություններ: Համալսարանականները հյուրընկալվեցին «Սինոփսիս Արմենիա», «Ինստիգեյթ», «SFL», «PICSART» ընկերություններում:

ВЫДАЧА СЕРТИФИКАТОВ О ПРОХОЖДЕНИИ КУРСА ПО РУССКОМУ ЯЗЫКУ

28.04.2019 թ.

Кафедра иностранного языка и литературы Гаварского государственного университета объявила об открытии краткосрочных бесплатных курсов по русскому языку для всех желающих изучать русский язык или совершенствовать свои языковые навыки. Уже в первый день после объявления решения об открытии курсов записалось более 30 желающих. Это были как ученики из разных школ Гегаркуникского региона, так и студенты университета, желающие развивать свои коммуникативные умения.

ՄԻ ՑՈՒՑԱՆՄՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

28.04.2019 թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ հուզիչ միջոցառում՝ նվիրված եղեռնահուշ մի մասունքի՝ համրիչ-թզբեհի պատմությանը: Միջոցառումը կազմակերպվել էր հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարարական գիտությունների ամբիոնի դասախոս, ակադեմիական խորհրդատու Քանաքարա Հայրապետյանի ղեկավարությամբ և նույն ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՆՎՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

02.05.2019 թ.

Գավառի պետական համալսարանը կազմակերպեց վերապատրաստման անվճար դասընթաց՝ նվիրված նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հոգեբանական զարգացման ախտորոշման ու կարգավորման հիմնախնդիրներին:

Դասընթացը վարեց ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, «ԱՅԲԲԵՆԳԻՄ» զարգացման կենտրոնի հիմնադիր տնօրեն Արմինե Դավթյանը: Դասընթացին ակտիվորեն մասնակցեցին մանկավարժներ, դաստիարակներ, ուսուցիչներ, հոգեբաններ, համալսարանի դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ Սոթք գյուղի

միջնակարգ, Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ, Հայրավանք գյուղի դպրոցներից, նախակրթարաններից, Լճափ գյուղի, Գավառ քաղաքի թիվ 4, թիվ 5, թիվ 7 մանկապարտեզներից, Հայրավանք գյուղի, Կարմիրգյուղի թիվ 1, Ծովագյուղի Մուրացանի անվան, Գանձակ գյուղի թիվ 1, թիվ 2, Նորատուս գյուղի Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցներից, Գավառ քաղաքի Ավետիք Իսահակյանի անվան թիվ 4, Սևան քաղաքի Վ. Կարապետյանի անվան թիվ 3, Գավառ քաղաքի Ս. Քոչարյանցի անվան թիվ 1, Գավառ քաղաքի թիվ 5, Գավառ քաղաքի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցներից, Գավառ քաղաքի «Արևի աշխարհ» կենտրոնից, «Արաբկիր» բժշկական կենտրոնի Գավառի մասնաճյուղից:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

06.05.2019 թ.

Ս. թ. մայիսի 5-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի և բուհի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին: Գիտաժողովին հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան բուհի չորս ֆակուլտետների տարբեր բաժինների և կուրսերի ուսանողներ:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

07.05.2019 թ.

Լույս է տեսել Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանի «Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը» արժեքավոր աշխատությունը: Մենագրությունը նվիրված է անվանի գրողի ստեղծագործությունների մեկնաբանությանը: Բացահայտվում են երկերի բարոյափիլիսոփայական, բովանդակային, կառուցվածքային առանձնահատկությունները ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության առնչություններում:

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՑԱՆՑԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԲԱՑ ԴԱՍ՝ ԳՊՀ-ՈՒՄ

10.05.2019 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Մարգար Հովհաննիսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ բաց դաս՝ նվիրված ժամանակակից ցանցային տեխնոլոգիաներին:

Բաց դասին մասնակցում էին նույն ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի ուսանողները: Ներկա էին նաև վերոնշյալ ամբիոնի դասախոսներ և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցներ:

ԿԱՅԱՑԱՎ «ԻՄ ՔԱՅԼԸ ՀԱՆՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ» ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

12.05.2019 թ.

Ս. թ. մայիսի 11-ին Գավառ քաղաքի Լևոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ու ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համատեղ նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» ներդրումային-գործարար համաժողով և տեղական արտադրանքի «ԷՔՍՊՈ» ցուցահանդես: Համաժողովին մասնակցեց և Գավառի պետական համալսարանի հյուրատան-բիզնես կենտրոնի ներդրումային ծրագրի առաջարկը ներկայացրեց բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՏԵՌԱՄՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

15.05.2019 թ.

Ս. թ. մայիսի 6 - 11-ը Իտալիայի Հանրապետության Տեռամոյի համալսարանում տեղի ունեցան Եվրոպական միության «ERASMUS+ ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի շրջանակներում նախատեսված հերթական աշխատաժողովն ու վերապատրաստումները: Գավառի պետական համալսարանից վերապատրաստմանը մասնակցեցին բուհի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսներ Թերմինե Խաչիկյանը, Մարինե Հովհաննիսյանը և Կարինե Ավետիսյանը:

ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

16.05.2019 թ.

Բուհի տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսեր» բաժնի 2-րդ կուրսի ուսանողները դեկան Սամվել Ամիրխանյանի և հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս Հասմիկ Մարգարյանի նախաձեռնությամբ այցելեցին Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասում գտնվող ‹‹Mikayelyan family farm›› անունը կրող պանրի արտադրամաս: Արտադրամասում ուսանողները ծանոթացան պանրի արտադրման գործընթացի փուլերին, առանձնահատկություններին, կիրառվող տեխնոլոգիաներին:

ԿԱՅԱՑԱՎ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

16.05.2019 թ.

Գավառի պետական համալսարանում ՆԱՏՕ-ի հիմնադրման 70-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում տեղի ունեցավ «Հավաքական անվտանգության, ընդհանուր արժեքների և համագործակցության 70-ամյակը. ՆԱՏՕ-ի վերաբերյալ կրթական-տեղեկատվական արշավ Հայաստանում» խորագրով սեմինար-քննարկում: Հայկական ատլանտյան ասոցիացիայի գործադիր նախագահ Թևան Պողոսյանը խոսեց Հյուսիս-ատլանտյան ռազմաքաղաքական դաշինքի առաքելության, գործունեության, որոշումների կայացման, պատմության, արդի մարտահրավերների, ինչպես նաև ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների մասին, պատասխանեց ուսանողների բազմաթիվ հարցադրումներին:

Այնուհետև ուսանողները մասնակցեցին ինտերակտիվ խաղ-վիկտորինայի՝ պատասխանելով ՆԱՏՕ-ի և ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ հարցերին:

ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԵԻ ԱՆԳԵԼ ԿԱՆՉԵՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

*22.05.2019 **թ.***

Ս. թ. մայիսի 13-17-ը Բուլղարիայի Հանրապետության Ռուսե քաղաքի Անգել Կանչևի անվան համալսարանում Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Նորարարական մեթոդների կիրառումը ուսումնառության և դասավանման մեջ» թեմայով վերապատրաստման դասընթաց, որին մասնակցում էին տասը երկրների բուհերի ներկայացուցիչներ: Գավառի պետական համալսարանից վերապատրաստմանը մասնակցեցին բուհի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի ակադեմիական խորհրդատու Նարինե Նալբանդյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակից Մարգար Հովհաննիսյանը: ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Հարություն Գզրարյանն ու հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Արսեն Հակոբյանը իրականացրին դասախոսական աշխատանք:

ԿԱՅԱՑԱՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱԲԱԹ

*22.05.2019 **թ.***

Ս. թ. մայիսի 13-17-ը Եվրոպական միության «Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը մասնակցեց Պորտուգալիայի Բրագա քաղաքի Մինհոյի համալսարանում կազմակերպված բարձրագույն կրթության միջազգային շաբաթվա աշխատանքներին:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՌՈՒՍԵԻ ԱՆԳԵԼ ԿԱՆՉԵՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

*23.05.2019 **թ.***

Եվրոպական միության «Erasmus+» միջազգային ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Բուլղարիայի Հանրապետության Անգել Կանչևի անվան Ռուսեի համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Պլամեն Կանգալովին, էլեկտրատեխնիկայի, էլեկտրոնիկայի և ավտոմատիկայի ֆակուլտետի դեկան Միխաիլ Իլիևին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Եղիազարյանին:

ԿԱՅԱՑԱՎ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ

29.05.2019 թ.

Այսօր Գավառ քաղաքում, Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, կայացավ համաժողով, որի ընթացքում քննարկվեցին կրթությանը՝ որպես ժողովրդավարության ամրապնդման և մարդ-քաղաքացի ձևավորման կարևոր երաշխիքին նվիրված հարցեր: Մարդ-քաղաքացի ձևավորման գործում կրթության կարևոր դերի մասին խոսեց Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը: Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, «Լուսին թեքնոլոջիս» ընկերության տնօրեն Վարազդատ Ավետիսյանն անդրադարձավ մասնագիտական ճիշտ կողմնորոշման, ապագայի մասնագիտությունների, մասնագիտական կողմնորոշմանը միտված «SOFT» ոչ մասնագիտական հմտությունների կարևորության հարցերին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ‹‹SMART›› ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

05.06.2019 թ.

Եվրոպական միության «SMART-Ուսանող-ձեռնարկություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացում՝ «խելացի սրճարանների» (smart caffees) միջոցով» ծրագրի շրջանակներում ս. թ. մայիսի 27-ից հունիսի 1-ը Բուլղարիայի Վառնայի կառավարման համալսարանում տեղի ունեցավ վերապատրաստման դասընթաց:

Հայաստանից ներկա էին և ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Գավառի պետական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանը և արտաքին կապերի ու լրատվության բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը, ինչպես նաև Երևանի Վալերի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի ներկայացուցիչները:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՌՈՒՍԵԻ ԱՆԳԵԼ ԿԱՆՉԵՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

05.06.2019 թ.

Եվրոպական միության «Erasmus+» միջազգային ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանն այսօր հյուրընկալեց Բուլղարիայի Հանրապետության Անգել Կանչևի անվան Ռուսեի համալսարանի անգլերենի դասախոսներ Միլենա Պոպովային և Ցվետանա Շենկովային:

ԿԱՅԱՑԱՎ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԼՈՌԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

12.06.2019 թ.

Ս. թ. հունիսի 3-7-ը Եվրոպական միության «Erasmus+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի մասնագետ Սահակ Դավթյանը մասնակցեց Լեհաստանի Հանրապետության Լոռի համալսարանում կազմակերպված «Ազատիր միտքդ, նախագծիր քո ռազմավարությունը» խորագրով աշխատաժողովին:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

20.06.2019 թ.

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ աշխատաժողով, որի ընթացքում ներկայացվեցին և քննարկվեցին բուհի ուսանողների կողմից գործատուների շրջանում կատարված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները: «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի ուսանողական ծրագրային թիմի կողմից իրականացվող «Աշխատաշուկայի հետազոտություն» ծրագրի շրջանակներում թիմի ղեկավար, Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի Հ«աշվապահական հաշվառում և հարկում» բաժնի 2-րդ կուրսի ուսանող Աշոտ Մովսիսյանը, թիմի անդամ, բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Ղարիբյանը շնորհանդեսի միջոցով ներկայացրին ծրագրի նպատակն ու ընթացիկ արդյունքները:

ԿՆՔՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԳՊՀ-Ի ԵՎ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԵՎ

22.06.2019 թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) նախագահ, «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիք Հարությունյանին և ԱԵԳՄՄ անդամ, ՀՀ փաստաբանների պալատի իրավական հարցերով փորձագետ, փաստաբան Արտաշես Խալաթյանին: Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ԱԵԳՄՄ նախագահ Ավետիք Հարությունյանը կնքեցին համագործակցության հուշագիր:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԵՄ ‹‹ERASMUS+ SMART CAFFE›› ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

26.06.2019 թ.

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական միության «ERASMUS+SMART.Ուսանող-ձեռնարկություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացում՝ «խելացի սրճարանների» (smart caffees) միջոցով» ծրագրին: Ս. թ. հունիսի 26-ին Գավառի պետական համալսարանում կայացավ ծրագրի աշխատաժողովը: ԳՊՀ-ն հյուրընկալեց ծրագրի մասնակից երկրների՝ Գերմանիայի, Հունաստանի, Բելգիայի, Բուլղարիայի, Բելառուսի, Մոլդովայի համալսարանների պատվիրակներին, ինչպես նաև Հայաստանում ծրագիրը համակարգող բուհի՝ Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ներկայացուցիչներին:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՄ «ERASMUS+REFINE» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

29.06.2019 թ.

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական միության «ERASMUS+ REFINE» ծրագրին, որի շրջանակում համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Զաքոյանը,

հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը, դասախոսներ Գուրգեն Մուրադյանը, Հարություն Հարությունյանը, Գայանե Խաչատրյանը, Աստղիկ Հովեյանը մասնակցել են Նիդերլանդների Թագավորության Ամստերդամի համալսարանում, Ավստրիայի Վիեննայի կիրառական գիտությունների համալսարանում, Ֆրանսիայի Նիցցայի և Սլովակիայի Կոշիցեի համալսարաններում անցկացված վերապատրաստման դասընթացների: ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ամբիոնների վարիչները և դասախոսները բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի անդամներին ներկայացրին վերապատրաստման արդյունքները, եվրոպական համալսարանների փորձը, ԳՊՀ-ում կրթական ծրագրերի բարեփոխման հիմնական ուղղությունները:

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԱԼՄԵՐԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

05.07.2019 ***թ.***

Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի շրջանակներում 4 տարի շարունակ Գավառի պետական համալսարանը համագործակցում է Իսպանիայի Ալմերիայի համալսարանի հետ: Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Ալմերիայի համալսարանի ռազմավարության պլանավորման բաժնի պետ Խոսե Անտոնիո Պլազա Ուբեդային, ռազմավարական կառավարման ամբիոնի դասախոս Միգել Պերեզ Վալսին և վարչական անձնակազմի անդամ Սանտիագո Մարտոս Մարտինեսին: Նրանք հանդիպեցին ԳՊՀ ռեկտորատի անդամների, տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների և դասախոսների հետ, ներկայացրին իրենց համալսարանի պատմությունը, ֆակուլտետները, անգլերենով դասավանդվող առարկաները՝ կարևորելով երկու բուհերի միջև ակտիվ համագործակցությունը:

ԲԱՐԻ՛ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ՛ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

05.07.2019 ***թ.***

Յուրաքանչյուր տարվա հուլիսի 5-ը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը, Գավառի պետական համալսարանի համար արժևորվում և նշանավորվում է յուրովի. հենց Սահմանադրության օրն են շնորհվում շրջանավարտների դիպլոմները: Այսօր համալսարանում կայացավ բուհի շրջանավարտների 22-րդ սերնդին դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՆԻՑՑԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

21.07.2019 ***թ.***

2019 թվականի հունիսի 30-ից հուլիսի 13-ը Եվրոպական միության ‹‹ERASMUS+REFINE›› ծրագրի շրջանակում Ֆրանսիայի Հանրապետության Նիցցայի Սոֆիա Անտիպոլիս համալսարանում (Universite Nice Sophia Antipolis) անցկացվեց վերապատրաստման դասընթաց ծրագրի մասնակից բուհերի դասախոսների համար: Դասընթացին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Զաքոյանը, դասախոսներ Արմեն Հակոբյանը, Ռշտուն Մարտիրոսյանը և Աստղիկ Հովեյանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՃԱՄԲԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

*06.08.2019 **թ**.*

Արցախի պետական համալսարանի կազմակերպած միջազգային ամառային վրանային դպրոց-ճամբարին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի համակարգչային ճարտարագիտության բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Խորեն Բաղդասարյանը և հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի, բուհի ուսանողական խորհրդի փոխնախագահ Գայանե Ղարիբյանը:

Նունե Միրիբյան
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգանուն, անուն, հայրանուն	*ծառայողական*	*Էլեկտրոնային փոստի հասցե*
ԳՊՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարապետյան Վարազդատ	0-60-46-02-01 0264-2-57-75	
ԳՊՀ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	0-60-46-02-01	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	0-60-46-04-03	n.kutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	0-60-46-12-64	a.aproyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	0-60-46-12-44	t.asoyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	0-60-46-12-55	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	0-60-46-12-70	h.ghajoyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	0-60-46-12-66	s.amirkhanyan@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	0-60-46-12-90	faculty-of-correspondence-course@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	0-60-46-12-42	a.gharibyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Շահինյան Անահիտ Կամոյի	0-60-46-12-70	
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարատի	0-60-46-12-40	r.sargsyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերգնյան Մարիամ Նորիկի	0-60-46-12-60	m.hergnyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	0-60-46-12-70	g.gevorgyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Խաչիկյան Թերմինե Գագիկի	0-60-46-12-50	t.khachikyan@gsu.am
Որակի ապահովման բաժնի վարիչ Մայիլյան Անուշ Տոլիկի	0-60-46-12-43	a.mayilyan@gsu.am
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին	0-60-46-12-56	
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	0-60-46-12-46	g.muradyan@gsu.am
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	0-60-46-12-41	kh.safaryan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	0-60-46-12-49	l.sirunyan@gsu.am
Ավագ պարետ Զաքոյան Տարիել Հրաչիկի	0-60-46-12-86	t.zaqoyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը, արդյունքները, խնդիրները..... 3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին..... 14
Միջազգային համագործակցություն..... 47
Դասախոսների գործուղումներ..... 85
Ուսումնագիտական աշխատանքներ..... 92
Ֆինանսական վերլուծություն..... 114
Բանասիրական ֆակուլտետ..... 122
Բնագիտական ֆակուլտետ..... 143
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ..... 164
Տնտեսագիտական ֆակուլտետ..... 180
Հեռակա ուսուցման ֆակուլտետ..... 205
Ակադեմիական քաղաքականության վարչություն..... 211
Որակի ապահովման բաժին..... 217
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժին 223
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին..... 228
ԳՊՀ գրադարան 232
ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժին..... 237
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն..... 240
Ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն..... 241
Տնտեսատեխնիկական գործունեություն..... 245
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ..... 250
Տեղեկատու..... 288

CONTENTS

The Objectives, Outcomes and Process of GSU Strategic Program Implementation 3
General Information about the University..... 14
International Cooperation..... 47
Business Trips of the Academic Staff..... 85
Educational and Scientific Activities..... 92
Financial analysis..... 114
Faculty of Philology..... 122
Faculty of Natural Sciences..... 143
Faculty of Humanities..... 164
Faculty of Economics..... 180
Faculty of Part-Time Education..... 205
Academic Policy Department..... 211
Quality Assurance Department..... 217
GSU Foreign Relations and Information Department..... 223
Information Technology Department..... 228
GSU Library..... 232
GSU Department of Human Resource Management 237
GSU Trade Union..... 240
Student's Council and Student Scientific Society..... 241
Economic and Technological activity..... 245
Memorable events of GSU..... 250
Information leaflet..... 288

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

GAVAR STATE UNIVERSITY

2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2018-2019 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳՊՀ
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU
Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am